

Հայաստանի Հանրապետություն  
Գիտությունների ազգային ակադեմիա  
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

# ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## VII

## 2004

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

---

Գ յ ու մ ք ի 2004

ԳՏՀ 008+902 / 904+800  
ԳՄԴ 71+63. 4+80  
Գ 602

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական  
հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագրական խորհուրդ**

Արամ Քալանթարյան, Աշոտ Մելքոնյան, Խաչիկ Բաղիկյան, Արամ Քոսյան,  
Սարգիս Հարությունյան, Սարգիս Պետրոսյան, Լարիսա Եզանյան,  
Համազասպ Խաչատրյան, Կարինե Բազեյան, Կարինե Սահակյան

**Խմբագրությամբ Սերգո Հայրապետյանի**

Գ - 602 Գիտական աշխատություններ, 7  
Գյումրի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն,  
2004, 195 էջ:

Գ  $\frac{4400000000}{703 (02) - 2004}$  2004

ԳՄԴ 71+ 63,4+80

ISBN 5- 8080 - 0504 - 3

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2004

*Республика Армения  
Национальная академия наук  
Ширакский центр арменоведческих исследований*

# НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК  
VII  
EDITION

# RESEARCH PAPERS

*Shirak Centre of Armenian Studies  
National Academy of Sciences  
Republic of Armenia*

Издательство “Гитутюн” НАН РА

“Gitutyun” Publishers NAS RA

---

ГЮМРИ 2004 GYUMRI

Публикуется по решению Ученого совета  
Ширакского центра арменоведческих исследований НАН РА

Редакционная коллегия:

Саргис Арутюнян, Арам Калантарян, Ашот Мелконян, Хачик Бадикян, Арам  
Косян, Саргис Петросян, Лариса Еганян, Амазасп Хачатрян, Карине Базеян,  
Карине Саакян

Под редакцией Серго Айрапетяна

Published by arrangement of the Scientific Council  
of Shirak's Research Centre NAS RA

Editing stuff:

Sargis Harutunyan, Aram Qalantaryan, Ashot Melkonyan, Khachik Badikyan,  
Aram Qosyan, Sargis Petrosyan, Larisa Eganyan, Hamazasp Khachatryan, Karine  
Bazeyan, Karine Sahakyan

Edited by Sergo Hairapetyan

## Արմեն ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԿՈՒՍԱՅՐԻՆ ՀԱՅՎԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀՆԱԳՈՒՅՆ  
ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ՀԱՍՏԵՔՍՈՒՄ

Հինարևելյան մի շարք ավանդույթներում հայտնի է «երկնային արքայության» առասպելական թեման: Ըստ այդ թեմայի՝ երկնքում իրար են հաջորդում աստվածների մի քանի արքաներ, որոնցից ամեն հաջորդն ուժով է խլում իշխանությունը մախորդից: Խուտիական տարբերակում աստվածների առաջին արքան էր Ալալուն, որին գահընկեց է անում նրա որդի Անուն (երկնքի աստվածը): Անուն իր հերթին գահընկեց է անում նրա որդի Կումարբին, որը կուլ է տալիս նրա «այրականությունը» և հղանում մի քանի աստվածներով, այդ թվում՝ ամայրուպային Թեշուբով: Թեշուբը դառնում է աստվածների վերջին սերնդի արքան:<sup>1</sup>

Կումարբին խուտիական բոլոր տարածքներում հայտնի աստվածներից է, որի աննահին հիշատակությունը, Kumarwe ձևով, հայտնի է Մարիի խուտիական մի աղյուսակից (մ.թ.ա. մոտ 1700 թ.): Նա կոչվել է «ինաստուն արքա» և «աստվածների հայր»: Միտիական աստվածաբանությունը նույնացրել էր նրան միջինեփրատյան հացահատիկի աստված Դագանի, շումերա-սքքադական Էնլիլի և ուգարիթյան Էլի հետ: Խեթական աստվածների ցուցակներում Կումարբին ներկայացվել է որպես շումեր. NISABA, խեթ. Halki (խաթ. Kait) «հացահատիկ», որը թույլ է տալիս ասել, որ նա եղել է հացահատիկի մի աստված:<sup>2</sup>

Կումարբին, գրկվելով գահից, իր տարբեր որդիների միջոցով մի քանի անգամ փորձում է գահընկեց անել Թեշուբին, բայց վերջինս հաղթում է նրանց և պահպանում գահը: Թեշուբի եղբայր-հակառակորդներից է որպես անընդհատ աճող քարե հրեշնկարագրվող Ուլիկումմին: Նա ծնվել էր «սառը աղբյուր լճում» գտնվող «մեծ ժայռի»՝ Կումարբիի կողմից բեղմնավորման արդյունքում: Աստվածները Թեշուբի գլխավորությամբ կովում են հսկա քարե հրեշի դեմ, բայց չեն կարողանում վնասել նրան: Առասպելի ավարտը չի պահպանվել, բայց այն պետք է ներկայացնեն Թեշուբի վերջնական հաղթանակը:<sup>3</sup>

Թեշուբը դիցարանի գերագույն աստվածն էր, աստվածների վերջին սերնդի արքան, որի առասպելները առանցքային դեր ունեն խուտիական առասպելաբանության մեջ: Նրա ուրարտական համապատասխանությունն էր Թեյշեբան՝ Ուրարտուի պետական դիցարանի երկրորդ մեծ աստվածը: Թեշուբ-Թեյշեբայի պաշտամունքի կենտրոններն էին Kummē / Qumēnu և Kummanni քաղաքները, առաջինը՝ Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում, Կորդվաց Արարատ լեռան (ներկայումս՝ Ջուդի) շրջանում, երկրորդը՝ ծայր հարավ-արևմուտքում՝ Կասպադովկիայում:

Թեշուբի ծնողի և հակառակորդի՝ շարքի երկու կարևորագույն կերպարների անունները պարունակում են kum- բաղադրիչը և, այսպես թե այնպես, ստուգաբանական, կամ գոնե առասպելաբանական մտածողությանը հատուկ համահունչ անունների համապատասխանեցման (անագրամային) մակարդակով, պետք է առնչվեն Թե-

<sup>1</sup> «Երկնային արքայության» թեմայի առասպելների և նրանց հնդեվրոպական կապերի վերաբերյալ տես օրինակ՝ S. Littleton, *The 'Kingship in Heaven Theme.'* *Myth and Law Among the Indo-Europeans.* Berkeley, Los Angeles, Idem. *Is the 'Kingship in Heaven' Theme Indo-European? Indo-European and Indo-Europeans.* Philadelphia 1970.

<sup>2</sup> Կումարբիի վերաբերյալ տես օրինակ՝ *Мифы народов мира, Т. II, М., 1982, стр. 28; G. Leick, A Dictionary of Ancient Near Eastern Mythology. London, New York 1991, p. 106-107; Г. Вильгельм, Древний народ хурриты, М., 1992, стр. 91-92: Խեթական հացահատիկի աստվածության վերաբերյալ՝ A. Kammenhuber. *Die Hethitische Getreidegöttheit Halki/Nisaba. Near Eastern Studies. Bulletin of the Middle Eastern Culture Center in Japan, 5. Wiesbaden 1991:**

<sup>3</sup> В. Иванов, *Луна упавшая с неба. Древняя литература Малой Азии, М., 1977, стр. 125 сл.; Н. Hoffner. Hittite Myths [tr. by H.A. Hoffner]. Atlanta 1990, p. 52 ff.*

շուրի սրբազան կենտրոնների համահունչ անվանումների հետ:<sup>4</sup> Ըստ Է. Ֆոռերի՝ համընդհանուր ընդունելություն գտած մեկնաբանության, Kumarbi-ն սեռական հոլովով ներկայացված մի տեղանուն է՝ «Kumar-hi (աստված)»: Այդ տեղանունն, իր հերթին, համարվում է կազմված kum- արմատով և -ar ածանցով: Թեև ուսումնասիրողների կողմից \*Kumar-ը համարվել է որոշ համահունչ տեղանունների հետ, բայց և այնպես նշվում է, որ հենց այդ անունով տեղանք սեպագիր աղբյուրներում այլուրեք հայտնի չէ. սա մեկնաբանվում է որպես այդ տեղանվան ստեղծման դարաշրջանի վաղնջակա-նության ակնարկ:<sup>5</sup>

Կումարբիի և Ուլիկումմիի առասպելները պատմական ժամանակներում տեղայնացված էին խուռիների տարածման արեալում՝ Հյուսիսային Միջագետքում և Միդիայում:<sup>6</sup> Կումարբիի հայրենիքն էր համարվում խուռական հին արքայական քաղաք Ուրկեշը հյուսիսային Միջագետքում, բայց մ.թ.ա. III հազարամյակի վերջին Ուրկեշի գլխավոր աստվածը պիտի լիներ Ներգալը:<sup>7</sup> Ըստ այդմ, Կումարբիի հնագույն կենտրոնը պետք է փնտրել այլուրեք:

Ullikummi-ն սովորաբար ստուգաբանվում է որպես «Կումմի քաղաքը կործանող»<sup>8</sup> (նա պիտի կործաներ Թեշուբին, նրա Կումմիա քաղաքը և դառնար երկնքի արքան): Մյուս կողմից, այն համարվում է Կիլիկիայի Ulligama, Ulikamma լեռնանվանը (Հ. Օտտեն), և կարող է մեկնաբանվել որպես վերջինիս մի երկրորդային ձևափոխությունը «ժողովրդական ստուգաբանության» հիման վրա:<sup>9</sup> Այսպիսով, Ուլիկումմին կարող է տեղայնացվել Կիլիկիայում: Այս տեղայնացումը ևս երկրորդային է, քանի որ Կիլիկիան չէր կարող լինել խուռական ցեղերի հնագույն բնօրրանը: Ըստ ուսումնասիրողների՝ այն գտնվել է Հայկական լեռնաշխարհում, և կարծիք կա, որ Թեշուբի առասպելները պետք է հնում տեղայնացվեին Թոնդրակ լեռան և Վանա լճի շրջանում:<sup>10</sup>

Հայկական լեռնաշխարհի հնագույն նյութական մշակույթի տվյալները թույլ են տալիս այլ հավանական տեղայնացում առաջարկել Ուլիկումմիի համար: Այդ քարե հրեշի կերպարը հիշեցնում է Հայաստանի լեռներում տարածված հնագույն «վիշապ» քարակորոզները, որոնք ամենամեծ խտությամբ հանդիպում են Գեղամա լեռներում և

<sup>4</sup> Սեպագիր kum-քաղաքիչով այս տեղանունների ստուգաբանության վերաբերյալ տես Ա. Պետրոսյան. *Մագերի առասպելության անհշվող ծիսական բառեր և անուններ. Լեզու և լեզվաբանություն*, 2:

<sup>5</sup> Կումարբի անվան վերաբերյալ տես A. Goetze. *Kizzuwatna and the Problem of Hittite Geography*. New Haven 1940, 5 n. 21; В. Иванов, *К этимологии некоторых миграционных культурных терминов, Этимология* 1980, М., 1982, стр. 159; М. Хачикян, *Хурритский и урартский языки*, Ер., 1985, стр. 59, 62; Г. Вильгельм, *նշվ. աշխ.*, էջ 91; G. Wilhelm. *Kumme und \*Kumar: Zur hurritischen Ortsnamenbildung. Beiträge zur altorientalischen Archäologie und Altertumskunde. Festschrift für Barthel Hroudá zum 65 Geburtstag*. Wiesbaden 1994, S. 318-319; Որպես \*Կումարի հավանական թեկնածուներ առաջարկվել են հին շումերական Kumara քաղաքը, կամ հին եգիպտական աղբյուրներում հիշվող նման անունով մի սիրիական քաղաք (O. Gurney. *Some Aspects of Hittite Religion*. Oxford 1977, p. 14). հնարավոր է համարվել \*Կումարը մեկնաբանել որպես «Կումմի քաղաքի շրջանը» (М. Хачикян, *նշվ. աշխ.*, էջ 59,62). հմմտ. և Kumri տեղանունը (Նուզիի տեքստերից, G. Wilhelm. *Op. cit.* 319), խեթական աղբյուրների Kummara գետանունը, ենթադրաբար՝ Սալաթիայի շրջանում (F.G. del Monte, J. Tischler *Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte*. Wiesbaden 1978, S. 535. այդ գետի՝ զարափարազի ձևով ներկայացված աստվածը՝ <sup>D</sup>LAMMA-ն Թեշուբի հակառակորդներից էր):

<sup>6</sup> *Stu orhinaly M. Astour. Les hourrites en Syrie du nord. Rapport sommaire. Revue hittite et asianique* 36 (1978), p. 16.

<sup>7</sup> Г. Вильгельм, *նշվ. աշխ.*, էջ 91-92; M. Salvini. *The Earliest Evidence of the Hurrians Before the Formation of the Reign of Mittanni. Urkesh and the Hurrians. Studies in Honor of Lloyd Cotsen*. Malibu 1998, p. 107.

<sup>8</sup> В. Иванов, *նշվ. աշխ.*, էջ 159; М. Хачикян, *նշվ. աշխ.*, էջ 70; О. Герни, *Хетты*, М., 1987, стр. 169; Г. Вильгельм, *նշվ. աշխ.*, էջ 103.

<sup>9</sup> E. Laroche. *Glossaire de la langue hourrite. Revue hittite et asinique. T. XXXIV-XXXV. Paris 1976-77, p. 279.*

<sup>10</sup> V. Haas, *Betrachtungen zum ursprünglichen Schauplatz der Mythen vom Gott Kumarbi. Studi Micenei ed Egeo-Anatolici. Fasc. XXII, 1980. Idem. Geschichte der hettitischen Religion. Leiden, New York, Kōln. 1994, S. 83.*

Գեղարքունիքում (հնում՝ Գեղարքունի), Գեղ լեռան վրա և Գեղի ամրոցի մոտ, Գեղամա կամ Սևանա լճի արևմուտքում (հնմտ. Կումարբիի առասպելի «աստղ լիճը»): Ուրարտական աղբյուրներում Գեղարքունիի նախատիպը հանդես է գալիս Սelikuni և Սelikubi ձևերով<sup>11</sup> (ni-ն և hi-ն ուրարտական ածանցներ են՝ «Սeliku-ական երկիր»):

Սeliku-ն հիշեցնում է ամայրույի աստծու հակառակորդ օձ-վիշապի հնդեվրոպական անունը՝ \*wel-<sup>12</sup>, որի կանոնավոր արտացոլումը հայերենում պիտի լիներ *գեղ*: Իրենք՝ «վիշապները» և նրանց վրայի պատկերներն էլ պարզորոշ կերպով մեկնաբանվում են օձ-վիշապի կերպարի շրջանակներում:<sup>13</sup>

Թեշուրի և Ուլլիկումնիի հակադրությունը, այսպիսով, համադրելի է հնդեվրոպական «հիմնական առասպելի» հետ, որի համաձայն ամայրույի աստվածը հաղթում է Օձ-վիշապին: Հատկանշական է, որ Թեշուրի անունը և կերպարը ևս, ամենայն հավանականությամբ, հնդեվրոպական են:<sup>14</sup> Ըստ այդմ, Սeliku-ն և Սllikummi-ն կարող են մեկնաբանվել որպես \*k- պարունակող ածանցով հնդեվրոպական կազմություններ. Սllikummi-ի վերջավորության համար՝ Izzummi դիցանունը և խոտիական mmi, ummi վերջածանցները (հնմտ. ուրարտ. pura = խոտ. purame, purammi «սարուկ»):<sup>15</sup>

«Վիշապ» քարակոթողների ժամանակագրության խնդրի պարզաբանումը դժվար է՝ հարակից հնագիտական նյութի բացակայության պատճառով: Ինչևէ, նրանցից մեկի վրա ուրարտական արձանագրություն կա, որը մատնանշում է նրանց նախաուրարտական ծագումը. հավանական է, որ նրանց զոհե մի մասը շատ ավելի հին է:<sup>16</sup>

Հայկական առասպելաբանության մեջ հացահատիկային պաշտամունքի մի վիպական հիշողություն կարելի է համարել Խորենացու տեղեկությունը Հայկյան Շարայի՝ Շիրակի էպոնիմի վերաբերյալ: Նրա մասին է հայոց հնագույն առածը. «Թէ քո Շարայի որկորն է, մեր Շիրակայ ամբարը չեն»: Եղած նյութը հնարավորություն չի տալիս միարժեքորեն համադրելու Կումարբիի և Շարայի կերպարները, բայց մատնանշում է հացահատիկային պաշտամունքի կենտրոնացումը Շիրակում՝ Հայաստանի հացահատիկի շտեմարանում:

Արդեն Գ.Ղափանցյանը, ելնելով անունների մնամությունից, Թեշուրի սրբավայրերի Kum- արմատով անունները համադրել է Շիրակի Կումայրի քաղաքանվանը, երկրորդ բաղադրիչը մեկնաբանելով «քարանձավային» (*այր* արմատից) և որպես զուգահեռ ձևեր հիշելով Քոբայրի, Սուրմայրի, Բագնայր, Ավարայր տեղանունները: Ս.Պետրոսյանը սրանց ավելացնում է նաև Հոռոմայր տեղանունը և որպես փաստարկ

<sup>11</sup> Н. А р у т ю н я н, *Топонимика Урарту*, Ер., 1985, стр. 199-200.

<sup>12</sup> Հնդեվրոպական ամայրույի առասպելը վերականգնված է Վ. Իվանովի և Վ. Տոպորովի կողմից. *հաշվի առնելով նրա առանցքային դերը առասպելաբանության մեջ, այն կոչվել է «հիմնական առասպել»*, տես *հատկապես* В. Иванов, В. Топоров, *Исследования в области славянских древностей*, М., 1974.

<sup>13</sup> А. П е т р о с я н, *Отражение индоевропейского корня \*wel- в армянской мифологии*, Լրիբեր հասարակական գիտությունների, հ. 1, Եր., 1987:

<sup>14</sup> Ա.Պե տ ո ս յ ա ն, *Ուրարտական գլխավոր աստվածների եռյակը և պետության իշխող վերնախավի ծագման խնդիրը*, Պատմա-բանասիրական հանդես, 2, Եր., 2002, էջ 250-253; А. Петросян, *Армянский эпос и мифология*, Ер., 2002, стр. 53-54.

<sup>15</sup> Արժե նշել, որ Ուլլիկումնիի «Կումնի կործանող» մեկնաբանությունն առավել մանրամասն հիմնավորած Վ. Իվանովը, ծանոթանալով Վելիքունի-Գեղարքունիք երկրի վիշապ քարակոթողների և հարակից հարցերին նվիրված մեր նշված աշխատությանը (А. Петросян. *Отражение индоевропейского корня \*wel- в армянской мифологии*), իր կարծիքում զրեց, որ Սllikummi-ն պետք է որ ստուգաբանորեն կապված լինի Սeliku-ին, իսկ Կումնի քաղաքը կործանելու մոտիվը երկրորդային է, «ժողովրդական ստուգաբանության» արդյունք (ինչպես որ հավանական է համարվում է.Լարոշի՝ խոտիերենի բառարանում): Խոտ. ummi ածանցի վերաբերյալ (որն, ի միջի այլոց, էականորեն չի փոխում բառիմաստը), տես I.M.Diakonoff. *Hurritisch und urartüisch*. München, 1971, p. 77; М. Хачикян, *նշվ. աշխ.*, էջ 48.

<sup>16</sup> Այս հարցի վերաբերյալ տես Б. Аракелян, Н. Арутюнян, *Урартская клинообразная надпись из Гарни*, Պատմա-բանասիրական հանդես, 2, Եր., 1966, էջ 291-293:

հիշում, որ Բագնայրը գտնվել է քարայրների մոտ, իսկ ըստ մի լեգենդի, Շիրակավանի շրջակայքի քարանձավներում են եղել Շարայի ամբարները:<sup>17</sup>

Հաշվի առնելով ասվածը՝ Կումայրիին կարելի է համադրել հենց ենթադրյալ \*Kumar-ին: Այդ կապը կարելի է պատկերացնել, օրինակ, այսպես: Կումարրիի նախնական կենտրոնի անունը պետք է լիներ \*Կումար, կամ, որ ավելի հավանական է, \*Կումար (սեպագրում օ-ն հաղորդվել է ու-ով, իսկ սեպագիր Kummanni-ն և Kummuh / Qumaha-ն հետագայում հայտնի են, համապատասխանաբար, որպես Կումանա և Կումնագենն): Ko/umar-ին ավելացվել է տեղանուններում հաճախ հանդիպող հնդեվրոպական \*yo- ածանցը՝ \*Ko/umaryo-, որը հայերենի օրինաչափություններով կտար \*Կումայր: Մրան էլ հետագայում հավելվել է հայոց տեղանուններին բնորոշ -ի ածանցը: Եթե այդպես է, ապա Կումայրիի վերջավորությունը կապված չէ այր «քարանձավ» բառին. ընդհանրապես, այր(h) վերջավորությամբ տեղանունները կարող են տարբեր ծագում ունենալ, իսկ Շարայի քարանձավների լեգենդը, եթե իրոք առնչվում է Կումայրիի այրի բաղադրիչին, կարող է «ժողովրդական ստուգաբանության» արդյունք լինել: \*Kumar-ի ստուգաբանական կապը Թեշուրի սրբավայրեր Kummme-ի և Kummanni-ի հետ հավանական է, բայց ոչ պարտադիր: Հիշենք, որ Ուլլիկումմիի անունն էլ, ամենայն հավանականությամբ, կապված չէ դրանց հետ: Անունների մնամությունը կարող էր պարարտ հող ստեղծել այդ կերպարների և տեղանունների երկրորդային, «ժողովրդական ստուգաբանության» հիման վրա ստեղծված կապերի համար:

4. Կեղծ Պլուտարքոսի հիշատակած մի առասպելի համաձայն (De Fluviiis, XXIII, 5)՝ Միթրաս աստվածը բեղմնավորում է ժայռը, որը ծնում է Դիորվոս անունով մի որդի: Վերջինս զոհվում է պատերազմի աստված Արեսի հետ մենամարտում և վերածվում լեռան՝ Արաքս գետի մոտ: Այնհայտ է, որ այստեղ Միթրասը համապատասխանում է Կումարրիին, Դիորվոսը՝ Ուլլիկումմիին, իսկ Արեսը՝ Թեշուրին:<sup>18</sup> Դիորվոսի լեռը, հավանաբար, Մասիսն է: Այն, ըստ ազգածին ավանդության, կոչվել է Արամայիսի որդի Ամասիայի անունով, իսկ ըստ «Վիպասանքի»՝ եղել վիշապազունների բնակավայր, ուր և շղթայվել է Արտավազդը: Այստեղ մենք գործ ունենք առասպելի հետագա ճակատխությունների հետ: Հատկանշական է, որ Մասիսի մերձակա Արաքսի հովիտը հայոց մեջ կոչվել է «Արայի դաշտ», իսկ Արան անվանաբանորեն հիշեցնում է Արեսին. Շարան էլ Ամասիայի պես Արամայիսի որդին է: Այսինքն՝ խոռոչական առասպելներին համադրելի այս լեգենդները կապվել են Արարատյան դաշտում և մերձակայքում տեղայնացած ազգածին ավանդության որոշակի հերոսների հետ:<sup>19</sup>

5. Այսպիսով, հավանական է, որ Ուլլիկումմիի, Թեշուրի և Կումարրիի առասպելների հնագույն տեղայնացումներից մեկը եղել է Արևելյան Հայաստանում՝ Գեղամա լիճը, Արարատյան դաշտը և Շիրակն ընդգրկող տարածքներում, որտեղ Շիրակն իր Կումայրի քաղաքով եղել է Կումարրիի կենտրոնը: Այդ առասպելները թեև հայտնի են խոռոչական դիցաբանությունից, բայց ծագումով, ամենայն հավանականությամբ,

<sup>17</sup> Г. К а п а н ц я н, Историко-лингвистические работы, Т. I, Ер., 1956, стр. 50-51; Ս. Պետրոսյան. «Շիրակայ ամբարք»-ի շուրջ. Լրաբեր հասարակական գիտությունների, 1982, 3 (Կումայրիի ստուգաբանության վերաբերյալ՝ էջ 77-78): Հաշվի առնելով ասվածը անհավանական է թվում Կումայրիի կապը կիմմերների ցեղանվան հետ (Գ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Եր., 1987, էջ 495), որը միայն անունների մասնակի մնամության հիման վրա արված մի ենթադրություն է:

<sup>18</sup> Միթրասի և Ուլլիկումմիի առասպելների համապատասխանության վերաբերյալ տես G. Widengren, The Mithraic Mysteries in the Greco-Roman World with Special Regard to Their Iranian Background, La Persia e il Mondo Greco-Romano. Accademia Nazionale dei Lincei. Anno 363, 1966, Quaderno 76, p. 444; Միերի և Արտավազդի կովկասյան ազգակիցների՝ քարից ծնվող հերոսների, Միթրասի և Ուլլիկումմիի կապերի վերաբերյալ՝ В. Ардзинба, Нартский сюжет рождения героя из камня. Древняя Анатолия, М., 1985, стр. 157-158:

<sup>19</sup> Պետք է նկատել, որ համապատասխանությունները միարժեք չեն: Միթրասը Միիր-Միերի արխանի անվանաձևն է, բայց էպոսում Միերն ինքը պիտի վերածնվի ժայռից. Արեսի անունը համահունչ է Արային, որն ինքը Միերի տիպի մի մեռնող և հառնող կերպար է: Բայց և այնպես, հնարավոր է համադրել Մասիսի հետ կապված կերպարները՝ Արտավազդ, Ամասիա, Դիորվոս: Արտավազդի կերպարի՝ Դիորվոսից ծագման հնարավորության վերաբերյալ տես Ս. Մատիկյան, Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930, էջ 301:



հնդեվրոպական են: Մեկ այլ համանման կենտրոն ի հայտ է գալիս Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում: Խեթական աղբյուրներում այդտեղ հիշվում է Kummaha քաղաքը, նշանավոր իր ամպրոպի աստծու պաշտամունքով, ներառված Խեթական տերութայան պետական պաշտամունքի համակարգում: Այն համապատասխանեցնում են հայոց Կամայիին, որտեղ և Անի ամրոցն էր, Արամազդի գլխավոր սրբատեղին:<sup>20</sup> Արամազդը հայտնի էր որպես «հայր դիցն ամենայնի» (Ազաթանգեղոս § 785) և «ամպրոպային» (Խորենացի Բ.ձգ), այսինքն, իր կերպարում համատեղում էր Կումարիի և Թեշուրի հատկանիշները: Կամայի (< Kummaha) և Անի պաշտամունքային տեղանունների գույգը համապատասխանում է Շիրակի Կումայրիին և Անիին: Ըստ այդմ, Կումարիի և Թեշուրի առասպելները պիտի տեղայնացված լինեին ոչ միայն Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում և հարավ-արևմուտքում, այլ նաև հյուսիսում և հյուսիս-արևմուտքում. հյուսիսային կենտրոնները հավանաբար ավելի հին են, քան հարավայինները:

## КУМАЙРИ В КОНТЕКСТЕ ДРЕВНИХ МИФОВ АРМЯНСКОГО НАГОРЬЯ

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ А. Петросян \_\_\_

Кумайри был хурритским богом зерна, отцом бога грозы Тешшуба и его противника Улликуми. Его имя интерпретируется как название города “Кумар” в форме родительного падежа. В исторические времена культы хурритских богов были концентрированы в Северной Месопотамии и Сирии, но с древности они должны были быть локализованы на Армянском нагорье, вероятной родине хурритов (Ф. Хааз). В древнеармянской мифологии культ зерна был известен в Шираке, житнице Армении, эпоним которого Шара, по данным Хоренаци, может считаться божеством зерна. Название города Кумайри (ныне Гюмри) в Шираке может быть интерпретировано как суффиксированная форма древнего \*Кумара. Мифы, сопоставляемые с хурритским циклом о Кумарби и его сыновьях, известны также из соседних провинций Армении-Арагатской долины и Гегаркуника.

<sup>20</sup> Այս հարցերի շուրջ տե՛ս Ա. Քոսյան, Անի-Կամայիսը խեթական դարաշրջանում, Պատմա-բանասիրական հանդես, 3, Եր., 2002, էջ 225-226, 239:

ԱԼՆԻՈՒՆՈՒ ԶԱՂԱՔԻ ԵՎ ԱՐԵՎԱՍՏՃՈՒ ԴԵՐԸ ՎԱՂ  
ՈՒՐԱՐՏՈՒԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Ուրարտուի թագավոր Մարդուրի I-ը (մ.թ.ա. 845-825թթ.) Վան քաղաքի պարսպի շարվածքում թողել է ասուրերեն մի շարք արձանագրություններ: Բովանդակությամբ նույնական այդ արձանագրություններից մեկը բերում ենք Հ. Կարազյոզյանի թարգմանությամբ.<sup>1</sup> «Մարդուրեի արձանագրությունը, որդու Լուֆիայրիի, մեծ արքայի, հզոր արքայի, տիեզերքի արքայի, Նախիի արքայի, արքայի, որին հավասար չկա, զարմանահարաչ հովվի, (որ) չի վախենում կովից, արքայի, որ ենթարկում է անհնազանդներին: Մարդուրեն՝ որդին Լուֆիայրիի, արքան է արքաների, որը բոլոր արքաներից հարկ վերցրեց: Մարդուրեն՝ որդին Լուֆիայրիի, ասում է. - Ես քարերն այս Ալմիումու (քաղաքի) միջից բերեցի, ես պարիսպն այս կառուցեցի»:<sup>2</sup>

Մի կողմ թողնելով վաղուց հերքված այն տեսակետը, թե արձանագրության հիշատակած Ալմիումու քաղաքը նույն Տուշպա // Վանն է, անդրադառնանք նրա տեղադրության շուրջ եղած մյուս տեսակետներին: Կ. Լեհման-Հաուպտը,<sup>3</sup> իսկ նրա հետևորդները ուրիշ արևելագետներ ևս,<sup>4</sup> Ալմիումուն տեղադրում են հետագա Մանազկերտի շրջանում: Կ. Ֆ. Լեհման-Հաուպտը ուշադրություն է դարձրել այն իրողության վրա, որ Մարդուրիի կառուցած պարսպի քարերը տարբերվում են ինչպես Վանի հին կառույցների, այնպես էլ քաղաքի շրջակայքում եղած քարերից: Նրա ենթադրությամբ Մարդուրիի կառուցած պարսպի քարերը բերվել էին Մանազկերտի շրջանից՝ նախ ցամաքային, ապա ջրային՝ Վանա լճի ճանապարհով:<sup>5</sup> Կարծում ենք, որ ճիշտ է նրա տեսակետի երկրորդ մասը միայն՝ քարերը Վան են հասցվել Վանա լճով: Այսուհանդերձ, դրանք բերվել են ոչ թե հեռավոր Մանազկերտի շրջանից, այլ Վանա լճի առափնյա որևէ վայրից: Հ. Մանանդյանը Ալմիումու քաղաքի անունը առնչում է մի կողմից Ասորեստանի Մարգոն II թագավորի հիշատակած Alli բնակավայրի և Alluria գետի անուններին, իսկ մյուս կողմից՝ Ալի լեռնանցքի և մոտակա նույնանուն գյուղի անուններին:<sup>6</sup> Բայց դրանցից, առաջինների տեղադրությունը ճշտված չէ, իսկ երկրորդները ևս հեռու են Վանա լճի առափնյա շրջանից: Այս դեպքում ճշմարտությանը մոտ է դառնում Հ. Կարազյոզյանի առաջադրած այն տեսակետը, թե Ալմիումուն գտնվել է Տուշպա // Վանի մոտակայքում:<sup>7</sup> Մեր կարծիքով, այդ «մոտակայքը» գտնվել է Մանազկերտ-Վան կիսաճանապարհին, հետագա Արճեշ և Բերկրի քաղաքների միջև եղած տարածքում, Վանա լճի հյուսիս-արևելյան ափամերձ շրջանում:

Ալմիումուի մանազկերտյան տեղադրության պատճառն այն է, որ Ուրարտուի առաջին արքայանիստը՝ Արամեի (մ.թ.ա. մոտ 860-845թթ.) «թագավորական քաղաք» Արծաշկուն, նույնացվում էր հետագա Մանազկերտի հետ: Կ. Լեհման-Հաուպտի առաջադրած այս վարկածին տուրք էին տվել նաև ուրիշ արևելագետներ: Եղել են Արծաշկունի նաև այլ տեղադրություններ: Ն. Ադոնցը հնարավոր է համարում նրա տեղադրությունը նաև Բաղնոցի (Պատնոց, Պատնու) շրջանում,<sup>8</sup> Հ. Մանանդյանը՝ Ծաղկանց (Ալաղաղ) լեռնաշղթայի արևմտյան կամ հարավ-արևմտյան ճյուղավորումների վրա,<sup>9</sup> Բ. Պիտոբովսկին՝ ավելի հյուսիս՝ Արածանիի վերնագավառի Դիադին և Բայազետ շրջա-

<sup>1</sup> Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա, հ.1, Եր., 1981, էջ 39-40:

<sup>2</sup> Г. М е л и к и ш в и л и, Урартские клинообразные надписи, М., 1960, № 1.

<sup>3</sup> С. L e h m a n n - H a u p t, Corpus Inscriptionum Chaldicarum, Berlin - Leipzig, I, 1928, S. 20.

<sup>4</sup> Н. А р у т ю н я н, Биайнии (Урарту), Ер. 1970, стр. 124, Նալնի, Топонимика Урарту, Ер., 1985, стр. 23.

<sup>5</sup> С. L e h m a n n - H a u p t, Armenien einst und jetzt, Berlin - Leipzig, 1926, S. 19-20.

<sup>6</sup> Я. М а н а н д я н, О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, Ер., 1956, стр. 63-34.

<sup>7</sup> Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա, հ.1, էջ 40:

<sup>8</sup> Ն. Ա դ ո ն ց, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 354:

<sup>9</sup> Я. М а н а н д я н, Երվ. աշխ., էջ 32:

նում,<sup>10</sup> Գր.Ղափանցյանը՝ Արծկեում,<sup>11</sup> Ն. Հարությունյանը՝ Արծկեում կամ Արճեշում,<sup>12</sup> Հ. Կարապոյզյանը՝ Արճեշում, ընդ որում, հնչյունական օրինաչափ անցումների վկայակոչմամբ ապացուցելով Aršašku և *Արճեշ* < \**Արճեշ* տեղանունների կապը, ուրեմն նաև անվանակիր բնակավայրերի նույնությունը:<sup>13</sup> Հ. Կարապոյզյանի կողմից բերված ապացույցն անկասկած է դարձնում Արծաշկուի արճեշյան տեղադրությունը:

Սարգուրի I-ի կողմից արքայանիստի տեղափոխումը Դաճա/Վան ուղղակի հետևանքն էր այն իրադարձությունների, որոնց կիզակետում հայտնվել էին Արամե արքան և նրա արքայանիստ քաղաքը՝ Aršašku//Arzašku-ն: Տեղափոխության պատճառներից տվորաբար նշում են երկուսը՝ Արծաշկուի ավերված լինելու և Տուշպայի ռազմավարական տեսակետից նրան գերազանցելու հանգամանքները: Կարծում ենք, որ գոյություն է ունեցել մեկ պատճառ ևս. ինչպես կտեսնենք ստորև, Սարգուրի I-ը արևապաշտ էր, իսկ Տուշպա/Վանը Արևաստծու պաշտամունքի նշանավոր կենտրոն էր: Սարգուրի I-ինի արքայանիստը դառնալուց հետո նա վերածվեց ոչ միայն Ուրարտական թագավորության մայրաքաղաքի, այլ նաև ամբողջ թագավորության կրոնական կենտրոնի՝ այդպիսին մնալով նաև հետագայում:<sup>14</sup>

Նախ, հետևենք իրադարձությունների ծավալմանը: Ասորեստանի Սալմանասար III թագավորը (մ.թ.ա. 858-824թթ.) դեպի Հայկական լեռնաշխարհ իր ձեռնարկած արշավանքներից մեկի հետևյալ նկարագրությունն է անում. «Իմ վերադարձի ժամանակ Ալզի երկրի լեռնանցքները մտա: Ալզի երկրից մինչև Սուխմե երկիրը, Սուխմե երկրից մինչև Դայանեի երկիրը, Դայանեի երկրից մինչև ուրարտացի Արամուի Արծաշքու թագավորական քաղաքը գնացի, Արամուն հույսը դրեց իր զորքերի բազմության վրա, կռիվ ու ճակատամարտ տալու համար իր բազմաթիվ ձիավորներին իմ դեմ հանեց: Նրան պարտության մատնեցի և նրա ձիերն ու ռազմական իրերը հափշտակեցի: Նա իր կյանքը փրկելու համար բարձրաբերձ լեռները ելավ: Նրանք իմ ահեղ զենքից վախեցան և իրենց քաղաքները լքելով՝ անմատչելի լեռներում ապաստանեցին: Արծաշքուն՝ նրա թագավորական քաղաքը, շրջակայքի քաղաքների հետ, նվաճեցի: Նրա անչափ ունեցվածքը և հարստությունը դուրս բերի: Բաղաքը քանդեցի, ոչնչացրի, կրակով այրեցի»:<sup>15</sup> Արծաշկուի գրավումը Սալմանասար III-ը պատկերել էր տվել իր «Բալավաթյան պալատի» դարպասների բրոնզե պատասներից մեկի վրա: Նրա այն խոսքերը, թե Արծաշկուն լքվել է, գրավվել, քանդվել և հրկիզվել, իրենց արտացոլումն են գտել այդ պատասում. «պատկերի վրա իսկապես ցույց է տրված այրվող ամրոցը առանց պաշտպանների»:<sup>16</sup> Որ մյուս բնակավայրերը ևս նույն ճակատագրին էին արժանացել, ցույց է տրված մեկ ուրիշ պատասում՝ «Ուրարտուի պարտությունը» հակիրճ մակագրությամբ: «Այստեղ դարձյալ պատկերված է ճակատամարտը ուրարտացիների դեմ և մի մեծ այրվող ամրոց, որի մոտ ասորեստանցիները, վայրն ամայացնելով, կտրատում են ծառերը. հեռվում երևում են ոչ մեծ մի այլ ամրոց, ցցերի վրա բարձրացված թշնամիները և գլուխների մի կույտ՝ պարսպի մոտ»:<sup>17</sup>

Հետագա ոչ միայն ասորեստանյան, այլև ուրարտական արձանագրություններում Արծաշկուի մասին տեղեկություններ չկան: Ուրեմն, բնակավայրն, իսկապես, ավերված և ամայացած է եղել: Հետագա տեղեկություններ չկան նաև Ալնիոնուի մասին, որը գտնվելով Արծաշկուի շրջակայքում, նույնպես պետք է ավերված լիներ: Այդ հանգամանքով է նաև պայմանավորված լինելու Սարգուրի I-ի կողմից Ալնիոնուի քարերի փոխադրումը Տուշպա: Դրանք լինելու էին տոհմական սրբավայրի սրբազորված քարեր. սրբավայր, որն, հավանաբար, եղել է նաև Արամեի և նրա նախորդ գահակալների թագադրման վայրը: Որ Ալնիոնուն եղել է Արևի աստծուն ձոնված սրբավայր, ցույց է

<sup>10</sup> Б. П и о т р о в с к и й, История и культура Урарту, Ер., 1944, стр. 58-60.

<sup>11</sup> Գ. Ր. Ղ ա փ ա ն ց յ ա ն, Ուրարտուի պատմությունը, Եր., 1940, էջ 134:

<sup>12</sup> Н. А р у т ю н я н, Топонимика Урарту, стр. 34-35:

<sup>13</sup> Յ. Կ ա Ր ա զ ե Ն զ ե ա ն, Մեսպոպի տեղանուններ. Հայկական լեռնաշխարհը սեպագիր արքայությունում, հ.1, գիրք 1, Եր. 1998, էջ 27, 43, 191:

<sup>14</sup> Մ. Հ մ ա յ ա կ յ ա ն, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 73-74:

<sup>15</sup> Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ.1, էջ 23:

<sup>16</sup> Հայ ժողովրդի պատմություն, ՀՄՍՀ Գ-Ա հրատ., հ. I, Եր., 1971, էջ 285:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 287:

տալիս նրա անվան ստուգաբանությունը: Մեր կարծիքով, Առուստ տեղանվան մեջ առկա է այդ աստծու \*Առու անունը և –ս(ս) տեղանվանակերտ ածանցը: Վերջինս նույնական է հնդեվրոպական ծագում ունեցող –ուս վերջածանցի հետ (հմմտ. *թոշ-ուս, ք-մաստ-ուս, ճեղ-ուս* և այլն):<sup>18</sup> \*Առու դիցանունը ևս հնդեվրոպական ծագում է ունենալով՝ բաղկացած \*al- և -ու բաղադրիչներից: Սրանցից երկրորդը նույնական է դարձյալ հնդեվրոպական ծագում ունեցող –ուս վերջածանցի հետ (հմմտ. *կուենի, հոլանի, ոզնի*),<sup>19</sup> իսկ առաջինը ներկայացնում է հայերենում և հունարենում պահպանված \*al- արմատը՝ «շրջանակ, սկավառակ» նախնական նշանակություններով: Իր տեսքի պատճառով և առասպելաբանական մտածողությամբ արևն ընկալվում էր երկնային հրե շրջանակ, սկավառակ, անիվ, որի օրեկան շրջապտույտը երկնականարում նմանեցվում էր դրանց՝ իրենց առանցքի շուրջը գլորվելով ընթացքին: Արևի անձնավորյալ պատկերացմանը զուգընթաց, դրանք նշող բառերը վերածվել են Արևաստծու մակդիրների՝ երբեմն փոխարինելով թաբուի ենթարկված նրա բուն անվանը: Իր նախնական նշանակությամբ \*al- արմատը պահպանված է հայերեն և հունարեն հետևյալ բառերում: Հայերեն *աղթաման* բառում, որը նշանակում է «ձեռքի կամ ոտքի ապարանջան»,<sup>20</sup> առկա են \*աղ (<\*al-) և \*թամ (/թամբ, հմմտ. *բեմ-թ, պատշգամ-թ, սալամ-թ* և այլն) արմատները և հնդեվրոպական ծագումով –ան վերջածանցը (հմմտ. *բեր-ան, գեր-ան, դերձ-ան* և այլն):<sup>21</sup> Ընդ որում, *թամբ*-ի «ազդր կենդանույ»<sup>22</sup> նշանակությունը հուշում է, որ ճիշտ է *աղթաման* բառի նաև «տաքի ապարանջան» նշանակությունը: Անկասկած, *աղթաման* բառում \*աղ արմատն առկա է «շրջանակ, օղ» նախնական նշանակությամբ: Հմմտ. Վանում գրի առնված «Խալքըմ ընցալ էրկրնուց, Ոսկի լական (կլոր օղ) կեր կտուց» հանելուկը, որի պատասխանը «արեգակ» է:<sup>23</sup> Հայերենն ունի նույն արմատից ծագած *ալի* (<ալ-ի) «առանցք», «երկանաքար կամ ճախարակ» բառը,<sup>24</sup> որի մեջ –ի –ն հնդեվրոպական ծագումով վերջածանց է (հմմտ. *ուղ-ի, սամ-ի, տեղ-ի* և այլն):<sup>25</sup> Նույնարմատ հունարեն բառերից են ἄλωξ-ը «շրջանակ, սկավառակ», «լուսն շրջանակ, բակ (արևի կամ լուսնի շուրջը)», «կալ, կալատեղ (որը շրջանաձև է)» և ἀλεκάτη/ηλακάτα-ն՝ «առանցք, սանի», «իլ, իլիկ», «ճախարակ»:<sup>26</sup> «Արև» և «սկավառակ» >«անիվ» հասկացությունների առասպելաբանական զուգորդման հետևանքներից մեկն էլ այն է, որ *անի* բառը նշանակել է ոչ միայն «կազմած բոլորակ՝ որ շրջի ի վերայ լիստան իւրոյ, առաւել ի ձգել գկառս եւ գսայլս»,<sup>27</sup> «կառքի ակ, անիվ», «սեռն, առանցք»,<sup>28</sup> այլև «զուցու, լուսատրաց հոլովելոց»,<sup>29</sup> «երկնային մարմինների գունդը»,<sup>30</sup> «արեգակի կամ լուսնի բոլորակությունը»,<sup>31</sup> բայց հատկապես «արևի բոլորակությունը»: Ն-ՀԲ-ում *անի* բառի երկրորդ կիրառության առթիվ բերված օրինակներից առաջինները (Եզնիկ Կողբացու երկից են) վերաբերում են հենց արևին. «ճառագայթք արեգական *զանուէն* կախտալ կան: Որպես արեգակն մի է, եւ բագում. զի մի *անի* է, եւ բագում ճառագայթք»<sup>32</sup>: Այս տեսանկյունից ուշագրավ է, որ վանյան արևի աստված Շիվինին պատկերվում էր նաև արևի թևավոր սկավառակը գլխավերևին, իսկ նրա անունը եթե գրվում էր առանց

<sup>18</sup> Գ. Ջ ա հ ն ի կ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 234:

<sup>19</sup> Նույնը:

<sup>20</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ Ն-ՀԲ), հ.1, Եր., 1979, էջ 39: Բառգիրք հայոց, Զննական բնագիրք, առաջաբանը և ծանոթագրությունները Հ.Ամսյանի, Եր., 1975, էջ 12, 13: Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ.1, Եր., 1971, էջ 126:

<sup>21</sup> Գ. Ջ ա հ ն ի կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 234, 354:

<sup>22</sup> Ն-ՀԲ, հ.1, էջ 794:

<sup>23</sup> Մ. Հ ա բ ո թ յ ո ճ յ ա ն, Հայ ժողովրդական հանելուկներ, Եր., 1965, էջ 3:

<sup>24</sup> Հր. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. I, էջ 93:

<sup>25</sup> Գ. Ջ ա հ ն ի կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 231:

<sup>26</sup> Древнегреческо-русский словарь, составил И. Дворецкий, т.1, М., 1958, стр. 748.

<sup>27</sup> Ն-ՀԲ, հ.1, էջ 156:

<sup>28</sup> Հր. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. I, էջ 196:

<sup>29</sup> Ն-ՀԲ, հ.1, էջ 156:

<sup>30</sup> Հ. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. I, էջ 196:

<sup>31</sup> Մ տ. Մ ա լ ի ս ա ս յ ա ն ց, Հայերեն բացատրական բառարան, հ.1, Եր. 1944, էջ 122:

<sup>32</sup> Ն-ՀԲ, հ.1, էջ 156:

աստվածության ցուցիչի, ապա որպես հասարակ անուն նշանակում էր «արևի սկավառակ»:<sup>33</sup>

Այս տեսանկյունից պակաս ուշագրավ չեն XIX դարի վերջերին Վանում գրի առնված ազգագրական նյութերը: Դրանց համաձայն, «արևու անձն ջաղցի ջրտան ճախրին կամ գունդին ձև ունի, որ գլորվելով կը դառնա ու կընթանա, և այդ գունդի փառերեն լուստ ճառագայթներ կը ցուլանան, ինչպես ջուրի գնցուղը ջաղցի գունտեն»<sup>34</sup> կամ «արեգակ բուրբակ քանձ սելի ակն (անիվ) կրակոտ»:<sup>35</sup> Ասվածները հիմք են տալիս Ալլիոնո քաղաքին իր անունը տված \*Alni աստծուն համարելու Արևի (նրա սկավառակ-անվի) անձնավորումն հանդիսացած հնագույն հայկական մի աստվածություն:

Այս նույն աստվածության անունն է, մեր կարծիքով, պահպանված նաև նախնադարի մոզական ծիսակարգից եկող մանկական խաղերի «Ալլիս-բալլիս» խաղամուտի բանաձևում: Մրցակից կողմերի միջև խաղն սկսողի հարցը լուծվում էր հետևյալ կերպ. Մրցակից կողմերից առանձնացած մեկական խաղացողներից որևէ մեկը առաջ պարզած փակ ափերից մեկի մեջ պահած էր լինում ինչ-որ մանր իր: Նրա պահած իրը գտնելու և դրանով խաղն սկսելու իրավունք ստանալու համար, դիմացինը իր մատը հերթականությամբ դնում էր իրեն մեկնված փակ ափերից մեկ սրա, մեկ նրա վրա՝ արտասանելով հետևյալը. «Ալլիս, Բալլիս, /Հավատամ Սուրբ Սարգիս/, Ջիմ ծիլ հան, տուր հիս»:<sup>36</sup> Սուրբ Սարգիս վկայակոչումն արդեն հուշում է, որ «Ալլիս-բալլիս» բանաձևը որևէ գործողության սկիզբն ազդարարող մոզական բանաձևի վերնուշն է: Նրանում վկայակոչված են եղել մեր հեռավոր նախնիների երեք գլխավոր աստվածությունները: Ինչպես հայտնի է, Սուրբ Սարգիսը ժողովրդական քրիստոնեության մեջ հանդես է գալիս որպես հողմ-ամպրոպի հին աստվածության ժառանգորդ: Բանաձևում նրա հետ միասին հիշատակված Բալլիսը, ինչպես անունն է ցույց տալիս, լինելու էր բերրիությունն ու պտղաբերությունն անձնավորած աստվածություն: Անվան կազմության տեսանկյունից հմմտ. *«Բաղկանալ - աճել, կամ գոյանալ, կամ բազմանալ, կամ կենդանանալ, կամ պարզանալ»*<sup>37</sup> բառը և *բալ -//բաղ -//բող - (< հ.-ե. \*bhel -// \*bhol -// \*bhl)* արմատները պարունակող բուսանուններն ու կենդանիների անունները: Իսկ բանաձևն սկսող Ալլիսը (Ալլիս < Ալլիս-ս) լինելու էր եռյակի անդամներից գլխավորը և Ալլիոնո քաղաքին իր անունը տված հիշյալ \*Alni աստվածը: Մանկական խաղի այս բանաձևում, փաստորեն, հիշատակված են հնագույն հայերի եռադասյա հասարակության երեք դասերի հովանավոր աստվածները:<sup>38</sup> Ալլիսը որպես երկնային արևաստված լինելու էր քրմական դասի հովանավորը, Բալլիսը որպես բերրիությունն ու պտղաբերությունն անձնավորած աստված լինելու էր բարիքներ արտադրողների դասի հովանավորը, իսկ սուրբ Սարգիս առասպելաբանական նախատիպը՝ որպես հողմ-ամպրոպի աստված, նրա նման լինելու էր զինվորական դասի հովանավորը:

Այժմ փորձենք ճշտել, թե Արճեշի շրջանի հետագայում հայտնի բնակավայրերից որին կարող էր համապատասխանել Ալլիոնուն: Գ.Փիրդալեմյանի հաղորդմամբ XIX դ. վերջին Արճեշից արևելք գտնվող մի ավերակ բնակավայր կրում էր *Անիշատ* անունը և գտնվում էր Կտրած քար ու Շինամեջ գյուղերի միջև:<sup>39</sup> Ավերակ բնակավայրի անվան *-շատ* բաղադրիչը (Անի-շատ) ցույց է տալիս, որ ժամանակին այն քաղաք է եղել. հմմտ. *Երվանդաշատ, Արշամաշատ, Չարիշատ* և այլն: Տեղանվան *Անի-* բաղադրիչը՝ հայտնի նաև Հայաստանի ուրիշ շրջաններից (հիշենք *Անի* անունը կրած քաղաքները Դարանաղի և Շիրակ գավառներում), ծագում է հ.-ե. an-//\*Han- նախաձևից և *Անի*

<sup>33</sup> Մ. Հ մ ա յ ա կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 44-45:

<sup>34</sup> Գ. Մ ր վ ա ն ձ տ յ ա ն ց, Երկեր, հ.1, Եր., 1978, էջ 77:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 168:

<sup>36</sup> Մ տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, նշվ. աշխ., էջ 18:

<sup>37</sup> Բառգիրք հայոց..., էջ 48:

<sup>38</sup> Մ. Պ ե տ ռ ո ս յ ա ն, Հին հայոց եռամասն ամսուայ խորհուրդը, «Հանդես ամսօրեայ», 1996, էջ 420-439: Նույնի, Դասերը և եռադասության դրսևորումները հին ու վաղմիջնադարյան Հայաստանում, Գյումրի, 2001, էջ 16-21, 42-45:

<sup>39</sup> Թ. Հ ա կ ո բ յ ա ն, Մ տ. Մ ե լ ի ք -Բ ա խ շ յ ա ն, Հ. Բ ա ռ ս ե ղ յ ա ն, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.1, Եր., 1986, էջ 274:

//*Հանի* տեղանունների նման առնչվելու է նախնի աստվածների և աստվածացված նախնիների պաշտամունքին:<sup>40</sup> Հնդեվրոպական նույն արմատից է ծագում նաև հայերեն *հան/հանի* «տատ» բառը և ազգակից լեզուների մի շարք նույն նշանակությամբ բառեր: Ընդ որում, հնագույն հայերենում այս բառը ցույց է տվել ինչպես իգական, այնպես էլ արական սեռին պատկանող անձանց: Հայերենից փոխառյալ վրացերեն *հանի* բառը «նախնիներ» է նշանակում: Ինչպես Հ. Աճառյանն է գրում. «Այս բառը ցույց է տալիս, որ հնագույն հայերենում կար նաև *հանի* «տատ» բառի արականը, ինչպես է և զերմանականում»:<sup>41</sup> Անիշատ ավերակին հարևան գյուղի *Կտրած քար* անունը, կարծես, հիշում է, որ այստեղից էր Սարդուրի I-ինը տարել Վանի պարսպի քարերը, որ նա, կամ ավելի լայն ընդգրկումով Անիշատը, լինելու է նրա հիշատակած Ալնիունու քաղաքը (հավանաբար, վերականգնված Երվանդունիների օրոք):

Սարդուրի I-ինը Ալնիունուից միայն «կտրած քարեր» չէր տեղափոխել Վան: Այդ սրբազորված քարերի հետ միասին նա Տուշպա/Վան էր փոխադրել նաև Ալնիունուի պաշտամունքը, որն ինչպես տեսանք, Արևաստծու պաշտամունք էր: Իր նոր օրանում այս պաշտամունքը միաձուլվել էր Տուշպա/Վանի հովանավոր աստված Շիվինի՝ նույնպես Արևի աստծու,<sup>42</sup> պաշտամունքին: Սարդուրի I-ինը արևապաշտ էր և, բանականաբար, Արևի աստվածն էր լինելու պետության գլխավոր աստվածը, մանավանդ, որ նա աստվածն էր նաև պետության մայրաքաղաքի և կրոնական կենտրոնի: Իսկ որ Սարդուրի I-ը արևապաշտ էր, ցույց է տալիս նրա կրած անունը: Լյուդիական Արևաստծու Σάρδης անունը նշանակում է թե՛ «արև», թե՛ «տարի» և զուգահեռն է ներկայացնում հնդիրանական լեզուների \*sard «տարի» բառի՝ առկա հայոց հին տոմարի *մասասարդ* (<*մաս-սարդ* «նոր տարի») ամսանվան մեջ:<sup>43</sup> Բանն այն է, որ դեռևս նախնադարում դիտարկելով Արեգակի տարեկան թվացյալ շրջապտույտը, մարդիկ հանգել էին տարվա գաղափարին, ճիշտ այնպես, ինչպես լուսնի փուլերի դիտարկմամբ հանգել էին ամսվա գաղափարին: Ըստ այդմ, շատ լեզուներում տարին և արևը նշվում էին նույն բառով (ինչպես ամիսն ու լուսինն էին նշվում նույն բառով): Սարդուրի I-ի անվան մեջ առկա \**սարդ*-բաղադրիչը հենց «Արև, Արևաստված» է նշանակում: Գր. Ղափանցյանը գրում է. «Թերևս ուրարտական Sardur թագավորների անունը այս (Sardi Ս. Պ.) աստծու անունից է կազմվել –ur ածանցով (հմմտ. Էթիունի երկրի Veduri այրանունը, Արծրունիների «Յաշկուր» այրանունը նման –ur ածանցով), և իզուր չէր, որ ուրարտական գրողները այդ թագավորների անվան մեջ աստվածություն էին տեսնում, գրելով «Աստված RI(=Istar)+du-ri», իսկ RI գաղափարանիշը հնչվել է SAR, բայց իսկականը իհարկե սա չէ, այլ sard-ur»:<sup>44</sup> Անվան երկրորդ բաղադրիչը կարող է «որդի» նշանակել: Հ. Աճառյանը *ուրջու* «խորթ որդի» բառի մեջ առանձնացնում է հ.ե. ծագումով \*ուր «որդի» արմատը:<sup>45</sup> Այս դեպքում sardur-// «Արևորդի»:

Սարդուրի I-ինի արևապաշտ լինելու մասին է խոսում նաև նրա արքայական տիտղոսաշարը՝ հատկապես նրանում առկա «գարմանահրաշ հովիվ» բառակապակցությունը: Սա տարօրինակ է հնչում այնպիսի բառակապակցությունների կողքին, ինչպիսիք են «մեծ արքա, հզոր արքա», «արքայի, որի հավասարը չկա», «արքաների արքա»: Սա հասկանալի է դառնում միայն այն դեպքում, երբ «գարմանահրաշ հովիվը» համադրում ենք նույն տիտղոսաշարի «տիեզերքի արքա» բառակապակցության հետ, որը ևս առանձին վերցրած անհասկանալի է և տարօրինակ է հնչում: Բանն այն է, որ այս երկու բառակապակցություններն էլ գալիս են Արևի աստծուն փառաբանող ուղերձներից, որովհետև «արևային» Սարդուրի արքան համարվում էր նրա երկրային կրկնակը կամ փոխանորդը: Նույնպիսի վիճակ էր տիրում նաև Հայկական լեռնաշ-

<sup>40</sup> Լ. Պ ե տ ը յ յ ա ն, Մի հին պաշտամունքի հետքերը միջնադարյան Անիում, ԳՄՍ ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», IV, Գյումրի, 2001թ, էջ 97-101: Ս. Պետրոսյան, Սամուխայի Մայր դիցուհու պաշտամունքի ակունքները, Պատմա-բանասիրական հանդես, 2004, թիվ 1, էջ 160-173:

<sup>41</sup> Հր. Ա ճ ա ը յ ա ն, նշվ. աշխ., Եր., 1977, հ. III, էջ 33:

<sup>42</sup> Գ. Մ ե լ ի կ ի շ Վ ի լ ի, *Наири – Урарту*, Тб. 1954, стр. 169, 372-373.

<sup>43</sup> Հր. Ա ճ ա ը յ ա ն, նշվ. աշխ., հ. 3, էջ 435:

<sup>44</sup> Գր. Ղ ա փ ա ն ց յ ա ն, նշվ. աշխ., էջ 49:

<sup>45</sup> Հր. Ա ճ ա ը յ ա ն, նշվ. աշխ., հ. IV, Եր., 1979, էջ 642:

խարհին հարևան Փոքր Ասիայում, որտեղ Մուրսիլի II-ից (մ.թ.ա. 1345-1315թթ.) սկսած խեթ թագավորները իրենց ուղղակի «Արև» էին կոչում:<sup>46</sup> Նրանցից Մուվատալին (մ.թ.ա. 1315-1296թթ.) այսպես էր դիմում Արևի աստծուն. «Երկնային Արևաստված, իմ տեր, մարդկության հովիվ: Դու, Արևաստված, ելնում ես ծովից և բարձրանում երկինք: Ով երկնային Արևաստված, իմ տեր, դու ամեն օր դատաստանի ես ենթարկում մարդուն, շանը, խոզին և վայրի գազաններին»:<sup>47</sup> Ինչպես տեսնում ենք, խեթ թագավորը Արևաստծուն ոչ միայն «մարդկության հովիվ» է կոչում, այլև երկիցս՝ «իմ տեր»:

«Սիերի դռան» արձանագրությունից<sup>48</sup> պարզվում է, որ Տուշպա/Վանից բացի ուրարտական Արևի աստվածը ունեցել է մեկ այլ նշանավոր սրբավայր: Արձանագրությունից Սիսուի անունով հայտնի այդ սրբավայրի տեղադրությունը մինչև վերջերս ճշտած չէր: Բայց այն կարելի է ճշտել՝ ուղեցույց ունենալով Բերկրի գետի գետաբերանի շրջանում Սենուա թագավորի (մ.թ.ա. 810-786թթ.) կողմից Արևի աստված Շիվինին ձոնված կոթողը:<sup>49</sup> Դրա արձանագրությունից պարզվում է, որ Սենուան իրեն և իր որդու համար Արևաստծուց խնդրում էր «կյանք, ուրախություն, մեծություն», իսկ այս հանգամանքը վկայում է, որ Շիվինին եղել է ուրարտական արքայատոհմի հովանավոր աստվածներից մեկը:<sup>50</sup> Ուրեմն, Բերկրի գետի գետաբերանի շրջանում էլ պետք է գտնվեր Արևաստծու այդ նշանավոր սրբավայրը: Նկատենք, որ այդ տարածքին արևմուտքից հարում էր Ուրարտուի առաջին մայրաքաղաք Արծաշկու // Արճեշի շրջանը: Դրանք ներկայացնում են «Աշխարհացոյցի» Աղիովիտ և Առբերանի գավառները:<sup>51</sup>

Մ.թ.ա. 713թ. Ուրարտու ներխուժած Ասորեստանի թագավոր Մարգոն II-ի բանակը այս նույն շրջանում՝ Վանա լճի հյուսիս-արևելյան ափերի մոտ, ավերել էր նաև ուրարտական թագավորներին և արքայազուններին պատկանող Արբուն, Ռիարը և շրջակա բնակավայրերը:<sup>52</sup> Այս առթիվ Ն. Արոնցը գրում է հետևյալը. «Հետաքրքրական է նշել, որ հայ Արշակունիների ժամանակ ևս այն շրջանը, ուր գտնվում էին Արբուն և Ռիարը՝ Բերկրիի և Աղիովիտի մարզը Արճեշում, հատկացված էր թագավորական տան իշխանների բնակության համար»:<sup>53</sup> Ավելացնենք, որ նույնպիսի կարգավիճակ այդ շրջաններն ունեցել են նաև Երվանդունիների և Արտաշիսյանների օրոք:<sup>54</sup> Ուրարտուի արքայատոհմի ժառանգական տիրույթն հանդիսացած այս շրջանը նաև Արևաստծու պաշտամունքի գլխավոր օջախներից մեկն էր: Դրա ուղղակի վկայությունն է և այն, որ Բերկրի գետի ավազանում Արևաստծու պաշտամունքը չէր մարել նաև հետագա դարերում, իսկ նրա հիշողությունը կենդանի էր անգամ XIX-XX դդ. սահմանագլխին: Այդ են վկայում Վանում գրի առնված և «արեգակ» պատասխանն ակնկալող մի քանի հանելուկներ, ինչպես օրինակ՝

«Մեյ (մեկ) խավք մը կա իլանի (ավետաբեր)»,  
 Բարձրակտուց սիլանի (փայլուն).  
 Կուտ կուտե երկրի,  
 Կերթա թառի Բերկրի» և այլն:<sup>55</sup>

Բերկրին գտնվում է Վան քաղաքից հյուսիս, որտեղ ըստ վանեցիների, արևը երբևէ չի լինում, ուստի եթե վանեցին իր Արև-հավքին ուղարկում է Բերկրի թառելու, ապա դրանով տուրք է տալիս իր հեռավոր նախնիների այն պատկերացմանը, որով Բերկրիի շրջանն համարվել է Արև-հավքի բույնը՝ Արևաստծու իրական բնօրրանը:

Օ. Գերնին խեթական Արևի աստվածության առթիվ գրում է. «Ինչո՞ւ է ասվում, որ Արևի աստվածը ելնում է ծովից: Ենթադրություն է արվել, որ այդ բառակապակցու-

<sup>46</sup> Օ. Գ Ե Ր Ո Ւ Ն, Хетты, М. 1987, стр. 154.

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 125:

<sup>48</sup> Գ. Մ Ե Լ Ի Կ Ի Տ Վ Ի Լ Ի, Урартские клинообразные надписи, № 27.

<sup>49</sup> Ն. Ա Ղ Ն Ո Ս Գ, նշվ. աշխ., էջ 163:

<sup>50</sup> Մ. Հ Մ Վ Յ Կ Ե Կ Ե Մ Ե, նշվ. աշխ., էջ 46:

<sup>51</sup> Մ. Ե Ր Ն Մ Յ Ա Ն, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 33, 37:

<sup>52</sup> Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա, հ.1, էջ 31:

<sup>53</sup> Ն. Ա Ղ Ն Ո Ս Գ, նշվ. աշխ., էջ 194:

<sup>54</sup> Մ. Պ Ե Մ Ր Ն Ս Յ Ա Ն, Գնունի նախարարական տոհմի և գինու պաշտամունքի շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, 1999, թիվ 2-3, էջ 178-180:

<sup>55</sup> Մ. Հ Վ Ր Ն Ի Ք Յ Ն Ի Կ Ե Մ Ե, նշվ. աշխ., էջ 4:

թյունը, հավանաբար, մատնանշում է խեթական Արևի աստծու ոչ տեղական, ոչ անատոլիական ծագումը, որ նա բերվել է այստեղ արևելյան ծովափին ինչ-որ տեղ ապրած ժողովրդի կողմից: Իսկապես էլ, հայտնի է հետաքրքիր մի մանրամասն. մի տեքստում Արևի աստվածը նկարագրվում է ձկների գլխին, և գոյություն ունեւր Արևի աստծու առանձին տեսակ՝ հայտնի որպես ջրի Արևաստված»:<sup>56</sup> Արևաստծու ծովից կամ մեծ լճից (խեթ. *aruna-*)<sup>57</sup> ելնել // ծնվելու տեսանկյունից ուշադրության է արժանի մեր հեթանոսական աստվածներից Վահագնին ձուցված հայտնի օրհներգը և խեթական հիշյալ տեքստի առթիվ Վ. Իվանովի և Թ. Գամկրելիձեի արած այն դիտողությունը, թե այդ ծով // մեծ լիճը կարող էր լինել կամ Կասպից ծովը, կամ Վանա և Ուրմիա լճերը:<sup>58</sup> Մ. Հմայակյանը նախապատվությունը տալիս է Վանա լճին, որովհետև հայկական ավանդությունների համաձայն, «Արևի հանգստարանը գտնվել է Վանա լճի հատակին և Վանա լճից է ծագել արևը»:<sup>59</sup> Արճեշի շրջակայքի առնչությամբ ուշագրավ է խեթական տեքստի այն մասը, որտեղ Արևի աստվածը ներկայացված է ձկները գլխին: Ինչպես ասվեց, այստեղ՝ Բերկրի գետի գետաբերանի մոտ է գտնվել Սենուա արքայի կողմից, Արևի աստծուն ձուցված կոթողը, իսկ Բերկրի գետը «Վանա ծովու ամեննն նշանավոր գետն է այս՝ յուր ջրույն և ձկանց առատությամբ»:<sup>60</sup> Այս հանգամանքը չէր կարող վրիպել Հայոց թագավորների աչքից, որոնք էլ այստեղ կառուցել էին տվել արքունի ձկնորսարանը: Փ. Բուզանդը այն տեղադրում է «առ ավին ծովուն Բզնունեաց, յԱռեստ աւանի... ի վերայ գետակին» և կոչում «ձկնատենիքն Առեստայ»:<sup>61</sup> Այս տեսանկյունից ուշագրավ է նաև գետի ժամանակակից Բենդիմսահի//Բանդիմսահի անունը, որը պարսկերեն *band-i māhi* «ձկան ամբարտակ» բառն է, բնականաբար, նախապես տրված ոչ թե գետին, այլ գետի վրա գտնվող ձկնորսարանին:

Վերոշարադրյալը հիմք է տալիս մերժելու արևելագիտության մեջ տարածում գտած այն կարծիքները, թե Սարգուրի I-ը ծագումով Մուծածիբից էր, թե ինչպես նա, այնպես էլ իր հիմնադրած թագավորական դինաստիան կապ չեն ունեցել Ուրարտուի նախորդ գահակալ Արամեի և նրա արքայանիստ Արծաշկու/Արճեշի հետ, թե Մուծածիբում իր գլխավոր տաճարն ունեցած Խալդին ի սկզբանե Ուրարտուի գլխավոր աստվածն էր:<sup>62</sup> Ինչպես տեսանք, Սարգուրի I-ը ոչ թե խալդիապաշտ էր, այլ արևապաշտ: Նա ծանոթ չի եղել ոչ Խալդի աստծուն, ոչ էլ իր հաջորդ Իշպուհինի (մ.թ.ա. 825-810թթ.) օրոք, Մուծածիբի հպատակեցումից հետո, Ուրարտու ներմուծված նրա պաշտամունքի լեզվին: Դա ակնհայտ փաստ է, որովհետև Սարգուրի I-ի արձանագրությունները գրված են ասորերենով և Խալդիի մասին որևէ հիշատակություն չունեն, երբ նրա հաջորդների արձանագրությունները գրված են Խալդիի պաշտամունքի լեզվով և Գր. Ղափանցյանի պատկերավոր արտահայտությամբ, «հագեցված են խալդիզմով»:<sup>63</sup>

Նախնական Ուրարտուն ընդգրկում էր Վանա լճի ափերը և բավականաչափ հեռու էր գտնվում Ուրմիա լճից հարավ-արևմուտք (ներկայիս Իրաքի հյուսիս-արևելքում) տեղադրվող Մուծածիբ փոքրիկ թագավորությունից:<sup>64</sup> Սա ոչ միայն տարածքային, այլև քաղաքական տեսակետից ևս որևէ առնչություն չունեւր Ուրարտուի հետ, որովհետև մինչև Իշպուհինի կողմից հպատակեցումը, Մուծածիբը կախվածության մեջ էր Ասորեստանից: Հոգևոր-մշակութային տեսակետից ևս նախնական Ուրարտուն և Մուծածիբը հեռու էին միմյանցից: Վերջինիս կապերը բուն Ասորեստանի և հյուսիսային Միջագետքի մյուս շրջանների հետ էին, ընդ որում այնքան սերտ, որ մուծածիբյան

<sup>56</sup> *Օ. Գերնի, նշվ. աշխ., էջ 125:*

<sup>57</sup> *Դ. Գամկրելիձե, Բ. Իվանով, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тб., 1984, стр. 896.*

<sup>58</sup> *Նույնը:*

<sup>59</sup> *Մ. Հմայակյան, նշվ. աշխ., էջ 46:*

<sup>60</sup> *Գ. Սրվյանցի, նշվ. աշխ., հ. I, էջ 398:*

<sup>61</sup> *Փաստոսի Բիզանդացույ Պատմութիւն հայոց, Բնագիրը Զ. Պատկանյանի, Եր., 1987, Գ, ը, Գ, իր: Մ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 37, 109:*

<sup>62</sup> *Դ. Մելիքիշվիլի, Мусасир и вопрос о древнейшем очаге урартских племен, "Вестник древней истории", 1948, № 2, стр. 45-46.*

<sup>63</sup> *Գր. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 116:*

<sup>64</sup> *Ի. Արուտյան, նշվ. աշխ., էջ 144-145:*



Խաղի աստվածը *Խաղիա* անունով ճանաչվում և պաշտվում էր նաև Հյուսիսային Միջագետքում՝ բուն Ասորեստանը ներառյալ:<sup>65</sup>

Ի դեպ, դա վերաբերում է ոչ սակավաթիվ մարդկանց՝ սկսած շարքայիններից մինչև Ասորեստանի գոռոզ թագավորները: Ինչպես Ս. Հմայակյանն է գրում, այդ են վկայում «Ասորեստանում ապրող մարդկանց անուններ՝ կապված Խաղիի անվան հետ, ինչպես Խաղիհնասիր՝ «Խաղի պահապան», Խաղիաբուսուր՝ «Խաղի, պահպանիր», Խաղիէթիր «Խաղին փրկեց», Խաղիալի «Խաղին իմ աստվածն է»... և այլն: Այս առումով հետաքրքիր է, որ Մուծածիրի Խաղիի տաճարում արարողություն է կատարել նաև Ասորեստանի արքան»:<sup>66</sup> Խոսքը Սարգոն II-ի մասին է:

Խաղին վաղ Ուրարտուի համար խորթ աստված լինելու մասին է նախ և առաջ խոսում նրա գլխավոր տաճարի ոչ թե Ուրարտուում, այլ նրա սահմաններից դուրս՝ ենթակա Մուծածիրի թագավորության Մուծածիր/Արդինի քաղաքում գտնվելու փաստը: Դրա մասին է խոսում նաև այն փաստը, որ Մուծածիրում նրա կինը Բագմաշտու (կամ Բագբարտու) դիցուհին էր, իսկ Ուրարտուում՝ Մայր դիցուհի Ուարուբահինին:<sup>67</sup>

Վանի «Մեերի դռան» արձանագրությունը պահանջում է զոհաբերություններով տոնախմբություն կատարել «Արևի ամսին»,<sup>68</sup> բայց Արևի աստվածը՝ այս դեպքում վանյան Շիվինին, հիշատակված է դիցարանի երրորդ տեղում, իսկ առաջին տեղում Խաղին է: Պարզ է, որ «Արևի ամսին» տեղի ունեցող զոհաբերություն-տոնախմբությունը նախապես տեղի էր ունենալու Արևի աստծու պատվին: Իսկ եթե դրանք տեղի էին ունենում Վանում, ուրեմն, նախ և առաջ վերաբերելու էին Արևաստծու տեղական տարբերակին՝ վանյան Շիվինի աստծուն: Ասվեց, որ Արևաստծու պաշտամունքն այստեղ գոյություն է ունեցել Սարդուրի I-ինից էլ առաջ:<sup>69</sup>

Այս տեսանկյունից ուշագրավ է, որ ուրարտական դիցարանը ներկայացնող «Մեերի դռանը» իր անունը տված Մեերը «Մասնա ծոեր»-ի Փոքր Մեերն է՝ Միքրա // Միիր արևային աստծու վիպական ժառանգորդը:<sup>70</sup> Իշպուհինի թագավորի ձեռնարկած բարեփոխումների հետևանքով Արևի աստվածը զրկվել էր գերագույն աստծու իր դերից և ուրարտական դիցարանում իր տեղը զիջել էր դրսեկ Խաղի աստծուն: Որ դա միանգամից չէր կատարվել, վկայում է Անձավ/Անգաֆ բերդի ավերակներից (Վան քաղաքից հյուսիս-արևելք) պեղված մ.թ.ա. IX դ. վերջերով թվագրվող վահանը: Նկատենք, որ շրջանաձև վահանները ավելի վաղ առնչվում էին հենց Արևի պաշտամունքին՝ խորհրդանշելով Արևի սկավառակը: Հայտնաբերված վահանի տեսքից պարզվում է, որ Խաղին ուրարտական դիցարանում նախապես զբաղեցրել էր երկրորդ տեղը, որովհետև առյուծի վրա պատկերված աստծուն (հետագայում միայն Խաղին էր պատկերվում առյուծի վրա)<sup>71</sup> հաջորդում է ցուլի վրա պատկերված աստվածը (հետագայում միայն Թեյշեբան էր պատկերվում ցուլի վրա),<sup>72</sup> բայց նախորդում էր հետիոտն մարտնչող մի աստված: Սա լինելու է Ուրարտուի աստվածային եռյակի մյուս անդամը՝ իր առաջնային դերը դեռևս պահպանած Արևի աստված Շիվինին: Իշպուհինի պետության գերագույն քուրմն էր, ուրարտական դիցարանը համակարգողը:<sup>73</sup> Նա էր որոշել ինչպես գերագույն աստծու հարցը, այնպես էլ կրոնի ծիսակարգը և մուծածիրյան Խաղի աստծու պաշտամունքի լեզուն դարձրել Ուրարտուի թե՛ ծիսական արարողությունների, թե՛ պաշտամունքի գրագրության (սեպագիր արձանագրությունների) լեզու:

Նորամուտ այս լեզուն որպես գերագույն աստված Խաղիի պաշտամունքի լեզու տեղի հայ քրմերի կողմից ընկալվելու էր «մարդկանց լեզվից» տարբեր և նրանից

<sup>65</sup> Б. П и о т р о в с к и й, Ванское царство, (Урарту), М., 1959, стр. 221.

<sup>66</sup> Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 37:

<sup>67</sup> Г. М е л и к и ш в и л и, Наири-Урарту, стр.169, 372-373.

<sup>68</sup> Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ.1, Եր., 1981, էջ 45, 47, ծան. 1:

<sup>69</sup> Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 46:

<sup>70</sup> Գ. Մ ր վ ա ն ձ ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 88: «Մասնա ծոեր», հ.2, մասն 2, Եր., 1951, էջ 859:

Կ.Մելիք-Օհանջանյան, Միքրա-Միիրի արքայականներն ու գործակալները, «Գրական-բանասիրական հետախուզումներ», գիրք 1, Եր., 1946, էջ 269-271, 296-297:

<sup>71</sup> Մ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն, Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Եր., 1971, էջ 68:

<sup>72</sup> Նույն տեղում, էջ 69:

<sup>73</sup> Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 73:

վերադաս «աստվածների լեզու»: Հին հնդեվրոպացիների առասպելաբանական մտածողությանը բնորոշ այսպիսի տարբերակումն իր արտացոլումն է գտել նաև մյուս ժառանգ ժողովուրդների՝ խեթերի, հույների, կելտական ու գերմանական ժողովուրդների ավանդույթներում: Առասպելաբանական մտածողությամբ, աստվածը տարբերվում է մարդուց ոչ միայն նրանով, որ նա «երկնային» և «ամմահ» է, այլև նրանով, որ ունի մարդու խոսքից տարբեր յուրահատուկ խոսք:<sup>74</sup> Այդ խոսքը հասկանալի էր միայն քրմական դասի (մանավանդ նրա վերնախավի) ներկայացուցիչներին: Այս հանգամանքը հեշտացրել էր Խալդիի պաշտամունքի լեզվի (խալդերենի, ուրարտական արձանագրությունների լեզվի) մուտքը Ուրարտու՝ հայկական միջավայր: Բայց այդ նույն հանգամանքը խանգարել էր նրա լայն տարածմանը, որովհետև ոչ միայն ժողովուրդը, այլև իշխող վերնախավի շատ ներկայացուցիչներ անհաղորդ մնացին այդ լեզվին:<sup>75</sup> Այս հարցին արդարադարձած Գր. Ղափանցյանը ուսանելի դիտողություններ ունի: Նա գրում է, որ Ուրարտուի «գրավոր դոկումենտների լեզուն կարող էր որոշ ցեղի կամ խավի լեզու լինել՝ կրելով սրբազան-պաշտոնական բնույթ»:<sup>76</sup> Այդ իսկ պատճառով «ուրարտացիների մոտ գրի տարածումը այն չափի չհասավ, ինչպես այդ տեսնում ենք ասսուրների, բաբելացիների, խեթերի և մյուսների մոտ»:<sup>77</sup>

Անկասկած, Ուրարտուի հոգևոր-մշակութային կյանքում տեղ գտած հիշյալ փոփոխությունները պայմանավորված էին իր ներքին կայունությունը հաստատած, տնտեսական ու ռազմական վերելք ապրող պետությանը նորացված զաղափարախոսությամբ օժտելու պահանջով:

## РОЛЬ ГОРОДА АЛНИУНУ И БОГА СОЛНЦА В РЕЛИГИОЗНОЙ ПОЛИТИКЕ РАННЕГО УРАРТУ

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ С. Петросян \_\_\_

В надписях урартского царя Сардури I (845-825 гг. до д.н.э) из Вана говорится о доставке из города Алниуну камня для строительства стен. О местонахождении города в востоковедческой литературе до сих пор нет четкого представления. По нашему мнению, Алниуну локализуется в районе первой столицы (царского города) Урарту - Арцашку (Арчеш). Этот город был центром культа солнечного бога \*Ални - верховного бога ранней Урарту, от имени которого и происходит топоним Алниуну. При Сардури I другой центр культа Солнца - город Тушпа (Ван) стал не только столицей государства, но и его религиозным центром. По этой причине верховным богом Урарту стал местный бог Шивини, с которым был отождествлен алниунийский бог Солнца. Позже, при Ишпуини (825-810 гг. до н. э), верховным богом государства стал муцацирский бог Халди, а Шивини в государственном пантеоне занял третье место после него и Тейшебы. Однако, Шивини как бог Солнца вместе с Халди и Тейшебы считался членом главной триады урартских богов.

<sup>74</sup> Т. Г а м к р е л и д з е, В. И в а н о в, *նշվ. աշխ., հ. II, էջ 476:*

<sup>75</sup> Ս. Պ է տ ր ր ւ յ ա ն, *Նախնական Ուրարտուի գլխավոր աստծու հարցի շուրջ, Գյումրիի Մ. Նաիրանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու, Հրեյյանական գիտական նստաշրջան նվիրված ինստիտուտի հիմնադրման 60-ամյակին (տրվածներ - 1994), 2, Գյումրի, 1994, էջ 228:*

<sup>76</sup> Գր. Ղ ա փ ա ն ց յ ա ն, *նշվ. աշխ., էջ 96:*

<sup>77</sup> Նույն տեղում, էջ 100:

ԵՐՎԱՆԴՅԱՆ ՄԵԾ ՀԱՅՔԻ ՉՈՐՄ ԾԱՅՐԱՄԱՍԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՉ  
(մ.թ. ա. IV դարի վերջ)

Հայերի նախահայր Արմենոսի մասին հունական գրույցն ավանդած Կիրսիլոս Փարսալացու և Մեղիոս Լարիսացու երկը մեզ չի հասել, բայց դրա երբեմնի գոյությունը հաստատվում է հետագա մատենագիրների՝ դրան կատարած հղումների միջոցով: Դրանցից համեմատաբար ծավալուն են հույն նշանավոր աշխարհագետ Ստրաբոնի կատարածները: Արմենոսի առնչությամբ նրա երկում կարդում ենք (մեջբերում ենք կրճատումներով). 1. «Ասում են թե, Յասոնը թեսալացի Արմենոսի հետ դեպի Կողքիս նավարկության ժամանակ առաջացել է մինչև Կասպից ծով և անցել է Վրաստանը, Աղվանքը և Հայաստանի ու Մարաստանի շատ մասը... Ասում են նաև թե Արմենոսը Արմենիոն քաղաքից էր, որը գտնվում է Բոյբեիս լճի մոտ՝ Ֆերեսի և Լարիսայի միջև, թե իր հետ եղողներն էլ բնակեցան Ալիլիսենե և Սուսպիրիտիս՝ մինչև Կալաքենե և Ադիաքենե.—սա է, որ իր անունը թողել է Հայաստանին»:<sup>1</sup> 2.«Ահա մի հին ավանդություն այս ազգի մասին: Արմենոսը, Թեսալիայի Արմենիոն քաղաքից, որ գտնվում է Ֆերեսի և Լարիսայի միջև, Բոյբեյի վրա, ինչպես ասացինք, Յասոնի հետ արշավեց Հայաստան: Սրա անունով է[երկիրը] կոչվում Արմենիա, ինչպես ասում են Փարսալացին Կիրսիլոս և Լարիսացին Մեղիոս՝ երկուսն էլ զինակից Ալեքսանդրի: Նաև թե Արմենոսի հետ եղողները բնակեցան Եկեղիք, որ նախապես Ծովաց [իշխանության] տակ էր, մյուսները Միսպիրիտիսում՝ մինչև Կալաքենե և Ադիաքենե, Հայաստանի սահմաններից դուրս»:<sup>2</sup> 3. «Մարաստանի մասին խոսելիս, մենք խոսել ենք նաև Մեղեայի մասին. այս բոլորից երևում է, որ մարերը և հայերը ցեղակից են թեսալացոց՝ Յասոնի և Մեղեայի գծով»:<sup>3</sup>

Ստրաբոնի երկից կատարված այս մեջբերումներում արտացոլված են ինչպես Ալեքսանդր Մակեդոնացու հիշյալ թեսալացի զինվորականների առաջադրած կեղծ «վարկածը» Արմենոսի և հայերի թեսալական ծագման մասին, այնպես էլ Հայաստանն իրենց աչքերով տեսած մարդկանց՝ նույն այդ զինվորականների հաղորդած ստույգ տեղեկությունները մ.թ.ա. IV-րդ վերջին տասնամյակների Հայաստանի մասին: Դրանց վերաբերյալ դիտարկումներ է կատարել Ն. Ադոնցը:

Կիրսիլոս Փարսալացու և Մեղիոս Լարիսացու հաղորդումների այն մասը, որը վերաբերում է Հայաստան երկրին, պետք է արժանահավատ համարել, որովհետև «Նրանք ճանաչում են երկրի սրբավայրերը, շրջանները՝ Ուիտիան, Ալիլիսիենե, Մոֆեյենե, Արաքս գետը, Արաքսենե հովիտը և նրա երկրաբանական անցյալը,- գրում է նա,- որ Կիրսիլոսն ու Մեղիոսը Հայաստանում անձամբ են հավաքել այս տեղեկությունները, պետք է դրան հավատալ»:<sup>4</sup> Ն. Ադոնցը նաև փորձում է կռահել թեսալական այս սպանների Հայաստանում հայտնվելու ժամանակն ու հանգամանքները: Նա գրում է. «Այդ ժամանակ Հայաստանում իշխում էր Արոսանդը (Արուանդ, Երուանդ)... Գուցե Եվմենեսի օրինակով Անտիոգոսն ուզեցել է իր կողմը գրավել Արոսանդին՝ նախատեսելով 301 թվականի մեծ ճակատամարտը: Այդ նպատակով էլ, գուցե Հայաստան է ուղարկել Կիրսիլոսին և Մեղիոսին: Չուտ ենթադրություն, որ թխում է քաղաքական դրությունից»:<sup>5</sup>

Մեզ թույլ ենք տալիս անելու մեկ ուրիշ ենթադրություն՝ հիմք ընդունելով այն իրողությունները, որ «Կիրսիլոսը անձամբ դեմք է, որը ոչ մի տեղ այլևս երևան չի գալիս», իսկ Ալեքսանդր Մակեդոնացու վերջին խնջույքի հյուրընկալ թեսալացի Մեղիոսի և հիշյալ Մեղիոս Լարիսացու նույնությունը ապացուցել հնարավոր չէ:<sup>6</sup>

Ալեքսանդր Մակեդոնացու այս սպանների հետագայում այլևս հիշատակված չլինելու հանգամանքը թերևս բացատրվում է նրանով, որ սրանք, լինելով Հայաստան

<sup>1</sup> Strabo, XI, 4, 9 Ստրաբոն, Քաղեց և քարզմանեց Հր. Անառյան, Եր., 1940, էջ 33:

<sup>2</sup> Նույն տեղում, XI, 14, 12, էջ 61-63:

<sup>3</sup> Նույն տեղում, XI, 14, 14, էջ 65:

<sup>4</sup> Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 322-323:

<sup>5</sup> Նույնը:

<sup>6</sup> Նույնը:

ներխուժած Մենոնի հունա-մակեդոնական զորամասի կազմում, գերի էին ընկել և զոնե ինչ-որ ժամանակ մնացել Հայաստանում: Եթե Մենոնի մասին Ստրաբոնը որոշ տեղեկություն ունի, ապա նրա զորամասի ճակատագրի մասին որևէ բան չի հաղորդում: Ընդ որում, Մենոնի մասին նա խոսում է Հայաստանի ոսկու կապակցությամբ: Նա գրում է. «Կան ոսկու հանքեր Միսպիրիտիսի մեջ՝ Կաբալլայում, ուր ուղարկվեց Մենոնը Ալեքսանդրի կողմից զորքով, բայց խեղդամահ եղավ բնակիչների կողմից»:<sup>7</sup>

Արմենոսի առնչությամբ Ստրաբոնի ներկայացրած Արմենիա // Հայաստանն իր դարաշրջանի Հայաստանը չէ, որը, Փոքր Հայքը բացառելու դեպքում անգամ, սկսվելով Ալիլիստենից (արևմուտքում) հասնում էր մինչև Կասպից ծով (արևելքում),<sup>8</sup> որի ավիին ևս, ըստ նույն Ստրաբոնի, հայեր էին բնակվում:<sup>9</sup> Այն նաև Հերոդոտոսի դարաշրջանի (մ.թ.ա. V դար) Հայաստանը չէ, որի արևմտյան սահմանները անցնում էին Ալիլիստենն՝ հասնելով մինչև Կիլիկիա և Սև ծով:<sup>10</sup>

Արմենոսի առնչությամբ ներկայացված Արմենիա // Հայաստանը եթե Ստրաբոնի և Հերոդոտոսի դարաշրջանների Հայաստանը չէ, ապա այն կարող էր լինել Կիրսիլոսի և Մեղիտի ժամանակաշրջանի Հայաստանը: Իսկ որ դա հենց այդպես է, պարզվում է թեկուզև այն սահմաններից, որ թեսալացի այդ սպաները գծում են նրա համար: Օրինակ, ըստ նրանց, Հայաստանի սահմանը արևմուտքում կազմում էր Ալիլիստենն, իսկ այդպիսի վիճակ կարող էր ստեղծվել միայն այն բանից հետո, երբ Հայաստանի անկախությունը (և, ըստ երևույթին, միասնությունը) վերականգնած Օրոնտես // Երվանդից հունամակեդոնական նվաճողները խլել էին երկրի անդրեփրատյան տարածքը և ընդգրկվել էին իրենց ենթակա Կասպաղովկյան սատրապության մեջ: Ինչպես Հ. Մանանդյանն է գրում. «Սկզբնաղբյուրների որոշ ակնարկներից դժվար չէ կռահել, որ Փոքր Հայքը... արևելյան մասն էր Եվմենեսին տրված Կասպաղովկյան սատրապության»,<sup>11</sup> բայց ոչ ամբողջությամբ, այլ միայն իր անդրեփրատյան մասով, որովհետև «այսրեփրատյան արմենական երկրները՝ բուն Հայաստանը, մակեդոնացիներից նվաճված չէ եղել և նրանք կառավարվել են տեղական իշխանների ձեռքով»:<sup>12</sup> Կասկած լինել չի կարող, որ այդ «այսրեփրատյան արմենական երկրների» թվում էր նաև Ալիլիստենն, որն այսպիսով, ի տարբերություն անդրեփրատյան հայկական հողերի, գտնվելու էր Մեծ Հայքի կազմում:

Այս տեսանկյունից է հասկանալի դառնում, թե ինչու Կիրսիլոսի և Մեղիտի ներկայացրած Արմենիա//Հայաստանը չէր ներառում անդրեփրատյան հայկական հողերը և սկսվում էր այսրեփրատյան Ալիլիստենով: Ստորև կտեսնենք, որ Կ. Փարսալացին և Մ. Լարիսացին, իսկապես, գծում են իրենց ժամանակաշրջանի՝ մ.թ.ա. IV դարի վերջին տասնամյակների Մեծ Հայքի սահմանները, որ նրանց հիշատակած չորս երկրամասերը ցույց են տալիս Հայաստանի սահմաններն ըստ աշխարհի չորս կողմերի:

Կիրսիլոսի և Մեղիտի հիշատակած չորս երկրամասերից երկուսը՝ Ալիլիստենն և Ադիաբենեն, ստույգ տեղադրություն ունեն: Ալիլիստենն Եկեղիքն է, բայց հնում՝ ներառած նաև հարևան գավառները:<sup>13</sup> Ադիաբենեն գտնվում էր հյուսիս-արևելյան Միջագետքում՝ Մեծ և Փոքր Չաբ գետերի միջև, և կենտրոն ուներ Արբելա (ներկայիս Էրբիլը հյուսիսային Իրաքում) քաղաքը:<sup>14</sup> Ինչպես Ստրաբոնն է վկայում. «Ադիաբենը մեծավ մասամբ դաշտավայր է, և իբր Բաբելոնի մաս է համարվում, թեև ունի իր սեփական իշխանը, ինչպես և կցվել է Հայաստանին: Մարերը, Հայերը և երրորդ՝ Բաբելացիք, այս կողմերի ազգերից մեծագույնները, սկզբից հարաբերության մեջ էին իրար

<sup>7</sup> *Strabo*, XI, 14, 9, էջ 61:

<sup>8</sup> Նույն տեղում, IX, 14, 5, էջ 57, XI, 3, 2, էջ 29:

<sup>9</sup> Նույն տեղում, XI, 7, 1, էջ 35:

<sup>10</sup> *Herod*, III, 93 և V, 49, Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, քարգմանությունը Միսնո Կրկյաշարյանի, Եր., 1986, էջ 197, 305, քարտեզներ՝ «Держава Ахеменидов в начале V в. до н. э.», «Этническая карта Европы V-IV вв. до н.э.», *Всемирная история*, т. II, М., 1956.

<sup>11</sup> Հ. Մանանդյան, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*, հ. I, Եր., 1944, էջ 94:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 96:

<sup>13</sup> *Н. Адонц*, *Армения в эпоху Юстиниана*, Ер., 1971, стр. 55; *Ս. Երեմյան*, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Եր., 1963, էջ 50:

<sup>14</sup> *Н. Адонц*, *նշվ. աշխ.*, էջ 227: *Ն. Արնոց*, *նշվ. աշխ.*, էջ 325:

հետ, պատեհ առթիվ հարձակվում էին իրար վրա, հետո բանակցում և նորից հաշտվում»:<sup>15</sup> Մեջբերումից պարզվում է, որ Ադիաբենեն ոչ միայն մասնակիորեն հայաբնակ է եղել, այլև ժամանակին մասն է կազմել Հայաստանի, ըստ այսմ, Կիրսիլոսին և Մեդիոսին հանգող ստրաբոնյան հաղորդումը արմենների «մինչև Կալաքենե և Ադիաբենե» տարածված լինելու մասին կարելի է դիտարկել այս երկու տեսանկյուններից ևս: Բայց եթե Ադիաբենեի դեպքում Ստրաբոնը կարող էր նկատի ունենալ Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95-55 թթ.) ժամանակաշրջանը, ապա Կալախենեի դեպքում դա բացառվում է, որովհետև Կալախենե-ն, ի տարբերություն Ադիաբենե-ի, անհայտ անուն է այդ ժամանակաշրջանը (և ընդհանրապես Արտաշեսյան հարստության դարաշրջանը) ներկայացրած մյուս մատենագիրներին: Կալախենե-ն մինչարտաշեսյան ժամանակներից եկող անուն է:

Ստրաբոնի երկի հայերին և Հայաստանին վերաբերող հատվածները թարգմանած Հր. Աճառյանը Կալախենեն համարում է «զավատ Հին Հայաստանի»՝ հիմք ընդունելով հենց Ստրաբոնի վկայությունը. «Ստրաբոն ասում է, - գրում է նա, - «Հայաստանի սահմաններից դուրս», բայց այս խոսքը Ադիաբենեի համար պետք է առնել և ոչ Կալաքենեի»:<sup>16</sup> Հ. Մանանդյանը հունարեն *ἐξω τῶν Ἀρμενιακῶν ὄρων* բառակապակցությունը թարգմանում է «Հայկական լեռնաշխարհից դուրս»: Ի դեպ, Կալախենեի և Ադիաբենեի միասին հիշատակված չի նշանակում, թե նրանք անպայման հարևաններ էին լինելու: Միասին են հիշատակված նաև Ալիլիսենեն և Սյուսալիքիտիսը, բայց դրանք հարևաններ չէին: Մեր կարծիքով, Կալախենեի տեղադրությունը կարելի է ճշտել հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ստրաբոնի և Մեդիոսի վկայության մեջ հիշատակված են եղել վերջիններիս ժամանակվա Մեծ Հայքի չորս հակադիր երկրամասերը՝ Ալիլիսենեն՝ արևմուտքում, Սյուսալիքիտիսը՝ հյուսիս-արևմուտքում, «մինչև Կալախենեն»՝ արևելքում և «մինչև Ադիաբենեն»՝ հարավ-արևելքում:<sup>17</sup>

Կալախենեի տեղադրության հարցի պարզաբանումը սկսենք նրանից, որ սովորաբար այն որոնում են ոչ միայն Հայաստանից, այլև Ադիաբենեից էլ հարավ՝ հին Կալխունի (այժմ՝ Նիմրուդ) շրջանում:<sup>18</sup> Բայց Կալխուն՝ Ասորեստանի թագավորների նստավայրերից մեկը, գտնվում էր Հայկական լեռնաշխարհից բավականաչափ հարավ, Տիգրիսի մեջ Մեծ Չար գետի թափվելու վայրից ոչ հեռու:<sup>19</sup>

Այսպիսի տեղադրության դեպքում Կալախենեն իսկապես կգտնվեր Ադիաբենեից հարավ, իսկ Ադիաբենե՝ նրա և Հայաստանի միջև: Այս դեպքում ի՞նչ միտք կունենար Ստրաբոնի կողմից «մինչև Ադիաբենե և Կալաքենե»-ի վկայակոչումը՝ «մինչև Կալաքենե»-ի փոխարեն (միթե՞ կարելի է ասել ՀՀ հարավային սահմանն հասնում է «մինչև Գորիս և Մեղրի»):

Հ. Մանանդյանը Կալախենեն տեղադրում է Ադիաբենեից ոչ թե հարավ, այլ հյուսիս,<sup>20</sup> չնայած իր աշխատությանն ուղեկցող քարտեզում<sup>21</sup> նրա տեղադրությունը այնպիսին է, որ դարձյալ ընկնում է Ադիաբենեից հարավ: Կալախենեի Ադիաբենեից հյուսիս տեղադրելու դեպքում ևս առաջանում է նույն շփոթը՝ ինչու՞ «մինչև Ադիաբենե» ասելու փոխարեն Ստրաբոնն ասում է «մինչև Կալաքենե և Ադիաբենե»: Ուրեմն, Կալախենեն Ադիաբենեից ոչ թե հարավ, այլ հյուսիս էլ գտնվել չէր կարող: Ավելին, կարելի է ասել, որ նա Ադիաբենեին ընդհանրապես հարևան չի եղել:

Եթե Ալիլիսենե են Մեծ Հայքի արևմտյան երկրամասն էր, իսկ ինչպես տեսանք դա հենց այդպես էր, ապա նրան հակադիր Մեծ Հայքի երկրամասը կգտնվեր երկրի արևելքում: Այստեղ իշխած նախարարական տոհմերին Մովսես Խորենացին համարում է Հայկազն Կաղմոսի և Սիսակի սերունդները: Վերջիններիս շարքն է նա դասում

<sup>15</sup> *Strabo*, XVI, 1, 19, էջ 87-89.

<sup>16</sup> *Ստրաբոն*, էջ 109:

<sup>17</sup> Հ. Մանանդյան, *նշվ. աշխ.*, հ. 1, էջ 15:

<sup>18</sup> Ն. Արդույան, *նշվ. աշխ.*, էջ 325: Հայ ժողովրդի պատմություն, ՀՄՄՀ ԳՍ հրատ., հ. I, Եր., 1971, էջ 245, 534:

<sup>19</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 325, ծան. 25; Н. Арутюнян, *Схематическая карта Урарту и сопредельных стран (Топонимика Урарту, Ер., 1985)*:

<sup>20</sup> Հ. Մանանդյան, *նշվ. աշխ.*, հ. I, էջ 26, 150.

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 27:

Մյունի, Գողթնեցի, Գարդմանացի, Ծավդեացի, Ուտեացի և Գարգարացի նախարարական տոհմերը, որոնք իշխում էին Արաքս գետից հյուսիս՝ մինչև Կուր գետ ձգված տարածքներում:<sup>22</sup> Ուրեմն, նրանց հարևան Կաղմյանները՝ Հայկի թոռ Կաղմոսի սերունդները,<sup>23</sup> տեղորոշվելու են Արաքսից հարավ ընկած շրջաններում՝ հետագա Պարսպատունիքը ներառյալ: Այս շրջանների հնագույն Հայաստանի մասն համարվելու և հայաբնակ լինելու մասին վկայում են արաբագիր հեղինակների հաղորդումները: Արդ ալ-Ռաշիդ ալ-Բակրովին Ատրպատականի առթիվ հաղորդում է. «Այնտեղ, Արդաբիլի մոտ է Մավալան լեռը. դա աշխարհի մեծագույն լեռներից է... Մարգարեի [խոսքերով հաղորդում են]. թող Ալլահը նրան օրհնի և թող ողջունի, որ *Արմինիայի և Ադրբեջանի միջև կա Մավալան կոչված լեռը*: Նրա վրա է գտնվում դրախտի աղբյուրներից մեկը, ինչպես [նաև] մարգարեներից մեկի գերեզմանը և նրա շուրջ տաք աղբյուրներ, որտեղ զալիս են հիվանդները: Չյունը նրա գագաթից չի վերանում ո՛չ ամռանը, ո՛չ էլ ձմռանը»:<sup>24</sup>

Ինչպես տեսնում ենք, Մավալան // Մարալան լեռը համարվել է այն սահմանագիծը, որից հյուսիս Արմինիա // Հայաստանն էր, իսկ հարավ՝ Ադրբեջան // Ատրպատականը: Ուրեմն, այս լեռից (համանուն գագաթով և լեռնաշղթայով) հյուսիս գտնված «Աշխարհացույցի Պարսպատունիքը և շրջակայքը հեռավոր ժամանակներում ևս մասն են կազմել Հայաստանի»: Յակուտ ալ-Համավին Հայաստանին անդրադառնալիս գրում է. «Արմինիա է կոչված Նոյի որդի, Հաբեթի որդի, Ավմարի որդի, Լանթայի որդի՝ Արմինիից: Նա էր, որ առաջին անգամ եկավ այնտեղ ու բնակություն հաստատեց»:<sup>25</sup> Ըստ երևույթին, այս Արմինիի (ստրաբոնյան Արմենոսի) անունով է Խուդափերինի կամրջի վրայով դեպի Սհար, ապա և Թավրիզ ու Արդաբիլ տանող ճանապարհի դժվարին լեռնային հատվածը կոչվել Արմինիյան անցք (Arminian):<sup>26</sup> Այս տարածքների վաղնջական ժամանակներից հայաբնակ լինելու մասին են խոսում նաև արաբ մատենագիրների այն հաղորդումները, ըստ որոնց, Արմինի // Արմանի որդիներն են եղել հիմնադիր-անվանադիրները տեղական ամենամեծ բնակավայրերի: Յակուտ ալ-Համավին գրում է. 1. «*Արդաբիլ... Ասում են թե քաղաքի առաջին կառուցողը եղավ Պերոզ քաղափորը, իսկ Աբու Մալիկն ասում է, թե հավանաբար այդ քաղաքն իր անունն առել է Յունանի որդի, Լանթայի որդի, Արմինիի որդի՝ Արդաբիլից*»,<sup>27</sup> 2. «*Բայլական... ոմանք ասում են, թե կազմում է Մեծ Արմինիայի մասը և գտնվում է Շիրվանի կողմերը*: Նրա հիմնադրողը եղավ Կավատ քաղափորը Արմինիային տիրելուց առաջ: Ոմանք էլ ասում են, թե նրա հիմնադրողն է եղել Յունանի որդի, Լանտայի որդի, Արմանի արդի Բայլականը»:<sup>28</sup>

Պարսպատունիքը ներառած հիշյալ տարածքի Հայոց թագավորության կազմում ունեցած կարգավիճակի մասին պատկերացում է տալիս Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» Բ գրքի զլխի հետևյալ հատվածը. Վաղարշակ թագավորը «արևելյան կողմից, հայերեն խոսակցության վերջի սահմաններում երկու կողմնակալ է նշանակում մի-մի բյուր մարդով, նահապետական տների ցեղերից, Միսակյաններին և Կաղմոսի սերունդներից...»: Պատմահոր հաղորդման շարունակությունից պարզվում է, որ Միսակյաններին հանձնված կողմնակալությունը ընդգրկել է Արաքսի ստորին հոսանքից հյուսիս ընկած դաշտավայրը՝ Կուր գետի աջափնյակը («Աշխարհացույցի» Ուտիքը) և «այս դաշտի լեռնակողմը» («Աշխարհացույցի»Արցախը): Ուրեմն, երկրորդ կողմնակալությունը՝ Կաղմոսի սերունդների կառավարմանն հանձնվածը, գտնվելու էր առաջինից հարավ և ընդգրկելու էր Արաքսի աջափնյակը՝ Պարսպատունիքը ներառյալ:

<sup>22</sup> Մ ռ վ ս ե ս Խ ռ ռ ե ն ա զ ի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Եր., 1981, Ա, ժր, էջ 51, Բ, ը, էջ 127-129 (այսուհետև՝ Խորենացի):

<sup>23</sup> Նույն տեղում, Բ, դ, էջ 119, Բ, ը, էջ 127:

<sup>24</sup> А б д а р – Р а ш и д а л – Б а к у в и, *Китаб талхис ал-асар ва аджаиб ал-Малик ал-Какхар. Текст, перевод, предисловие, примечания и приложения*; З. Бунятова, М., 1971, стр. 61.

<sup>25</sup> Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նաիրանդյան, Եր., 1965, էջ 16; А. Н. Тер-Гевондян, *Армения и Арабский халифат*, Ер., 1977, стр. 258.

<sup>26</sup> Մ. Երեմյան, *նշվ. աշխ.*, էջ 50, 72, 80:

<sup>27</sup> Արաբական աղբյուրները ..., էջ 13-14:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 40:

Ինչպես պարզվում է Խորենացու հաղորդումից, Կաղմյանների կառավարմամբ այստեղ գոյություն է ունեցել դեռևս մակեդոնացի նվաճողների հակառակորդ Վաղարշակի (Օրոնտես // Երվանդի)<sup>29</sup> օրոք հիմնադրված կողմնակալություն: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ Մ. Պետրոսյանը ստուգաբանել է *Պարսպատունիք* գավառանունը որպես նախարարական տոհմանվան վերածված տիտղոս (հմմտ. *Սասետունի, Մաղխազունի, Մարդպետ*), որն հետագայում է դարձել գավառանուն (հմմտ. *Բզնունիք, Ապահունիք, Երուանդունիք*): Ընդ որում, տոհմանվան հիմքում ընկած *պարսպատ* բառը նա համարում է ծագումով իրանական և համարժեքը *կողմնակալ* բառի. իրան. *pars* «կողմ» + *pati* «պետ»:<sup>30</sup> «Արևելյան դռան» նախարարությունների շարքում Չորանամակը հիշատակում է Պատսպարունի (<\*Պարսպատ-ունի) նախարարությունը, որի տոհմանվան և *Պարսպատունիք* գավառի անվան կապին անդրադարձել էր Ն. Ադունցը:<sup>31</sup> Պատսպարունի // Պարսպատունի նախարարության տոհմական գավառ Պարսպատունիքը գտնվում էր Արաքսի աջ (հարավային) ափին և ընդգրկում էր այժմյան Իրանի Սիահ-քուն // Գարա-դաղ լեռնային շրջանը:<sup>32</sup>

Տեսանք, որ Կիրսիլոս Փարսալացին և Մեղիոս Լարիսացին արևելյան այս կողմնակալությունը՝ Պարսպատունիքը ներառյալ, կոչում էին «մինչև Կալախենե»: Հայտնի է, որ հին հույները օտար տեղանունները հաճախ տառադարձում էին իրենց *-ենե* տեղանվանակերտի հավելումով: Գավառանվան տեղական ձևը լինելու էր \**Կալախ*-բաղկացած \**կալ*-արմատից և *-ախ* տեղանվանակերտ վերջածանցից: Վերջինս առկա է նաև Հայաստանի ուրիշ մի շարք տեղանուններում. հմմտ. *Արց-ախ, Քաշ-ախ, Կարծ-ախ* և այլն: Իսկ արմատը, Մ. Պետրոսյանի կարծիքով, առկա է նաև Պարսպատունիքին հարավից և արևելքից հարող ներկայիս *Ղարասու* գետի ավազանում՝ նույն այս գետի հին *Քալանոտ*, անվան մեջ:<sup>33</sup> Վերջին բաղադրիչը՝ իրանական լեզուների ընդ «գետ»բառը, հետագայի հավելում է, իսկ առաջինը պարունակում է հ.-ե. նախալեզվից եկող \**kāl*- արմատը և *-ān*- վերջածանցը: Հնդեվրոպական արմատը ունի «սև, մթին», «կեղտոտ» նշանակությունը՝ գետանվանը տալով «սև գետ» իմաստը, որը պարունակում է նաև գետի ներկայիս թրք. *Ղարասու* (<*ղարա* «սև» + *սու* «ջուր») անունը:<sup>34</sup> Քանի որ «մինչև Կալախենե» տարածքում է գտնվում ներկայիս *Սիահ-քուն*//*Գարա-աղ*, այսօր «Սև լեռ» կոչված լեռնային շրջանը, իսկ Կալախենեում՝ *Քալան-ոտ*// *Ղարասու*, այսօր «Սև գետ», «Սև ջուր» կոչված գետը, ապա *Կալախենե*-ի «սև տեղ, սև վայր» ստուգաբանությունը դառնում է հիմնավոր, իսկ «մինչև Կալախենե» ձգված տարածքը լինելու է Պարսպատունիքը՝ Կաղմյանների գլխավորած կողմնակալությունը:

Ինչպես գիտենք, Ստրաբոնը Ալիլիսենեից հետո և Կալախենեից ու Ադիաբենեից առաջ հիշատակում էր Սյուսպիրիտիսը: Եթե Ալիլիսենեի հակադիրը «մինչև Կալախենե» ձգված տարածքն էր, ապա «մինչև Ադիաբենե» ձգված երկրամասի հակադիրը էլ լինելու էր Սյուսպիրիտիսը, որն, այսպիսով, գտնվելու էր Մեծ Հայքի հյուսիսարևմուտքում՝ Շորոխի ավազանում: Սյուսպիրիտիսը մեկ անգամ ևս հիշատակված ենք գտնվում Ստրաբոնի աշխատության այն հատվածում, որտեղ խոսվում էր նրա ոսկու հանքերի մասին. «Կան ոսկու հանքեր Սիսպիրիտիսի մեջ՝ Կաբալայում»:<sup>35</sup> Անդրադառնալով Սյուսպիրիտիսի տեղադրության հարցին՝ Ն. Ադունցը նախապես այն որոնում էր Շորոխ գետի ավազանում, նույնացնելով հետագա Սպեր գավառի հետ և այստեղ տեղադրելով Կաբալայի ոսկեհանքը:<sup>36</sup> Ավելի ուշ նա փոխեց սրանց տեղա-

<sup>29</sup> Լ. Պե տր ո ս յ ա ն, *Ավանդական Վաղարշակի պատմական ու վիպական նախատիպերի շուրջ*, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2002թ, էջ 136-142:

<sup>30</sup> Մ. Պե տր ո ս յ ա ն, «Ասպետ» տիտղոսի և «ասպետություն» գործակալության նախնական բնույթի պարզաբանման փորձ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1983, թիվ 4, էջ 82-84:

<sup>31</sup> Н. Адонц, *նշվ. աշխ.*, էջ 256, 321:

<sup>32</sup> Մ. Եր ե մ յ ա ն, *նշվ. աշխ.*, էջ 77:

<sup>33</sup> Արաբական աղբյուրները ..., էջ 103:

<sup>34</sup> Մ. Պե տր ո ս յ ա ն, *Թրակա-կիմերական էթնիկական տարրը Արաքսի ստորին հոսանքի շրջանում*, «Պատմա-բանասիրական հանդես», 1979, թիվ 1, էջ 195-196:

<sup>35</sup> Strabo, XI, 14, 9, էջ 61.

<sup>36</sup> Н. Адонц, *նշվ. աշխ.*, էջ 25, ծան. 2:

դրության վերաբերյալ իր տեսակետը, գրելով. «Միսայիրիտիսը ճորոխ գետի վրայի հայկական Սպերը չէ, քանի որ այն հիշատակվում է Կալաքենեի և Ադիաքենեի հետ, այնուհետք է ենթադրել, որ դա Բատման գետի լեռնային շրջանի Շուպրիան է»:<sup>37</sup> Այս առթիվ նկատենք, որ Մյուսայիրիտիսը հիշատակվում է ոչ միայն Կալաքենեի ու Ադիաքենեի, այլև Ակիլիսինեի հետ: Բացի դրանից, Բատման գետի լեռնագավառը՝ Սասունը, ավելի հեռու է Ադիաքենեից, քան Ակիլիսենեից:

Հ. Մանանդյանի կարծիքով ևս Մյուսայիրիտիսը Շուպրիան է. «Ասորեստ. արձան. šupria // Σουπιριτις», - գրում է նա, չնայած հետո, Յ. Մարկվարտին հղելով և հիմք ընդունելով ձեռագրերից մեկի *Հյուսայիրիտիս* ձևը, այն համապատասխան է դնում Քսենոփոնի հիշատակած *Հեսպերիա* ցեղանվանը:<sup>38</sup> Բայց հայտնի է, որ հեսպերիտները բնակվում էին ճորոխի ավազանում,<sup>39</sup> իսկ նրանց ցեղանունն ուղղակի կապի մեջ է Սպեր գավառանվան հետ<sup>40</sup> և ծագում է նրանից:<sup>41</sup> Ս. Երեմյանը ևս Մյուսայիրիտիսը նույնական է համարում Շուպրիայի հետ,<sup>42</sup> երբ հայտնի է, որ Հայկական Տավրոսի այդ մասում նշանավոր ոսկեհանքեր չկան: Նա ինքը Հայաստանի նշանավոր ոսկեհանքերն է համարում Փառանգլիոնը և Բոլոն (Բողբերդ), իսկ դրանք գտնվում էին Սպերի հարևանությամբ՝ Տայքում:<sup>43</sup>

Լեոն հին Հայաստանի ոսկեհանքերից առանձնացնում էր երեքը՝ Սպերում, Այրարատում և Չորրորդ Հայքի Պաղնատում գավառում: Ընդ որում, առաջին տեղը տալիս էր Սպերին, ավելացնելով, որ այստեղի ոսկեհանքը «այնքան հայտնի էր, որ Ալեքսանդր Մակեդոնացին, ինչպես վկայում է Ստրաբոնը, նրան տիրելու համար մի գումարտակ զորք ուղարկեց՝ Մեմոնի հրամանատարությամբ»:<sup>44</sup> Իսկ սա նշանակում է, որ Լեոն ստրաբոնյան Մյուսայիրիտիսը ուղղակի նույնացնում է հետագա Սպերի հետ: Նույն կարծիքին է նաև Հր. Աճառյանը, որը Մյուսայիրիտիսը համարում է «գավառ հին Հայաստանի, որ է Սպեր»:<sup>45</sup> Իրականում ոսկեհանքը գտնվում է ոչ թե հետագա Սպերում, այլ նրա հարևանությամբ, իսկ սա նշանակում է, որ ստրաբոնյան *Մյուսայիրիտիս*-ն ավելի ընդգրկում անվանում է եղել, քան հետագա *Սպեր*-ը: Ըստ այդմ, Սպերի ոսկեհանքը նույնացնում են բյուզանդական աղբյուրներից մեկում հիշատակված մերձապարխարյան Փառանգլիոնի հետ, որը տեղադրվում է Տայքի Արսեսաց փոքր գավառում, այժմյան Քարվանքի տեղում կամ մոտերքում:<sup>46</sup>

Մյուսայիրիտիսի ճորոխի ավազանի մեծ մասը, մանավանդ նրա Պարխարյան (Արևելապոնտական) լեռնաշղթային հարող շրջաններն ընդգրկած լինելու և Մեծ Հայքի ռազմավարչական միավորներից մեկը լինելու մասին են խոսում հայ և օտար պատմիչների վկայությունները: Բերենք դրանք. Վաղարշակ թագավորի իրականացրած բարեփոխումների մեջ Մովսես Խորենացին առանձնացնում է հետևյալը. «Որովհետև մակեդոնացիներին սանձահարելուց հետո, երբ պատերազմը դադարեց, քաջ Պարթևը ձեռնարկում է բարեկարգությունների, մախ և առաջ բարիքների փոխարենը հատուցանելով զորավար և իմաստուն Շամբատ Բագարատին, որ հրեաներից էր, իշխանություն տալով նրան՝ որդոց-որդի թագադիր լինել Արշակունիներից, (և սահմանելով) որ նրանից սերվող ցեղը Բագարատունի կոչվի նրա անունով... իսկ (մեր երկրի) արևմտյան կողմում, որտեղ հայերեն լեզուն վերջանում է, նրան նշանակեց կողմնակալ, բյուրերի և

<sup>37</sup> Ն. Ադոնց, *նշվ. աշխ.*, էջ 325:

<sup>38</sup> Հ. Մանանդյան, *նշվ. աշխ.*, հ. I, էջ 92, ծան. 1:

<sup>39</sup> Xen., *Anab.*, VII, VIII, 25, Քսենոփոն, *Անաբասիս, թարգմանությունը Միմոն Կրկյաշարյանի, Եր.*, 1970, էջ 197:

<sup>40</sup> Քսենոփոն, *Անաբասիս*, էջ 233:

<sup>41</sup> Ս. Պետրոսյան, *Հացագիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, «Պատմա-բանասիրական հանդես», 1981, թիվ 3, էջ 195:*

<sup>42</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 245:

<sup>43</sup> Նույն տեղում, հ. I, էջ 51:

<sup>44</sup> Լեոն, *Երկերի ժողովածու*, հ. I, Եր., 1966, էջ 139:

<sup>45</sup> Ստրաբոն, *նշվ. աշխ.*, էջ 121:

<sup>46</sup> Պարթև, *նշվ. աշխ.*, էջ 41: Կ. Առաքյալ, *նշվ. աշխ.*, էջ 25-26: Ս. Երեմյան, *նշվ. աշխ.*, էջ 40, 88:



հազարների իշխան»:<sup>47</sup> Անանուն պատմիչը (Մերեսու) Շամբատ Բագարատին կոչելով Բագարատ Փառագեան, իսկ Վաղարշակ թագավորին Արշակ (հմմտ. *Վաղ-արշակ* և *Արշակ*)<sup>48</sup> նույն այս առիթով գրում է. «Մրան Արշակ արքան արեց Հայաստան երկրի ասպետ, որ է իշխան և հրամանատար, ամենայն թագավորության հրամանաց գլուխ, այլև հայր արքայի և եղբայր»:<sup>49</sup>

Ինչպես տեսնում ենք, Մովսես Խորենացին Բագարատին կողմնակալ, բյուրեքի և հազարների իշխան է համարում մեր երկրի «արևմտյան կողմում, որտեղ հայերեն լեզուն վերջանում է», իսկ Անանուն պատմիչը նրան կոչում է «ասպետ, որ է իշխան և հրամանատար»: Հայտնի է, որ Բագրատունի ասպետների գործակալական տիրույթը՝ «ձեռակալ իշխանության երկիրը», Սպեր գավառն էր և Բագրատունի նախարարական տոհմի հենց այս տեղի ճյուղն էր կոչվում Ասպետունի և Ասպետյան (հուն. *Ἀσπετιανών*):<sup>50</sup> Մ. Պետրոսյանը ուշադրություն է դարձրել այն հանգամանքի վրա, որ եթե Մ. Խորենացին Բագրատունիների նախնի Բագարատ ասպետին համարում է կողմնակալ «արևմտյան կողմում, որտեղ հայերեն լեզուն վերջանում է», ապա Ագաթանգեղոսը «ասպետության իշխանին հատկացնում է Մեծ Հայքի հյուսիսային և հյուսիս-արևմտյան կողմերը և նրա գործն է համարում երկրի Կովկասյան և Արևելապոնտական սահմանների պաշտպանությունը»:<sup>51</sup> Ագաթանգեղոսի հունարեն «Վարքը» Գրիգոր Լուսավորչին Կեսարիա ուղեկցած հայ մեծատոհմիկներին թվարկում է հետևյալ հերթակալությունը. «Առաջին տեղում գտնվող Անգեղտան և Անձիտի կուսակալը, երկրորդ՝ Աղձնիքի մեծ բղեշխը, երրորդ՝ Մարդերի կուսակալը, չորրորդ՝ *ասպետության իշխանը, որը պաշտպանում էր Կովկասյան լեռների կողմերը և Ճանիքը*, հինգերորդ՝ Մամիկոնյանների նախարարը, սպարապետը...»:<sup>52</sup>

Ագաթանգեղոսի հունարեն «Վարքի» այս տեղեկությունը համահունչ է Դիոն Կասիոսի այն վկայությանը, որը վերաբերում է 163թ. Հայաստան ներխուժած հռոմեացիների դեմ մեր ժողովրդի մղած պայքարի մի դրվագին: Հայերի դիմադրությունը ճնշվել էր, բայց Մարկոս Ավրելիոս կայսրը իրավիճակի հետագա սրման չգնալու նպատակով համամետաքար մեղմ վարվեց նրա կազմակերպիչների հետ: Ըստ Դիոնի. «Տրդատ սատրապին, որը Հայաստանում խռովություն էր առաջ բերել և սպանել էր հենիոխների թագավորին ու նաև սուրը հանել էր՝ սպառնալով Վերոսին (կայսեր գահակից եղբորը-Լ.Պ.), որն այդ բանի համար նրան հանդիմանել էր, Մարկոս Ավրելիոսը փոխանակ սպանել տալու, աքսորեց Բրիտանիա»:<sup>53</sup> Մ. Երեմյանը ցույց է տվել, որ Տրդատ սատրապը Մ. Խորենացու հիշատակած Տրդատ Բագրատունին է,<sup>54</sup> իսկ նրա կողմից սպանված անձը «Մաքելոնների և Հեմիոքների թագավորության» արքայիկն էր, որի թագավորությունը գտնվում էր Պարթևարյան լեռների հյուսիսային լանջերին և հարևան էր ինչպես Սպերին,<sup>55</sup> այնպես էլ Տայքին:<sup>56</sup>

Հայ և օտար վերոհիշյալ պատմիչների վկայությունը և Բագրատունիների գործակալական տիրույթ Սպեր գավառի Մեծ Հայքի հյուսիս-արևմտյան մասում գտնվելու իրողությունը մեզ իրավունք է տալիս եզրակացնելու, որ ճորտիսի ավագանի Պարթևարյան լեռնաշղթային հարող շրջաններում գոյություն է ունեցել ռազմավարչական մի միավոր, որի զորավար-կառավարիչը լինում էր Բագրատունի տոհմից և կոչվում էր *կողմնակալ, ասպետ, ասպետության իշխան, սատրապ*: Ռազմավարչական այդ միա-

<sup>47</sup> Խ ո ռ ե ն ա զ ի, Բ, գ, էջ 117:

<sup>48</sup> Լ. Պ ե տ ը ն ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 136-142:

<sup>49</sup> Մերեսուի եպիսկոպոսի պատմություն, Եր., 1939, գլ.Բ, էջ 10:

<sup>50</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 785, 831:

<sup>51</sup> Մ. Պ ե տ ը ն ս յ ա ն, «Ասպետ» տիտղոսի..., էջ 79:

<sup>52</sup> Ագաթանգեղոսի Պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք), քարգմանությունը հունարեն բնագրից Հ. Բարթիկյանի, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնդյանի, «Էջմիածին», 1966, թիվ Թ-Ժ, էջ 45:

<sup>53</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 785:

<sup>54</sup> Խ ո ռ ե ն ա զ ի, Բ, կգ, էջ 235-237:

<sup>55</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 785:

<sup>56</sup> «Հայաստանը մ. թ. ա. 66 - մ. թ. 224 թվականներին» քարտեզը, (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I):

վորի առաջին զորավար-կառավարիչը եղել է Բագրատունի նախարարական տոհմի հիմնադիր Բագարատը (ըստ Խորենացու՝ Շամբատ Բագարատ, ըստ Անանուն պատմիչի՝ Բագարատ Փառագյան), որը Վաղարշակ արքայից կողմնակալ էր նշանակված Մեծ Հայքի այս կողմում: *Կողմնակալ* տերմինի դիմաց, ինչպես տեսանք, Դիոնը բերում է նրան համարժեք արեմենյան դարաշրջանից եկել *սատրապ*-ը: Ընդ որում հելլենիզմի դարաշրջանում *սատրապ*-ը երբեմն գործածվում էր որպես *ստրատեգոս*-ի համարժեք, երբեմն էլ վերջինս գործածվում էր սատրապից ավելի ցածր պաշտոնյա նշելու համար: Այդպես էր, օրինակ, Մելիկյան պետությունում:<sup>57</sup> Այսուհանդերձ, այս պետությունում սատրապը թագավորի նշանակած և նահանգի քաղաքացիական ու ռազմական իշխանությունն իր ձեռքն առած պաշտոնյա էր,<sup>58</sup> այսինքն՝ զորավար-կառավարիչ էր: Ուրեմն, Հռոմի դեմ պայքար կազմակերպած Տրդատի սատրապ լինելու հանգամանքը արդեն խոսում է այն մասին, որ նա եղել է կողմնակալը ճորոխի ավազանում գտնվող ռազմավարչական միավորի՝ օժտված ինչպես ռազմական, այնպես էլ վարչական գործառնությունով:

Այսպիսով, կասկած լինել չի կարող, որ Մեծ Հայքի հյուսիս-արևմուտքում գոյություն ունեցած ռազմավարչական միավորը ստեղծվել էր խորենացիական Վաղարշակ արքայի (այսինքն՝ անկախացած Մեծ Հայքի նախկին սատրապ Օրոմոտես//Երվանդի) կողմից, ընդգրկել էր ճորոխի ավազանի մեծ մասը և նպատակ է ունեցել պաշտպանելու «Կովկասյան լեռների կողմերը և ճանիքը» (ըստ Ագաթանգեղոսի հունարեն «Վարքի»): Ուրեմն այն սահմանակցել է Վիրքին (Իրերիա), Կողքիսին (Կոլխիդա), Ճանիքին (Խաղտիք) և ընդգրկել էր «Աշխարհացույցի» Սպերը, Տայքը և արևմտյան Գուգարքը: Բագրատունի ասպետների կառավարմանը հանձնված ռազմավարչական այս միավորն է, որ հին հույներին հայտնի է եղել *Սյուսպիրիսիս* (Συσπυρισις) անունով:

Ամփոփելով, նշենք, որ Ալեքսանդր Մակեդոնացու ուղեկիցներ Կիրսիլոս Փարսալացու և Մեդիոս Լարիսացու հաղորդումը Արմենոսի և «նրա հետ եղողների» զբաղեցրած տարածքների մասին պատմական հենք ունի և նշում է Օրոմոտես // Երվանդի հիմնադրած Երվանդունիների թագավորության հակադիր երկրամասերը՝ Ալիլիսենեն (արևմուտքում), Սյուսպիրիսիսը (հյուսիս-արևմուտքում), «մինչև Կալախենեն» ձգված տարածքը (արևելքում) և «մինչև Ադիաբենեն» ձգված երկրամասը (հարավ-արևելքում):

## О ЧЕТЫРЕХ ОКРАИНАХ ЕРВАНДИДСКОЙ ВЕЛИКОЙ АРМЕНИИ (конец IV в. до н. э.)

\_\_\_\_ Резюме \_\_\_\_\_

\_\_\_\_ Л. Петросян \_\_\_\_\_

После разгрома ахеменидской армии войсками Александра Македонского при Гавгамелах (331 г. до н. э.), сатрап Великой Армении Ерванд (Оронт) вернулся на Родину, а потом провозгласил себя царем всей Армении. На основании сохранившихся в §Географии| Страбона данных (XI, 4,9; XI, 14,12) можно заключить, что в состав его царства входили большинство армянских земель. Тогдашняя Великая Армения включала: на западе область Акилисена (охватывавшей всю территорию Екелика и сопредельных гаваров), на востоке §область до Калахены| (бассейн реки Карасу в современном Иранском Азербайджане), на северо-западе область Сиспиритида (Спер с месторождением золотых копей Тайка), а на юго-востоке §область до Адиабены| (район города Арбелы в Месопотамии).

<sup>57</sup>Э. Бикерман, Государство Селевкидов, М., 1985, стр. 184-186.

<sup>58</sup>Նույն տեղում, էջ 190-191:

ԳՐԻԳՈՐ ԴԱՐԱՆԱՂՑԻՆ ՁԱԼԱԼԻՆԵՐԻ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

XVII դարասկզբին հայ պատմագրության զարթոնքի առաջնելը դարձավ Դարանաղի գավառի Կամախ քաղաքում 1576թ. ծնված ականավոր եկեղեցական գործիչ, Գրիգոր վարդապետ Կամախեցին, կամ Դարանաղցին՝ «Բուք» մականվամբ:<sup>1</sup>

Հայ պատմագիրներից թերևս ոչ մեկը այնքան թափառական կյանք չի վարել ու փորձությունների ենթարկվել, ինչպես Դարանաղցին: 1621թ. գրած հիշատակարաններից մեկում կարդում ենք. «Եւ դարձեալ փախստեալ գոլով ի յահէ նեղչաց եկաք յԸստամբօլս՝ թէ դարձեալ երթանք յԵրուսաղէմ և արգել զմեզ սատանայ, զի բազում անցք անցին ընդ մեզ, որ ոչ զիր կու տանի եւ ոչ լեզուաւ ճառել որ կարէ: Դարձեալ աստուածային այցելութեամբն եւ խնամօք ողորմութեամբ նորին զերծաք ի յանգերծանելի վտանգիցն եւ զնացաք յԵրուսաղէմ, երեք տարի շրջեցաք աստ և անդր եւ ոչ գտաք ուրեք հանգիստ, եւ դարձեալ եկաք, այլ աստէն եւ ոչ ունիմք դադարումն...»:<sup>2</sup>

Գր. Դարանաղցու «Ժամանակագրութիւնը» բաղկացած է երեք մասից: Պատմագիրն իր օգտագործած աղբյուրների մասին ընդհանրապես չի խոսում, պատճառաբանելով դրանց անունների հայտնի չլինելը, թեև պատմագրությանը հայտնի է, որ նա բավականաչափ օգտվել է Թովմա Մեծոփեցուց:<sup>3</sup>

Աշխատության մեջ հեղինակը նաև մի քանի անգամ նշում է, որ այն, ինչի մասին ինքը գրել է, ականատեսի վկայություն է: Ինչ խոսք, նման մոտեցումը բարձրացնում է պատմական երկի աղբյուրագիտական արժեքը:

Գր. Դարանաղցու հիմնական նպատակն է եղել ներկայացնել XVI դարի վերջերին Թուրքիայի՝ հիմնականում արևելյան նահանգների, այդ թվում նաև հարավարևմտյան Հայաստանի տարածքում ջալալիների շարժման, նրանց ասպատակությունների հետևանքով դեպի արևմուտք հայերի զանգվածային արտագաղթի, ինչպես նաև ժողովրդի անկայուն վիճակի ու կրած անասելի տառապանքների պատմությունը:

1639թ. Պարսկաստանի և Թուրքիայի միջև հաստատված խաղաղությունը նվազ նպաստավոր եղավ վերջինիս և մասնավորապես Արևմտյան Հայաստանի համար, որի տնտեսական կյանքի հիմքերը խախտվել էին ոչ միայն տևական պատերազմների, այլև ջալալիների՝ 1595-1628թթ. ընթացքում պարբերաբար կրկնված ու ծավալված ասպտամբությունների պատճառով:

Ջալալիներ կամ Ջելալիներ անունն առաջացել է 1519թ. Թոխթաի (Եվդոկիա) ասպտամբության ղեկավարի՝ ոմն Ջելալի անունից:<sup>4</sup> Շարժման հիմնական զանգվածը գյուղացիներն էին, ինչպես նաև մանր ֆեոդալները:<sup>5</sup> Ջալալիների շարժումը բաժանվում է երեք շրջանի: Առաջինը 1598-1608 թվականներն են, երբ շարժիչ ուժը համարվում էին մանր ֆեոդալները, որոնք պայքարում էին իրենց ավատական տիրույթների և իրավունքների վերականգնման համար: Շարժումն ընդգրկում էր Փոքր Ասիան և Արևմտյան Հայաստանը: Երկրորդը 1608-1610 թվականներն են, երբ Օսմանյան լծի դեմ ասպտամբել էին մի շարք նվաճված ժողովուրդներ, մասնավորապես քրդերը: Շարժման առաջնորդներից մեկը՝ Ջանփոլատ Օղլին, իր գրաված շրջանները հռչակել էր անկախ և կոչ արել պայքարել Օսմանյան կառավարության դեմ: Շարժումը ծավալվել է Միջագետքում, Միրիայում և Լիբանանում: Երրորդ շրջանը՝ 1622-1628թթ., երբ թուրքական կառավարության դեմ ասպտամբել էր Էրզրումի (Կարին) Աբազա փաշան, որի նպատակն էր բարեփոխումների միջոցով ամրապնդել ֆեոդալների իշխանությունը: Ասպտամբությունը ծավալվել էր Արևմտյան Հայաստանի տարածքում՝ հսկայական վնաս պատճառելով հայերին, քրդերին ու թուրքերին: Ջալալիների շարժումը մի իսկա-

<sup>1</sup> Լ. Բ ա բ ա յ ա ն, Դրվագներ Հայաստանի XIV-XVII դդ. պատմագրության, Եր., 1984, էջ 52:

<sup>2</sup> Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ, հրատարակեց Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղէմ, 1915, էջ 76 (այսուհետև՝ Դարանաղցի):

<sup>3</sup> Լ. Բ ա բ ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 59:

<sup>4</sup> Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, էջ 469:

<sup>5</sup> Советская историческая энциклопедия, т. 5, стр. 162.

կան պատուհաս էր հատկապես հայերի համար: Ջալալիների հրոսակախմբերը տասնամյակներ շարունակ ամայացրին հայկական քաղաքներն ու գյուղերը, կոտորեցին ու զերեվարեցին հազարավոր մարդկանց: Արդյունքում՝ բազում հայեր հարկադրված հեռացան երկրից:

Ջալալիների ապստամբությունները երկրի ավերվածության, անիշխանության, սանձարձակ կեղեքման ու ճնշման արդյունք էին: Արտադրողական ուժերի անկումը, ենիչերական կամայականությունների սաստկացումը կենտրոնական իշխանության դեմ ոտքի էին հանում ներքին մահանգների զինվորներին, ուժեղացնում նրանց դասալքումներն ու տրտունջները, հանգամանք, որ իրենց նպատակների համար ճարպկորեն օգտագործում էին կենտրոնական իշխանություններից դժգոհ բանակի միջին օղակի հրամանատարական կազմը և տեղական մանր ֆեոդալները: Այդ ապստամբություններից, որ ուղղված էին սուլթանական ռազմաֆեոդալական դաժան վարչակարգի դեմ, մեծապես տուժում է Արևմտյան Հայաստանի և փոքրասիական մահանգների բնակչությունը և առաջին հերթին հայ գյուղացիությունն ու քաղաքային բնակչությունը:<sup>6</sup>

Գր. Դարանաղցին վշտով է գրում այդ վարչակարգի թողած ծանր հետևանքների մասին: Նա նշում է, որ XVII դարի սկզբում սուլթան Մուհամմադի ժամանակ երկրում վերացել էր դատն ու դատաստանը, տիրում էր կատարյալ անիշխանություն, որից էլ օգտվելով՝ ջալալիները Անատոլիայի երկրամասը ավերակ դարձրին. «Չորս պատուհաս մի զմիտյ զկնի եղեն ի վերայ ամենայն աշխարհացն, սով և մահ եւ սուր և գազանակերություն, որ շատ մարդակերություն եղեն»:<sup>7</sup> Պատմագիրը նշում է, որ սուլթան Մուհամմադի անգործության պատճառով պարսից Շահ Աբաս Առաջինը մեկ տարում բազում քաղաքներ ու գյուղեր գրավեց. «Եւ եղեն իբրև զճկունս մեծամեծք եւ փոքունք, որ զմիմեանս կլանեն... եւ զմիմեանս կու սպառէին առանց օտար թշնամեաց, այլ թշնամիք եղեն առ միմեանս եւ առ ազգայինս իրեանց, եւ այսպէս չարանալով՝ բնաջինջ արարին զամենայն աշխարհն Անատոլու... Բազում աշխարհք անմարդք դարձան, եւ ատերակք բազմացան»:<sup>8</sup> Ամենայն իրավամբ Դարանաղցին ջալալիներին համարում է գազաններ. «...ի մարդակերպ Ջալալոց գազանաց ժանեացն զերծելոյն»:<sup>9</sup> Պատմագիրը ցավով ներկայացնում է Հայաստանում ստեղծված ծանր իրավիճակը. «Խուռն ատերակութիւն եղէ ասիական աշխարհին, որ այժմ Անատոլիո կոչեն, ի ջալալոց բորբոքմանէն, մանաւանդ տառապեալ վշտատես ազգացս Հայոց աշխարհին, որ երկու սրոյ միջի գոլով միշտ եւ յանապագ՝ ի պարսից եւ ի թուրքաց, ևս առաւել յայնմ ժամանակին ի ջալալոցն անհանդուրժելի դառնագոյն նեղութեանց վտանգիցն: Եւ այսքան վտանգից միջի լինելով հանապագ, յահ եւ երկիւղ ի դողման եղեալ, ի խարխափել ծառոց տերեւանց՝ ի յայրս եւ ի փապարս լերանց եւ ի ծերպս վիմաց դիմէին փախստեայք, եւ անդ լինէր արհաւիրք ահից ի դողոց եւ յաւազակաց, ոչ թուփ թաքստեան լինէր եւ ոչ վեմ ապաւիճութեան»:<sup>10</sup>

XVII դարի սկզբին ջալալիների շարժումը ավելի ու ավելի էր ընդարձակվում, կազմավորվում էին ապստամբական նոր խմբեր, որոնք զինված, հեծյալ ու հետևակ առանձին-առանձին խմբերով ցրվում էին երկրի տարբեր կողմերը ու շարունակում իրենց թալանն ու կողոպուտը, բռնություններն ու բռնաբարությունները:<sup>11</sup> Ջալալիների ապստամբություններից հատկապես վտանգավոր էին Կարա Յազիջիի - Դելի Հասանի, ինչպես նաև Կալենդերօղլու գլխավորած շարժումները:<sup>12</sup> Ապստամբները բազմիցս ջախջախում են սուլթանական զորքերին, որոնք ուղարկվում էին ճնշելու զինված շարժումները: Ապստամբության ղեկավարներ էին համարվում հիմնականում ֆեոդալական դասակարգի սիփահիական միջնախավի ներկայացուցիչները: Սուլթանական իշխանության դեմ նրանց բացահայտ ելույթի առիթ ծառայեց սիփահիական հեծելազորի ստուգումը (յոքլաման), որն իրականացվեց 1596թ.: Դրա հետևանքով դասալքության

<sup>6</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Եր., 1972, էջ 110-111:

<sup>7</sup> Դ ա ր ա ն ա ղ ց ի, էջ 13:

<sup>8</sup> Նույնը:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 71:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 125-126:

<sup>11</sup> Մ. Ջ ո լ ա լ յ ա ն, նշվ. աշխ., էջ 165:

<sup>12</sup> Մ. Հ ա ս ր ա թ յ ա ն, Թուրքիայի պատմության ուրվագծեր, Եր., 1986, էջ 94:

մեջ մեղադրվեց և իր թիմարից զրկվեց 30 հազար մարդ, որոնք սերում էին հիմնականում կայսրության անատոլիական գավառներից:

Սոցիալական առումով շարժումը միատարր չէր: Ակադեմիկոս Մ. Ջուլայանին իր հայտնի մեմագրության մեջ ներկայացրել է ջալալիների շարժման դասակարգային հենքը և շարժման բնույթը. «ընդհանրապես գյուղերից փախչողներին անվանում էին «չիֆթբոզաններ», այսինքն՝ չիֆթ (հողակտոր - Ա. Գ.) քայքայողներ... Չիֆթբոզանների մի զգալի մասը դառնում էր ուղղակի ճամփա կտրող ավազակ և կատարում ամեն տեսակի հանցագործություններ: Նման մարդկանց անվանում էին լեվենդներ (դատարկապորտ թափառաշրջիկներ - Ա. Գ.): Դրանք դարձել էին մի տակալի պատուհաս ժողովրդի գլխին: Հենց սրանք էլ դարձան ջալալիների ապստամբության հիմնական ուժը: Ամենին էլ պատահական չէ, որ հայ մատենագրության մեջ ջալալիներն անվանվել են «գորայաք լկտիք» «ելուզակք» «գողք, աւազակք» և այլն:<sup>13</sup>

Սակայն ընդունելի է նաև այն տեսակետը, որ շարժման մասնակիցների հիմնական զանգվածը եղել է ծանր հարկերից, տուրքերից ու ֆեոդալական ամեն տեսակ կամայականություններից ծայր աստիճան քայքայված գյուղացիությունը: Բոլորովին այլ հարց է, որ գյուղացիության մի զգալի մասը կազմում էին դեռևս XVI դարի 60-70-ական թթ. ապառասակարգայնացված տարրերը (չիֆթբոզաններ, լեվենդներ), որոնք վերածվել էին ավազակների: Ա. Տվերիտինովան ջալալիների շարժման սոցիալական հենքի մասին խոսելիս նշում է դրա տարատեսակ բնույթը՝ հատկապես ընդգծելով այն, որ ջալալիների շարժումն արդյունք էր օսմանյան բռնակալության լծի ահավոր ճնշման և «սուր սոցիալական հակամարտությունների»:<sup>14</sup>

Անդրադառնալով 1609թ. Անատոլիայում ջալալիների ապստամբություններին՝ Գր. Դարանաղցին նշում է, որ Մուրադ փաշան, դրանք ճնշելով հանդերձ, ելնելով տերության շահերից՝ նպատակ ուներ նաև նորից շենացնել ամայացած Անատոլիան և սուլթանից հրովարտակ էր ստացել կրկին իրենց նախկին բնակավայրերը վերադարձնել գաղթած հայերին ու թուրքերին, որոնց «...արտաքս արարին եւ հանին ի քաղաքաց եւ ի գեղորէից եւ յազարակաց եւ թողին անխնամա»:<sup>15</sup> Պատմագիրը դառնացած է. «Անդ էր տեսանել զամենայն սիրտ ի տրտմութիւն եւ զաչս յարտատուս եւ զկակամունն մօր և մանկանց»:<sup>16</sup> Ի դեպ հիշատակարանների այն հեղինակները, ովքեր անդրադարձել են ջալալիներին, առանց բացառության գրում են նրանց վայրագությունների, քաղաքների, գյուղերի ու բնակավայրերի ավերման, հրկիզման, կողոպուտի, ժողովրդի բնաջնջման և գերեվարման մասին: Ստ. Թոխաթեցին ջալալիների առաջնորդ Կարա Յազիջիի մասին գրում է. «Նախ էառ զՌիհա քաղաք և տիրեց իւր բոլոր գեղք և մանր քաղաքացն, և զամենեցուն զապրանքն և զմալն առեալ, զոմանս սպանեալ և զտասն տարուն ի վեր եղած զտղաքն գերի առեալ. Եւ տարի մի այլ եկեալ Մալաթիա բնակեալ, և զնոսա այլ թալանեալ և մերկացուցեալ ի հոգևոր և ի մարմնատր բարութեանց»:<sup>17</sup> Հարկ է նշել, որ ծանր էր նաև թուրք բնակչության դրությունը. «Ոչ թէ քրիստոնէից միայն առնէին, մանաւանդ Տաճկաց առաւել անողորմաբար գործ էին զամենայն չարիս»,<sup>18</sup> գրում է Գ. Դարանաղցին: Ա. Մասնեցու և Ա. Դավրիժեցու նման՝ Գր. Դարանաղցին ևս նշել է ջալալի տարրեր խմբավորումների ասպատակությունների ժամանակը և նրանց գործունեության շրջանակները:

Ակադեմիկոս Մ. Ջուլայանի մոտ գտնում ենք Ջանփուլատ օղլի Ալի փաշայի գլխավորած ջալալիների շարժման բնույթի հստակ բնութագրում. 1608-1610թթ. ջալալիների ապստամբությունների համար բնորոշն այն է, որ այդ շարժումները ղեկավարվում են թուրք ֆեոդալների կողմից նվաճված մի շարք ժողովուրդների (սիրիացիներ, լիբանանցիներ, քրդեր և այլն) առաջնորդների կողմից:<sup>19</sup> Հատկապես Ջանփուլատի գլխավորած ապստամբության հիմնական նպատակն է եղել՝ թոթափել թուրք ֆեոդալ-

<sup>13</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար. հ. Ա, 1974, էջ 1:

<sup>14</sup> А. Т в е р и т и н о в а, Восстание Кара-Языджи-Делы Хасана в Турции, М-Л 1946, стр. 59.

<sup>15</sup> Դարանաղցի, էջ 145:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 147:

<sup>17</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Ա, էջ Ը:

<sup>18</sup> Դարանաղցի, էջ 143:

<sup>19</sup> Մ. Ջ ու լ ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 140, 173, 178:

ների ատելի լուծը: Այսքանով էլ այդ շարժումը բնականաբար ունեցել է նաև առաջադիմական բնույթ:

Ջալալիները ժամանակավորապես թուլացրին սուլթանական Թուրքիայի կենտրոնածիզ բռնապետությունը և առժամանակ խափանեցին վերջինիս ծրագրերը արտաքին քաղաքականության ոլորտում: Այդ ամենը տեղի ունեցավ ժողովրդի (հայ, թուրք և այլ) անագորայն տանջանքների և զրկանքների հաշվին: Այնուհանդերձ ջալալիների շարժումը ըստ էության գյուղացիական շարժում չէր, թեև նրա շարժիչ ուժերի մեջ էին մտնում նաև տնտեսապես քայքայված գյուղացիությունը և նրա ապադասակարգայնացված տարրերը:<sup>20</sup>

Թվարկելով ջալալի ղեկավարների անունները՝ պատմագիրը գրում է. «Սոքա ամենեքեան ջալալիք էին, որք ոչ հնագանդ էին թագաորին, և ոչ ի տեղի ուրեք զկայ առեալ բնակէին, այլ աշխարհաւերք և աշխարհակործանք, և ուր և լսէին զհամբաւ շինութեան, դիմեալ անոր հասանէին, աւարեալ կողոպտէին և զշինուածսն հրդեհեալ այրէին»:<sup>21</sup> Արժանահիշատակ է նաև այն փաստը, որ ջալալի մի շարք ղեկավարներ, հայցելով սուլթանի ներողամտությունը և կայսրության տարբեր մասերում մի-մի գավառ ստանալով, հաճախ հրաժարվում էին իրենց ապստամբական «գաղափարներից»: Իսկ թե նրանցից յուրաքանչյուրը նոր պաշտոնավայրում ինչպիսի գործունեություն էր ծավալում, այդ մասին ցավով է տեղեկացնում Գր. Դարանաղցին:<sup>22</sup>

Ջալալիների շարժման հետևանքներից մեկը եղավ հայ ժողովրդի զանգվածային արտագաղթը մոտակա կամ հեռավոր երկրներ: Սուլթանական Թուրքիան ջալալիներին օգտագործում էր նաև շահական Պարսկաստանի դեմ: Ջալալիների ջոկատները հսկայական նյութական միջոցներ էին օգտագործում: Այսպես, Առաքել Դավրիժեցին, օգտվելով ժամանակակիցներից մեկի տվյալներից, նշում է Կարա Յազիջիի գործի մեկ օրվա ապրուստի հետևյալ ծախսերը. «Եւ ասէին թէ յամենայն ատուր զայս չափ ծախս ունէր, այս է ի մի օրն, զերեսուն մոթ զարի տայր երիվարացն, և այս Սիջազիտաց մոթն է, որ ամէն մոթ՝ երկու հարիւր քսան և չորս լիտրն զայ Հռոմանց լարովն, և չորս հարիւր լիտր հաց, հարիւր և տասն ոչխար, ԼԵ լիտր բրինձ, լիտր իւղ, և Շ դուռուշ ռոճիկ, զի օրն Ռ դուռուշ ծախք ունի ասէին»:<sup>23</sup> Թե ինչքան են ստույգ այս տվյալները դժվար է ասել, սակայն հավաստի է այն, որ մի քանի հազարի հասնող ջալալիների զորքը անհրաժեշտ չափով ապրուստ անշուշտ պետք է ունենար: Հարց է առաջանում. եթե ջալալիները պետական միջոցներից ոչինչ չէին ստանում, ապա որտեղից էին նրանց միջոցները գոյանում: Պարզ է՝ կողոպուտից, բռնագրավումներից և կոտորածներից: Մա թուրք նվաճողներին բնորոշ գործելաոճ էր, որը ժառանգել ու իրագործում էին ջալալիները:

Մանրամասն նկարագրելով ջալալիների շարժման ավերածությունների հետեւվանքները՝ Ա. Դավրիժեցին գրում է. «Եւ ոչ միայն այս Ջալալիքս այսպէս առնէին, գոյին և այլք Ջալալիք՝ ոմանք յուրվք՝ և ոմանք սակաւք, որ ի տեղիս տեղիս զկայ առեալ և որջացեալք էին՝ զայսպիսի գործս գործէին»:<sup>24</sup> Պատմագիրը դառնացած նշում է, որ անգամ պակասել է աստծո հանդեպ ունեցած երկյուղը, և ամենուր տիրում է անօրինականություն ու ավերածություն. «... երկիրն անտէր և ամայի էր յաշխարհակալ բռնաւորաց. և ամենայն ոք զախորժակս կամաց իւրոց կատարէր»:<sup>25</sup>

Ա. Դավրիժեցի պատմագիրն ընդհանրապես խիստ բացասաբար է տրամադրված ջալալիների նկատմամբ և այդ շարժումների բնույթն ու էությունը միանշանակ կերպով համարում է «աշխարհաւերք և աշխարհակործանք»:<sup>26</sup>

<sup>20</sup> И. Петрушевски, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI начале XIX вв., Л., 1949, стр. 328.

<sup>21</sup> Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ, Վաղարշապատ, 1896, էջ 87 (այսուհետև՝ Դավրիժեցի):

<sup>22</sup> Դ ա ղ ա ղ ի ղ ի, էջ 25, 92, 101:

<sup>23</sup> Դ ա վ ը ի ժ ե ց ի, էջ 632:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 85:

<sup>25</sup> Նույնը:

<sup>26</sup> Դ ա վ ը ի ժ ե ց ի, էջ 87:

Ջալալիների նման քաղաքականությունը ամենայն հավանականությամբ հետագայում օրինակ հանդիսացավ համիդյան և երիտթուրք ջարդարարների գործունեության համար, որոնք ավելի ուշ բնաջնջման նման եղանակը բարձրացրին պետական քաղաքականության մակարդակի՝ կիրառելով հայ ժողովրդի նկատմամբ:

Ա.Դարանաղցու «Ժամանակագրություն»-ը կարևոր աղբյուր է Թուրքիայի XVII դարի առաջին կեսի, հատկապես 30-ական թվականների ռազմաքաղաքական իրադարձությունների ուսումնասիրության համար: Նկարագրած իրադարձությունները մեծ մասամբ ճշմարտասպառում են, քանզի հեղինակն ականատես է եղել նշված իրադարձություններին, իսկ որոշ դեպքերում էլ գրի է առել ականատեսներից:

## ГРИГОР ДАРАНАГЦИ О ДВИЖЕНИИ ДЖАЛАЛИНОВ

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *А. Гаспарян* \_\_\_

Григор Даранагци, предтеча возрождения армянской историографии в XVII в., в своей работе представил бурные военно-политические события, происходящие в Западной Армении и Турции. Особенно тщательно представлено движение джалалинов, которое является результатом безвластия и угнетения, царящих в Османской империи в XVII веке. Вследствии восстаний джалалинов, направленных против жестокой султанской военно-феодальной системы, в основном страдает население Западной Армении и малоазиатских губерний. Это движение временно ослабило деспотизм центральной султанской Турции и одновременно сорвало некоторые ее планы внешней политики.

1828-1829թթ. ԳԱՂԹԱԾ ՊԱՐՄԿԱՀԱՅԵՐԻ ԹՎԱԶԱՆԱԿԻ  
ՀԱՐՅԻ ՇՈՒՐԶ

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմն ավարտվեց ռուսների հաղթանակով: 1828 թ. փետրվարի 10-ին կնքված Թուրքմենչայի պայմանագրի III հոդվածով «պարսից շահն իր և իր հաջորդների անունից մեկընդմիջտ որպես Ռուսաստանի սեփականություն ճանաչեց Երևանի և Նախիջևանի նախկին խանությունները»<sup>1</sup>: Թուրքմենչայի պայմանագրի վերոհիշյալ կետը բախտորոշ դեր խաղաց հայ ժողովրդի կյանքում: Բխելով վերջինիս ցանկություններից ու պահանջներից՝ այն կենսական նշանակություն ունեցավ հայության համար: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո ցարական կառավարության կողմից արված հաջորդ տրամաբանական քայլն եղավ նույն պայմանագրի XV հոդվածը, որով պարսկահայատակ քրիստոնյաներին իրավունք տրվեց մեկ տարվա ընթացքում, իրենց ընտանիքներով ու շարժական գույքով, անարգել գաղթել ռուսական տիրապետության սահմանները<sup>2</sup>: Բնակչության զանգվածային այս տեղաշարժը, հիմնովին փոխելով Ռուսական կայսրության կազմի մեջ մտած Արևելյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը, մեծապես նպաստեց վերջինիս տարածքի վրա հայահավաքման գործին: Միևնույն ժամանակ կազմակերպման ու իրականացման փուլերում թույլ տրված որոշ թերությունների պատճառով այն անսպառ վեճերի ու տարաձայնությունների պատճառ դարձավ ինչպես անցյալի, այնպես էլ ժամանակակից հայ և ռուս պատմաբանների միջև: Հատկապես լուրջ տարաձայնություններ ծագեցին գաղթականների թվի շուրջ:

Պատմագիտական գրականության մեջ և այլ աղբյուրներում պարսկահայ գաղթականների թվի տարբերությունը տատանվում է 7-11 հազար ընտանիքի միջև:

Ս. Գլինկան<sup>3</sup>, Վ. Պոտտոնը,<sup>4</sup> Ստ. Պալասանյանը<sup>5</sup> և «Հայ ժողովրդի պատմության քննությանը վերաբերող վավերագրերի ժողովածուի»<sup>6</sup> հեղինակները հիշատակում են, որ «ավելի քան 8000 ընտանիք, որը կազմում է, ենթադրելով 5 հոգի յուրաքանչյուր ընտանիքում, մինչև 40000 մարդ... Լազարյան Ղազար գնդապետի հորդորմամբ թողին իրենց տունուտեղը և անցան Ռուսաց նոր տիրած Նախիջևանի և Երևանի գավառները»: Լեոն Պարսկաստանից գաղթած հայերի թիվը համարում է արդեն 45-50000 մարդ<sup>7</sup>: Պարսկահայ գաղթականներին 8249 ընտանիք՝ 45000 մարդ են հաշվում Ե. Գեղամյանը<sup>8</sup> և Ալ. Երիցյանը<sup>9</sup> (մեկ այլ տեղ Ալ. Երիցյանը գաղթած պարսկահայերի թիվը հասցնում է 50-60000<sup>10</sup>): Պարսկահայ գաղթականների թիվը խիստ ուռճացված է Երևանի հասարակության ներկայացուցիչների՝ 1828թ. հուլիսին Էջմիածնի հոգևոր կառավարությանն ուղղած նամակում՝ 20000 ընտանիք կամ 100000 մարդ<sup>11</sup>: Վերջապես խնդրո առարկայի վերաբերյալ արդեն բացահայտ սխալվում է Շչերբատովը, հավատացնելով, թե «Պարսկաստանից հայերի գաղթի հարցում Պասկևիչի հոգածու-

<sup>1</sup> *Договоры России с Востоком, политические и торговые, составил и издал Т. Юзефович, СПб., 1869, стр. 215.*

<sup>2</sup> *Նույն տեղում, էջ 221-222:*

<sup>3</sup> *С. Г л и н к а, Описание переселения армян аддербиджанских в пределах России, М., 1831, стр. 131.*

<sup>4</sup> *В. П о т т о, Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях, т. 3, ч. 4, СПб., 1887, стр. 732.*

<sup>5</sup> *Ստ. Պ ա լ ա ս ա ն յ ա ն, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1902, էջ 494:*

<sup>6</sup> *Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. 1, М., 1833, стр. 54-55.*

<sup>7</sup> *Լ ե ո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս Բ, Եր., Պետական համալսարանի տպակետիս, 1927, էջ 116:*

<sup>8</sup> *Ե. Գ ե դ ա մ յ ա ն, Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում, Բաքու, 1915, էջ 139:*

<sup>9</sup> *Ալ. Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայր XIX դարում, հ. Ա, Թիֆլիս, 1894, էջ 333:*

<sup>10</sup> *Ալ. Երիցյան, նշվ. աշխ., էջ 307:*

<sup>11</sup> *Լ ե ո, Պատմություն Երևանի հայոց թեմական դպրոցի 1877-1912, Թիֆլիս, 1914, էջ 104:*



թյունն այնքան գործնական էր և եռանդուն, որ Թուրքմենչայի պայմանագրից հետո 80000 ընտանիքներ գաղթեցին Ատրպատականից Անդրկովկաս»:<sup>12</sup> Նման կարծիքը ընդհանրապես հեռու է իրականությունից և կարող է ունենալ միայն երկու բացատրություն. կա՛մ Շչերբատովը միտումնավոր է մեծացրել գաղթականների քանակը՝ այս հարցում ևս Ի. Պասկևիչին մեծարելու համար, կա՛մ էլ գործ ունենք տպագրական սխալի, կամ վրիպակի հետ:

Հատկանշական է այն, որ խնդրո առարկայի վերաբերյալ տարբեր, հաճախ իրարամերձ ու կասկածելի տեղեկություններ են հաղորդում հենց իրենք՝ գաղթի կազմակերպիչները և իրականացնողները: Օրինակ, համաձայն գաղթի հանձնաժողովի նախագահ գեղապետ Ե. Լազարյանի՝ գլխավոր հրամանատարին ներկայացրած զեկուցագրի՝ 1828 թ. հունիսի 14-ի դրությամբ Ատրպատականից Արևելյան Հայաստան էր գաղթել 6126 ընտանիք<sup>13</sup>: Նույն հունիս ամսվա ընթացքում Պասկևիչին ներկայացրած իր հաջորդ զեկուցագրում Լազարյանը նշում էր, թե ռուսական տիրույթներում հաստատված գաղթականների թիվն արդեն հասել է 6798 ընտանիքի, իսկ հաջորդ ամսվա սկզբին պարսկահայերի գաղթի մասին ներկայացրած իր ընդհանուր հաշվետվության մեջ ուղղակի գրում է. «... ավելի քան 8249 հայկական ընտանիք իմ կողմից գաղթեցվել է Հայկական մարզ»<sup>14</sup>: Իրարամերձ են նաև Ն. Աշտարակեցու հաղորդած տվյալները: Այսպես, եթե մինչև գաղթի սկսվելը Ն. Աշտարակեցին ստուգապես համոզված էր դեպի Երևանի և Նախիջևանի պրովինցիաներ գաղթելու ցանկություն հայտնած մոտ 5000 հայկական և 10000 ասորի նեստորական ընտանիքների քանակի հարցում, ապա գաղթի ավարտից հետո խոսում է միայն 8000 ընտանիք նորեկների մասին:<sup>15</sup> Մինչդեռ նրա կողմից Ատրպատական ուղարկված Ստեփան եպիսկոպոսի և Նիկողայոս վարդապետի տվյալներով՝ գաղթականների թիվը 10000 ընտանիք էր<sup>16</sup>: Գաղթած պարսկահայերի թվի մասին այլ կարծիք էր հայտնում նաև Ատրպատականի թեմի առաջնորդ Բարսեղ եպիսկոպոսը, որը գրում էր, թե ութ ամիսների ընթացքում «ի քաղաքաց և ի գաւառացն Գարիժու, Մարաղայու, Խոյայ, Սալմաստու, Ուրմիայ, Մեօքմենաւայու, Չալտրանայ, Աւաճուղայ և յայլոց նահանգաց, յորս գտանիւր յազգէն մերմէ Հայոց, ի գումար արկանելով մետասան հազար (տասնմեկ հազար -Ա.Հ.)տունս հանաք և չուեցուցաք զնոսին յայսկոյս Երասխ գետոյ»<sup>17</sup>: Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող մեկ այլ փաստաթղթի համաձայն՝ Ատրպատականից Արևելյան Հայաստան գաղթել էր 8510 ընտանիք<sup>18</sup>: Եվ վերջապես պարսկահայ գաղթականների քանակի մասին գոյություն ունի մեկ այլ թվային տվյալ ևս (6946 ընտանիք կամ 35560 մարդ),<sup>19</sup> որն ի հայտ է եկել 1829-1832 թթ. կամերալ ցուցակագրման ժամանակ, և որի մասին ավելի մանրամասն կխոսենք ստորև: Առայժմ միայն նշենք, պարսկահայ գաղթականների քանակի մասին վերոբերյալ բոլոր թվային տվյալներն էլ թերի են ու կարիք ունեն վերանայման: Պարսկահայերի գաղթի վերաբերյալ արխիվային նյութերի, ինչպես նաև պատմական գրականության մեջ հայտնված տեսակետների մանրագնին քննությունը մեզ թույլ է տալիս ասել, որ գաղթած ընտանիքների թիվը ավելին է, քան ներկայացված է Ե. Լազարյանի զեկուցագրում և ընդունված հայ, ինչպես նաև ռուս պատմագրության կողմից: Մեր տեսակետը հիմնավորելու համար նշենք մի քանի

<sup>12</sup> Генерал-фельдмаршал князь Паскевич, его жизнь и деятельность. По неизданным источникам составил Генерального Штаба Ген.-лейт. Щербатов, т. 3, СПб, 1891, стр. 91.

<sup>13</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 332, ցուցակ 1, գործ 815:

<sup>14</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 151, ցուցակ 1, գործ 25, էջ 4; С. Глинка, Описание переселения..., приложение IV, стр. 114, 131.

<sup>15</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 59, վավ. 578:

<sup>16</sup> Նույն տեղում, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 167ա, վավ. 19:

<sup>17</sup> Մ. Խ ա չ ա տ ը յ ա ն., Պարսկահայերի ներգաղթի կազմակերպումն ըստ ժամանակի փաստաթղթերի, «Լրագրեր հասարակական գիտությունների», N 10, Եր., 1978, էջ 108:

<sup>18</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 59, վավ. 546:

<sup>19</sup> И. Ш о п е н, Исторический Памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852, стр. 540; Ա. Երիզյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 337:

փաստեր, միևնույն ժամանակ հիշեցնելով, որ ստորև բերված բոլոր դեպքերում գաղթածները դուրս են մնացել պաշտոնական հաղորդումներից և ցուցակներից:

1. Համաձայն Թուրքմենչայի պայմանագրի XV հոդվածի՝ գաղթող հայ ընտանիքներն իրենց անշարժ ու շարժական գույքը պայմանագրով նշված ժամկետում վաճառելու համար իրավունք ունեին տեղում թողնելու հավատարմատարների՝ իրենց ընտանիքի անդամներից մեկին կամ մի քանիսին: Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ սրանց մեծ մասը հետագայում գաղթել են Արևելյան Հայաստան՝ միանալու իրենց հարազատներին, ընդ որում, գերազանցապես Թուրքմենչայի պայմանագրով սահմանված միանյա ժամկետը լրանալուց հետո<sup>20</sup>:

2. Լազարյանի հաշվետվության մեջ արտացոլված են եղել միայն այն ընտանիքները, որոնք գաղթելով գյուղերով կամ խմբերով ստացել են պետական նպաստ ու հաստատվել գաղթականական կոմիտեի կողմից իրենց հատկացված վայրերում (Ընդգծումը մերն է-Ա. Հ.): Իրենց նախաձեռնությամբ և սեփական միջոցներով գաղթած, ինչպես նաև պետական նպաստ չստացած ընտանիքներն այս հաշվետվության մեջ չեն հիշատակվել: Օրինակ՝ Մակուի նահանգից մելիք-Յաղուբը ռուսական իշխանություններից գաղթելու թույլտվություն է խնդրել նպաստ չպահանջող 30 ընտանիքների համար<sup>21</sup>: Մեր տվյալներով՝ ռուս-պարսկական սահմանն առանց պետական օգնության և փաստաթղթեր ստանալու անցածների թիվը հասնում է մինչև 660 ընտանիքի, և որ ամենակարևորն է՝ սրանք տեղավորվել են ոչ թե նախապես որոշված բնակավայրերում, այլ հասել են մինչև Վրաստան<sup>22</sup>: Հայտնի են նաև դեպքեր, երբ ինչ-ինչ պատճառներով տարբեր ժամանակներում Պարսկաստան քշված առանձին մարդիկ կամ ընտանիքներ Պարսկաստանում ռուսական գլխավոր հյուպատոս Ամբուրգերի կամ պարսկական տարբեր քաղաքներում գտնվող ռուսական զորաջոկատների հրամանատարների միջոցով կարողացել են վերադառնալ իրենց բնակության հին վայրերը: Այսպես, Ամբուրգերի վկայությամբ 40 հայ ընտանիքներ (172 մարդ) իր կողմից դուրս էին բերվել պարսից սահմաններից և ուղարկվել Նախիջևան:<sup>23</sup> Սրանցից 14 ընտանիք, հասնելով Հայկական մարզ, մնացել էր բնակվելու Մարդարաբադի մահալում, իսկ մյուսները դարձել էին իրենց բնակության նախկին վայրերը:<sup>24</sup> Խոյում կանգնած ռուսական զորաջոկատի հրամանատար, զեներալ-մայոր Պանկրատևը հիշատակում է ևս 20 մարդու (հայ) մասին, որոնց նա հետ էր պահանջել պարսիկներից և ուղարկել Հայկական մարզ:<sup>25</sup> Մեր կարծիքով, այս երևույթը կրել է զանգվածային բնույթ, այն աստիճան, որ նույնիսկ լրացուցիչ գաղթ կազմակերպելու համար Աբաս-Միրզայի թույլտվությամբ բանակցություններ են սկսվել Կայմակամ և Պարսկաստանում ռուսական դեսպան իշխան Գուգորուկովի միջև: Այս նոր բանակցությունների արդյունքում որոշվել է յուրաքանչյուր կողմից մեկական աստիճանավոր ուղարկել Խոյ և Մալմաստ, որոնք տեղում «կսկսեն խնդրագրեր հավաքել գաղթել ցանկացող հայերից: Այդ աստիճանավորների գալստյան օրից հաշված, կնշանակվի 40-օրյա ժամկետ, որի ընթացքում ոչ ոքի չի արգելվի Ատրպատականից Արաքսն այն կողմ գաղթելը: 40-օրյա ժամկետն անցնելուց հետո պարսից կառավարությունն այլևս ոչ մի խնդրագիր գաղթելու վերաբերյալ չի ընդունի»<sup>26</sup>:

3. Պատմագրության մեջ լռությամբ են անցել այն փաստերի կողքով, որ պարսկահայ գաղթականների մի մասը, չկարողանալով տանել վերաբնակեցման առաջին տարիների դժվարությունները, վերադարձավ Պարսկաստան: Մինչդեռ ըստ Մ. Գարբինյանի՝ սրանք մոտ 300 ընտանիք էին<sup>27</sup>:

<sup>20</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 43, էջ 1033-1035, գործ 46, էջ 125-128:

<sup>21</sup> Նույն տեղում, գործ 28, էջ 379:

<sup>22</sup> Сборник газеты Кавказ, изд. О. Константиновым, первое полугодие, Тифлис, 1847, стр. 62.

<sup>23</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 16, էջ 437:

<sup>24</sup> Նույն տեղում, գործ 31, էջ 573:

<sup>25</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 16, էջ 492:

<sup>26</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 36, էջ 50:

<sup>27</sup> Մ. Գարբինյան, Պարսկահայերի գաղթը և նրանց բնակեցումը (1828-1829 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 1973, N 8, էջ 17:

4. Տակավին լուրջ ուշադրության չի արժանացել նաև Ղարաբաղում հաստատված պարսկահայ գաղթականների թվի վերջնական ճշգրտման հարցը: Արխիվային վավերագրերի վկայությամբ, Պասկևիչը դեռևս 1828 թ. մարտին հրահանգել էր Երևանի մարզային վարչությանը՝ թույլատրել գաղթականներին ըստ ցանկության բնակություն հաստատելու նաև Ղարաբաղում<sup>28</sup>: Համաձայն Ե. Լազարյանի՝ գլխավոր հրամանատարին ներկայացրած զեկուցագրի՝ 1828 թ. հունիսի դրությամբ վերջիններիս թիվը կազմում էր 535-ընտանիք<sup>29</sup>: Ալ. Երիցյանը<sup>30</sup> և Մ. Բարխուդարյանը<sup>31</sup> հաշվում են այսպիսի «մի քանի հարյուր ընտանիք»: Առանց օգտագործած աղբյուրները նշելու, Ղարաբաղում հաստատված պարսկահայ գաղթականների մոտ 700 ընտանիք է հաշվում Մ. Գարբինյանը<sup>32</sup> (Մեկ այլ տեղ մույն խնդրին անդրադառնալով՝ Մ. Գարբինյանը նշում է. «չինովիների անհոգության ու տեղի մահմեդականների թշնամական վերաբերմունքի պատճառով ընդամենը երեք ամսում 1012 մարդ մահացավ»<sup>33</sup>): Մեր կարծիքով, Ղարաբաղում հաստատված պարսկահայ գաղթականների թիվն իրականում ավելի քիչ է եղել, քանի որ Հայկական մարզային վարչության 1828-1831 թվականների նիստերի արձանագրություններում խոսքը գնում է միայն 200-300 ընտանիքների կողմից մի քանի գյուղերի վերակենդանացման մասին<sup>34</sup>: Շեղվելով թեմայից՝ նշենք նաև, որ խնդրո առարկայի վերաբերյալ հայ պատմագրության ժամանակին թույլ տված անհոգ վերաբերմունքը առիթ է տվել ժամանակակից աղբյուրների մի քանի վայ-պատմաբանների (Բ. Ալիև և ուրիշներ) պնդելու, թե իբր Ղարաբաղում մինչև XIX դարը «չի եղել որևէ զգալի հայ էթնիկական զանգված», և որ հայերի զանգվածային գաղթ Ղարաբաղ կատարվել է միայն Թուրքմենչայի պայմանագրից հետո, «ի հաշիվ տեղի բնիկ մահմեդականների իրավունքների ոտնահարման, երբ ամենահամեստ հաշվարկներով գաղթել են ավելի քան 130000 հայեր (մի ուրիշ հեղինակի տվյալներով՝ մինչև 200000 Ա. Հ.)»<sup>35</sup>: Ղարաբաղում հաստատված պարսկահայ գաղթականների թվի վերջնական ճշգրտման հարցը առանձին ուսումնասիրության նյութ է, որին սույն հոդվածի շրջանակներում չենք կարող ամենայն մանրամասնությամբ անդրադառնալ, սակայն, նկատի առնելով, որ Աղբյուրում այս հարցի վերաբերյալ կատարվում է իսկական «պատմաշինարարություն», կուզենայինք միայն մեկ հարց տալ աղբյուրների մեր «գործընկերներին»: Որքա՞ն կկազմեր նրանց «համեստ հաշվարկներով» Լեռնային Ղարաբաղ գաղթած 130000 հայերի բնական աճը 1828-1989 թվականներն ընկած ժամանակահատվածում, եթե 1979 թ. համամիութենական մարդահամարի տվյալներով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում բնակվում էր ընդամենը 123000 հայ<sup>36</sup>:

5. Եվ վերջապես տարակարծության տեղիք է տալիս նաև պարսկահայ գաղթականների ընդհանուր թիվը: Թե՛ արխիվային շատ վավերագրեր և թե՛ հետազայի շատ ուսումնասիրողներ պարսկահայ ընտանիքը համարել են միջինը 5 անձից բաղկացած: Մակայն, մի շարք հանգամանքներ հնարավորություն են ընձեռում մեզ վիճարկելու գոյություն ունեցող այս թեզը: Այսպես, հայ մեծամուն վիպասան Բաֆֆին, լինելով պարսկահայերի դրության լավագույն գիտակ, Պարսկաստանի զանազան վայրերում բնակվող հայ ընտանիքների թվակազմի վերաբերյալ հիշատակում է տվյալներ, որոնց վերլուծությամբ միջին ընտանիքը պիտի կազմեր մոտ 6.5 մարդ: Դիշտ է, Բաֆֆու բերած տվյալները վերաբերում են XIX դարի 50-ական թվականներին Կենտրոնական Պարսկաստանում (Արաղեստան) ապրող հայ ընտանիքներին (Ատրպատականի հայ բնակ-

<sup>28</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 16, էջ 642:

<sup>29</sup> Сборник газеты Кавказ, նշվ. աշխ., էջ 62:

<sup>30</sup> Ալ. Երիցյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 337:

<sup>31</sup> Մ. Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895, էջ 34, 53, 155, 164:

<sup>32</sup> Մ. Գարբինյան, նշվ. աշխ., էջ 17:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>34</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 16, էջ 39-40, 472, գործ 28, էջ 446, գործ 36, էջ 62-63, 973-976, գործ 43, էջ 658-659, գործ 44, էջ 300:

<sup>35</sup> И. А л и е в, Нагорный Карабах; история, факты, события, Баку, 1989, стр. 76.

<sup>36</sup> Ե. Մանուկյան, Հայ ժողովրդի ազգահավաքման գործընթացն Արևելյան Հայաստանում XIX դարի 20-ական թվականների վերջերին-30-ական թվականների սկզբներին, Ատեն. պատ. գիտ. թեկ., Եր., 1991, էջ 91:

չության մասին այստեղ տվյալներ չկան),<sup>37</sup> սակայն, Պարսկաստանից հայերի զանգվածային արտագաղթի շրջանում (1828թ.) տակավին նահապետական կենցաղով ապրող հայ ընտանիքները պետք է որ նշվածից ավելի քիչ անդամներից բաղկացած չլինեին: Առավել ևս, որ Առքայատականում հայերն ավելի խիտ են ապրել, քան մնացած ողջ Պարսկաստանում: Մի հանգամանք ևս գալիս է հաստատելու մեր այս ենթադրությունը: 1828թ. հուլիսի 2-ին Հայկական մարզային վարչությունը որոշում է միայն սնվելու համար խիստ կարիքավոր պետական զանձարանից, յուրաքանչյուր գաղթական անձին տալ 1-ական արծաթ ռուբլի օգնություն, ընդ որում, «ընտանիքն հաշվելով 5 հոգի, որոնք 4 տարեկանից բարձր են»<sup>38</sup>: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ընտանիքի մինչև 4 տարեկան անդամները այդ նպատակի համար չեն հաշվառվել, հետևաբար ընտանիքը պետք է բաղկացած լիներ ամենաքիչը 5-7 հոգուց: Մի ուրիշ տեղեկագրում հիշատակվում է Պարսկաստանից 1828թ. մարտ-ապրիլ ամիսներին Նախիջևանի պրովինցիայում հանգրվանած 2551 ընտանիքի թվաքանակը՝ 13160 մարդ,<sup>39</sup> այսինքն՝ միջին ընտանիքը կազմել է 5.2 մարդուց մի փոքր ավելի: Այս փաստը վերաբերում է ռուս-պարսկական սահմանն անցած ընտանիքներին, որոնք, աղբյուրների հիշատակմամբ, գաղթի հանրահայտ ծանր պայմաններում պիտի որ շոշափելի կորուստներ ունեցած լինեին: Ահա այս ամենը ավելի են ամրապնդում մեր այն ենթադրությունը, որ պարսկահայ ընտանիքի միջին կազմը եղել է 5-7 մարդ:

Ահա այս փաստերը նկատի առնելով էլ մենք պնդում ենք, որ ռուս-պարսկական սահմանն անցած պարսկահայ գաղթականների թիվը եղել է ոչ թե 8249 ընտանիք, ինչպես նշում է Ե. Լազարյանը Պասկևիչին ներկայացրած իր հաշվետվության մեջ, այլ ավելի քան 9509 ընտանիք կամ մոտ 57000 մարդ (ենթադրելով 6 հոգի յուրաքանչյուր ընտանիքում): Արաքսն անցնելուց հետո, ռուսական տիրույթներում սրանք տեղաբաշխվեցին հետևյալ կերպ. շուրջ 660 ընտանիք, որ գաղթել էր առանց պետական օգնություն ու փաստաթղթեր ստանալու, հաստատվեց ոչ թե գաղթականական կոմիտեի կողմից նախօրոք ընտրված վայրերում՝ Երևանի ու Նախիջևանի նախկին խանություններում, այլ, ավելի հեռանալով՝ հասավ մինչև Վրաստան (սրանցից մոտ 40-50 ընտանիք, հաստատվեց Արևելյան Օիրակի Փոքր Ղարաքիլիսա, Մեջիտլի և Աղքիլիսա գյուղերում)<sup>40</sup>: Մոտ 300 ընտանիք, համաձայն Հայկական մարզային վարչության 1828-1831 թթ. նիստերի արձանագրությունների, հաստատվեց Ղարաբաղում, իսկ 300 ընտանիք էլ հաջորդ 1829-1830 թթ. ընթացքում, չդիմանալով վերաբնակեցման առաջին տարիների դժվարություններին, կլիմայական նոր պայմաններին ու տեղական իշխանությունների անհոգի վերաբերմունքին, վերադարձավ Պարսկաստան:

Մնացած 8249 պարսկահայ ընտանիքները հաստատվեցին Հայկական մարզում, Երևան, Նախիջևան և Օրդուբադ քաղաքներում: 1829-32 թթ. Հայկական մարզում անցկացվեց կամերալ ցուցակագրում, համաձայն որի՝ 1831 թ. դրությամբ մարզում պարսկահայ գաղթական ընտանիքների թիվը, 1303-ով նվազելով, հասել էր 6946-ի կամ 35560 մարդու (տե՛ս աղ. 1):

Աղույակ 1

Հաստատված վայրերը	ընտանիքների թիվը	բնակիչների թիվը
Երևան քաղաք	366	1715
Նախկին Երևանի խանության 10 մահալներ	4193	21853
Նախիջևան քաղաքում	265	1110
Նախկին Նախիջևանի խանության 4 մահալներ	1872	9542
Օրդուբադ քաղաք	36	182
Օրդուբադի շրջան	214	1158
ԸՆԴԱՄԵՆԸ	6946	35560

<sup>37</sup> Բ ա ֆ ֆ ի, Երկերի ժողովածու, հ. 9, Եր., 1958, էջ 127-128:

<sup>38</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 10, էջ 137-138:

<sup>39</sup> Собрание актов..., ч. 2, М., 1833, стр. 387.

<sup>40</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 47, ցուցակ 3, գործ 920.; ցուցակ 2, գործ 128, 18: Ս. Էփրիկյան, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1902, էջ 5, 479:

Շուպենի վկայությամբ, գաղթականների թվի նվազման հիմնական պատճառը եղել են այդ ժամանակ Հայկական մարզում տարածված համաճարակային հիվանդությունները<sup>41</sup>: Աղբյուրները վկայում են, որ գաղթականներն անսովոր էին Արարատյան դաշտի կլիմային, և շատերը զոհ գնացին դրան: Հայկական մարզում աշխատած ցարական աստիճանավոր Ջուրարյովը համաճարակային հիվանդություններին ու անբարենպաստ կլիմային ավելացնում է նաև տեղական իշխանությունների անհոգի վերաբերմունքը և շրջակա քոչվոր թուրքերի ավազակային հարձակումները<sup>42</sup> (Միայն Երևանի պրովինցիայում ժանտախտով վարակվեց ու մահացավ մոտ 800 գաղթական ընտանիք: 1012 մարդ, երեք ամիս բաց երկնքի տակ, առանց սննդի մնալով, մահացավ Գարարադում),<sup>43</sup> իսկ ըստ Լեոյի, գաղթականների նվազման պատճառը նաև «անկազմակերպ տեղափոխության սարսափներն են, երբ բազմությունը մինչև իր վերջնական տեղավորումը կորցրեց մոտ 10000 հոգի»:<sup>44</sup>

## К ВОПРОСУ О ЧИСЛЕ АРМЯН, ПЕРЕСЕЛИВШИХСЯ ИЗ ПЕРСИИ В 1828-1829 гг.

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ А. Айрапетян \_\_\_

Переселение армян, проживавших в Иране в начале XIX в., узаконенное Туркменчайским мирным договором, в корне изменило демографическую картину Восточной Армении, вошедшей в состав России. В то же время в результате некоторых недостатков, допущенных в фазах организации и осуществления, переселение стало темой нескончаемых полемика для историков прошлого и настоящего.

Особенно серьезны разногласия, касающиеся числа переселенцев.

Согласно отчету Е. Лазаряна Паскевичу, русско-персидскую границу пересекли около 8249 семей; по нашему мнению, число переселенцев было выше перечисленного. В отчете Лазаряна не упоминались ни те семьи, которые переселились по собственной инициативе и на собственные средства, ни те, которые поселились в Карабахе, ни те, которые пересекли русско-персидскую границу после истечения срока, указанного в договоре.

Не упоминается о тех, кто не выдержал трудностей первых годов переселения и вернулся в Иран. Принимая во внимание эти факты, мы считаем, что число переселенцев, перешедших через Аракс, на самом деле было более 9509 семей или около 57000 человек.

<sup>41</sup> И. Шопен, *Աշխ.*, էջ 132:

<sup>42</sup> Ալ. Երիցյան, *Աշխ.*, հ. Ա, էջ 334-335:

<sup>43</sup> ՀՀ ԱԱ, Ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 31, էջ 441-442, 497-498:

<sup>44</sup> Լեոն, *Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս Բ*, էջ 115:

*Степан ЕСАЯН,  
Лилия АБАДЖЯН*

## **ОБ УРАРТСКОЙ НАСТЕННОЙ ЖИВОПИСИ В АЛТЫН- ТЕПЕ**

Урартская фресковая живопись, принадлежащая к произведениям придворного монументального искусства, к сожалению, не сохранилась в столице Ванского царства. Ее не обнаружили ни в Тушпе, где сохранились лишь голые скалы и стены крепости с мощными башнями, ни в Топрак-кале (Русахинили). Однако следы их сохранились в ряде окраинных крепостей VIII-VIII вв до н.э., где они, повторяя характерные для всего Древнего Востока (особенно для Ассирии) сцены, красочно изображают композиционные сюжеты военных походов, пиршеств, охоты, религиозных обрядов и бытовых картин, чередующихся с многофигурными фризами с геометрическим и растительным орнаментом.

Наиболее богатые образцы этих прекрасных росписей сохранились в Эрбунни, где они открыли новую страницу урартского монументального искусства. В сохранившихся обломках богатых росписей, украшавших стены и потолки храмов и дворцов этого замечательного памятника, видны отдельные фризы с изображениями богов, царей, воинов, вельмож и жрецов. Сцены мирной жизни с цветущими садами, пастбищами, стадами и пастухами, пахарями и волами сменяются охотничьими - с изображением отдельных охотников с собаками, массовых облав быков и львов с участием всадников и колесниц. Все это сменяется фризами с жрецами и деревом жизни и отдельными фигурами львов и быков. Особенно примечательна сцена вручения царю знаков власти богом Халди.<sup>1</sup>

Обломки росписей найдены также в кладовой N25 урартской крепости VII вв. до н.э. Тейшебани. Несмотря на малочисленность и фрагментарность обломков, можно предположить, что эти росписи содержали красочные композиционные сцены. На отдельных фрагментах прослеживаются изображения священного дерева с возвышающимся над ним округлым солнечным диском и фигурами крылатых божеств рядом с ним. На других обломках встречаются изображения плодов граната, голов львов, глаз птиц и т.д.<sup>2</sup>

Несколько обломков росписей найдено в одной из комнат большого комплекса к западу от храмового сооружения Аргиштихинили. Несмотря на фрагментарность можно заметить многоярусный характер этих росписей, в которых видны фигуры людей и животных, растительные и геометрические мотивы. Человеческие фигуры представляют собой жрецов и божеств, стоящих около древа жизни и держащих священные корзины с плодами. Фрагменты с изображением перьев указывают на наличие в этих росписях фигур крылатых львов и быков, столь характерных для урартского искусства. В геометрическом орнаменте преобладают прямоугольные обрамления, ромбы и пальметки, что также характерно для урартского и древневосточного искусств<sup>3</sup>.

<sup>1</sup> К. Оганесян, *Раскопки урартского города Эрбунни, Советская археология, 1960, 3; Н. Трухтанова, С. Ходжаши, К. Оганесян, Росписи Эрбунни, Сообщения гос. музея им. А. Пушкина, вып. 4, М., 1968; К. Оганесян, Арин-берд I, Ер., 1961; Б. Пиотровский. Искусство Урарту, Ленинград 1962; С. Есаян. Ереван (археологический очерк) Ер., 1969; К. Оганесян, Росписи Эрбунни, Ер., 1973; С. Ходжаши, Н. Трухтанова, К. Оганесян, Эрбунни, М., 1979, К. Оганесян, Крепость Эрбунни, Ер., 1980.*

<sup>2</sup> Б. Пиотровский. Кармир блур I, Ер., 1950, йдд. 66; Его же. Кармир блур II. Ер., 1952, йдд. 41; Его же. Искусство Урарту, йдд. 117.

<sup>3</sup> Г. Траниян, Урартский Армавир, В сб. "Культура Востока" (древность и раннее средневековье), Ленинград, 1978, йдд. 109.

Богатые росписи, по-видимому, украшали стены строений Патноца (Азнавур-тепе), о чем свидетельствует роспись на задней стене храма в виде фигуры коленопреклоненного быка.<sup>4</sup>

Как следует из вышесказанного, в Урарту широко применялись стенные росписи, украшавшие дворцы и храмы многих крепостей, сохранившихся, однако (кроме Эребуни), лишь в виде немногочисленных обломков.

Вторым памятником, давшим значительное количество образцов фресковой живописи, является Алтын-тепе, где они декорировали интерьер дворцового храма, датируемого второй половиной VIII в. до н.э., и многоколонного зала (ападаны), датируемого второй половиной VII в. до н.э.

Дворцовый храм Алтын-тепе выстроен на специально выровненном холме размером 13,9x13,9 м. Его цокольная часть сооружена из гладкотесаных камней, поверх которой шла кладка из сырцовых кирпичей. Внутри него вдоль всех стен были сооружены каменные скамьи. В глубине целлы был найден каменный постамент для статуи бога<sup>5</sup>.

Храм, расположенный внутри обширного двора (27x27 м) со всех сторон окружен колоннами. К западу от храма были сооружены четыре дворцовых помещения, в которых также были найдены фрагменты росписей.

Росписи храмового комплекса, очевидно, украшали стены большого колонного зала, но они сохранились лишь в виде маленьких фрагментов. Гораздо лучше они сохранились в комнатах, расположенных рядом с храмовым двором, однако и они не составляют единую композицию. Кроме геометрических и растительных орнаментов, покрывающих верхний фриз и нанесенных синим, черным, белым и светлорыжевато-коричневыми цветами, имеются изображения людей и животных. Особенно интересна фигура гения, одетого в длинный, до щиколоток, кафтан красного цвета со светлорыжеватой бахромой. Его правая рука приподнята. Эта деталь указывает на то, что перед фигурой гения должно быть изображено священное дерево, подобно изображениям на фресках из Эребуни.<sup>6</sup>

Ниже этого фриза проходят две узкие линии черного и синего цветов и красный пояс шириной в 1,5 см. Он декорирован маленькими семилепестковыми розетками красного цвета (табл. II, рис. 4), ниже которых изображены красные гранатовые плоды, соединенные синими полукругами.

Ниже них помещены изображения животных: два черноголовых льва, смотрящих друг на друга, а рядом с ними небольшие фигурки (длина 5-6 см) стилизованных оленей с длинными ногами и рогами, украшающими верхние части вытянутых шей животных. Четыре небольших кружочка помещены между ногами этих животных.<sup>7</sup> В правом верхнем углу этого фрагмента изображена девятилепестковая пальметка (табл. I, рис. I).

На двух небольших фрагментах также изображены стилизованные фигурки оленей, над хвостом одного из них прорисован небольшой кружочек. На другом фрагменте также изображен олень (табл. II, рис. 3).

Подобное расположение небольших правильных кружочков рядом с оленями не замечено нигде в урартской настенной живописи, к тому же неизвестно, какую именно часть панно они украшали<sup>8</sup>. Если сравнить их с росписями Эребуни, то здесь под рисунками изображены следующие друг за другом коровы, козы и телята<sup>9</sup>.

<sup>4</sup> K. Balcan, *Anatolia V*, 1960, рис. 99.

<sup>5</sup> T. Orgüe, *Architectural Monuments and Wall Paintings, - Türk Tarih Kurumu Basimevi, Ankara, 1966*, стр. 41

<sup>6</sup> K. Оганисян, *Арин-берд I*, Ер., 1961, стр. 67.

<sup>7</sup> T. Orgüe, указ. соч., стр. 56, рис. 40.

<sup>8</sup> Там же, стр. 57, рис. 41-43.

<sup>9</sup> Б. Пиротровски, *Ванское царство, М., 1959*, табл. XXI.

Последний фрагмент украшен тремя пальметками. Две крайние, обычные для урартской росписи – девятилепестковые пальметки, хорошо известные по находкам в Эрбунни, а средняя – имеет длинный стебель (длина – 8 см) с двумя крупными листьями, что впервые наблюдаются во фресковой живописи Ванского царства<sup>10</sup> (табл. I, рис.4).

Несмотря на отдельные различия в росписи храмового комплекса и дворцовых помещений Алтын-тепе, тем не менее отмечаются большие аналогии с росписями из Эрбунни. Подобно росписям из других памятников они декорированы в ассирийском стиле. В частности, находим близкие аналогии в росписях дворца Ашурнасирапала II в Кальху, Дур-Шаррукина, Тиль Баренба и других<sup>11</sup>, которые, однако, отличаются от них яркими цветами и, особенно, разнообразием анималистических рисунков.

*Росписи Колонного зала (ападаны).* Значительным вкладом в архитектуру Древнего Востока являются многоколонные залы, которые были впервые сооружены зодчими Ванского царства. Ранними экземплярами подобных залов являются сооружения Эрбунни (Храм Халди, персепильный двор)<sup>12</sup>.

Колонный зал Алтын – тепе расположен на вершине холма южнее храма-дворца. Его стены имеют трехметровую толщину и сооружены из сырцового кирпича на каменной основе. Внутреннее пространство зала 44x25,30м. Вход находился в восточной части. 18 мощных колонн – по шесть в три ряда – стояли на круглых базах диаметром в 1,5 м, поддерживая плоскую крышу. Зал освещался через окна, находящиеся в верхних частях стен. В северо-восточной части зала находился большой очаг. По мнению Т.Озгюча подобная форма зала и отсутствие боковых комнат характерны для северо-сирийских дворцов, что позволяет ему назвать этот зал первым примером ападаны.<sup>13</sup>

Однако, если учесть наличие персепильного двора с двухрядной колоннадой из 14 колонн и портик храма Халди с двухрядной колоннадой из 12 колонн, то можно сказать, что более ранние примеры подобных залов происходили из Эрбунни.<sup>14</sup>

Росписи ападаны как дворцово-храмового комплекса представлены в сильно фрагментированном виде. Так, основной фриз реконструирован из более чем 50 кусков расписанных сырцовых кирпичей. Все четыре стены имеют одинаковые рисунки, помещенные на высоте 1,5-1,6 м от пола, в следующей последовательности (табл. III). В нижней части они оконтурены двумя поясками красного и синего цветов шириной в 8,4 см, поверх которых проходит фриз из гранатовых плодов (высота 19,3 см), расписанных красной, белой и синей краской. Между стеблями этих плодов размещены двойные прямоугольники размером 5 x 2,9 см.

Выше гранатовых плодов проходит пояс из красных розеток высотой в 3 см и диаметром в 2,2 см в отличие от Эрбунни, где представлены розетки с многоцветными лепестками. Розетки Алтын тепе – белые.<sup>15</sup>

В следующем поясе этой пекторали размещены крылатые гении (высота 12,5 см), стоящие по обе стороны священных деревьев. Глаза у них треугольной формы, нос с маленькой горбинкой. На них – белый пояс, широкая шаль, покрывая грудь, ниспадает на руки. Ступни – красные. Головы покрыты высокой тиарой, снабженной рогами. Правой приподнятой рукой они держатся за дерево, а в припущенной левой – небольшое ведро (табл. II, рис.1). Весь этот двухрядный фриз оконтурен белыми розетками. Выше помещен рисунок коленопреклоненных быков светло-коричневого цвета на красном фоне (длина от хвоста до шеи – 52 см,

<sup>10</sup> Т. О р г ю е, указ. соч., стр. 57, рис 44.

<sup>11</sup> Б. П и о т р о в с к и й. Искусство Урарту, стр. 114-115.

<sup>12</sup> К. О з а н е с я н, Арин-берд I, стр. 48-49.

<sup>13</sup> Т. О р г ю е, указ. соч., стр. 45, табл. V-VI, XX, XXI, рис. 13.

<sup>14</sup> К. О з а н е с я н, Эрбунни I, стр. 29, 54.

<sup>15</sup> Т. О р г ю е, указ. соч., стр. 48, рис. 14,15.



голова не сохранилась). Грудь дополнительно украшена завитками, а хвост изображен с черной кисточкой. Между быками, обращенными друг к другу, помещены чередующиеся изображения квадратов с вогнутыми краями и вписанных бутонов лотоса<sup>16</sup> (табл. I, рис.6).

Аналогичный орнамент повторяется и с чередующимися фигурами крылатых львов (сфинксов), имеющими тот же размер, что и быки. Голова льва отсутствует<sup>17</sup>. Тело и ноги сфинкса светло-коричневые, фон синий. Лево́й рукой он держит ветвь. Правый локоть сфинкса согнут, на руке – браслет, украшенный восьмилепестковыми розетками. Второй браслет одет на верхнюю часть руки ниже края короткого рукава красной, богато орнаментированной одежды (табл. II, рис. 5). На шее две скрученные ленты. Волосы - черные, с двумя косичками. Голова сфинкса реконструирована по типу голов сфинксов, украшавших трон из Топрах кале<sup>18</sup>. Выше расположен еще один фриз из священных деревьев и гениев, являющихся точной копией нижнего фриза. В следующем поясе появляется новый мотив в виде ступенчатых пирамид с чередующимися цветами: красным и синим на светло-коричневом фоне (высота 21,2 см, ширина в основании 13,8 см).

Выше пирамид проходят семилепестковые пальметки (высота 8,3 см) с чередующимися бело-коричневыми лепестками (табл. I, рис.3).

Верхним фризом служит сцена охоты высотой в 60 см. Здесь изображены лев и олень, стоящие друг против друга по обе стороны дерева. На синем стволе дерева по семь красных веток с каждой стороны с бутонами на концах (высота 52 см). Лев скрывается в засаде за деревом, а ничего не подозревающий олень облизывает дерево белым языком. Лев изображен светло-коричневой краской с белыми глазами, а олень - с красной головой и высокими черными рогами (10,5 см).

На других фрагментах видны стволы деревьев и фигуры львов, а на одном рисунке виден лев, схвативший оленя за загривок. Голова льва крупнее тела оленя. Белые оленьи глаза с черными зрачками широко раскрыты от страха<sup>19</sup> (табл. I, рис. 2,5, табл. II, рис. 2).

Насколько нам известно, ни в урартской, ни в ассирийской фресковой живописи нет сцен охоты львов на оленей в густом лесу. Однако в урартском графическом искусстве встречается изображение оленя на богато орнаментированном бронзовом поясе из погребения 40 тлийского могильника.

Здесь, наряду со сценами охоты, имеются изображения прогулочных колесниц, в кузове которых сидят два человека, осла и оленей, что впервые встречаются в урартском графическом искусстве. У оленей слабо подчеркнутые ветвистые рога и куцый хвост<sup>20</sup>.

Рассмотренные росписи Алтын - тепе дают основание утверждать, что урартская фресковая живопись в основном носит на себе отпечаток ассирийского влияния. Такие мотивы, как древо жизни со стоящим по обе стороны гениями, фигуры быков, львов, хорошо известны в Ассирии, однако они здесь претерпели существенные изменения. Основной особенностью урартской фресковой живописи является реалистичность изображенных людей и животных. Все они изображаются в мягкой позе в отличие от ассирийских агрессивных поз. Существенным вкладом урартской настенной живописи в древневосточную живопись является яркая палитра красочных изображений, переданных в мягких тонах.

Вместе с тем, несмотря на строгую каноничность урартского искусства, в фресковой живописи, как и в графическом искусстве, часто наблюдается большая свобода для творчества урартских художников.

<sup>16</sup> Т. О r g ÿ е, указ. соч., йдд. 51, рис. 14, 22.

<sup>17</sup> Там же, стр. 52, рис. 26, 27.

<sup>18</sup> Там же, рис. 14.

<sup>19</sup> Там же, стр. 54, рис. 34, 35, 36.

<sup>20</sup> Б. Т е х о в, Об одном погребальном комплексе из с.,Тли (Южная Осетия), Советская Археология, 1961, 4 стр. 134-135, рис. 7,4.

Совершенно различны формы древ жизни, священных деревьев и гениев Эребуни и Алтын -тепе. Такое же различие между фигурами львов Арин берда и Алтын -тепе. В первом случае изображены реалистичные фигуры хищников, а во втором – «сфинксы» с ведерками и браслетами на руках. Совершенно различны также геометрические орнаменты, пальметки, гранатовые деревья, бутоны лотоса и т.д.

Однако, в отличие от Алтын –тепе, росписи Эребуни отличаются гораздо большим разнообразием светских тем: охоты, пахоты, изображение стада, фигур животных, особенно -коней и т.д.

В отличие от Эребуни в Алтын -тепе нет также изображений богов.

Изучение росписей Эребуни и Алтын -тепе позволят во многом обогатить и расширить представления об урартском изобразительном искусстве. Мы с полной очевидностью показали, что архитектурная роспись в Урарту являлась неотъемлемой частью светских и культовых монументальных сооружений. Изучение этих росписей помогло глубже и полнее понять своеобразие урартского зодчества, его монументальность, декоративность, красочность и нарядность, и оценить вклад урартских художников в искусство фресковой живописи Древнего Востока.

Вместе с тем с сожалением следует отметить, что, несмотря на наличие отдельных исследований росписей таких замечательных памятников как Эребуни, Алтын- тепа, Патноца и небольших находок в Аргиштихинили и Кармир блуре, нет обобщающего и целостного исследования, посвященного урартской живописи, что стало в настоящее время настоятельной необходимостью.

## ԱԼԹԻՆ - ԹԵՓԵԻ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՈՐՄՆԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

\_\_\_\_\_ Ամփոփում \_\_\_\_\_

\_\_\_\_\_ Ս. Եսայան, Լ. Աբաջյան \_\_\_\_\_

Ուրարտական որմնանկարչությունը Վանի թագավորության պալատական արվեստի կարևորագույն ձևերից մեկն է: Նրա լավագույն օրինակները հայտնի են Էրեբունու պեղումներից, իսկ որմնանկարների առանձին քեկորներ հայտնվեցին Արգիշտիխինիլի, Կարմիր բլուրի և Պատնոցի պեղումների ժամանակ:

Երկրորդ հուշարձանը, որտեղ գտնվել են զգալի թվով որմնանկարներ, Ալթինթեփեն է: Այստեղ որմնանկարներ հայտնաբերվել են մ.թ.ա. VIII դարին պատկանող պալատում, տաճարում և մ. թ. ա VII դարին պատկանող բազմաայուն սրահում՝ ասպանդանայում: Ալթին-թեփեի որմնանկարները որոշ չափով նմանվում են Էրեբունիի որմնանկարներին, սակայն տարբերվում են կենցաղային-աշխարհիկ պատկերների բացակայությամբ և գունային երանգներով: Ի տարբերություն Էրեբունիի, այստեղ առաջին անգամ հանդիպում են եղջերուներ որսացող առյուծներ, որ չեն հանդիպում ուրարտական որմնանկարչության մեջ:

ԱՆԱՀԻՏ ԱՍՏՎԱԾՈՒՀՈՒ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԻ ՄԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄ  
ԱՆՏԻԿ ՇԻՐԱԿՈՒՄ

Հայոց հեթանոսական պանթեոնի ամենամեծարված և սիրված աստվածուհին Անահիտն է: Անահիտի պաշտամունքի ուսումնասիրման համար աղբյուր են հանդիսացել հայ և օտար պատմիչների թողած տեղեկությունները, ազգագրական և բանագիտական նյութեր, հնագիտական գտածոներ և այլն:

Բոլոր հետազոտողներն անդրադարձել են Անահիտին նվիրաբերվող երինջների վերաբերյալ Պլուտարքոսի այն հիշատակությանը, թե դրանք իրենց ճակատին ունեցել են *ջահաձև* նշան: Պլուտարքոսի հունարեն բնագրում, նշանի ձևը ցույց տալու համար օգտագործված է *Λάμπας, άδος լամպադա*<sup>1</sup> բառը, որն ունի *ճրագ*, *ջահ* իմաստները, նույն *Λάμπας* արմատից են կազմված *փայլող*, *ճառագող*, *լքնաղ* և *նշանավոր* բառերը<sup>2</sup>:



Պլուտարքոսի այս հիշատակության հայերեն թարգմանություններում, սկսած Ե. Թոմաճեանից<sup>3</sup> *Λάμπας, άδος* բառը թարգմանվել է *ջահ*: Հետագա ուսումնասիրողները թերևս չեն խորացել այս խնդրում և շարունակաբար կրկնել են նույն՝ *ջահ* թարգմանությունը: Պլուտարքոսի ռուսերեն թարգմանության մեջ *Λάμπας, άδος*-ը թարգմանված է ոչ թե *факел-ջահ* այլ *светоч-ճրագ*<sup>4</sup>:

Հարցն առաջին հայացքից էական չէ, սակայն դրան կարևորություն է հաղորդում այն հանգամանքը, որ այս նշանն իր ձևով առանձին պետք է հանդես գար որպես Անահիտ աստվածուհու խորհրդանիշ: Այդ երկու առարկաները՝ ճրագը և ջահը, իրարից տարբերվում են ոչ միայն կառուցվածքով ու չափերով, այլև ձևով: Հայ և օտար աղբյուրների հաղորդումները հիմնականում տեղեկություններ են պարունակում Անահիտի մեծ սրբավայրերի, մեհյանների, արձանների մասին, սակայն բնական է, որ ողջ Հայոց աշխարհում դրանց թիվը մեծ չէր: Բնականաբար, այս տեսանկյունից կարևորվում է, թե հասարակ ժողովուրդը, ապրելով անտիկ ժամանակաշրջանի կենսակերպին բնորոշ խիստ ծիսականացված կյանքով, մշտապես հայցելով աստվածների հովանավորությունը, սիրաշահելով և զոհեր մատուցելով նրանց, պաշտամունքային խոշոր կենտրոններից հեռու ինչ խորհրդանիշերով կամ ինչի կերպարանքներով է պաշտել «մեր ազգի փառք ու կենսատու մեծ Անահիտ տիկնոջը»<sup>5</sup>:

Հավանական է, որ Անահիտը, լինելով հազարամյակների խորքից եկող Մեծ մոր պաշտամունքի տվյալ ժամանակաշրջանի կերպավորողը, Հայաստանի տարբեր տոհմացեղային ծագում ունեցող տարածաշրջաններում պիտի ունենար իրեն ներկայացնող խորհրդանիշերի բազմազանություն:

1 Plutarch's Lives. Luculus, III.8-IV.2, in eleven volume,II, Cambridge, Massachusetts Harvard University Press  
2 В. С о к о л о в, А. К о з а р ж е в с к и й, Учебник древнегреческого языка, М. 1962, стр. 354  
3 «Պլուտարքոսի Քերովնացոյ Չուգակշեռք», հատ. Գ, քարգմ. Ե Թոմաճեան, Վենետիկ, 1833, էջ 562:  
4 П л у т а р х, Избранные жизнеописания, т. 2, М., 1987, стр.134.  
5 У о ш п а н и ч е н у, Հայոց պատմություն, Եր., 1983, էջ 41:

Պլուտարքոսի հաղորդման մեջ հիշված երինջների ճակատի նշանի ձևը ճշտելու բանալի է 1985թ. Արմավիրի պեղումներից հայտնաբերված կավե եղջերազավաթը<sup>6</sup> (նկար 1):

Ինչպես նշում է ակադեմիկոս Բ. Առաքելյանը.- «Ընդունված է եղջերազավաթները դիտել իբրև հանդիսավոր անոթներ, որոնք օգտագործվել են պաշտամունքային ծիսակատարությունների ժամանակ», իսկ թե որ աստվածություններին էին նվիրաբերվում դրանք, «հարցի պատասխանն, անշուշտ պետք է որոնել բուն եղջերազավաթների, մասնավորապես նրանց առաջամասերի ձևավորման մեջ»,- շարունակում է նա<sup>7</sup>:

Խնդրո առարկա եղջերազավաթը թվագրված է մ.թ.ա. 6-5 դարերով: Այն կավից է, պատրաստված է մեծ խնամքով, բավականին մեծ է, ունի 27,2 սմ երկարություն, փոքրի վերջավորության մասում 13,2 սմ տրամագիծ: Եղջերազավաթի առաջամասը իրենից ներկայացնում է մեծ արվեստով և բավականին իրատեսորեն քանդակված հորթի գլուխ: Կենդանու մատղաշ լինելը հաստատում են փոքր եղջյուրները և կարճ դունչը: Հորթի վիզը զարդարված է վզնոցով, որի շուրջը եռանկյունիներից կազմված նախշազարդ է: Հորթի ճակատի կենտրոնում կա սուր անկյունը դեպի ներքև ուղղված հավասարասրուն եռանկյան պատկեր (նկ. 2): Եռանկյունուց ներքև ուղղահայաց առանցքի վրա երկու օղակներ են: Կրծքի մասում՝ կենտրոնում, հեղման անցքն է: Հեղում կատարելուց հետո եղջերազավաթները կոտրելու ծեսը փոխարինում էր սրբազան կենդանու զոհաբերությամբ: Անկասկած, տվյալ եղջերազավաթը նվիրաբերված էր Անահիտ աստվածուհուն: Հնարավոր է, որ կավից պատրաստված մնան եղջերազավաթներն օգտագործվել են այն դեպքերում, երբ տվյալ պահին համապատասխան նշաններ ունեցող զոհաբերման կենդանիներ չեն ունեցել: Եղջերազավաթի վրա գեղեցիկ վզնոցի առկայությունը հուշում է, որ հին Հայաստանում զոհաբերությունից առաջ կենդանին գեղեցիկ զարդարվում էր:



Եղջերազավաթի վրա եղած խորհրդանշաններից կենտրոնականը և մի քանի անգամ կրկնվող եռանկյունին է: Պլուտարքոսի հաղորդման մեջ Անահիտին նվիրաբերված երինջների ճակատի նշանը, ինչպես վկայում է Արմավիրի եղջերազավաթը, եռանկյունին է: Սակայն հարց է առաջանում՝ ինչու՞ է պատմիչն այն ներկայացնում որպես ջահի կամ ճրագի ձև ունեցող, և ո՞րն է դրանցից ճիշտը:


Անտիկ աշխարհի ջահերն իրենց ձևով եռանկյան մնան չեն, և ավելի հավանական է մնանեցումը ճրագի հետ: Հունահռոմեական աշխարհում լայն տարածում ունեցող ձիթածրագները (տախտակ 1, նկ. 2-5) ընդհանուր գծերով մնանվում են եռանկյունու:

Անտիկ շրջանի Հայաստանից հայտնաբերված ճրագները օվալաձև կամ կլորավուն են: Դրանք պատրույզը կախելու համար ունեն փոքր քթիկ: Նման բազմաթիվ ձիթածրագներ հայտնաբերվել են Հայաստանի բոլոր հնավայրերից: Խնդրո առարկա հարցի պարզաբանման համար բանալի է Բենիամինի անտիկ դաստակերտի հեղինակստական ժամանակաշրջանի պեղավայրից հայտնաբերված ձիթածրագների մի խումբը: Դրանք եռանկյունաձև ճրագներն են, որոնք հայտնաբերվել են մ.թ.ա. 1-ին դարի երկրորդ կեսի շերտից և զոյություն են ունեցել կլորավուն և օվալաձև ձիթածրագներին զուգահեռ (տախտակ 2): Դրանց թիվը մեծ չէ և կազմում է հայտնաբերված ճրագների ընդհանուր թվի մոտ 10%-ը: Նման ձիթածրագներ Հայաստանի այլ հնավայրերից մեզ հայտնի չեն, բացառությամբ անտիկ Շիրակավանից և Հողմիկից հայտնաբերված համաժամանակյա մեկական բեկորների: Նման ամբողջական մի ձիթածրագ կա Անիից<sup>8</sup>, որը սակայն թվագրված չէ: Ինչպես տեսնում ենք, եռանկյունաձև ձիթածրագները յու-

6 I. K a r a p e` t i a n, Rhyton à tête de taureau, Trésors de l'Arménie ancienne / des origines au IV siècle/ Paris, 1996, p.175  
7 Բ. Առաքելյան, Անտիկներ հին Հայաստանի արվեստի պատմության, Եր., 1976, էջ 48:  
8 Ե. Մուշեղյան, Հատկանշական ցուցակ քանդարանային ժողովածուների, պրակ II, Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաները, Եր., 1982, տախտակ XII, նկ.2:

քահատուկ են անտիկ Շիրակին և առավել մեծ քանակությամբ (մոտ 20) հայտնաբերվել են Բենիամինի մ.թ.ա. I դարի երկրորդ կեսի կառույցներից և շերտից:

Բենիամինից հայտնաբերված եռանկյունաձև ճրագներն ունեն հավասարակողմ, կամ հավասարասրուն եռանկյան ձև: Դրանց մեծ մասը, ի տարբերություն ավանդական ձիթաճրագների, խնամքով հարդարված են, պատված կարմիր կամ դեղին անգորով: Այրվածքի հետքերից կարելի է եզրակացնել, որ հավասարասրուն կողեր ունեցող մի քանի ճրագների պատույզի համար օգտագործվել են բոլոր երեք անկյունները:



Բենիամինի հելլենիստական ժամանակաշրջանի մոնումենտալ կառույցին և դրա գործառական բնույթին մենք մանրամասնորեն անդրադարձել ենք «Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը» հոդվածում<sup>9</sup>: Նշենք միայն, որ, հաշվի առնելով առանձնահատկությունները, այնտեղից հայտնաբերված նյութերն ու ծիսապաշտամունքային բազմաթիվ իրողություններ, եկել ենք այն եզրակացության, որ այս կառույցը բազմագործառական բնույթ ունի և ծառայել է նաև որպես

Անահիտական տաճար: Մ.թ.ա. I դարի կեսերին անտիկ բնակավայրի այս մասում տեղի է ունեցել մեծ հրդեհ, որն այրել է մոնումենտալ կառույցն ու նրա սյունազարդ դահլիճը: Ավերվելուց հետո շենքն այլևս չի վերականգվել: Ըստ շերտագրական դիտարկումների՝ եռանկյունաձև ձիթաճրագները բնակավայրում սկսում են ի հայտ գալ հրդեհից հետո, երբ արդեն պաշտամունքային գործառույթ ունեցող շենքը չկար: Սրբավայրի ավերվելուց հետո պաշտամունքը Անահիտ աստվածուհու խորհրդանշանի, այն է՝ եռանկյունու տեսքով տեղափոխվում է բնակարան: Սակայն, բացի ձևից, իմաստային կապ պիտի լինի Անահիտ աստվածուհու և ճրագի՝ յուսի աղբյուրի, լուսատուի միջև: Թերևս հարցի պատասխանը պետք է փնտրել Անահիտ-Արտեմիս աղերսներում, որոնք ունեն շատ խորը արմատներ: Հայ մատենագրության մեջ Անահիտը և Արտեմիսը հաճախ նույնացվել են: Խնդիրը բավականին խորը ուսումնասիրած Կ. Մելիք-Փաշայանը, մեջբերելով Հ. Օրբելու, Գ. Ալիշանի, Քրայցերի կարծիքները, գտնում է, «որ մեր Անահիտը, պարսկական Անահիտից չի ծագում, այլ հին արևելյան ընդհանուր ծագումով հանդերձ, տեղական աստվածուհի է, նրա պաշտամունքը ձևավորվել է շատ հնում Հայաստան-Ազգի երկրում՝ կրելով Փոքր Ասիայի ազդեցությունը»:<sup>10</sup> Այստեղից էլ՝ Արտեմիս ու Անահիտ աստվածուհիների ոչ միայն գործառական, այլև խորհրդանշանային որոշակի ընդհանրությունները:

Արտեմիսի խորհրդանշաններից էր աղավնին: Բենիամինի անտիկ դաստակերտի դեռևս մ.թ.ա. V-II դդ. մոնումենտալ կառույցից հայտնաբերված ծիսական անոթների՝ աղավնու և հորթուկի կերպարանքով կավե առաջամասերի գյուտերը ցույց են տալիս, որ Արտեմիս-Անահիտի պաշտամունքն այստեղ ունի դարավոր արմատներ: Դրա վկայություններից պիտի համարել նաև Բենիամինի մ.թ.ա. I - մ.թ. I դդ. շերտերից հայտնաբերված եղջերվի պատկերներով գունազարդ անոթների բեկորները և եղջերվի պատկերով կնքադրոշմը: Սկսած արեմենյան ժամանակաշրջանից, երբ գնալով մեծանում է իրանական ազդեցությունը հայկական հոգևոր և նյութական մշակույթի վրա, տեղի են ունենում որոշակի փոփոխություններ նաև հայկական պանթեոնում, սակայն շատ

9 Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը, (մասն երկրորդ), ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 1999, էջ 58:

10 Կ. Մ ե լ ի ք - Փ ա շ ա յ ա ն, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Եր., 1963, էջ 88:

աստվածություններ ու իրողություններ, ձեռք բերելով նոր անուններ, գործառույթներ և ծիսապաշտամունքային արարողակարգ, պահպանում են մախկին խորհրդանշանային համակարգի հետ իմաստաբանական կապը: Այս տեսանկյունից հետաքրքիր է Կ. Մելիք-Փաշայանի կատարած մեջբերումը Մատենադարանի թիվ 2679 ձեռագրից, «Տրդատ յառաջին ամի ետ նուէրս Անախտայ *Կապուտակ* երինջ ի գեղն Երիզայ»:<sup>11</sup> *Կապուտա, կապուտակ* բառն ունի իրանական ծագում և կապույտ գույն իմաստից բացի կրում է *աղավնի, աղավնագույն* իմաստները:<sup>12</sup> Ինչպես տեսնում ենք, ժամանակի ընթացքում Արտեմիս-Անահիտի խորհրդանշանից մեկը հանդիսացող աղավնին, աստիճանաբար տեղը զիջելով երինջին, անհետ չի մոռացվում, և աղավնագույնը դառնում է Անահիտին նվիրաբերվող կենդանիների գույնի պարտադիր պայման: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ Շիրակում, մասնավորապես Գյումրու Սուրբ Աստվածածին եկեղեցում (Տիրամորը անունը կրող եկեղեցիների մեծ մասը կառուցվել են անահտական սրբավայրերում) դեռևս գոյություն ունի աղավնու զոհաբերություն, որ իրականացվում է երկու եղանակով՝ զոհաբերություն և թռչնի ազատ արձակում (ազատ մատաղ):

Արտեմիս-Անահիտ աղերսների դրսևորումներից է նաև Դերսիմում պահպանված մի ավանդություն, ուր «Անահիտը պատկերվում է կարասյի կերպարանքով, որը լողում է Կարան կոլի լճում»:<sup>13</sup>

Է. Պետրոսյանը, բազմակողմանի և մանրամասն դիտարկելով Արտեմիս-Անահիտ աղերսները, բացահայտելով հայոց մեջ Արտեմիսի պաշտամունքի վերապրուկները, այդ պաշտամունքին վերաբերող նյութական, գունային, բուսական և այլ բանաձևային կաղապարները, համոզիչ կերպով ցույց է տալիս նրանց պաշտամունքային կապը լուսնի, սպիտակի, արծաթագույնի, լուսավորի, լուսի, կարասյի հետ: Մասնավորապես դրա մասին են վկայում նաև այս աստվածուհիների *լույս, լուսաբեր, լուսակալ* (ջահակիր կամ լուսարար Արտեմիս) տիտղոսները<sup>14</sup>:

Այդպիսով, բացահայտվում է եռանկյունաձև ճրագների կապը և դերը Անահիտ աստվածուհու պաշտամունքում: Այս ճրագները, ունենալով Անահիտ աստվածուհու երկրաչափական խորհրդանշանի ձևը՝ եռանկյունի, միաժամանակ արտացոլում են նրա *լուսաբեր, լուսակալ* բնույթը: Նաև հունական աշխարհում Անահիտի պաշտամունքի տարածվածության մասին է մատնանշում Ագաթանգեղոսը, նշելով, որ նրան «... բոլոր թագավորներն են պաշտում, մանավանդ հունաց թագավորը»<sup>15</sup>:

Սույն հրապարակմամբ կփորձենք վեր հանել երկաթի և երկաթագործական առարկաների հետ կապված հավատալիքային, ծիսական և պաշտամունքային մի շարք դրսևորումներ, որոնք վերաբերում են XIX դ. երկրորդ կեսը և XX դ. առաջին կեսն ընդգրկող ժամանակաշրջանին: Մեր խնդիրը չենք համարում դրանից վաղ շրջանին առնչվող բավականին հարուստ հնագիտական նյութի քննարկումը: Չնայած պարզ է, որ տվյալ ժամանակահատվածում պահպանված հավատալիքների շերտերն իրենց արմատներով գնում են վաղ անցյալ՝ իրենց վրա կրելով մեր ժողովրդի պատմական զարգացման ընթացքի յուրաքանչյուր փուլին համապատասխան հավատալիքային համակարգերի և ծիսա-պաշտամունքային արարողությունների կնիքը:

Եթե դարբնի անձը հայոց ծիսակարգում հանգամանալիորեն ուսումնասիրված է ազգագրագետ Ա. Թադևոսյանի թեկնածուական թեզում<sup>1</sup>, ապա երկաթի և երկաթագործական առարկաների հետ կապված հավատալիքային համակարգն ու հայոց ծիսակարգում դրանց դերը կարոտ են ուսումնասիրության: Պատմագագրական գրականության մեջ և տարիների ընթացքում Հայաստանի տարբեր մարզերում և Ջավախքում մեր կողմից հավաքած դաշտային ազգագրական նյութերում<sup>2</sup> բազմաթիվ տեղեկություններ կան երկաթի և երկաթագործական առարկաների հետ կապված հավատալիքների վերաբերյալ, որոնք կփորձենք համատեղել՝ վեր հանելով դրանցից ամենատիպականներն ու լայն տարածում ունեցողները:

Մետաղագործության ցանկացած ճյուղում կենտրոնական (բառի ուղղակի և անուղղակի իմաստներով) տեղը գրավում է զնդանը, որը ոչ միայն բազմաֆունկցիոնալ հարմարանք է, այլև հնուց ի վեր սրբազործված ու բազմաթիվ ծիսա-պաշտամունքային արարողությունների հիմնական կրողը դարձած առարկա է: «Ձնդանը սուրբ է», «Ձնդանը հաց է տալիս», «Ձնդանի վրա հաց տվող գործիքներն են սարքվում», «Ձնդանը ժողովուրդ է կերակրում»<sup>3</sup> և բազում մնամատիպ բանաձևեր են օգտագործում երկաթագործ վարպետները զնդանի մասին խոսելիս:

Աշխարհի բազմաթիվ և այդ թվում նաև հայ ժողովրդական հավատալիքներում, զնդան-սալը նույնացվում է տիեզերքի կենտրոն կենաց ծառի, տիեզերքը կրող սյան հետ<sup>4</sup>, («մարդկանց ցեղի պորտն է սալը»)<sup>5</sup>: Հայոց հավատալիքներում երկնային ծագում ունեցող, երկնքի և երկրի ֆիզիկական կապն արտահայտող «շանթածին երկաթը» (երկաթի երկնային ծագման վերաբերյալ կխոսենք ստորև) կռում-կտվում են զնդանի վրա: Այստեղ երկնային դարբինն իր ծիսական պայքարն է մղում չար ուժերի ու դևերի հետ: Ցանկացած մետաղագործի զնդան ինքնին՝ աշխարհի ու մարդկության

<sup>1</sup> Ա. Թադևոսյան, *Դարբինը հայոց ծիսական համակարգում, թեկնատենախոսության սեղմագիր*, Եր., 1994:

<sup>2</sup> Գ. Աղաբաբյան, *Դաշտային ազգագրական նյութեր*, (այսուհետև՝ ԴԱՆ):

<sup>3</sup> ԴԱՆ, *Տավուշ 1986, Ջավախք 1986, Շիրակ 1985, Վայոց ձոր 2002* և այլն:

<sup>4</sup> Ա. Թադևոսյան, *նշվ. աշխ.*, էջ 48:

<sup>5</sup> *Ձինագործ վարպետ Փ. Չիֆթալարյանի ձևակերպումն է, ԴԱՆ, Ախալցխա, 1986:*

պաշտպանությունն ապահովող իրերի արարման հարմարանք է: Համաձայն հնագույն պատկերացումների՝ զնդանը, որպես երկնքի և երկրի միացման, հատման կենտրոն, ապահովում ու կարգավորում է կյանքը երկրի վրա՝ թույլ չտալով քառասյին մութ ուժերին խառնաշփոթություն առաջ բերել Տիեզերքում: Հնդեվրոպական առասպելաբանության մեջ զնդան-սալի մեկ հարվածով կործանումը հնագույն տիեզերածին հավատալիքների արծարծումներն են՝ կապված վիշապասպան հերոսի կողմից տիեզերքի սյան կործանման և նրա գերմարդկային ուժի ցուցաբերման հետ: Չնդանն ամենաամուր և դիմացկուն երկաթից էր պատրաստվում, և հայ ժողովրդական հեքիաթներից մեկի հերոսը Չանփուլադին հաղթելու համար պետք է կռահի մեկ հարվածով փշրեր քառասուն տարի անխաթար մնացած սալը և այդ երկաթից պատրաստեր երկնային դարբնի հրաշագործ մուրճը:<sup>6</sup> Չնդանի վրա մի կողմից կռում են աշխարհակործան չարի կապանքները, պահպանակներն ու չարխափան առարկաները, մյուս կողմից արարվում են կենսատու աղբյուր հանդիսացող երկրագործական, անասնապահական ու արհեստավորական գործիքները:

Հայաստանի բոլոր պատմագագագրական շրջաններում երկաթագործների մեջ սովորույթ կար ամեն երեկո տուն գնալուց սրբել զնդանի երեսը և խաչակնքել այն:<sup>7</sup> Հետաքրքիրն այն է, որ երկաթագործի և ոչ մի գործիք բացի զնդանից չէր սրբվում: Չնդանի նկատմամբ այսպիսի «փաղաքշական վերաբերմունքը» կապված էր նաև այն պատկերացումների հետ, թե նրա երեսը պետք է նույնքան մաքուր լինի, որքան դարբնինը: Ինչպես զնդանի երեսը մաքուր պիտի նայի աշխարհին, այնպես էլ նրա տեր արհեստավորը:<sup>8</sup> Պատահական չէ, որ ժողովրդի մեջ արմատավորված է այն կարծիքը, որ դարբնները ամենաճշմարտախոս, «շիտակ» ու «տյուզ» մարդիկ են:<sup>9</sup> Չնդանը սրբագործված, ծիսական ու կրոնական արարողությունների իրականացման հարմարանք էր, և նրանով երդվում էին բոլոր երկաթագործները: Ամեն շաբաթ երեկոյան երկաթագործ վարպետները զնդանի վրա (այլ արհեստավորներ՝ դազգահի) մոմ էին վառում, իսկ հարուստ համբարային ավանդույթներով հայտնի քաղաքներում նաև «... խումկ էին ծխում եւ «ողորմի» հիշում «փիրաց-վարպետաց» հոգուն»:<sup>10</sup> Այս սովորույթը պահպանվել էր ընդհուպ մինչև XX դ. կեսերը և խորհրդային աթեիստ դեկավարներից թաքուն՝ երկաթագործ վարպետները և՛ մոմ էին վառում, և՛ խաչակնքում, և՛ աղոթք մրմնջում:<sup>11</sup> Մեր բանասաց երկաթագործ-վարպետ Բարասենց Ալբերտը (Վայոց ձորի Մարտիրոս գյուղ) հիշում էր, որ նախնիների անվանի պայտագործ-վարպետ Խուրդն զնդանի վրա ավելի հաճախ էր մոմ վառում, քանի որ եկեղեցիները փակված էին: Վարպետ Խուրդի զնդանի վրա աղոթեցանական իշխանություններից զաղտնի մոմ էին վառում և աղոթում Նախնիների հավատավոր հայերից շատերը:<sup>12</sup> Մա փաստորեն այսպես կոչված՝ «ժողովրդական քրիստոնեության» հետաքրքիր դրսևորումներից էր և «անաստված» հասարակարգում հավատացյալ մարդու կրոնական պահանջմունքների ծայտյալ իրագործման հետաքրքիր օրինակ: Չնդանն այս պարագայում ստանում էր Սուրբ սեղանի կամ խորանի նշանակություն: Ինչպես չէր կարելի մեջքով կանգնել դեպի Սուրբ սեղանը կամ հենց պարզագույն «հացի սեղանը», այնպես էլ խստիվ արգելված էր մեջքով դառնալ հանդեպ զնդանը: Ամենամեծ մեղքն էր համարվում զնդանին նստելը, որն հավասար էր թե՛ «նստել հաց արարող սեղանին»: Եթե որևէ մեկը փորձեր նույնիսկ անգիտակցաբար նստել զնդանին, ապա երկաթագործն անխոս ու բա-

<sup>6</sup> E. З а к а р я н, Кузнец в армянской сказке, в. кн. Археология, этнология и фольклористика Кавказа, св. Эчмиадзин, 2003, стр. 360.

<sup>7</sup> Խ. Մ ա ն և Կ յ ղ յ ա ն, Էրզրումի և Կարսի արհեստավորների համայնական կարգերը, «Մշակ», 65, 1891: Նույնպիսի տեղեկություններ կան նաև մեր կողմից հավաքած դաշտային նյութերում:

<sup>8</sup> Անվագործ վարպետ Հովհաննեսի (Վալտսնիկ Օնիկ) ձևակերպումն է, ԴԱՆ, Լենինական, 1984, տետր 1:

<sup>9</sup> ԴԱՆ, Լենինական, 1984, տետր 1: Տավուշ, 1986, տետր 2: Վայոց Ձոր, 2002, տետր 1:

<sup>10</sup> Խ. Մ ա ն և Կ յ ղ յ ա ն, նշվ. աշխ.:

<sup>11</sup> ԴԱՆ, Լենինական, Վայոց ձոր և այլն:

<sup>12</sup> ԴԱՆ, Վայոց ձոր, տետր 1:

վականին խիստ ձևով կհեռացներ այդ «սրբապիղծ» մարդուն (վարպետը կարող էր ձեռքն ընկած ցանկացած առարկայով հարվածել զանցառուի «քամակին»)։<sup>13</sup>

Ինչպես և շատ անշունչ առարկաներ, այնպես էլ երկաթագործի գործիքներն ու հարմարանքները շնչավորվում, ավելի ճիշտ՝ մարմնավորվում էին։ Ջնդանի վերին հատվածն առանց բացառության անվանվում է «երես», իսկ մյուս մասերը տարբեր պատմագագազրական շրջաններում ունեին տեղական անվանումներ, որոնց իմաստը մոտավորապես նույն միտքն էր արտահայտում։ Ջնդանի եղջյուրածև ելուստը կոչում էին «պոզ» (Տավուշ), «կոտոշ» (Շիրակ-Ջավախք), իսկ հակառակ կողմի բութ հատվածը՝ «դմակ» (Տավուշ), «ոռ» (Ջավախք, Շիրակ, Վայոց ձոր), իրանը հիշվում է «ջան» կամ «մեջք» անուններով։<sup>14</sup> Ջնդանի շնչավորումը պատահական չէր, քանի որ դարբնի պատկերացումներով՝ այն «լսում» ու «ձենով»<sup>15</sup> պատասխանում էր արհեստավորին։ Դարբնությունը «համր», հատուկ նշանների «լեզու» բանեցնող արհեստ էր,<sup>16</sup> և աշխատանքի ընթացքում լսվում էր միայն զնդանից արձակվող զրնգոցը, որը «պատասխանում» էր վարպետին, թե որքանով են ճիշտ ու դիպուկ տեղացող հարվածները։ Արհեստի տեխնիկա-տեխնոլոգիական պահանջներին համապատասխան՝ իսկապես զնդանի որակը ստուգվում էր մուրճի հարվածներից հետո արձակված ձայնի հնչեղությամբ և միայն վարպետներին հասկանալի զնգոցի որակով։<sup>17</sup>

Երկաթագործ բոլոր վարպետները հնուց ի վեր պահպանել էին բոլոր պատմագագազրական մարզերում հանդիպող մի հետաքրքիր սովորույթ, որը կապում էին Արտավազդ արքայի հետ։ «Շաբաթ երեկոները,- գրում է Խ.Մատանկոյանը,- դարբինները գործն ավարտելով մուրճով խփում էին սալին... Ժողովուրդը կարծում է, թե տոն օրերին, երբ երկաթագործները չեն բանում՝ այդ (Արտավազդի - Գ.Ա.) շոթաները բավական մաշվում են և շաբաթ երեկոյան խփած մուրճը ծառայում է հայ Պրոմեթևսի շոթաները ամրապնդելու համար, որպեսզի նա չազատվի և աշխարհը չքանդե»։<sup>18</sup> Նույն կերպ էին վարվում Ջանգեզուրի դարբինները. «...այստեղ ամեն շաբաթ երեկո նա (դարբինը-Գ.Ա.) աշխատանքն ավարտելիս մեծ մուրճով՝ *զնդանով*, զարկում էր դատարկ սալին չար Արտավազդի շոթաներն ամրացնելու համար»։<sup>19</sup> Այս սովորույթը բավական հյութեղ նկարագրում է Պերճ Պռոշյանն իր «Մոս և Վարդիթեր» վեպում. «Ուրբաթ քշերը արլորիցն առաջ դարբիններն անխոսալ իրանց դուքանները բաց արին, զնդաններին երեք հատ չաքչեցին, որ Արտավազդի զնջիլն հաստանա, չի կարենա դուս գալ աշխարհքը քանդել, տակնուվրա անել ու էլ շինեցին դուռը, գնացին ժամ կտակ լսելու»։<sup>20</sup> Անհրաժեշտ է նշել, որ մեր վիպասանն այս սովորույթը նկարագրելիս մեկտեղել է երկու միմյանցից բավական տարբեր ծիսական արարողություններ։ Ավազ Ուրբաթ դարբինների և ընդհանրապես բոլոր մետաղագործների (օրինակ Շուշիում ոսկերիչներն էլ էին պահպանակ երկաթյա մատանիներ պատրաստում<sup>21</sup>) կատարած ծիսական աշխատանքը կապ չունեի հայոց հեթանոս արքայի շոթաների հետ, այլ առնչվում էր քրիստոնեական ինչ-ինչ պատկերացումների հետ, որոնց մասին կխոսենք ստորև։ Արտավազդի «շոթաների ամրացումը» հայ երկաթագործների ամենշաբաթյա սրբազան պարտականությունն էր և կատարվում էր սիստեմատիկորեն։ Մովսես Խորենացու հիշատակած «միաշաբթի»<sup>22</sup> օրը (կիրակի- Գ. Ա) երկաթագործների կատարած ծիսական արարողությունը պահպանվել էր ընդհուպ մինչև XX դ. կեսերը։ Ալեքսանդրապոլի երկաթագործները բացի շաբաթ երեկոյից, հաջորդ՝ կիրակի առավոտյան ևս

<sup>13</sup> Գ.Ա.Ն., Վայոց ձոր, նույն տեղում։

<sup>14</sup> Գ.Ա.Ն., Տավուշ, Ախալցխա և այլն։

<sup>15</sup> Գ.Ա.Ն., Ախալցխա, 1986, տետր 1։

<sup>16</sup> Գ. Ա. Ն. և յ ա ն, Երկաթագործական արհեստները հայոց մեջ, ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 2, Գյումրի, 1999, էջ 172։

<sup>17</sup> Գ.Ա.Ն., Լենինական, տետր 1։ Վ. Թեմուրճյան, Գամիրքի հայերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, պր. 1, Եր., էջ 54։

<sup>18</sup> Խ. Մ ա ն և կ ո յ ա ն, նշվ. աշխ.։

<sup>19</sup> Մո. Լ. ի ս ի ց յ ա ն, Ջանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 166։

<sup>20</sup> Պ. Պ. Ն. Ն. շ յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 1, Եր., 1974, էջ 68։

<sup>21</sup> Ե. Լ. ա լ ա յ ա ն, Երկեր, հ. 2, Եր., 1988, էջ 200։

<sup>22</sup> Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, գլ. Ա, լր.։

բացում էին արհեստանոցը և երկու-երեք անգամ «չաքչքում» էին զննանին, այնուհետև զնում էին եկեղեցի պատարագի:<sup>23</sup> Չարքերի ձեռքով շղթայված հերոսի (Արտավազդ կամ Շիրար)<sup>24</sup> գալստյան սպասումը և նրա շղթաների անընդհատ ամրացումը, աշխարհի փրկության կամ կործանման, չարի ու բարու պայքարի հնավանդ պատկերացումների արդյունք է, որը դեռևս Մդ. ծաղրանքի տեղիք էր տվել Եզնիկ Կողբացուն. «Նոյնպես եւ մոլորութիւնն դիսաց խաբեաց գղիցապաշտս Հայոց, եթէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, եւ նա ելանելոց է ունելոց զաշխարհս, եւ ի սնուտի հոյս կապեալ կան անհաստք...»<sup>25</sup>

Չնդանի չարխափան ու մաքրագործող ֆունկցիաների արտահայտություններից է նաև հայ բանահյուսության մեջ հանդիպող ծիսական ծննդաբերության նկարագրությունը, երբ իր արգանդում «Ջանփոլադի» հոգին կրող հեքիաթի հերոսուհուն ծննդաբերության ժամանակ դևերը նստեցնում են շիկացած զնդանի վրա:<sup>26</sup> Չնդանն այստեղ հանդես է գալիս որպես քաջքերի ու դևերի խարդավանքները չեզոքացնող հարմարանք: Սրբագործված զնդանը հանդիպում է նաև հայոց հարսանեկան ծիսական ցիկլի, և ինչպես վերը նշվեց, նաև տղաբերքի սովորույթների մեջ: Հայ ժողովրդական հեքիաթներից մեկում հարսանիքից առաջ արքայադաստերը օծում են կամ ավելի ճիշտ ձևում են սալի վրա:

Երկաթագործի գործիքների մեջ ամենահարգվածներից ու սրբագործվածներից էր մուրճը: Դարբնի մուրճը ոչ միայն ունիվերսալ ու առաջնային անհրաժեշտության գործիք էր, այլև ծիսական նշանակություն ունեցող իսկական «զենք», որը չարին կործանող սրի նշանակություն էր ստանում: Երկնային երկաթագործի մուրճը փշրում էր չարքերին ու դևերին, մուրճի հարվածները պահպանում էին մարդկանց չար ուժերից ու հեռու քշում նրանց: Մուրճի հարվածի արձակած զոնգոցը զգուշացնում էր դևերին, որ տվյալ գյուղում կամ քաղաքում կան դարբնոց ու դևերին սպանող երկնային դարբնի, և չարը չէր փորձում մտնել այդ բնակավայրը:<sup>27</sup> Մուրճի հարվածի հզորությունը նույնացվում էր առասպելական հերոսի սրի հարվածին: Ինչպես զնդանը՝ մուրճը ևս, շնչավորված, մարմնավորված գործիք է դարբնի համար: Վարպետ երկաթագործը հատուկ փառաքշական վերաբերմունք ուներ մուրճի նկատմամբ: Ոչ ոք իրավունք չուներ այլ նպատակով օգտագործել վարպետի բանող մուրճը՝ մեխ խփել և այլն: Ինչպես ասենք դերձակները թույլ չէին տալիս իրենց մկրատով եղունգ կամ այլ նյութեր կտրել, այնպես էլ երկաթագործ վարպետները օտարից հեռու էին պահում իրենց «հաց վաստակող» գործիքը:

Ոչ պակաս ծիսական նշանակություն ուներ նաև քուրան (բովք, հալոցք), որը երկաթագործական աշխատանքների տեխնիկա-տեխնոլոգիական ցիկլի կենտրոնական դերակատարներից էր: Քուրան խորհրդանշում էր օջախի, տան կրակի ու ջերմության պաշտամունքը:

Երկաթագործի մյուս գործիքներն ու հարմարանքները (փուքս, ունեխներ, աքցաններ, ծակիչներ և այլք) չունեին ծիսական այն արժևորումը ինչ վերը բերվածները:

Հայ ժողովրդական հավատալիքներում կարևոր տեղ ունեն երկաթե իրերը, որոնց ծիսական նշանակությունը կապված է հայոց տոնացույցի որոշակի ցիկլերի հետ: Սրանցից ամենահայտնին «ուրբաթարուներն» են, որոնց ծիսական-պահպանական նշանակությունը բավական հանգամանալի մեկնված է հայ պատմագագարական գրականության մեջ: Չատկի տոնի Ավագ ուրբաթ օրը հայ երկաթագործները անխոստ (այստեղից էլ «ուրբաթախոստ» անվանը), «անժմի»՝ գյուղի կամ քաղաքի յոթ թաղերից հավաքված երկաթից պատրաստում էին հիմնականում կիսալուսնաձև կամ հայկական պայտի նման բարակ ու թեթև զարդեր, որոնք իրենց վրա բացված անցքերի միջոցով կարվում էին «լուսնով», «ղիվոտությամբ» և այլ հիվանդություններ ունեցող երեխաների շորին:<sup>28</sup> Ավագ ուրբաթ ոչ մի երկաթագործ իրավունք չուներ աշխատելու, սակայն

<sup>23</sup> ԳԱՆ, Լենինական, տետր 1:

<sup>24</sup> Ա. Թ ա դ և ն ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 13:

<sup>25</sup> Եզնիկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց, Եր., 1994, էջ 85-86:

<sup>26</sup> E. З а к а р я н, Кузнец в армянской сказке, стр. 361.

<sup>27</sup> ԳԱՆ, Ջավախք, Լենինական և այլն:

<sup>28</sup> Խ. Մ ա ն և կ ն գ յ ա ն, նշվ. աշխ.: Ե. Լալայան, նշվ. աշխ. և այլն:

«ուրբաթարուրն» ու Հուդայի աչքը փորելու մեխերը անպայման պատրաստվում էին<sup>29</sup> ու անմիջապես դարբնոցը փակվում էր: Ա. Թադևոսյանը, կապելով այս երևույթը ծննդի և զարթոնքի հետ,<sup>30</sup> պնդում է, որ «ուրբաթարուրներ» կրում էին հարսներն ու հղի կանայք: Սակայն մեր կողմից տարբեր պատմագագագրական շրջաններում գրանցված նյութերում վերոհիշյալ կանայք կրում էին երկաթե մատանի, ապարանջան կամ էլ «դող»: Մատանու կամ ապարանջանի շրջանակը խորհրդանշում էր տիեզերքն ու երկնային լուսատուների անընդհատ շրջափուլը, որը հնարավորություն էր տալիս չար ուժերից պահպանել նոր կյանք արարող կնոջը: Նմանօրինակ գործառույթ էր վերագրվում նաև երկաթե վզնոց-«դողին», որն առավել լայն կիրառում ուներ, քանի որ «դող» կրում էին և՛ կանայք, և՛ տղամարդիկ, և՛ մանուկները:<sup>31</sup> Ինչպես «ուրբաթարուրները»՝ «դողերը» ևս, պատրաստվում էին «անժմի» երկաթից, սակայն վերջիններս պատրաստվում էին ողջ տարվա ընթացքում և կախված չէին տոնական ցիկլի որևէ փուլի հետ: «Դող» կրել խորհուրդ էր տրվում վախեցած, «դիվոտած» կամ էլ փորձանքի ենթարկված մարդկանց:<sup>32</sup>

Երկաթագործի պատրաստած իրերից հետաքրքիր ծիսական նշանակություն ունեին նաև պայտերը, որոնք հատկապես XIX-XX դդ. լայնորեն օգտագործվում էին՝ տան դրսի դռանը կամ դարպասին խփելով չար աչքից ու չար մտադրություններից օջախը պահպանելու նպատակով: Չարխափան կարող էին լինել միայն օգտագործված-մաշված և հիմնականում ձիու պայտերը, որոնք նույնիսկ օրհնել էին տալիս քահանային:<sup>33</sup> Պայտի պարագայում ևս գործում էր անընդհատ շրջանի և տիեզերքի պատկերավորման գաղափարը: Սա հատկապես ցայտուն է երևում «հայկական պայտերի» արտաքին պատկերում:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ երկաթագործը և երկաթագործական գործիքներն ու առարկաները իրենց ուրույն տեղն են գրավել հայ ժողովրդի տոնածիսական կյանքում և հավատալիքներում, որոնց արմատները ոչ միայն բնիկ հայկական, այլև համընդհանուր առաջավորասիական են և անշուշտ գնում հասնում են վաղնջական շրջան:

## ЖЕЛЕЗО И ЖЕЛЕЗНЫЕ ПРЕДМЕТЫ В НАРОДНЫХ ВЕРОВАНИЯХ АРМЯН

\_\_\_\_ Резюме \_\_\_\_\_

\_\_\_\_ Г. Агабян \_\_\_\_\_

В статье сделана попытка характеризовать место и роль железа и железных предметов в обрядово-ритуальном цикле армян, а также в народных верованиях. Личность железных дел мастеров и сделанные ими предметы имеют особое ритуальное значение, а верования, связанные с ними, своими корнями уходят в глубь веков. Особое внимание уделено ритуальному значению наковальни как центра мироздания и основы ствола древа жизни.

<sup>29</sup> Ա. Թադևոսյան, նշվ. աշխ., էջ 14: Խ. Մատանկոյան, նշվ. աշխ.: Ե.Լալայան, նշվ. աշխ.: ԳԱՆ, և այլն:

<sup>30</sup> Ա. Թադևոսյան, նշվ. աշխ., էջ 14-15:

<sup>31</sup> ԳԱՆ, Վայոց ձոր, Տավուշ:

<sup>32</sup> Նույնը:

<sup>33</sup> ԳԱՆ, Լեռնական, տետր 2: Այս սովորույթը պահպանվում է նաև մեր օրերում:

ՓԱՅՏԱՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՋԵՍՏԻՆ ԵՎ ԱՐՋԵՍՏԱՎՈՐԱԿԱՆ  
ԳՈՐԾԻՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՅՈՑ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԸ

Տակավին խոր հնադարից հայոց, ինչպես նաև աշխարհի շատ ժողովուրդների մեջ ծիսապաշտամունքային որոշակի հավատալիքներ են ձևավորվել բուսական աշխարհի, մասնավորապես ծառերի նկատմամբ, ծառը պաշտվել է, սրբացվել<sup>1</sup>: «Մուրթ ծառերի» պաշտամունքը Հայաստանի տարբեր պատմագագագրական մարզերում ու հայաբնակ այլ վայրերում այս կամ այն դրսևորումներով պահպանվել է ընդհուպ XIX-XX դդ.<sup>2</sup>:

Ազգագրական նյութի հավաստմամբ՝ պայմանավորված բուսական աշխարհի, ինչպես նաև երկրագործական, պտղաբերության, տնտեսական, ընտանեկան-կենցաղային ևն պաշտամունքով, հավատալիքներ են ձևավորվել կապված փայտե զանազան աշխատանքային գործիքների, կենցաղային նշանակության բազմաբնույթ առարկաների հետ: Այդ առումով զանազան ծիսակատարություններ են արվել, որոնք կոչված են եղել ապահովելու առատություն և հաջողություն, զերծ պահելու անհաջողություններից, վտանգից, չար ուժերի ու չար ոգիների ազդեցությունից<sup>3</sup>:

Ծիսապաշտամունքային որոշակի հավատալիքներ առաջացել են նաև արհեստների, նաև փայտամշակության արհեստի, արհեստավորների, աշխատանքային գործիքների առումով, հմայական զանազան արարողություններ են արվել հաջողության ակնկալիքով: Այսպես, «...Եւ ամենայն արուեստաւորք ի մոտս տարւոյն յարուեստն իւր հմայեն. դարբին՝ կռանաւ մի հարկանէ զսալ. ոստայնանկն՝ թել մի քարշէ ի կկոցէ, եւ բիճան երիցս յարկանէ. մանոցն՝ թել մի ձգէ, եւ տայ զայն զիկկա» ևն<sup>4</sup>:

Հնագույն ժամանակներից այս կամ այն արհեստի գյուտը վերագրվել է տարբեր առասպելական անձնավորությունների և աստվածների: Արհեստավորական համաքարությունների առաջացման հետ դրանց վերագրվեց նաև արհեստը հովանավորողի ու պահպանողի դեր, որը համապատասխանում էր համաքարությունների ձգտումներին, իղձերին ու ոգուն<sup>5</sup>:

Ըստ ժողովրդական հավատալիքների՝ արհեստներն ունեցել են իրենց հովանավոր «սուրբ»-ը (փիր): Ավանդության համաձայն, փայտամշակ արհեստավորների հովանավոր «սուրբ» նախահայրը եղել է Հայր Հովսեփը (ինչպես քարտաշ-որմնադիրների՝ Աբելը, դարբինների՝ Գավիթ մարգարեն)<sup>6</sup>, որի բարեհաճությանն են ջանացել արժանանալ զանազան ծիսական արարողություններով, ըստ երևույթին, կապված նախնիների պաշտամունքի գաղափարի հետ:

<sup>1</sup> Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տիփլիս, 1913, էջ 64: Ղևոնդ Ալիշան, Հին հասարակածի հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, Ս.Ղազար, 1895, էջ 75, 102-103, 420: Н.Эмвян. Очерки религии и верований языческих армян, М., 1864, стр. 58: Ա. Սարգսյան, Ծառերի պաշտամունքի դրսևորումները հայոց հավատալիքային համակարգում, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», III, Գյումրի, 2000, էջ 73:

<sup>2</sup> Տե՛ս, մասնավորապես, «Ազգագրական հանդես»-ի (հետայսու՝ ԱՀ) գրեթե բոլոր գրքերը:

<sup>3</sup> Վ. Բ. դ. ռ. յ. ա. ն, Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մեջ, «Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի» (հետայսու՝ ԱՀՊՊԹ), հ. 3, Եր., 1950, էջ 6-71: Ա. Սարգսյան, Փայտե շինածոների հետ կապված հայոց ժողովրդական հավատալիքները, «Հայ ժողովրդական մշակույթ» Հանրապետական գիտական նստաշրջան, IX, Ջեկուցումների հիմնադրություններ, Եր., 1997, էջ 53-54:

<sup>4</sup> Ղ. Ա. լ. ի. շ. ա. ն, նշվ. աշխ., էջ 396: Կ.Մեղրոսյան, Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լեռնականցիների կենցաղում, Հայ ազգագրություն և բանահյուսություն (հետայսու՝ ՀԱԲ), պր. 6, Եր., 1974, էջ 234: Ա. Սարգսյան, ԳԱՆ-81, ԳԱՆ-83, ԳԱՆ-86:

<sup>5</sup> Բ. Ա. ռ. ա. ք. է. լ. յ. ա. ն, Քաղաքները և արհեստները Հայաստանում XI – XII դդ., հ. II, Եր., 1964, էջ 186:

<sup>6</sup> Կ. Ս. է. դ. բ. ռ. յ. ա. ն, նշվ. աշխ., էջ 190:

Հնագույն ժամանակներից մինչև XX դարակիզը Հայաստանում պահպանվել է արհեստի հովանավոր ոգի-նախնու գաղափարը<sup>7</sup>: Այսպես, Վասպուրականում յուրաքանչյուր արհեստավոր շարք էրեկոները խունկ է ծխեցրել՝ իր արհեստի «փիր»-ի հոգու փրկության համար<sup>8</sup>, Շիրակում արհեստավորական համքարական դրոշների վրա պատկերվել են սրբերի, սրբություն համարվող աշխատանքային գործիքների պատկերներ, աշակերտի՝ վարպետ օժվելու արարողության ժամանակ վարպետն օրհնել է վարպետացուին՝ «փիր»-ի՝ «Հայր Հովսեփի օրհնությամբ մեծանաս»<sup>9</sup>:

Արհեստի հովանավոր ոգու անունով Հայաստանում բազմաթիվ տեղավայրեր կան: Մյուսիքում (Միսիան) Իշխանասարն անվանվել է Փիր (ոտարոբիկ քար են զցել զետը՝ իրենց նվիրական ցանկություններն իրականանալու ակնկալիքով),<sup>10</sup> Կասպանում՝ Փիրիի(ու), Փիրեալ, Լոռիում Ահնիճորի սարերից մեկը՝ Փրի սար, Աղահեջքում՝ Փիրիճան, Գողթան գավառում՝ Փրիի քաշուան, սուրբ համարվող ծառերով:<sup>11</sup>

Դաշտային ազգագրական նյութի հավաստմամբ՝ XX դ. կեսերից արհեստի հովանավոր ոգի-նախնու մասին պատկերացումները հիմնականում կորսվել են, կամ պահպանվել շատ աղոտ հիշողությունների ձևով:<sup>12</sup>

Արհեստների հովանավոր ոգի-նախնի-աստծո գաղափարն անցյալում դիտվել է էթնիկ տարբեր հանրությունների մեջ: Այսպես, օր.՝ հին արիական դիցարանի առավել պաշտվող աստվածներից է եղել Վիշվակարմանը՝ ստեղծագործ աշխատանքի աստվածը: Նա մտել է համարիական դիցարան և մինչ այժմ պաշտվում է որպես արհեստների հովանավոր:<sup>13</sup> Հին Հռոմի արհեստների հովանավոր աստվածուհու՝ Միներվայի տոնը կատարվել է մարտին՝ որպես հռոմայեցիների արհեստագործների տոն:<sup>14</sup> Առաջավոր Ասիայում յուրաքանչյուր արհեստավորական կազմակերպություն ունեցել է իր հովանավոր սուրբը:<sup>15</sup> Կովկասում, արխագների պատկերացումների համաձայն, դարբնության հովանավոր Շաշա Խեղոուսան 363 արհեստի հիմնադիր է (հմմտ.՝ ըստ մեգրելների՝ տարին ունի 363 օր, և յուրաքանչյուր օրն ունի իր արհեստը):<sup>16</sup> Կենտրոնական Ասիայի ժողովուրդների մեջ յուրաքանչյուր արհեստ, յուրաքանչյուր արհեստավոր ունեցել է իր հովանավոր «փիր»-ը, ընդ որում, արհեստավորական ու մասնագիտական հավատալիքներում ու ծեսերում, հանդիսավոր արարողությունների ժամանակ արհեստավոր վարպետների ու տոհմի նախնիների հոգիները հաճախ հանդես են եկել միահյուսված-միաձուլված:<sup>17</sup>

<sup>7</sup> *Մ. Մարգարյան, ԳԱՆ-81, ԳԱՆ-83, ԳԱՆ-86:*

<sup>8</sup> *Ե. Լալայեան, Վասպուրական, ԱՀ, գ.25, Թիֆլիս, 1914, էջ 54:*

<sup>9</sup> *Կ. Սեդրոյան, նշվ. աշխ., էջ 190-200: Ա.Մարգարյան, ԳԱՆ-81, ԳԱՆ-83, ԳԱՆ-86:*

<sup>10</sup> *Մ. Մարգարյան, ԳԱՆ-86, տ. V:*

<sup>11</sup> *Ե. Լալայեան, Գողթն, ԱՀ, գ.11, Թիֆլիս, 1904, էջ 301: Ղևոնդ Ալիշան, Միսիական: Տեղագրություն Միսիանց աշխարհի, Վենետիկ, Ս.Ղազար, 1893, էջ 100, 270, 290, 292:*

<sup>12</sup> *Մ. Մարգարյան, ԳԱՆ-81, ԳԱՆ-83, ԳԱՆ-86:*

<sup>13</sup> *Н. Гусева, Художественные ремесла Индии, М, 1982, стр. 6 (հմմտ.՝ Visvakarman-բառացի՝ «ամենայն արարիչ»), վերդայական և հինդուսական առասպելաբանության մեջ տիեզերքի աստվածային արարիչ... Վիշվակարմանը հանդես է եկել որպես հյուսն, դարբին, վարպետ շինարար... երբեմն նրա հայրը համարվել է Բրահման) տես՝ Мифы народов мира. Энциклопедия, т. I, М 1991, стр. 237-238:*

<sup>14</sup> *Մ. Բենտլի և ի կ, Մ. Կոզան և ուրիշն., Դիցարանական բառարան, Եր., 1985, էջ 7-8:*

<sup>15</sup> *Н. Марр. Мохаррам (шитские мистерии как пережиток древних переднеазиатских культов), "Традиционная культура народов Передней и Средней Азии", Л., 1970, стр. 360.*

<sup>16</sup> *Ш. Амирашвили, История грузинского искусства, М., 1963, стр. 40 (հմմտ.՝ հասկապես դարբնի պաշտամունքը հայոց, նաև այլ ժողովուրդների մեջ: Դարբինը համարվել է հեքիմ, բժիշկ, անուսմության հովանավոր, միաժամանակ նաև՝ կախարհ, հրաշագործ. տես՝ Ս. Թադևոսյան, Դարբինը հայոց ծիսակարգում (ատենախոսության սեղմագիր), Եր., 1994: Մ. Մարգարյան, ԳԱՆ-81, ԳԱՆ-83, ԳԱՆ-86, տես նաև՝ Ю. Липс, Происхождение вещей. Из истории культуры человечества, М., 1954, стр. 153-155, 355; Б. Рыбаков, Ремесло древней Руси, М., 1948, стр. 485-490.*

<sup>17</sup> *Г. Сенсарева, Реликты домусульманских верований и обрядов у узбеков Хорезма, М., 1969, стр. 28, 121-122, 220, 292; К. Антипина, Особенности материальной культуры и прикладного искусства южных киргизов, Фрунзе, 1962, с.145; Н. Кисляков, Вотивные предметы горных таджиков по материалам МАЭ, "Традиционная культура народов Передней и Средней Азии",*

Քրիստոնեական և մահմեդական կրոնների առաջացմամբ ժողովրդական հավատալիքները վերահաստատվողիցին՝ կապվելով քրիստոնեական ու մահմեդական «սրբերի» անունների հետ: Ըստ Ն.Մառի, կրոնական նոր հավատալիքներում որոշակի արհեստի հովանավորի՝ հեթանոսական աստծո պաշտամունքը զրկվեց իր հենքից...<sup>18</sup>: Այնուամենայնիվ, ծեսերի հենքում դիտվում են հեթանոսական պաշտամունքային ակունքները:

Հայոց մեջ հավատալիքներ ձևավորվել են նաև արհեստավորների հետ կապված: Այսպես, ընտանիքի և ընտանեկան հարստության հովանավորը, *տան պահպան ոգին (շնողը, տան դովլաթ ևն)*՝ երբեմն հանդես է եկել նաև արհեստավորի կերպարանքով: Այդ ոգիները բնակվել են տան պատի մեջ, այլուրի ամբարի վրա կամ ետևում, կտրի տակ, նկուղում և ժամանակ առ ժամանակ լսելի արել իրենց ձայնը կամ իրենց արհեստից առաջացած թխկթխկոցը: Տնեցիները մեծ հարգանքով են վերաբերվել այս ոգիներին, հավատացած լինելով, որ իրենց տան բարօրության պատճառը դրանք են<sup>19</sup>: Փաստորեն, ընտանեկան ոգու գաղափարը մարմնավորվել է այն բոլոր առարկաների և ընտանիքի անդամների մեջ, որոնցով այս կամ այն չափով պայմանավորված է եղել ընտանիքի բարեկեցությունը<sup>20</sup>:

Ընդհանրապես աշխատանքի և հատկապես արհեստավորների աշխատանքի հետ կապված, հմայական իմաստ ունեցող՝ որոշակի արգելքներ են եղել հայոց մեջ, որոնք անցյալում խստորեն պահպանվել են: Այսպես, համբարություններում արգելված է եղել կիրակնօրյա աշխատանքը<sup>21</sup>, իսկ XIX-XX դդ. արհեստի համար ընդհանրապես արգելված են եղել տոն, կիրակի, ուխտագնացության օրերը ևն, որն այս կամ այն տարբերակով դիտվել է Հայաստանի տարբեր պատմագագադրական մարզերում՝ ժողովրդական որոշակի ստուգաբանությամբ<sup>22</sup>: Արհեստավորական արգելքները հետագայում քրիստոնեական վերահաստատվումամբ են հանդես եկել: Չարչարանաց շարաքն աշխատանքի համար արգելված է եղել, հյուսները չեն տաշել, կապված, ըստ երևույթին, Քրիստոսի խաչափայտի հետ<sup>23</sup>, կամ Ավագ հինգշաբթի աշխատելը ծանր մեղք է համարվել<sup>24</sup>, Ավագ ուրբաթ օրը «նրեղի չէ գամ գամել կամ ուրագ և մուրճ

стр. 13: А. Пяркулиева. О деревообделочном производстве туркмен Средней Аму-Дарьи в XIX-нач. XXв., "Известия АН Туркменской ССР", серия общ. наук, 1964, N 3, стр. 39: Նույնի, *Домашние промыслы и ремесла туркмен долины Ср. Амударьи во II пол. XIX-нач. XX в.*, Ашхабад, 1973, стр. 54: Е. Ермакова, *Носите перстни из серебра. Наука и религия*, 1966 N 2, стр. 16-18.

<sup>18</sup> Н. М а р р, *Кавказский культурный мир и Армения*, Петроград, 1915, стр. 17.

<sup>19</sup> Ե. Լ ա լ ա յ ե ա ն, *Վասպուրական*, ԱՀ, գ. 25, էջ 58: Նույնի, *Ջալալաբ*, ԱՀ, գ. Ա, *Շուշի*, 1896, էջ 336: *Խաչիկ Սամուելեան*, *Հայ ընտանեկան պաշտամունքը*, ԱՀ, գ. 14, *Թիֆլիս*, 1906, էջ 166:

Ս. Ավագյան, *Արձակ*, ՀԱԲ, սր. 8, Եր., 1978, էջ 91: Ա. Սարգսյան, ԴԱՆ-81, ԴԱՆ-83, ԴԱՆ-86: <sup>20</sup> Յ. Х а р а т я н, *Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян, Армянская этнография и фольклор. Материалы и исследования (այլու՝ АЭФ)*, 17, Եր., 1989, стр. 44.

<sup>21</sup> Բ. Ա ն ա ք ե լ յ ա ն, *Քաղաքները և արհեստները Հայաստանում*, հ. II, էջ 198:

<sup>22</sup> Ա. Ս ա ռ ց ա յ ա ն, ԴԱՆ-81, ԴԱՆ-83, ԴԱՆ-86: Վ. Ղազարյան, *Լոռու գավառի Թումանյանի (նախկին Ալավերդու) շրջանի Չկալով (նախկին Սաղիբազդի) գյուղի ազգագրական նյութերը*, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, *ազգագրության բաժնի արխիվ (հետախույ՝ ՀԱԲ, ԱԲԱ)*, թիվ 369, էջ 40: Նույնի, *Մոսկոյի գավառակի (Լոռի) ազգագրական նյութերը (1850-1974 թթ)*, ՀԱԲ, ԱԲԱ, թիվ 380, էջ 118-119: Նույնի, *Լոռվա գավառի Օձունի գավառակի Ղաչաղան (Արևածագ), Ծաթեր, Մղաթ և Կարմիր Աղեզի գյուղերի ազգագրությունը*, ՀԱԲ, ԱԲԱ, 7/91, էջ 67-68: Հ. Հայրապետյան, *Միսիանի շրջանի Շաղաթ գյուղի պատմությունը և ապրելակերպը 1828-1928 թթ.*, ՀԱԲ, ԱԲԱ, 3/114, էջ 83: Գ. Միքայելյան, *Կամո: Բժշկություն, գուշակություն, ծիսակատարություն*, ՀԱԲ, ԱԲԱ, էջ 35: Ա. Ծատուրյան, *Տեղեկագրություն ժողովրդական տոների, ուխտագնացության, ուխտավայրերի և կրոնական ծիսակատարության ու սովորույթների մասին Ղափանի շրջանում*, ՀԱԲ, ԱԲԱ, թիվ 443, էջ 29: Ա. Ալադյան, *Պատմութիւն Մալաթիոյ հայոց. տեղագրական, պատմական և ազգագրական ուսումնասիրութիւն*, Պէյրոս, 1961, էջ 1137, 1141: Հ. Գասպարեան, *Չմշկածագ եւ իր գիւղերը*, *Թեհրան*, 1969, էջ 483:

<sup>23</sup> Ե. Լ ա լ ա յ ե ա ն, *Ջալալաբ*, ԱՀ, գ. Բ, *Թիֆլիս*, 1897, էջ 272:

<sup>24</sup> Ա. Ա լ ա յ ա ն ճ ե ա ն, *նշվ. աշխ.*, էջ 1141:



գործածել, անաստողը Քրիստոսը գամած կ'ըլլար<sup>25</sup>» ևն: Այնուամենայնիվ, Հայաստանի որոշ շրջաններում հատկապես Չատկի Ավագ ուրբաթ օրը «նաճար արհեստատրները գամ կը զարնեն՝ աւելի Յուդային աչքը մխած ըլլալու համար»<sup>26</sup>, նաև՝ կանայք այդ օրը «մի անգամ ասեղը շորի մեջ են խրում, որպեսզի Հուդայի աչքը ծակեն»<sup>27</sup> ևն:

Ըստ որոշ ուսումնասիրողների՝ կիրակի օրերն աշխատելու քրիստոնեական արգելքը կամավոր աշխատանքային ինքնարգելքի դրսևորումներ ունի: Սովորական, օրացուցային կիրակիներից զատ, ընդունված էին զանազան «կիրակիներ», այսինքն աշխատանքային արգելքներ, որ մարդիկ կամավոր կրում էին իրենց վրա, դրան տալով զոհաբերության բնույթ: Դրանք որոշակի նպատակ էին հետապնդում՝ արտերը պաշտպանել մկներից, պաշտպանվել ջրհեղեղից, կարկտից ևն, առհասարակ՝ կանխել որևէ հնարավոր չարիք:<sup>28</sup>

Արհեստի ու արհեստավորության հետ կապված որոշակի արգելքներ եղել են նաև կովկասյան և էթնիկ այլ հանրությունների մեջ:<sup>29</sup>

Արդեն XX դարասկզբին հայոց մեջ արհեստի հետ կապված արգելքները հետևողականորեն չեն պահպանվել, միտում է նկատվել աշխատելու նաև կիրակի և տոն օրերին՝ խիստ անհրաժեշտությունից դրդված,<sup>30</sup> իսկ բանասացներն արհեստի արգելված օրերի մասին աղոտ հիշողություններ ունեին և դրա բացատրությունը տալ չկարողացան<sup>31</sup>:

Անցյալում հմայական զանազան ծեսեր են արվել նաև փայտամշակ արհեստավորի արհեստանոցի, աշխատանքային գործիքների հետ կապված՝ հաջողության ակնկալիքով:<sup>32</sup> Բնակելի ու տնտեսական կառույցները, նաև՝ արհեստանոցները «չար աչքից» պահպանելու ակնկալիքով ձիու պայտը՝ որպես չարխափան, զամել են դրանց դռներին:<sup>33</sup> Ամանորի մախթոյակին թխվող տոնական ծիսական հացերը՝ երկրագործական ու արհեստավորական գործիքների նմանությամբ՝ խոփ, ուրագ, սոնց ևն (հիմքում՝ բնապաշտական բովանդակությամբ), խորհրդանշել են ընտանիքի աճ, անասունների բեր (ծնած) և ընդհանրապես առատություն, հաջողություն:<sup>34</sup> Արհեստավորի հաստոցի, սալի վրա մատելը մեղք է համարվել, «խեղձ ու բարաքեն կը պակսի»,<sup>35</sup> «քու դագ-

<sup>25</sup> Մ. Զ է 1 է 2 ե ա ն, Միս-մատեան. Պատմական, բանասիրական, տեղեկագրական, ազգագրական և յարակից պարագաներ, Պէյրուք, 1949, էջ 522:  
<sup>26</sup> Ա. Ա լ ա յ ո յ ա ճ ե ա ն, նշվ. աշխ., էջ 1141:  
<sup>27</sup> Ա. Ա հ ա ը ո ն ե ա ն, Հոս կինը. նիսեր մեր ժողովրդական կեանքի ուսումնասիրութեան համար, Թիֆլիս, 1897, էջ 67:  
<sup>28</sup> Հ. Խ ա ռ ա տ յ ա ն - Ա ռ ա ը ե լ յ ա ն, Հայ ժողովրդական տոները, Եր., 2000, էջ 9:  
<sup>29</sup> Г. Ч у р с и н, Материалы по этнографии Абхазии, Сухуми, 1956, стр. 119,122-123; III. Инал-Ипа. Абхазы. (историко-этнографические очерки), Сухуми, 1965, стр. 559; Народы Кавказа (Народы мира. Этнографические очерки), т. II, М., 1962, стр. 412; А. Байбурин. Семантический статус вещей, "Материальная культура и мифология", МАЭ, XXXVII, Л., 1981, стр. 220-223; Г. Чурсин, Материалы ..., стр. 119,122; О. Габуева, Некоторые вопросы деревообработки осетин (II пол. XIX-нач. XXвв), М., 1974, стр. 134; Т. Мамаладзе. Народные обычаи и поверья гурийцев, Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այլուր՝ ՏՄՈՄՊԻԿ), Կ. Վ. XVII, отд. II, Тифлис, 1893, стр. 63.  
<sup>30</sup> Կ. Ա ղ ը ը ո յ ա ն, նշվ. աշխ., էջ 204:  
<sup>31</sup> Ա. Ա ա ը ո յ ա ն, ԴԱՆ-81, ԴԱՆ-83, ԴԱՆ-86:  
<sup>32</sup> Ա. Ա ա ը ո յ ա ն, Ծառի և փայտամշակման հետ կապված ժողովրդական հավատալիքները հայոց մեջ (XIXդ. II կես- XXդ. սկիզբ) Հայաստանի բնակչության հասարակական կեցողի և հոգևոր մշակույթի պրոբլեմների ուսումնասիրությանը նվիրված գիտական նստաշրջան: Ձեկուցումների թեզիսներ, Եր., 1985, էջ 49: Նույնի, Փայտամշակ արհեստավորի գործիքներն ու հարմարանքները Չանգեզուրում, Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր (մշակույթ և լեզու): Երիտասարդ գիտնականների VIII կոնֆերանս: Ձեկուցումների թեզիսներ, Եր., 1988, էջ 76:  
<sup>33</sup> Լ. Պ ե տ ը ո յ ա ն, Հայ ժողովրդական փոխադրամիջոցներ (պատմագագրական ուսումնասիրություն), ՀԱԲ, ար. 6, էջ 122: Ա. Սարգսյան, ԴԱՆ-81, ԴԱՆ-83, ԴԱՆ-86:  
<sup>34</sup> Վ. Բ ղ ո յ ա ն, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ 438,443: Ա. Օղարաշյան, Քրիստոնեական ամանորի հետ կապված որոշ ծիսական վերապրուկներ, Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, Հաս. գիտ., Եր., 1965, թիվ 3, էջ 93-94: Ա. Սարգսյան, ԴԱՆ-81, ԴԱՆ-83, ԴԱՆ-86:  
<sup>35</sup> Ե. Լ ա լ ա յ ե ա ն, Նոր-Բայազետի գաւառ, ԱՀ, գ.17, Թիֆլիս, 1908, էջ 124:

գահի վրա իրավունք չունես նստես, օշնած ա» (աշակերտին՝ վարպետ օժվելու արարողության ժամանակ), արհեստավորը երբեմն հաստոցն է վկայակոչել՝ «դագգահը վկա յա»<sup>36</sup>, Լոռիում հոգևարքը բեթևացնելու նպատակով եթե հիվանդը երկրագործ է եղել՝ խոփը, եթե դարբին՝ մուրճն ու սայլը, եթե հյուսն՝ ուրագը դրել են կրծքին ևն:<sup>37</sup>

Պահպանվել են արհեստավորական գործիքների վերաբերող ավանդություններ:<sup>38</sup> Երկաթի պաշտամունքի հետ կապված. հատկապես կացինը ժողովրդական հավատալիքներում անցյալում մեծ տեղ է գրավել՝ հացը չթանկանալու համար կացինն ուսին դուրս չեն գնացել,<sup>39</sup> չար ոգիներից պաշտպանվելու համար գիշերները դռան մոտ կացին են դրել:<sup>40</sup> Հանդում կորած անասունին զագաններից զերծ պահելու համար կացինը սուր կողմով խփել են սանդեղի ատամների մեջ (երբեմն՝ փայտակոճղին) և այդպես թողել, մինչև կորած անասունի գտնվելը:<sup>41</sup> Կացինը, որպես չարխափան միջոց, անցյալում կովկասյան, նաև էթնիկ այլ հանրությունների մեջ կիրառվել է հնայական զագան արարողություններում:<sup>42</sup> Ուսումնասիրողների կարծիքով, արդեն քարի դարից հետո տարբեր ժողովուրդների մեջ մետաղե առարկաներն ու գործիքներն օժտվել են գերբնական հատկություններով և հատկապես պաշտվել՝ օգտագործվելով նաև որպես ֆետիշներ ու պահպանակներ:<sup>43</sup>

Հայոց, նաև էթնիկ տարբեր հանրությունների մեջ ևս, պայմանավորված այն հավատքով, որ մարդը հաղերձյալ աշխարհում էլ երկրային կյանք է վարում, դեռևս հնագույն դարաշրջաններից նրա հետ թաղել են այն առարկաները, որոնցից օգտվել է կյանքի ընթացքում, այդ թվում նաև՝ աշխատանքի գործիքներ: Դրա լավագույն ապացույցը վաղ բրոնզի դարաշրջանին պատկանող հյուսնի պեղածո դամբարանն է, որտեղ այլ առարկաների թվում հայտնաբերվել են նաև փայտամշակության հիմնական գործիքներից սողոց, սակր, հարթ տապարիկ, դուրեր ևն:<sup>44</sup> Այդ սովորույթի արձագանքները պահպանվել են ընդհուպ XX դարասկիզբ:<sup>45</sup>

Նմանցյալի հետ աշխատանքային գործիքներ ու իրեր թաղելու ավանդույթն աստիճանաբար այլ միտում է ունեցել և խորհրդանշական բնույթ ընդունել՝ իսկական

<sup>36</sup> Ա. Ս ա ռ գ ս յ ա ն, ԴԱՆ-81, ԴԱՆ-83, ԴԱՆ-86:

<sup>37</sup> Ե. Լ ա լ ա յ ե ա ն, Բորչալուի գաւառ, ԱՀ, գ. 10, Թիֆլիս, 1903, էջ 168: Ա. Սարգսյան, Ծառի և փայտամշակման հետ ..., էջ 49: Նույնի, Փայտամշակ արհեստավորի գործիքներն ու հարմարանքները..., էջ 76:

<sup>38</sup> Ա. Մ ո վ ս ի ս յ ա ն (Բենետ), Մշո Բուրանդի կամ Հարք գավառ, ԱՀ, գ. 2, Թիֆլիս, 1900, էջ 28:

<sup>39</sup> Ե. Լ ա լ ա յ ե ա ն, Չառախք, ԱՀ, գ. Ա, էջ 361:

<sup>40</sup> Վ. Ղ ա զ ա ռ յ ա ն, Մոսկորի գաւառակի..., էջ 227; Զ. Մուրադեանց, Համշենցի հայեր, ԱՀ, գ. 2, էջ 156:

<sup>41</sup> Ե. Լ ա լ ա յ ե ա ն, Բորչալուի գաւառ, ԱՀ, գ. 10, էջ 243: Սոս. Լիսիցյան, Չանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 139: Նույնի, Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), ՀԱԲ, սյր. 12, Եր., 1981, էջ 62: Գ. Կ ՚ ՚ ս յ ա ն, Армяне Загезура, Тифлис, 1931, стр. 255; Բ. Թոռլաբյան, Համշենահայերի ազգագրությունը, ՀԱԲ, սյր. 13, Եր., 1981, էջ 146: Ա. Սարգսյան, ԴԱՆ-81, ԴԱՆ-83, ԴԱՆ-86: Н. Григоров, Село Татев, Загезурский уезд, Елисаветпольской губернии, СМОМПК, вып. XIII, отд. I, Тифлис, 1892, стр. 116-117; Н. К а л а ш е в, Верования, приметы и анекдоты армян Шемахинского и Геокчайского уезда, "Фольклор Азербайджана и прилегающих стран", т. III, Баку, 1930, стр. 141 (топором три раза ударяет о земле), հմմտ.՝ նույն կերպ, ւսկայն աղբրելով, տես՝ Դ. Иванов. Станица Отрадная, Кубанской области Баталпашинского уезда, СМОМПК, вып. VI, отд. I, Тифлис, 1888, стр. 39.

<sup>42</sup> Գ. Կ ՚ ՚ ս յ ա ն, Материалы ..., стр. 181; Т. Мамаладзе, նշվ. աշխ., էջ 91: М. Машурко. Из области народной фантазии и быта, СМОМПК, вып. XVIII, отд. III, Тифлис, 1894, стр. 306 :

<sup>43</sup> Евг. К а г а р о в, Культ фетишей, растений и животных в древней Греции, Журнал Министерства народного просвещения (այսու՝ ЖМНП), ч. 38, СПб, 1912, стр. 170-172, 174-175, 177.

<sup>44</sup> Օ. Խ ն կ ի կ յ ա ն, Արհեստները բրոնզեդարյան Հայաստանում, Հայաստանի հնագիտական հուշարձանները (այսու՝ ՀՀՀ), սյր. 3, Բրոնզեդարյան հուշարձաններ, Եր., 1977, էջ 96-97:

<sup>45</sup> Ե. Լ ա լ ա յ ե ա ն, Բորչալուի գաւառ, ԱՀ, գ. 10, էջ 170: Նույնի, Հուղարկավորության արարողություններն ու գերեզմանաքարերի զարգացումը Հայաստանում, Տեղեկագիր ՀՄԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի, թիվ 3, Եր., 1928, էջ 113: Ա. Սարգսյան, Փայտամշակ արհեստավորի գործիքներն ու հարմարանքները..., էջ 76: Նույնի, ԴԱՆ-81, ԴԱՆ-83, ԴԱՆ-86:

իրերին սկսել են փոխարինել դրանց նմանօրինակները, հետագայում դրանք էլ փոխարինվել են առարկաների պատկերներով, որոնք քանդակվել են տապանաքարերին:<sup>46</sup>

Հայ պատմագագրական և դաշտային ազգագրական նյութի համեմատական վերլուծությունը հնարավորություն է ընձեռել եզրահանգելու, որ փայտամշակության արհեստի ու արհեստավորական գործիքների հետ կապված հավատալիքները, դրանց առնչվող հնայական ծեսերն ու արարողությունները, սկզբնավորվելով հնագույն դարաշրջաններում, ժամանակի ընթացքում տարբեր փոխազդեցությունների ընթացքում կորցնելով ոչ միայն ձևը, այլ նաև նախնական իմաստը, ինչ որ տեղ վերածվելով ժողովրդական խաղերի ու զվարճությունների, վերապրուկների տեսքով պահպանվել են ընդհուպ XIX-XX դդ.:

## ВЕРОВАНИЯ АРМЯН, СВЯЗАННЫЕ С ДЕРЕВООБРАБАТЫВАЮЩИМ РЕМЕСЛОМ И ОРУДИЯМ ТРУДА

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ А. Саркисян \_\_\_

Верой в то, что в загробном мире человек продолжает вести земной образ жизни, еще с древнейших времен был обусловлен обычаем хоронить вместе с усопшим предметы, которыми он пользовался на протяжении всей жизни, в том числе и орудия труда. Отголоски этого обычая сохранились вплоть до начала XX столетия.

Поверья, связанные с деревообрабатывающим ремеслом, с ремесленниками и орудиями их труда, сопутствующие им магические ритуалы и обряды, зародившиеся в эпоху глубокой древности, лишившись своего первоначального смысла и значения, в качестве пережитков сохранились вплоть до XIX-XX вв.

<sup>46</sup> Ե. Լ ա լ ա յ ա ն, Հուղարկավորության արարողություններն ու..., էջ 111-114: Գ. Կյուրսյան, *Армяне Закавказья*, стр. 244-247; Ս. Բարխուդարյան, Գ. Կարախանյան, Հայկական գերեզմանական հուշարձանները և նրանց քանդակները, ՊԲՀ, թիվ 4, 1959, էջ 195-210: Գ. Կարախանյան, Հայաստանի միջնադարյան կենցաղային քանդակները (15-17-րդ դդ.), ԼՀԳ, թիվ 8, 1975, էջ 31-47: Հ. Պետրոսյան, Բռնակոթի հայտնի տապանաքարի հորինվածքի մեկնության շուրջ, Հանդես ամսօրեայ, 2000, էջ 429-456:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Առանցքային հիմնախնդիրներից «Էթնոս և մշակույթ» թեման գրավում է կենտրոնական տեղերից մեկը, եթե ոչ կենտրոնականը, քանի որ *մշակույթ* հասկացությունը կարևոր դեր է խաղում *էթնոս* հասկացության ձևավորման համար: Մակայն աստիճանաբար մի փոքր անհամապատասխանություն սկսեց առաջ գալ էթնոսի և ազգաբանության հիմնական խնդիրների միջև: Մի կողմից դիտվում է մշակույթի առանձնահատկությունը, որը սովորաբար ներկայացվում է որպես էթնիկական կամ ազգային մշակույթ, մյուս դեպքում մշակույթը հասկացվում է ավելի լայն նշանակությամբ՝ որպես էթնոսի մշակույթ ամբողջությամբ:

Այնուհանդերձ *մշակույթ*, *էթնոսի մշակույթ* և *էթնիկական մշակույթ* հասկացությունների հարաբերակցությունը ցավոք դեռևս բավականաչափ հստակ չէ: Ազգաբանները գտնում են, թե մշակույթ ստեղծողները հենց իրենք էթնոսներն են, և մշակույթը գլխավորապես ներկայացվում է էթնիկական շրջանակներում՝ էթնիկական կամ ազգային մշակույթի ձևով:<sup>1</sup> Ընդ որում, էթնոսի մշակույթն իր մեջ ներառում է այն բոլոր արժեքները, որոնք վերաբերում են տվյալ ժողովրդին, յուրացվել են նրա յուրաքանչյուր անդամի կողմից, իսկ էթնիկական մշակույթն ընդգրկում է այն ամենը, ինչ էթնոսը համարում է իրենը, տիպականը:

Այլ դիրք են գրավում փիլիսոփա-մշակութաբանները: Նրանց աշխատություններում մշակույթ հասկացությունը դիտվում է սոցիալ-փիլիսոփայական հարթության վրա՝ հասարակական կյանքի հետ սերտ հարաբերակցության մեջ և թույլ է կապվում էթնոսների կյանքի հետ:<sup>2</sup> Հայկական սովետական հանրագիտարանում մշակույթը դիտվում է որպես համամարդկային և դասակարգային երևույթ, բայց ոչինչ չի ասվում այն մասին, որ մշակույթն իրենից ներկայացնում է էթնիկական երևույթ, չնայած նշվում է տարբեր ազգերի «մշակույթի ձևերի բազմազանությունը»:<sup>3</sup>

Ազգաբանների, փիլիսոփաների ու արվեստաբանների մեջ գոյություն ունեցող այս տարակարծությունը գալիս է նրանից, որ նրանք տարբեր պատկերացում ունեն մշակույթ հասկացության վերաբերյալ: Ազգաբանները գտնում են, որ *էթնոս-մշակույթ* հարաբերակցության մեջ դոմինանտ դերը պատկանում է էթնոսին, իսկ փիլիսոփաները՝ հասարակությանը, իր սոցիալ-դասային բաժանումներով հանդերձ: Տարակարծություն չկա միայն մի հարցում, այն որ մշակույթը ստեղծում և սպառում են մարդիկ, որոնք որպես սոցիալական գոյացություններ խմբավորվում են այս կամ այն հասարակության ընդերքում: Պետք է նշել, որ եթե փիլիսոփաների և մշակութաբանների համար առաջին պլանում գտնվում է մշակույթի ընդհանրական գաղափարը, ապա ազգաբանները գործ ունեն մշակույթի կոնկրետ դրսևորումների հետ կյանքի նյութական կամ հոգևոր բնագավառում: Ընդ որում կարևոր է նկատի ունենալ, որ նյութական և հոգևոր կյանքի պահանջների բավարարումը իրենից ներկայացնում է միասնական պրոցես, որի իրականացման ընթացքում նյութական մշակույթի տարրերը հաճախ կատարում են հոգևոր մշակույթի գործառույթներ և ընդհակառակը:<sup>4</sup>

Անդրադառնալով հոգևոր մշակույթին՝ պետք է ասել, որ նրանում էթնիկական գիծը ավելի ուժեղ ու ցայտուն է արտահայտված: Դա բացատրվում է հոգևոր մշակույթի մի քանի տարրերի կապով էթնիկական ինքնագիտակցության հետ: Հայկական ժո-

<sup>1</sup> В. К о з л о в, *Этнос и культура, Советская этнография, 1979, № 3. Так же, Методологические проблемы исследования этнических культур, Материалы симпозиума, Ер., 1978.*

<sup>2</sup> Э. М а р к а р я н, *Очерки теории культуры, Ер. 1969; его же, Теория культуры в системе общественных наук, Известия Северо-кавказского центра высшей школы, Общественные науки, 1976, № 3.*

<sup>3</sup> *Հայկական սովետական հանրագիտարան, հ. 7, Եր., 1981, էջ 656:*

<sup>4</sup> *Культура жизнеобеспечения и этнос, Ер., 1983, стр. 37.*

ղովրդական երգերը և ավանդական ընտանեկան սովորույթները, օրինակ, բացահայտորեն տարբերվում են ռուսականից և այդպիսի տարբերությունները հեշտ է նկատել նույնիսկ այն ժամանակ, երբ նրանց կատարողները հագնում են նույնաձև հագուստ և ապրում նույնատիպ բնակարաններում: Մակայն հոգևոր մշակույթի էթնիկական բազմազանությունը և յուրօրինակությունը բացահայտելն ավելի բարդ է, որովհետև հոգևոր մշակույթն ավելի դժվար է վերլուծության ենթարկվում, քան նյութականը:

Էթնիկական մշակույթի համակարգում իր որոշակի տեղն ունի նաև ժողովրդական ստեղծագործությունը, որը յուրաքանչյուր էթնոսի՝ կյանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի արտահայտությունն է: Այն տարբեր կերպ է արտահայտվել զանազան բնագավառներում, հոգևոր մշակույթում՝ բանահյուսության, երաժշտության և պարերի մեջ, նյութականում՝ կիրառական-գեղագարդման արվեստի բազմազան տեսակներում՝ զարմանահրաշ զարդանախշերով ու զարդահորինվածքներով: Ժողովրդական արվեստը, ինչպես ժողովրդի ստեղծագործության և ոչ մի տեսակ, կարողացել է մինչև մեր օրերը հասցնել մեր նախնիների հնագույն աշխարհընկալման արձագանքները, նրանց միջավայրում կազմավորված գեղագիտական չափորոշիչների համակարգը, առասպելական զգացմունքները, որոնք մեզ տանում են դեպի մանկության հեքիաթային աշխարհ: Այդ է պատճառը, որ մասնագետները ժողովրդական արվեստը համարում են էթնիկական ինքնագիտակցության ձևերից մեկը:<sup>5</sup> Ժողովրդական արվեստ ստեղծագործություն է, որը սահմանվում է պատմական հիշողությամբ: Ինչպես տոհմական հիշողությունը, որն արտահայտվում է կենդանի կերպարներում, այն կապում է ներկան ժողովրդի մշակութային անցյալի հետ:<sup>6</sup> Ժողովրդական արվեստը հաստատագրվում է մշակույթի մեջ ոչ թե անհատական-սուբյեկտիվ, այլ հոգևոր-արժեքային բովանդակությամբ, ձևավորվում է կոլեկտիվ ակունքներից, որովհետև ճանաչողական է, պատմական և հոգևոր, բարոյական և ազգային-հոգեբանական որակներում:<sup>7</sup> Ժողովրդական կիրառական արվեստը սերտորեն կապված է նյութական մշակույթի, մասնավորապես կենցաղային առարկաների հետ, որի պատճառով այն հաճախ անվանում են կենցաղային մշակույթ:<sup>8</sup> Միաժամանակ այն արտահայտում է ժողովրդի հոգևոր կյանքը, դրանում դրսևորվում են նրա իդեալները, պատկերացումները բարու մասին, գեղեցիկի նկատմամբ երազանքները: Գեղագիտական գործառույթները դրանում ձուլվում են կենցաղայինի հետ: Ժողովրդական կիրառական արվեստի երկակի բնույթը, կապված մի կողմից նյութական արտադրության, մյուս կողմից հոգևոր մշակույթի հետ, բարոյություն է ստեղծում դրա ուսումնասիրության մեթոդներում: Ժողովրդական արվեստն ուսումնասիրելիս մասնագետը նախ և առաջ գործ ունի իրի հետ՝ կոնկրետ ստեղծագործության, որն ունի անկրկնելի գեղարվեստական առանձնահատկություններ, որոնք համապատասխանում են գործառույթային, էթնիկական, ժամանակագրական և այլ բնութագրումներ: Ժողովրդական արվեստը բազմաթիվ թելերով կապված է իրականության տարբեր կողմերի հետ: Մի կողմից այդ կապերը մակերեսային են, տեսանելի, մյուս կողմից՝ միջնորդավորված են, և առաջին հայացքից չեն ցուցաբերում համադրության բացահայտ կողմեր: Մակայն դրանք կարող են դուրս բերվել հատուկ վերլուծություն կատարելով, հակառակ դեպքում մենք աղքատիկ, կամ ոչ ճիշտ կարող ենք ներկայացնել ժողովրդական արվեստի դերը, նշանակությունը և գործառույթները:<sup>9</sup>

Ի տարբերություն պրոֆեսիոնալ կիրառական արվեստի, որը զարգանում է ոչ թե էթնիկական ավանդույթի շրջանակներում, այլ տեղային ոճերի ու նորաձևության, ժողովրդական արվեստը զարգանում է իր ճանապարհով: Վերջինս հանդիսանում է իր ստեղծողների աշխարհընկալման արտահայտությունը, ոչ թե մեկ ստեղծագործողի, այլ բոլորի, և ոչ միայն նրանց, այլ նաև «սպառողի»՝ ժողովրդական զանգվածների, այ-

<sup>5</sup> С. Р о ж д е с т в е н с к а я, Русская народная художественная традиция в современном обществе, М., 1981, стр. 196.

<sup>6</sup> Н. Н е к р а с о в а, Народное искусство как часть культуры, М., 1983, стр. 7.

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 8:

<sup>8</sup> Г. М а с л о в а, К методике полевого изучения орнамента; Полевые исследования института этнографии, М., 1979, стр 235.

<sup>9</sup> Ю. А н ч а б а д з е, Народное искусство в современном обществе, СЭ., 1987, № 4, стр. 38-48.

սինքն էթնոսի՝ իր պատմության ողջ ընթացքում: Ի տարբերություն գեղարվեստի ցանկացած տեսակի, այսինքն՝ պրոֆեսիոնալ արվեստի, որի ֆունկցիան է արտահայտել նկարչի՝ որպես անհատի աշխարհընկալումը, ժողովրդական արվեստը իր կիրառական գեղագարդման ձևով արտացոլում է ժողովրդի աշխարհայացքը:<sup>10</sup> Ժողովրդական դեկորատիվ արվեստը ոչ միայն արտացոլում է իրականությունը, այլև ձևափոխում է այն՝ բարձրացնելով շրջապատող միջավայրի գեղագիտական արժեքը: Այն կենցաղ է ներմուծում հատուկ ոգի, ինչը կապված է այն բանի հետ, որ ի տարբերություն պրոֆեսիոնալ արվեստում նկարիչների ինքնարտահայտման անհատական սկզբունքի, ժողովրդական արվեստն իր կոլեկտիվ ակունքներով արտահայտում է էթնոսի դարերով խտացած հոգևոր էությունը իր էթնոհոգեբանական կերպի առանձնահատկություններով: Հենց այդ պատճառով պրոֆեսիոնալ մշակույթում կրկնությունը համարվում է բանագործություն (պլագիատ), իսկ ժողովրդական արվեստում այն պարտադիր է՝ էթնոսի հոգևոր գեղարվեստական արժեքների պահպանման համար:<sup>11</sup> Ընդհանուր առմամբ ժողովրդական արվեստը մի շարք տարբերություններ է դրսևորում պրոֆեսիոնալ արվեստի նկատմամբ:

Առաջին տարբերությունն այն է, որ ժողովրդական արվեստում անհատն իր սուբյեկտիվ ընկալմամբ ներծուլվում է ընդհանուրի մեջ: Սուբյեկտիվ-անհատականը դրսևորվում է որոշակի պատմաագագրական շրջանին բնորոշ ժողովրդական արվեստի դայրոցների միջոցով, որոնց պատկանում է անհատի ստեղծագործությունը: Դայրոցների ձևավորմամբ պայմանավորված է ժողովրդական արվեստի ժառանգորդությունը: Դայրոցներում ավանդույթով ամրագրված կոլեկտիվ-պատմական փորձը միաձուլվում է տվյալ պատմաագագրական մարզի կենցաղի ու մշակույթի տեղային հատկանիշների ամբողջության հետ:

Հաջորդ տարբերությունը ժողովրդական արվեստի խիստ կանոնակարգվածությունն է: Ժողովրդական արվեստն իր զարգացման մեջ որպես կողմնորոշիչ ունի ավանդույթը: Ավանդական են ստեղծագործության հիմնական կերպարները, այուժեն, թեման, գեղագարդման եղանակները, տեխնիկան և այլն: Ժողովրդական արվեստը կրում է էթնիկ բնավորության խտացված ձևերը: Հազարամյակների ընթացքում անցնելով զարգացման բարդ ուղի, ազդվելով այլէթնիկ մշակույթներից, միաժամանակ փոխադարձաբար ներազդելով դրանց վրա, այն հասել է մեզ՝ հիմնականում պահպանելով ազգային ինքնատիպ նկարագիրը: Այն տարբերվում է նաև իր համամարդկային բնույթով, որը գալիս է նրա հնագույն արմատներից. ժողովրդական արվեստը հասկանալի է բոլոր ժամանակներում և բոլոր էթնիկական ընդհանրություններին: Այս առումով նրա կերպարների լեզուն համընդհանրական է: Անվերջը նրանում հակադրվում է վերջավորին, ժամանակավորին:<sup>12</sup>

Итак, в течение веков молокане создали и поддерживали свою собственную систему социально-религиозного общения. Частью этой системы является строгая иерархия молоканского сообщества, которая в основных чертах сохранилась до настоящего времени. Несмотря на то, что собрания молокан существуют автономно и управляются самостоятельно, описанная выше структура организации является единой для всех. Отсутствие деления верующих на духовенство и мирян, возможности каждого сектанта быть выбранным в руководство общины создают иллюзию демократического устройства религиозного собрания. Однако в тщательно разработанном порядке ведения богослужений, ритуалов, сопровождающих совершение тех или иных обрядов, отношений между верующими сохраняется характерный для традиционных обществ авторитет старшего возрастного поколения, представители которого, как правило, составляют руководство собраний. Оно поддерживает дисциплину среди верующих не только силой религиозного воздействия, но и системой церковных наказаний. Старцы отказываются совершать крещение, брак и другие «дела» лицам за проступки, которые определяются как греховные. К ним относятся, в частности, нерегулярное посещение богослужений, непослушание руководителей общины, употребление алкоголя и т.д. По существу каждый член молоканского сообщества находится под постоянным контролем единоверцев и ощущает силу требований своих руководителей. Благодаря патриархальной системе организации они ограничивают участие единоверцев молодого и среднего возраста в руководстве религиозным собранием. Такая политика вызывает недовольство части верующих и приводит к образованию новых общин.

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՈՒՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.  
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

\_\_\_ Ամփոփում \_\_\_

\_\_\_ Ի. Դոժեմկո \_\_\_

Դարերի ընթացքում աղանդավորների կողմից ստեղծված և պահպանված սեփական սոցիալ-կրոնական հարաբերակցության համակարգի մաս է հանդիսանում մոլորկանների հանրույթի խիստ հոգևոր աստիճանականությունը: Այն միասնական է մոլորկանների բոլոր հավաքների համար՝ անկախ կրոնական ուղղվածությունից: Հոգևոր առաջնորդները, գրուցակիցները, մարգարեները (պրիզուսների մոտ), երգողները, հուշողները կազմում են հավաքի կորիզը: Այդ խմբերից յուրաքանչյուրի կարգավիճակը խիստ կանոնավորված է:

Կրոնական կյանքում պահպանվում է ավանդության հասարակությունների համար բնորոշ՝ տարիքային ավագ սերնդի հեղինակությունը, որի ներկայացուցիչները, որպես կանոն, կազմում են հավաքի ղեկավարությունը: Եկեղեցական կազմակերպության նահապետական կարգի պահպանումը բավականաչափ խստորեն սահմանափակում է երիտասարդ ու միջին տարիքի հավատացյալների մասնակցությունը կրոնական հավաքի ղեկավարմանը: Այդպիսի քաղաքականությունը առաջացնում է միահավատների մի մասի դժգոհությունը՝ շատ անգամ հանգեցնելով մոլորկանյան մոր միավորումների կազմավորման:

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ

ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Աշխարհագրական գիտության մեջ ընդունված է, որ միգրացիաները հսկայական ազդեցություն են ունենում ոչ միայն առանձին բնակավայրերի կամ շրջանների, այլ երկրների և մայրցամաքների բնակչության շարժընթացի, կառուցվածքի և աշխարհագրության վրա<sup>1</sup>: Ասվածը համոզիչ կերպով ապացուցում են վերջին տասնամյակներում սկիզբ առած բնակչության նոր տեղաշարժերը՝ պայմանավորված երկրագնդի տարբեր հատվածներում գոյություն ունեցող հակամարտություններով, բնական աղետներով, անցումային շրջանի երկրներում, այդ թվում նաև նախկին ԽՍՀՄ հանրապետությունների մեծ մասում առկա սոցիալ-տնտեսական, քաղաքական ու այլ բնույթի հիմնախնդիրներով<sup>2</sup>: Ընդ որում, միգրացիաների ուսումնասիրությունը չափազանց կարևոր է և՛ արտագաղթի, և՛ ներգաղթի բարձր տեսակարար կշիռ ունեցող պետությունների համար: Առաջին դեպքում առաջանում են ժողովրդագրական բնականոն իրավիճակին ու բնակչության վերարտադրողական կարողություններին առնչվող հիմնախնդիրներ, երկրորդ դեպքում արդեն միգրանտների մեծ թիվը լուրջ բարդություն է ներկայացնում աշխատաշուկայի կարգավորման, միգրանտների նկատմամբ պետական վերահսկողության սահմանման, վերջիններիս հաշվառման և այլ առումներով:

Հայաստանի Հանրապետությունը ևս զերծ չի մնացել անցումային շրջանի հիմնախնդիրներից: 20-րդ դարի վերջին տասնամյակը և 21-րդ դարասկիզբը Հայաստանի համար բնութագրվում են քաղաքական ու սոցիալ-տնտեսական բազմաբնույթ համակարգային և արմատական փոփոխություններով: Միայն այս ժամանակահատվածի իրադարձությունների ոչ լրիվ թվարկումը՝ արցախյան ազգային-ազատագրական շարժում, Հայաստանի անկախացում, դրան հաջորդած քաղաքական ու սոցիալ-տնտեսական վերափոխումներ և վերջիններիս անբաժան մաս հանդիսացող հասարակական գործընթացներ իրենց տարբեր դրսևորումներով, ցույց է տալիս, թե ինչպիսի բարդ ու բազմաբովանդակ խնդիրներ են ծառայել հանրապետության առջև: Որպես դրանց ուղղակի կամ անուղղակի հետևանք են հանդես գալիս նաև բնակչության ինչպես ներհանրապետական, այնպես էլ միջպետական տեղաշարժերը: Վերջին տարիներին հրատարակվել են պաշտոնական վիճակագրական տվյալներ, անկախ փորձագիտական գնահատականներ, մասնագիտական հետազոտություններ, որոնք թույլ են տալիս արձանագրել, որ հանրապետության անկախացումից հետո ակտիվացած միգրացիոն գործընթացներն ընդգրկել են բոլոր մարզերը, հասարակության գրեթե բոլոր սոցիալ-մասնագիտական ու սեռատարիքային խմբերը՝ կապված սոցիալ-տնտեսական ծանր ճգնաժամի, 1990-ական թթ. իրականացվող տնտեսական վերափոխումների ազդեցության, զանգվածային գործազրկության, բնակչության կենսամակարդակի կտրուկ անկման և բազմաթիվ այլ գործոնների հետ:<sup>3</sup>

Բնական է, որ Ադեմի գոտին ևս զերծ չի մնացել նշված գործոնների ազդեցությունից: Ավելին, հանդես գալով որպես ընդհանուր տնտեսական ճգնաժամի ուղղակի կրող, այն ունի նաև երկրաշարժի ազդեցության հետ կապված բազմաթիվ առանձնահատկություններ: Թվարկված երևույթների շարքում իր ազդեցությամբ, ընդգրկմամբ ու բնակչության տարբեր խմբերի վրա ունեցած անմախաղեպ ազդեցությամբ առանձնանում է 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժը: Չմանրամասնելով երկրաշարժի ազդեցությանն ու հետևանքներին վերաբերող խնդիրները՝ նշենք միայն, որ այն

<sup>1</sup> *Е. Шувалов, География населения, М., 1977, стр. 92:*

<sup>2</sup> *Вынужденные мигранты: интеграция и возвращение, М., 1997, стр. 7-31; Положение беженцев в странах мира, 1995, акты решения, М., 1996; Миграции и новые диаспоры в постсоветских государствах, М., 1996, стр. 147-171:*

<sup>3</sup> *Աղբյուրային հարթաքարտի շաղկապարկային ծրագիր, Եր., 2003, էջ 21-46: Հ. Խառատյան, Աղբատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Եր., 2000, էջ 28-29: Արտագաղթը Հայաստանից (ԽՍՐ. Հ. Խառատյան), Եր., 2003: ՀՀ-ից արտագաղթի մասին տվյալներ են պարունակում նաև ՀՀ ԱԿԾ ընթացիկ և տարեկան տարբեր զեկույցներն ու հաշվետվությունները:*

ընդգրկել է հանրապետության տարածքի շուրջ 40%-ը՝ գրեթե մեկ միլիոն բնակչությամբ: Վթարային էին դարձել կամ ավերվել տասնյակ հազարավոր բնակելի տներ, արդյունաբերական ձեռնարկություններ, գիտակրթական ու մշակութային հաստատություններ, խաթարվել էր հանրապետության բազմաթիվ քաղաքային ու գյուղական բնակավայրերի կենսագործունեությունը:

Աղետից հետո նախկին խորհրդային և ՀՀ ղեկավարության կողմից ձեռնարկվել են երկրաշարժի հետևանքների վերացմանն ուղղված քայլեր: Սակայն, առ այսօր երկրաշարժի հետևանքներն ամբողջովին հաղթահարված չեն: Աղետի գոտու տարբեր քաղաքներում դեռևս բավականին մեծ է տնակային պայմաններում բնակվող ընտանիքների թիվը, չեն վերագործարկվել բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ, դանդաղ է ընթանում նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչությանն աշխատանքով ապահովելու գործընթացը: Այս ամենի արդյունքում Աղետի գոտում ձևավորվել են բնակչության միգրացիոն նոր հոսքեր:

Երկրաշարժից հետո ձևավորվել և ուրվագծվել են Աղետի գոտու բնակչության միգրացիոն շարժերի հիմնական միտումները, որոնցից ածանցվել և ածանցվելու է Աղետի գոտու սոցիալ-տնտեսական համալիրում պատճառահետևանքային կապի մեջ գտնվող երևույթների ողջ համալիրը: Միգրացիոն ակտիվության տեսանկյունից 1988-2002թթ. Աղետի գոտում առանձնանում է երեք փուլ՝ 1988-1991թթ., 1992-1994թթ. և 1995-2002թթ., երբ միգրացիայի ծավալը համապատասխանաբար կազմել է 177117, 56402 և 63931 մարդ: Սակայն, եթե 1988-1991թթ. միգրացիայի ծավալի ձևավորման մեջ նկատվում էր եկողների և մեկնողների հարաբերակցության համամասնություն, համապատասխանաբար՝ 49.8% և 50.2%, ապա 1992-1994թթ. և 1995-2002թթ. պատկերը փոխվում է: 1992-1994թթ. միգրացիայի ծավալի ձևավորման մեջ եկողների տեսակարար կշիռը կազմում է ընդամենը 38.1%, մեկնողներինը՝ 61.9%, 1995-2002թթ.՝ համապատասխանաբար 33.9% և 66.1%:

Այս երևույթն առաջին հերթին կապված է վերականգնողական աշխատանքների տեմպերի թուլացման, առանձին դեպքերում՝ նաև դադարեցման հետ: Բնական է, որ որոշ դեպքերում բնակչության մի մասը հեռանում էր Աղետի գոտուց կենսապահովման անտանցելի պայմանների բարելավման նպատակով: Ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն նաև զանգվածային գործազրկությունն ու ծանր բարոյաև հոգեբանական մթնոլորտը: Բացի դրանից՝ երկրաշարժից հետո էվակուացված բնակչության մի մասը ևս խուսափում էր վերադառնալ, քանի որ խոստացած ժամկետներում չէին վերականգնվում հատկապես առավել տուժած քաղաքային բնակավայրերը:

Կապված վերականգնողական աշխատանքների ակտիվացման հետ՝ 2001-2002թթ. նկատվել է եկողների որոշակի աճ՝ համեմատած 2000թ. հետ: Սակայն նախորդ տարվա համեմատ, աճել է նաև մեկնողների թիվը, որը բարձր է եղել հատկապես 2002թ., ինչը վկայում է այն մասին, որ նույնիսկ բնակարանային հիմնախնդրի լուծումը չի կարող կանխել արտահոսքն Աղետի գոտուց, քանի որ դեռևս հաղթահարված չէ տարիների ընթացքում ձևավորված և աստիճանաբար առավել սրացող սոցիալ-տնտեսական ճգնաժամը, ինչին նպաստել են ինչպես Աղետի գոտուն, այնպես էլ հանրապետությանը բնորոշ գործոնները: Այսինքն, Աղետի գոտուն բնորոշ գործոններին զուգահեռ ազդում են նաև ընդհանուր հանրապետական գործոններ՝ էներգետիկ ճգնաժամ, տրանսպորտային շրջափակում, տնտեսական վերափոխումների ազդեցություն և այլն:

Աղետի գոտու բնակչության միգրացիայի հարաբերական ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վերջիններս ունեն որոշակի առանձնահատկություններ: Այսպես, չնայած 1989թ. մեկնողները գերազանցել են 1988թ. մեկնողներին, բնակչության միգրացիայի լարվածության ցուցանիշն առավել բարձր է եղել 1988թ., քանի որ Աղետի գոտու բնակչության բնական աճը 1988թ. եղել է շատ ցածր: Այնուհետև, բնակչության միգրացիայի լարվածությունը նվազել է՝ նվազագույնին հասնելով 1991թ., որից հետո կրկին աճել է: Սկսած 1994թ.-ից այն կրկին նվազում է, իսկ 1997թ.-ից աճելով՝ 2002թ.-ին հասնում է առավելագույնի: Եթե 1988-1990թթ. գյուղական բնակավայրերի բնակչության միգրացիայի լարվածությունը գերազանցել է քաղաքային բնակավայրերի միգրացիայի լարվածությանը, ապա սկսած 1991թ.-ից՝ դիտվում է հակառակ պատկերը: 1988-1990թթ. գյուղերի բնակչության միգրացիայի լարվածու-

յան արդյունքում Ադետի գոտու մի քանի գյուղեր դատարկվեցին (հիմնականում աղբյուրեջանցիների հեռանալու պատճառով): Բնական է, որ նվազել է մաս աղբյուրեջանաբնակ գյուղեր ունեցող շրջանների բնակչության բնական աճը:

Ադետի գոտու բնակչության միգրացիայի արդյունավետությունը քննարկվող ժամանակահատվածում, կապված բնակչության միգրացիոն սալոյի և եկողների թվաքանակի փոփոխության հետ, նույնպես ունեցել է որոշակի առանձնահատկություններ: Այսպես՝ 1988թ. լինելով ցածր, այն այնուհետև սկսում է աստիճանաբար աճել: 1991թ. նկատվում է միգրացիայի արդյունավետության ամենաբարձր ցուցանիշը, քանի որ այդ տարի Ադետի գոտի են եկել մեծ թվով միգրանտներ: 1992թ. դարձյալ գոտու բնակչության միգրացիայի արդյունավետությունը կտրուկ նվազում է՝ շարունակվելով մինչև 1994թ.: Հարկ է նշել, որ փաստորեն Ադետի գոտու բնակչության միգրացիայի արդյունավետության բարելավում չի նկատվում: 1998թ. նշված ցուցանիշը գրեթե հավասարվում է 1988թ. համապատասխան ցուցանիշին, իսկ 2002թ. զիջում է վերջինիս: Նշենք նաև, որ սկսած 1992թ.-ից, Ադետի գոտու քաղաքային բնակավայրերի միգրացիայի արդյունավետության ցուցանիշը զգալիորեն զիջում է գյուղերի բնակչության միգրացիայի արդյունավետությանը, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ Ադետի գոտու քաղաքները քննարկվող ժամանակահատվածում միգրանտներ ընդունելու տեսանկյունից կորցրել են իրենց երբեմնի նշանակությունն ու գրավչությունը:

Ինչ վերաբերում է Ադետի գոտու բնակչության ներհոսքի և արտահոսքի ինտենսիվությանը, ապա պետք է նշել, որ արտահոսքի ինտենսիվությունը քննարկվող ժամանակահատվածում գերազանցել է ներհոսքի ինտենսիվությանը: Այս օրինակափոխությունը խախտվել է 1990 և 1991թթ., միայն այս տարիներին է Ադետի գոտի եկողների թիվը գերազանցել մեկնողների թվին: Ընդհանուր առմամբ, 1988-2002թթ. Ադետի գոտում բնակչության մեխանիկական աճ չի դիտվել:

Միգրացիայի ինտենսիվությունը քննարկվող ժամանակահատվածում ունեցել է հետևյալ պատկերն ու փոփոխությունների շարժընթացը. 1988-1991թթ. այն եղել է բարձր՝ առավելագույնին հասնելով 1989թ., 1992-1994թթ. նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ նվազել է ու կայունացել, 1995-1998թթ. դիտվել է նվազման միտում: 1999թ. սկսած միգրացիայի ինտենսիվությունը սկսել է աճել:

1988-2002թթ. Ադետի գոտու բնակչության միգրացիայի ծավալը կազմել է 297450<sup>4</sup> մարդ: Մեկնողների թվաքանակը գերազանցել է եկողների թվաքանակին, ինչի արդյունքում միգրացիոն սալոյն եղել է բացասական: Միգրացիոն սալոյի բացասական մեծությունը ձևավորվել է հիմնականում քաղաքների միգրացիոն սալոյի բացասական մեծությունից: Միգրացիայի ծավալը բարձր է եղել Լոռու մարզում՝ կազմելով Ադետի գոտու միգրացիայի ծավալի 45.3%-ը: Շիրակի մարզում այն կազմել է Ադետի գոտու միգրացիայի ծավալի 31.6%-ը, Տավուշի մարզում՝ 16.8% և Արագածոտնի մարզում (առանց Աշտարակի տարածաշրջանի)՝ 6.4%: Բոլոր մարզերում միգրացիայի սալոյն եղել է բացասական, սակայն ամենամեծ բացասական մեծությունն արձանագրվել է Շիրակի մարզում, ինչը պայմանավորված է հիմնականում Գյումրի քաղաքում ստեղծված իրավիճակով. տնակային պայմաններ, արդյունաբերական ձեռնարկությունների անգործություն (վերջիններիս մեծ մասն ավերված է, մի մասը՝ վթարային), որը և նպաստել է բնակչության արտահոսքին:

Ադետի գոտուց մեկնողների ընդհանուր թվաքանակի մեջ մինչև 16 տարեկանների տեսակարար կշռի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ այն բարձր է եղել 1988-1989թթ. (18% և 19%) և 1996-1997թթ. (18% և 20%), իսկ սկսած 1997թ.-ից գերազանցել է 1988-1989թթ. ցուցանիշը: Նշվածը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ Ադետի գոտուց մեկնողների մեջ մեծ է ընտանիքների տեսակարար կշռը, ինչը փաստորեն ձևավորում է անվերադարձ միգրացիա: Եթե 1988-1989թթ. ընտանիքների արտահոսքը պայմանավորված էր երկրաշարժի անմիջական հետևանքներով, ապա հետագայում՝ Ադետի գոտին չափազանց դանդաղ վերականգնման ստեղծած ճգնաժամային իրավիճակով:

<sup>4</sup> Հաշվարկը կատարվել է ըստ բնակչության միգրացիայի հաշվառման քարտերի:

Նշենք, որ բերված տվյալները վերաբերում են գերազանցապես օրինական ճանապարհով գրանցումից դուրս եկած և գրանցված բնակչությանը: Սակայն, ինչպես ցույց են տալիս վերջին տարիների բազմաթիվ ուսումնասիրությունները, ինչպես նաև պետական կառավարման տարբեր մարմինների հայտարարությունները, առկա է նաև հանրապետությունից բացակայող և գրանցումից դուրս չեկած բնակչության մի ստվար զանգված, այսպես կոչված «ստվերային միգրացիա», որի վերաբերյալ ամբողջական հաշվառում չի իրականացվում:<sup>5</sup>

Սեզոնային միգրացիան, որը նույնպես բավականին լայն տարածում ունի Աղետի գոտում, աչքի է ընկնում ազատ աշխատանքային ռեսուրսների մեծ ներգրավվածությամբ: Ընդ որում, հասարակության զարգացման վրա առավել մեծ ազդեցություն է ունենում աշխատուժի միգրացիան, իսկ առանձին դեպքերում ելքի երկրներում անբարենպաստ պայմանների ազդեցության հետևանքով անընդհատ առկա է սեզոնային միգրացիայի վերածման վտանգն անվերադարձ միգրացիայի, քանի որ ազատ աշխատուժը տեղում զբաղվածություն չգտնելու դեպքում ձգտում է դեպի այն վայրը, ուր կա աշխատելու հնարավորություն: Իսկ Աղետի գոտում ձևավորված իրավիճակը նման մտավախության համար առավել իրական հիմքեր է ստեղծում:

Զննարկվող ժամանակահատվածում, բացի ծավալային տեսանկյունից, որոշակի փոփոխությունների է ենթարկվել նաև Աղետի գոտու բնակչության սեզոնային միգրացիան՝ ինչպես ըստ ուղղությունների, այնպես էլ դրապատճառների ու դրսում զբաղվածության ընդհանուր պատկերի:

Առավել ընդհանրացված դիտարկման ու խորհրդային շրջանի հետ համեմատության դեպքում կարող ենք արձանագրել, որ Աղետի գոտու մեջ ընդգրկված որոշ վարչատարածքային միավորներ նաև նախկինում են աչքի ընկել սեզոնային միգրացիայի ձևավորված «ավանդական» ուղղություններով: Առանձին դեպքերում նույնիսկ որոշ բնակավայրեր ունեցել են բնակչության սեզոնային զբաղվածությունն ապահովող հիմնական կենտրոններ: Սեզոնային միգրացիայի մեջ նախկինում, ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, ավելի շատ ընդգրկված է եղել գյուղական բնակչությունը, որը հիմնականում ամռան, ինչպես նաև գարնան ու աշնան որոշ ամիսների մեկնել է արտագնա շինարարական աշխատանքների: Քաղաքաբնակները սեզոնային միգրացիայի մեջ ընդգրկվել են հիմնականում ամառային հանգիստը կազմակերպելու նկատառումներից ելնելով, քանի որ արդյունաբերության զարգացման բարձր տեմպերը վերջիններիս զբաղվածությունն ապահովելու իրական երաշխիք են:

Սպիտակի երկրաշարժը, բնականաբար, ազդեց նաև սեզոնային միգրացիայում ընդգրկվածների թվի, միգրացիայի բնույթի և տարածական ընդգրկման վրա:

Մինչև 1991թ. հանրապետությունից դուրս մեկնող սեզոնային միգրանտների զգալի մասը մնաց Հայաստանում և մասնակցեց Աղետի գոտու վերականգնման աշխատանքներին: Մրանք և՛ գյուղաբնակ, և՛ քաղաքաբնակ շինարարներն էին: Սակայն, 1991թ.-ից արդեն շինարարական աշխատանքների ծավալների կտրուկ անկման հետևանքով վերջիններս կրկին կանգնեցին զբաղվածությունն ապահովելու հիմնախնդրի առջև՝ աստիճանաբար վերականգնելով ավանդաբար ձևավորված կապերը: Այս ուղղությամբ, այսինքն՝ «ավանդական» կապերի վերականգնմանը զուգահեռ, նշված տարիներից սկսեց փոխվել սեզոնային միգրացիայի աշխարհագրությունը: Պատճառները մի քանիսն էին: ԽՍՀՄ-ը փլուզվել էր, միջպետական տնտեսական կապերը սկսել էին թուլանալ, նորանկախ պետությունները գտնվում էին տնտեսական վերափոխումներից ածանցված խնդիրների հաղթահարման փուլում, մասնավոր սեկտորում ևս տեղի էր

<sup>5</sup> Սկսած 2000թ.-ից՝ ՀՀ Կառավարությանն առընթեր Միգրացիայի և փախստականների վարչությունը ՀՀ ԱՎԾ հետ մեկտեղ, համագործակցելով տրանսպորտային ձեռնարկությունների և ՀՀ պետական սահմանի անցման կետերում գործող ծառայությունների հետ, կազմակերպում է հանրապետություն եկողների և հանրապետությունից մեկնողների վերաբերյալ քանակական տվյալների ստացման գործընթացը: Սակայն պետք է նշել, որ հրապարակի վրա եղած տվյալները հնարավորություն չեն ընձեռում դիտարկել դրանց տարածքային առանձնահատկությունները, ինչպես նաև պատկերացում կազմել միգրացիոն գործընթացների բնույթի, տևականության և այլնի վերաբերյալ:

ունենում դերերի վերաբաշխում, ինչը, բնականաբար, նույնպես նպաստեց սեզոնային միգրանտների զբաղվածության ոլորտի էական փոփոխություններին:

Միաժամանակ, սեզոնային միգրացիայում ընդգրկվում են բնակչության նոր շերտեր: Խորհրդային շրջանում կար սեզոնային շինարարական աշխատանքների մեկնողների կատեգորիա, որի տեղաշարժերի ուղղությունները վերահսկելը ընդհանուր պետության ու տնտեսական դաշտի շրջանակներում բավականին հեշտ էր: Վերջին տասնամյակում սեզոնային միգրացիայում ընդգրկվածների պարագայում արդեն բավականին բարդ է քանակական տվյալներ հավաքագրելը: Նախ, ի տարբերություն նախորդ տարիների, այժմ սեզոնային արտագնա աշխատանքների մեկնողների մի մասը նախընտրում է ավելի բարձր ու արագ եկամուտներ ապահովող ճյուղերում ներգրավվելը: Որոշ մասի համար դա հիմնականում մանրածախ կամ մեծածախ առևտուրն է: Բնական է, որ սեզոնային միգրանտների այս խումբը ձգտում է տեղավորվել հիմնականում խոշոր քաղաքներում՝ Մոսկվա, Մանկո-Պետերբուրգ, Սամարա, Կրասնոյարսկ, Նովոսիբիրսկ, Հեռավոր Արևելքի որոշ քաղաքներ: Այս խմբի տեղափոխությունների աշխարհագրությունը բազմաթիվ դեպքերում դուրս է գալիս ՌԴ սահմաններից՝ Կիև, Մինսկ, եվրոպական որոշ պետությունների խոշոր քաղաքներ, հատկապես Լեհաստան՝ Վարշավա, Լոձ, Վրոցլավ և այլք: Հիմնականում շինարարությամբ զբաղվողների խումբը ևս փոխել է աշխարհագրությունը. ավանդական համարվող Սախա-Յակուտիային կամ Սիբիրի ու Հեռավոր Արևելքի որոշ այլ տարածաշրջաններին ավելացել են նույն Մոսկվան՝ շինարարական աշխատանքների իր հսկայական ծավալներով, Մոսկվայի մարզի ու ՌԴ եվրոպական մասի բազմաթիվ քաղաքներ: Սեզոնային արտագնա աշխատանքով զբաղվող որոշ անձանց հետ մեր հանդիպումներն Ադետի գոտում թույլ են տալիս արձանագրել ևս մեկ ուշագրավ իրողություն՝ կապված արդեն դրսում վերջիններիս շարժունության աճի հետ: Սեզոնային միգրանտների բազմաթիվ խմբեր բավականին արագ են փոխում ժամանակավոր բնակության վայրերը՝ շատ հաճախ հաջորդաբար ժամանակավորապես հաստատվելով տարբեր քաղաքներում: Նման ակտիվությունն ու շարժունությունը, բնականաբար, էլ ավելի են բարդացնում սեզոնային միգրանտների տեղափոխությունների «աշխարհագրության» հետ կապված կոնկրետ խնդիրների բացահայտումը: Որպես ևս մեկ կարևոր իրողություն պետք է նշել նաև սեզոնային միգրանտների խմբի սոցիալ-մասնագիտական ու կրթական կառուցվածքում կատարված փոփոխությունները: Բնական է, որ երկրաշարժի արդյունքում աշխատատեղերից զրկվածների մի մասը ևս աստիճանաբար համալրում էր սեզոնային միգրանտների շարքը: Այսինքն, քաղաքաբնակները ևս կանգնեցին սեզոնային միգրացիայի միջոցով նվազագույն գոյամիջոցներ ապահովելու խնդրի առջև: Վերջիններիս սոցիալական կազմը, ի տարբերություն գյուղաբնակների, խայտաբղետ էր: Այն ներառում էր մտավորականությանը, արդյունաբերական ձեռնարկությունների նախկին աշխատողներին և այլն: Ընդ որում, տղամարդկանց հետ աստիճանաբար սեզոնային միգրացիայի մեջ ընդգրկվում էին նաև կանայք: 1990-ական թվականների կեսերին արդեն Ադետի գոտում ամկա տեղային գործուներին ավելացան նաև ընդհանուր հանրապետական գործուները:

Ինչպես նշվեց, քննարկվող ժամանակահատվածում փոխվել է նաև սեզոնային միգրացիայի աշխարհագրությունը: Նախկին ԽՍՀՄ սահմաններից դուրս մեկնելու հնարավորությունների աճին զուգընթաց՝ աճում էր Եվրոպա, ԱՄՆ, Լատինական Ամերիկայի երկրներ, Ավստրալիա մեկնող սեզոնային միգրանտների հոսքը, որոնց վերաբերյալ ևս բացակայում են ամբողջական թվային տվյալները:

Չնայած վիճակագրության հետ կապված բարդություններին՝ պետք է արձանագրել, որ սեզոնային միգրացիան իր տարբեր դրսերումններով, նրանում ընդգրկվածների սոցիալական ու մասնագիտական կազմով, վերջին տարիներին բավականին լուրջ ազդեցություն է թողնում ինչպես հանրապետությունում, այնպես էլ, հատկապես Ադետի գոտում ընթացող տարբեր գործընթացների վրա: Կարևոր է հատկապես այն, որ վերջին տարիներին սեզոնային միգրացիան դրսերում է մշտականի վերածվելու միտումներ, ինչն իր հերթին կարող է ազդել Ադետի գոտում ձևավորված ընդհանուր մթնոլորտի վրա:



Ամփոփելով նշենք, որ 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը, չնայած հատկապես վերջին տարիներին աղետի հետևանքների վերացման ուղղությամբ իրագործված աշխատանքների լուրջ ծավալներին, առաջիկայում էլ կշարունակի հանդես գալ որպես Աղետի գոտու գործընթացների, հատկապես բնակչության միգրացիոն շարժերի հիմքում ընկած բավականին կարևոր գործոն: Բնական է, որ բազմաթիվ պատճառներ, կապված բնակարանային հիմնախնդրի լուծման, ենթակառուցվածքների վերականգնման, այլ դրական միտումների հետ, աստիճանաբար թուլացնում են իրենց ազդեցությունը: Սակայն երկրաշարժի հետևանքների ամբողջական հաղթահարման համար անհրաժեշտ են համալիր միջոցառումներ, որոնց նպատակը պետք է լինի ոչ միայն Աղետի, այլ նաև վերջին տարիների գործընթացների արդյունք հանդիսացող պատճառների վերացումը:

## ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ МИГРАЦИОННЫХ ПРОЦЕССОВ НАСЕЛЕНИЯ ЗОНЫ БЕДСТВИЯ

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ Н. Габриелян \_\_\_

Спитакское землетрясение 1988 года оказало негативное воздействие на процессы организации общественного производства и жизнедеятельности населения Зоны бедствия. В сочетании с влиянием социально-экономических и политических преобразований оно стало причиной формирования новых миграционных потоков населения Зоны бедствия. Многие последствия землетрясения до сих пор сохраняют свое негативное воздействие и продолжают формировать поток мигрантов за пределы республики. В период 1988-2002гг. миграционное сальдо отрицательное. Среди мигрантов, покидающих Зону бедствия, растет удельный вес детей до 16 лет, что говорит о тенденциях формирования безвозвратной миграции.

ԳՐԱԲԱՐԻ ԲԱՅԱԿԱՆՉԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ  
ՇԱՐԱԴԱՍԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

Ինչպես բոլոր, այնպես էլ բացականչական երանգի նախադասություններն ամփոփ մտքի կրողներ են: Վերջինս, սակայն, ի տարբերություն պատմողական նախադասությունների, սրանցում դրսևորվում է ոչ որպես օբյեկտիվ դատողություն, այլ հրամայական և հարցական նախադասությունների նման՝ «ընդգծված կերպով կրում է խոստովի սուբյեկտիվ վերաբերմունքի կնիքը»<sup>1</sup>: Այդպիսի վերաբերմունքը բացականչական նախադասություններում արտահայտություն է գտնում յուրահատուկ հնչերանգի միջոցով, որին բնորոշ է ձայնի ուժի ոչ թե կտրուկ բարձրացումը հնչերանգը կրող բառի վրա և միանգամից անկումը դրանից անմիջապես հետո, ինչպես հրամայական և հարցական նախադասություններում է, այլ նրա տարածումն ու տևականորեն պահպանումն ամբողջ նախադասության վրա: Հին գրական հայերենի մեջ բացականչական նախադասությունները թեև քիչ չեն, սակայն այլ երանգի նախադասությունների, հատկապես պատմողականների, համեմատությամբ դրանք քանակապես չնչին թիվ են կազմում: Հանդիպում են ինչպես թարգմանական, այնպես էլ ինքնուրույն գործերում, ինչպես օրինակ՝ *Բազմասցի՝ ողջոյն առ քեզ և ամենայն մեծի սպահիդ Արեաց /Եղ., 56/*: *Օ՛ն անդր ի բաց թողցուք զխաարային խորհուրդս մոլորելոցն /ն.տ., 226/*: *Երանի՛ սմա վասն սուրբ տեսլեանս /ն.տ., 151/*: *Եկայք ցնծացու՛ք ի Տէր /Սաղմ., ԴԳ, 1/*: *Ո՛ւր են ողորմութիւնք քո առաջինք, Տէր /ն.տ., 2Ը, 50/*: *Կեցցէ՛ արքայ /Բ.Թագ., ԺԶ, 18/*: *Ո՛ւն միտք. զի ոչ իմացայք, ... /Եզն., 220/*: *Միա ընկալաւ տէր զաղաչանս քո /Բուգ., 20/*: *Գործ մորա որպէս պարկեշտութեամբ է /Առակք, 2, 8/* և այլն:

Բացականչական հնչերանգը բազմաթիվ պատմողական, հարցական և հրամայական նախադասություններ կարող է վերածել բացականչականի՝ օժտված ցանկության, տենչանքի, իղձի, զարմանքի, հիացմունքի, երանիության, բարեմաղթության, ողջույնի, ակսոսանքի, ցավի, զոջումի, հեզմանքի, հանդիմանանքի, դժգոհության, արհամարհանքի և բազմաթիվ այլ հուզաարտահայտչական լիցքերով: Եվ հակառակը՝ բացականչական փոխարինումն այլ հնչերանգով շատ դեպքերում ինքնին բավարար նախապայման է նախադասությունը վերածելու պատմողականի, հրամայականի կամ հարցականի: Հմմտ. «Հեռի եղեն եղբարք իմ» և «Հեռի՛ եղեն եղբարք իմ», «Դեւ գոյր ի քեզ» և «Դե՛ւ գոյր ի քեզ», «Ա՛յս հատուցումն եղես ինձ» և «Ա՛յս հատուցումն եղես ինձ», «Ա՛յս են կամք չօր իմոյ» և «Ա՛յս են կամք չօր իմոյ», «Որպէ՛ս աներկիւղութեամբ առ ոչինչ համարեցան զհրամանս արքունի» և «Որպէ՛ս աներկիւղութեամբ առ ոչինչ համարեցան զհրամանս արքունի», «Ու՛ր են ողորմութիւնք քո առաջինք, Տէր» և «Ու՛ր են ողորմութիւնք քո առաջինք, Տէր», «Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինձ» և «Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինձ», «Մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն» և «Մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն» և այլն:

Միևնույն ժամանակ նշենք, որ քիչ չեն նաև այնպիսի նախադասությունները, որոնց բացականչական հնչերանգը հնարավոր չէ փոխարինել մեկ ուրիշով: Դրանք սովորաբար այն նախադասություններն են, որոնցում առկա են գերազանցապես բացականչման իմաստ ունեցող ձայնարկություններ կամ վերաբերական բառեր (աւա՛ղ, վա՛յ, վա՛հ, եղո՛ւկ, երանի՛, երանի՛ թէ, օ՛շ, ո՛վ, ահա, ահաւասիկ, աւասիկ և այլն). ինչպես օրինակ՝ *Վա՛յ իցէ ձեզ /Ագաթ., 195/*: *Երանի՛ թէ և դուք ըստ բժշկական արուեստին բերէիք զմանութիւն /Եղ., 191/*: *Երանի՛ ծողովրդեան, ... /Սաղմ., 2Ը, 16/*: *Ո՛վ անմտութիւն և անհամ մորոտութիւն /Եզն., 112/*: *Միա ծնցի ի քո զաւակացդ այլ զաւակ /Բուգ., 11/*: *Աւա՛ղ զրկանացս, աւա՛ղ թշուառական պատմութեանս /ՄԽՊՀ, Գ, կր/*: *Հապա՛ զմասցուք, ասեն, սփռեցարուք յիւրաքանչիւր տեղիս /ն.տ., 138/*: *Միաւասիկ մերձեալ եմ ի դատաստանս իմ /Յօթ, ԺԳ, 18/*:

<sup>1</sup> Ս. Արքա հ ա մ յ ա ն, Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Եր., 1962, էջ 98:

Վերոհիշյալ ձայնարկություններից, վերաբերականներից ու հարցահարաբերական դերանուններից բացի, իբրև համապատասխան հնչերանգի հետ միասին բացականչական նախադասություն ձևավորող քերականական հատկանիշ, գրաբարում որոշակի դեր ունի նաև նախադասության կառուցվածքը: Նկատի ունենք այդպիսի գործառնությունը հատկապես միակազմ (մասնավորաբար՝ անվանական և մասամբ նաև՝ բայական անդամ) նախադասությունների հանդես գալը: Եվ եթե բայական անդամ կառույցները առավել գործածական են հրամայական, քան թե բացականչական նախադասությունների ձևավորման մեջ, ապա բացականչականների կազմության գործում ավելի մեծ է անվանական միակազմ կառույցների դերը:

Օրինակներ՝ Ե Քրիստոսի մարդասիրին փա՛ռք յալիտեանս,ամէ՛ն /Կոր.,100/: Ինքնակալ կայսր Դիոկղետիանոս, առ սիրելի եղբայր աթոռակից մեր Տրդատ, ողջո՛ւն /Ազաթ.,152/: Փա՛ռք քեզ, Տէր, փա՛ռք քեզ, թագաւոր /Եղ.,312/: Ահա ընդ քեզ Սաղովկ և Աբիաթար քահանայք /Բ Թագ.,ԺԵ,35/: Ո՛վ մորոտքին /Եզն.,100/: Աւա՛ղ գրկանացս, աւա՛ղ թշուառական պատմութեանս /ՄԽՊՀ,Գ,կը/: Վա՛յ ինձ՝ Արշակայ /Բուգ.,213/:

Գրաբարի բացականչական նախադասությունների ձևավորման մեջ որոշակի նշանակություն ունի նաև ստորոգյալի եղանակային արտահայտությունը: Խոսքն առաջին հերթին վերաբերում է ստորադասական եղանակի բայածևերին: Թեև այդ բայածևերի բազմաթիվ կիրառություններ կան հատկապես պատմողական և հարցական, ոչ քիչ թվով՝ նաև հրամայական նախադասություններում, այնուամենայնիվ, եղանակային իմաստով պայմանավորված, նրանց ամենաբնութագրական գործառնությունը բացականչական նախադասություններ կազմելն է՝ այլ քերականական հատկանիշների հետ զուգակցմամբ կամ առանց դրանց. ինչպես օրինակ՝ Ո՛ւ տացէ՛ ի Սիովն զփրկութիւն Իսրայէլի /Ազաթ.,177/: *Բացցես* ինձ գոյրս տանն, և *համբուրեսցես* զիս ի համբուրից քերանոյ քոյ /ն.տ.,440/: *Եղիցի* լոյս տեսոն Աստուծոյ ի վերայ մեր /ն.տ.,196/: *Առաքեսցէ* տէր ի վերայ քո օրհնութիւն /Բ Օրին.,ԻԸ,8/: Առ ամենայն ազգս տէրութեան ինոյ՝ արեաց և անարեաց, *բազմացցի* ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ /Եղ.,18/: *Հաւասարեսցի* մահս մեր ընդ մահու արդարոցն /ն.տ.,230/: *Որչա՛ փ ևս առաւել լիցուք հաղորդք* յարութեան նորս ն.տ.,348/: *Թողեսլ լիցին* քեզ մեղք քո /Եզն.,64/: *Ահա ծնցի* ի քո զաւակացդ այլ զաւակ /Բուգ.,11/:

Շատ հաճախ գրաբարի բարեմադրություններում, ողջույններում, օրհնություններում ու անեծքներում, որոնք սովորաբար բացականչական նախադասություններ են, ստորոգյալի դերով հանդես են գալիս հրամայական եղանակի բայածևեր, որոնցով ոչ թե թելադրանք կամ կարգադրություն է արտահայտվում, այլ խոստովի իղձը, ցանկությունը, մաղթանքը. ինչպես՝ *Ողջ լերուք* ի դիցն օգնականութենէ դուք ամենեքին և ի մեր թագաւորաց /Ազաթ.,131/: *Օրհնեա* զմեզ, սուրբ հայր մեր /Եղ.,382/: *Բաց* մեզ, Տէր, զոռորն ողորմութեան քո /ն.տ.,306/: *Չարթիր*, Երեմիաս, *զարթիր և ողբա* հանդերձ մարգարէութեամբ /ՄԽՊՀ,Գ,կը/:

Ընդգծված բացականչական երանգ ունեն նաև «մի» արգելականով հրամայականի որոշ կիրառություններ, մասնավաճ, եթե դրանց բայական բաղադրիչը ստորադասական բայածև է. ինչպես օրինակ՝ Այ *մի լինիք* տիրասպանուք /Բուգ.,214/: *Մի եկեսցէ* ի վերայ մեր ռոն ամբարտաւանից, և ձեռք մեղաւորաց *մի դողացուցեն* զմեզ /Եղ.,314/: *Մի՛* ոք պոռնիկ կամ պիղծ /*լիցիցի*/ իբրև Եսաւ /Եզն.,140/ և այլն:

Պատահական չէ, որ այս և այլ նմանատիպ նախադասությունները, որ գերազանցապես ցանկություններ կան խրատ – հորդորներ են, թարգմանվում են «*թող*» եղանակիչի հավելումով, ինչն ավելի է ընդգծում դրանց բացականչական հնչերանգը. *Թող չգա մեզ վրա ամբարտաւանների ոտքը, և մեղավորների ձեռքը թող չվախեցնի մեզ: Թող որևէ մեկը Եսաւի նման պոռնիկ կամ պիղծ չլինի*:

Քիչ չեն նաև այն բացականչական նախադասությունները, որոնցում համապատասխան հնչերանգը ընկած է սահմանական եղանակի բայածևով արտահայտված ստորոգյալի վրա. ինչպես՝ *Երանի տամ* նմա /Եղ.,164/: *Ողորմիմ, ողորմիմ* սիրելեաց ձերոց /ն.տ.,112/: Արդ *աղաչեմ* զձեզ, ո՛վ քաջ նիզակակիցք /ն.տ.,204/: *Տայր* ոք ինձ թևս որպէս զաղաւոնոյ /Ազաթ.,605/: Ահա սիրնք հաստատուն *կանգնեցան* ձերում խարխուլ շինուածոյն /ն.տ.,721/: Ահա *ընկալաւ* տէր զաղաչանս քո /Բուգ.,20/: Ահաւասիկ զայս այսպէս *քննեցաք* /Յօր,Ե,27/: *Ողբամ*՝ զքեզ, Հայոց աշխարհ, *ողբա՛մ* զքեզ,

հանուրը հիւսիսականաց վեհագոյն /ՄԽՊՀ, Գ, կր/։ Ողորմիմ քեզ, եկեղեցի հայաստանեայց, խրթնացեալ ի բարեգարդութենէ բեմին, ի քաջէն զրկեալ հովուէ և հովուակցէ /ն.տ./։ *Կորնեալ* ժողովողն, *բազեալ* նաւահանգիստն, *ելիք* օգնականն, *լեալ* ճայնն յորդորեցուցիչ /ն.տ./։

Իրենց նշանակությամբ ու կիրառությամբ բացականչական երանգի նախադասությունները բազմազան են։ Խմբավորելով այդ իմաստները՝ կարելի է տարբերակել այդ նախադասությունների երկու ենթատեսակ՝ ցանկականներ կամ ըղձականներ և բուն բացականչականներ։ Առաջիններն արտահայտում են խոսողի ցանկությունը, իղձը, փափագը կամ տենչանքը, երկրորդները՝ խոսողի բացականչումը՝ զարմանքի, ափսոսանքի, դժգոհության, վախի, ուրախության, հիացմունքի և այլ զգացմունքների տոնայնությամբ։ Վերջին շրջանում, սակայն, միտում է դրսևորվում բացականչական նախադասությունների այս երկու ենթատեսակները դիտել որպես ըստ երանգի նախադասությունների միանգամայն առանձին տեսակներ՝ նկատի ունենալով «մի քանի հատկանիշներով» (իմաստային, հնչերանգային և արտահայտման ձևային առանձնահատկություններ) ըղձականների «էական տարբերությունները» բացականչականներից<sup>2</sup>։ Միաժամանակ նաև ընդգծվում է, որ նախադասությունների հնչերանգային այդ առանձին տեսակներն ունեն բառաքերականական արտահայտման միջոցների, կետադրության և այլ ընդհանրություններ։ Տարբերություններ, ինչ խոսք, կան և բավականին ակնհայտ, մանավանդ իմաստային առումով. ըղձականները խոսողի իղձը, փափագն ու տենչանքն են արտահայտում, մինչդեռ բացականչականները՝ ուրախություն, զարմանք, ափսոսանք և այլն։ Այնուամենայնիվ կա դրանց ընդհանրացնող ավելի էական ու գործող մի հանգամանք. դա այն է, որ և՛ առաջինները, և՛ երկրորդները, ինչպես նաև վերոհիշյալ մոտեցման կողմնակիցներն են միանգամայն իրավացիորեն նշում, «զգացմունքային» նախադասություններ են<sup>3</sup>։ Կարծում ենք՝ ըղձականները մնացած բացականչականներից խստիվ առանձնացնող տարբերություն չպիտի դիտել նաև նրանց ձևավորման հնչերանգային յուրահատկությունները, այն, որ «ըղձականների հնչերանգը համեմատաբար հանգիստ է, խաղաղ, զգացմունքային, մինչդեռ բացականչականների հնչերանգը ավելի բարձր է, պոթկուն, երբեմն էլ՝ ահագանգող ու ահաբեկող»<sup>4</sup>։ Էականն այն է, որ երկու դեպքում էլ գործ ունենք մեկ ընդհանրական՝ բացականչական հնչերանգի հետ, և հնչերանգի տոնայնության՝ մի դեպքում ավելի, մյուս դեպքում պակաս բարձր ու շեշտված լինելը<sup>5</sup> դեռևս բավարար պայման չէ, որպեսզի ըղձականներն ու բացականչականները համարվեն նախադասության հնչերանգային առանձին տեսակներ։ Հակառակ դեպքում ստիպված կլինենք, հնչերանգային (և ոչ միայն հնչերանգային) նույնքան նկատելի տարբերությունների պատճառով ըստ երանգի նախադասության առանձին տեսակներ համարել նաև հրամայականները, հորդորականներն ու աղերսականները, մինչդեռ իրականում դրանք հրամայական նախադասությունների իմաստային և երանգային տարատեսակներ են։

1. Այսպիսով, ցանկական կամ ըղձական են այն բացականչական նախադասությունները, որոնցով արտահայտվում են երազանք, ցանկություն, իղձ, տենչանք։ Բացականչական հնչերանգը, պայմանավորված նախադասությունների նշանակությամբ, այստեղ համեմատաբար մեղմ է, ոչ բարձր, և այսպիսի երանգային հատկանիշի շնորհիվ է, որ սրանցում գործածվող բայի հրամայականի եղանակային ձևերը սովորաբար շեշտի անհրաժեշտություն չունեն։

Օրինակներ՝ Օրհնեա զմեզ, սուրբ հայր մեր /Եղ., 382/։ Մի, տեսրք իմ պատուականք, յես այսչափ ի բարձունս վերանալոյ՝ այսրէն, յերկիր անկեալ թաւալիցիմք /ն.տ., 222/։ Բաց մեզ, Տէր, զդուռն ողորմութեան քո /ն.տ., 306/։ Թողեալ լիցին քեզ մեղք քո /Եզն., 64/։ Մի՛ որ արմատ դառնութեան ի վեր ելեալ /ն.տ., 140/։ Յուշ լիցի քեզ, որդեակ, հոգեխառն սնունդն. յուշ լիցի քեզ աստուածեղէն խրատն. յուշ լիցին հալա-

<sup>2</sup> Ա. Պ ա պ ո յ ա ն, Խ. Բ ա դ ի կ յ ա ն, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն.

Ուսումնական ձեռնարկ, Եր., 2003, էջ 78:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 80:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 78:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 80:

ծանքն իմ և քո ի միասին /Ագաթ.,185/: Բացցես ինձ գրուրս տանն, և համբուրեսցես զիս ի համբուրից բերանոյ քոյ /ն.տ.,440/: Հատուցէ Տէր չարին ըստ չարութեան իւրում /Բ.Թագ.,Գ,40/: Եկայք ցնծացուք ի Տէր /Սաղմ.,ՂԴ,1/:

Այս ենթատեսակի մեջ կարելի է դասել նաև այն նախադասությունները, որոնցով արտահայտվում է ինչ-որ բանի կամ մեկի նկատմամբ խոսողի երանական վերաբերմունքը. օրինակ՝ Երանի է մեզ վասն սորա մերձատրութեանս առ մեզ /Եղ.,304/: Երանի՛ որ հաւատայցեն ճշմարտութեանն /Բուգ.,72/: Երանի՛ առաջնոյ և երկրորդի փոփոխմանն /ՄԽՊՀ,Գ,կր/: Երանի՛ ժողովրդեան, որ.../Սաղմ.,ՁԸ,16/:

Ըղծական նախադասություններ են նաև բարեմադրանքներն ու ողջույնները, որոնցով այնքան հարուստ է գրաբար մատենագրության լեզուն: Դրանք սովորաբար անվանական միակազմ նախադասություններ են. ինչպես՝ Տրդատիոս Հայոց մեծաց արքայ. առ աշխարհս և առ գաւառս, առ նախարարս և առ շինականս և առ ամենեսին ողջոյն /Ագաթ.,134/: Միհրմերսէս վզուրկ հրամանատար Երան և Աներան. Հայոց մեծաց ողջոյն շատ /Եղ.,48/: Փա՛ռք քեզ, Տէր, փա՛ռք քեզ, թագաւոր /ն.տ.,312/: Խաղաղութի՛ւն ընդ քեզ /Գատ.,ԺԹ,20/: Շնո՛րհք Տեսնոն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ /Ա Կորնթ.,ԺԶ,23/: Եւ Քրիստոսի մարդասիրին փա՛ռք յախտեանս, ամէն /Կոր.,100/:

Քիչ չեն նաև նույնպիսի նշանակությամբ գործածվող երկկազմ նախադասությունները. Առ ամենայն ազգս տէրութեան ինոյ՝ արեաց և անարեաց, բազմասցի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ /Եղ.,18/: Քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագնէ ամենայն Հայոց աշխարհիս /Ագաթ.,127/: Ողջ լիջիք, /ն.տ.,134/: Ողջ լէր դիցն պաշտամամբ ամենայն պատուով /ն.տ.,156/:

1.1 Դասական գրաբարի բացականչական նախադասությունների ցանկական կամ ըղծական ենթատեսակը դրսևորվում է մի քանի շարադասական կադապարներով: Ընդհանրապես ոչ միայն հրամայական կամ հարցական, այլև բացականչական նախադասությունների շարադասությունը էականորեն պայմանավորված է հնչերանգային գործոնով, ավելի ստույգ՝ հատուկ հնչերանգը, ուրեմն նաև տրամաբանական շեշտը կրող շարադասական բաղադրիչի դերով գերազանցապես հանդես է գալիս ստորոգյալը, որ վերոնշյալ պատճառով սովորաբար նախադասության սկզբում է: Այստեղից էլ՝ «ստորոգյալ ենթակա» (ՔՄՏ) հաջորդականության խիստ սովորական կարգը այս բնույթի համառոտ նախադասություններում. օրինակ՝ Կեցցէ՛ արքայ /Բ.Թագ.,ԺԶ,18/: Ուրախ եղիցին երկինք /Սաղմ.,ՂԵ,11/ և այլն:

1.2 Ստորոգյալի լրացման կամ լրացումների առկայությամբ գլխավոր անդամների կից դասավորությունը կարող է ինչպես պահպանվել (ՔՄՏՄՕկամԱ շարադասական մասնակադապար), այնպես էլ ընդմիջարկվել (ՔՄՕկամԱՄՏ, ՔՄՕկամԱՄՏՄՕկամԱ շարադասական մասնակադապարներ). Հատուցէ Տէր չարին ըստ չարութեան իւրում /Բ. Թագ.,Գ,40/: Եղիցին ատուրք կենաց մարդկանս այսորիկ հարիւր և քսան ամ /Եզն.,124/: Եղիցի լոյս տեսնոն Աստուծոյ ի վերայ մեր /Ագաթ.,196/: Տայր որ ինձ թև որպէս զաղաւնոյ /ն.տ.,605/: Բազմասցի ողջոյն առ քեզ և ամենայն մեծի սպահիդ Արեաց /Եղ.,56/: Հաւասարեսցի մահս մեր ընդ մահու արդարոցն /ն.տ.,230/: Արասցէ և զիս այսօր Տէր Յիսուս Քրիստոս սպասաւոր ձերում մեծաշուք զնդիդ /ն.տ.,310/: Դարձցի շողն անդրէն յետս զտասն աստիճանօք Աքազեան սպարանից /Եզն.,150/: Թողեալ լիցին քեզ մեղք քո /Եզն.,64/: Եկեսցեն ի վերայ քո անէծքս /Բ Օրին.,ԻԸ,15/: Ողջ լերուք ի դիցն օգնականութենէ դուք ամենեքին և ի մեր թագաւորաց /Ագաթ.,131/:

1.3 Այննայտ է, որ մի՛ արգելականի առկայությունը կառուցվածքային հատկանիշ է հրամայական նախադասությունների համար: Այնուամենայնիվ, մասնավորապես այն դեպքում, երբ մի՛ արգելականով ստորոգյալի բայական բաղադրիչը, հեռանալով նրանից, զբաղեցնում է նախադասության ամենաթույլ արտասանվող հատվածը՝ վերջը և դառնում տրամաբանորեն միանգամայն աննշանակ, այսպիսի նախադասությունները դադարում են հրամայական լինելուց և ձեռք են բերում ընդգծված բացականչա-

կան երանգ:<sup>6</sup> Գրանք արդեն ոչ թե հրաման կամ կարգադրություն, այլ ցանկություն են արտահայտում. ինչպես օրինակ՝ Մի որ արմատ դառնութեան ի վեր ելեալ /Եզն.,140/: Մի դու, արքայ, և մի զայդ այլ առ մեզ ասեր /Եղ.,92/: Մի, տեսաք իմ պատուականք, յետ այսչափ ի բարձունս վերանալոյ՝ այսրէն, յերկիր անկեալ թաալիցիմք /Եղ.,222/:

1.4 Ըղծական նախադասություններում, որտեղ բացականչական հնչերանգի բարձրակետում սովորաբար ստորոգյալն է, առաջադաս ենթակա քիչ է հանդիպում, մեր դիտարկմամբ՝ դա հիմնականում այն դեպքում է, երբ իբրև տրամաբանորեն շեշտակիր բաղադրիչ, ենթական ընդգծվելու նպատակով է հայտնվում նման նախադասության սկզբում (ՏՈՒՍՈկանԱ շարադասական մասնակադասար). ինչպես՝ Քաջութին հասցե ձեզ ի քաջէն Վահագնէ ամենայն Հայոց աշխարհիս /Եղ.,127/: Սկրտութիւնս այս լիցի ինձ ի լրացումն մեղաց իմոց /ն.տ.,306/ և այլն:

1.5 Շարադասական բաղադրիչների հաջորդականությունը բավականին կայուն կարգ ունի բարենադրություններում և ողջույններում: Սրանցում սովորաբար առաջին պլան է մղվում երկկազմ նախադասության տրամաբանական շեշտը կրող խնդիրը, որ ցույց է տալիս, թե ում է ուղղված ողջույնը կամ մաղթանքը, նրան հաջորդում է բացականչական հնչերանգ ունեցող ստորոգյալը՝ արտահայտված ստորադասական եղանակի բայաձևով, իսկ ենթական սովորաբար եզրափակում է կառույցը (ՕՒՍՈՒՍ կամ ՕՒՍՈՒՍՈկանԱՍ շարադասական մասնակադասարներ). ինչպես՝ Առ ամենայն ազգս տէրութեան իմոյ՝ արեաց և անարեաց, բազմասցի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ /Եղ.,18/:

Ի դեպ, խնդիրը, «որին վերագրվում է գերադաս անդամով արտահայտված առարկայական գաղափարը»<sup>7</sup>, տրամաբանորեն շեշտակիր է նաև բարենադրանք կամ ողջույն արտահայտող միակազմ նախադասություններում, եթե նախորդում է կառույցի գերադաս անդամին օրինակ՝ Եւ Քրիստոսի մարդասիրին փա՛ռք յախտեանս, ամէն /Կոր.,100/: Եւ նմա փա՛ռք յամենայն եղականացս /ՄԽՊՀ,Գ,կը/: Հայոց մեծաց ողջոյն շատ /Եղ.,24/: Արքայ Դեմետրիոս՝ առ ազգն Հրեից ողջոյն /Ա Մակ.,Ժ,25/: Տրդատիոս Հայոց մեծաց արքայ. առ աշխարհս և առ գաւառս, առ նախարարս և առ զօրս և առ շինականս և առ ամենեսին, ողջոյն /Ազաթ.,134/: Ինքնակալ կայսր Դիոկղետիանոս, առ սիրելի եղբայր արքունից մեր Տրդատ, ողջոյն /ն.տ.,152/: Մակայն բազմաթիվ են նաև այն օրինակները, որոնցում խնդիրը հաջորդում է միակազմ նախադասության գերադաս անդամին, ուստի և տրամաբանորեն աննկատ է. ինչպես՝ Հանճա՛ր բարի ամենեցուն /Առակք,Ա,7/: Խաղաղութիւն ընդ ձեզ /Ծննդ.,ԽԳ,23/: Օրինութիւն որդոյ Դաւթի /Մատթ.,ԻԱ,9/: Խաղաղութիւն յԱստուծոյ Հօրմէ մերմէ /Ա Կորնթ.,Ա,3/ և այլն:

1.6 Դասական գրաբարի ոչ միայն թարգմանական, այլև ինքնուրույն գործերի լեզվում հաճախադեպ հանդիպող ոճական հնարք է բարդ ըղծական կառույցի բաղադրիչ եզրերում «ստորոգյալ ը ենթակա», «ենթակա ը ստորոգյալ» (ՍՈՒՍ - ՏՈՒՍ) կամ հակառակ (ՏՈՒՍ - ՍՈՒՍ) հերթազայությունը, որ բարդության բաղադրիչ նախադասությունները բացականչական հնչերանգի ուժով հավասարակշռելու նպատակ ունի, ինչի շնորհիվ հուզական խոսքը դառնում է ավելի աշխույժ, նկատելիորեն դինամիկ<sup>8</sup>: Օրինակ՝ Մի եկեսցէ ի վերայ մեր ոտն ամբարտաւանից, և ձեռք մեղաւորաց մի դողացուցեն զմեզ /Եղ.,314/: Իմաստութիւն Յունաց հասցէ դաստակերտիդ կայսերաց և ի մեր դիւցախառն Պարթևաց հասցէ այցելութիւն, ի փառաց թագաւորաց և ի քաջ նախնեաց /Ազաթ.,127/:

1.7 Ենթակայի զեղչման դեպքում երկկազմ ըղծականները սովորաբար արտահայտվում են «ստորոգյալ ը խնդիր կամ պարագա» (ՍՈՒՍ կամ Ա) շարադասական մասնակադասարով (Երանի տամ նմա /Եղ.,164/: Եկայք ցնձացուք ի Տէր / Մաղմ.,ԴԳ,1/):

<sup>6</sup> Այդ մասին ավելի մանրամասն տես՝ Ս.Հայրապետյան, Հատուկ հնչերանգով նախադասությունների շարադասական կադասարները գրաբարում, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 5, Գյումրի, 2002, էջ 42:

<sup>7</sup> Գ. Խ ա չ ա տ ը յ ա ն, Գրաբարի միակազմ նախադասությունները, Եր., 2002, էջ 184:

<sup>8</sup> Տես՝ Ս.Հայրապետյան, Հարցական նախադասությունների շարադասական կադասարները դասական գրաբարում, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 6, Գյումրի, 2003, էջ 34:

Իսկ ստորոգյալի մեկից ավելի հետադաս լրացումների առկայության դեպքում լրացյալին անմիջապես հաջորդողը որպես կանոն խնդիր լրացումներն են (ՔԻՕՊԱ շարադասական մասնակադապար). ինչպես՝ *Համբուրեցես զիս ի համբուրից բերանոյ քոյ /Ագաթ.,440/*: *Գթասցի յիս* որպես և յաւազակն ի ժամ խաչին /Եղ.,310/:

Հաճախ գեղջված ենթակայի փոխարեն առկա է այն անվանող կոչական, որը, ինչպես ենթական, կա՛ն անմիջապես հաջորդում է ստորոգյալին (ՔԻԿոչ.ՊՕկամԱ), կա՛ն, ընդմիջարկվում նրանից լրացմամբ (ՔԻՕկամԱԼԿոչ). ինչպես՝ Ընկալ, *Տէր*, զկամաւոր պատարագս մեր /Եղ.,98/։ Գոհանամք զքէն, *Տէր Աստուած մեր* /ն.տ.,248/։ Օրհնես զմեզ, *սուրբ հայր մեր* /ն.տ.,382/։ Արդ աղաչեմ զձեզ, *ն՛վ քաջ նիզակակիցք* /ն.տ.,204/։ Բաց մեզ, *Տէր*, գրուռն ողորմութեան քո /ն.տ.,306/։

1.8 Խոսողի երանական վերաբերմունքն արտահայտող ըղձական նախադասությունները մեծ մասամբ միակազմ են։ Նրանց գերադաս անդամը (*երանի՛, երանի՛ է*), որ բացականչական հնչերանգի կրողն է, ունի բացառապես կայուն սկզբնային դիրք, իսկ նախադասությունը՝ «գերադաս անդամ Պ լրացում կամ լրացումներ» շարադասական մասնակադապարը։ Օրինակ՝ *Երանի՛ որ հաւատայցեն ճշմարտութեանն /Բուգ.,72/*։ *Երանի՛ ժողովրդեան, որ.../Սաղմ.,2Ը,16/*։ *Երանի՛ առաջնոյ և երկրորդի փոփոխմանն /ՄԽՊՀ,Գ,կր/*։ *Երանի՛ թէ և դուք ըստ բժշկական արուեստին բերէիք զմանութիւն /Եղ.,191/*։ Այս առիթով նշենք նաև, որ ձայնարկություններն ու վերաբերականները գրաբարի բացականչական նախադասությունների ըղձական ենթատեսակի մեջ գործուն դերակատարություն չունեն։

2. Գասական գրաբարի բուն բացականչական նախադասություններն ունեն ըղձականների համեմատ ավելի բարձր հնչերանգ, որի կրող կարող է հանդիսանալ նախադասության յուրաքանչյուր շարադասական բաղադրիչ։ Սրանք աչքի են ընկնում նաև բացականչական հնչերանգ ձևավորող բառային միջոցների՝ ձայնարկությունների, վերաբերականների և հարցահարաբերական դերանունների առատ գործածությամբ և կարող են արտահայտել խոսողի ամենատարբեր զգացմունքներ.

ա) - *Որևէ բանի նկատմամբ խոսողի դրական վերաբերմունք՝ ուրախություն, ցնծություն, հիացմունք, հրճվանք և այլն*. Օրինակ՝ *Որպէ՛ս աներկիւղութեամբ առ ոչինչ համարեցան զհրամանս արքունի /Եղ.,122/*։ *Երանի՛ է մեզ վասն սորա մերձաւորութեանս առ մեզ /ն.տ.,304/*։ Օրհնեալ *Տէր Աստուած ի բարձունս /ն.տ.,382/*։ Ահաւասիկ ես գեղեցիկ, մերձաւոր իմ /Երգ.,Ա,14/։ Ահա ծնցի ի քո զաւակացոյ այլ զաւակ /Բուգ.,11/։ Նա գորայիսի՛ գերանական զփառսն ժառանգէ /Եզն.,246/։ Գործ նորա որպէ՛ս պարկեշտութեամբ է /Առակք,2,8/։ Միրեցից զքեզ՝ *Տէր՝* զօրութիւն իմ /Սաղմ.,ԺԷ,2/։

բ) - *Որևէ բանի նկատմամբ խոսողի ցավակցական վերաբերմունք, վիշտ, ափսոսանք, դառնություն*. ինչպես՝ *Ողորմի՛մ քեզ, եկեղեցի հայաստանեայց, խրթնացեալ ի բարեզարդութենէ բեմին, ի քաջէն զրկեալ հովուէ և հովուակցէ /ՄԽՊՀ,Գ,կր /*։ Աւա՛ղ զրկանացս, աւա՛ղ թշուառական պատմութեանս /ն.տ./։ *Որպէ՛ս զախոսս հանդուրժեցից բերել /ն.տ./*։ *Ողորմի՛մ, ողորմի՛մ սիրելեաց ձերոց /Եղ.,112/*։ Ահաւաղիկ քակեցի զմիաբանութիւն ուխտին Հայոց /ն.տ.,75/։ *Ո՛ր անմիտք /Եզն.,220/*։ Ահաւասիկ մերձեալ եմ ի դասաստանս իմ /Յօք,ԺԳ,18/։

գ) - *Նախատինք, հանդիմանություն, արհամարհանք, անեծք*. ինչպես՝ *Ո՛րք է քաղցր աչացն հանդարտութիւնս առ ուղիղս /ՄԽՊՀ,Գ,կր /*։ *Ո՛րք է/ երկայն ճանապարհաց յոյս հեշտացուցիչ, աշխատութեանցն հանգուցող /ն.տ./*։ *Ո՛վ այսուհետև զմերս յարգեսցէ զուսումն, ո՛վ ուրախասցի ընդ առաջադիմութիւն աշակերտիս, ո՛վ զհայրական բարբառեսցի զուարճութիւն, մասամբ ինչ յաղթահարեալ յորդոյս /ն.տ./*։ *Եւ դուք աւաղիկ կամիք անկանել հեթանոսաց ի ծառայութիւն /Բուգ.,137/*։ *Վա՛յ իցէ ձեզ /Ագաթ.,195/*։ *Ո՛վ մորոտութիւն./Եզն.,100/*։ *Ո՛վ անմտութիւն և անհամ մորոտութիւն /ն.տ.,112/*։ *Վա՛յ այնոցիկ, որ գրեն զչարիս /Եսայի.,Ժ,1/*։ *Եկեսցեն ի վերայ քո անեծքս /Բ Օրին.,ԻԸ,15/*։

դ) - *Որևէ բան կատարելու հորդոր, հրավեր, կանչ*. Հոգիդ քո բարի առաջնորդեսցէ մեզ յերկիր ուղիղ /Ագաթ.,194/։ Հապա զնասցուք, ասեն, սփռեցարուք յիւրաքանչիւր տեղիս /Բուգ.,138/։ *Աղէ՛ տուր ինձ զիտել /ն.տ.,143/*։ *Զարթիր, Երեմիաս, զարթիր և ողբա հանդերձ մարգարտութեամբ /ՄԽՊՀ, Գ,կր /*։ *Որչափ ևս առաւել լիցուք հաղորդք յարութեան նորա /Եղ.,348/*։

ե) - *տրտմություն, հուսահատություն, հուսալքություն*։ Օրինակ՝ Ահա շրջեցան զինն շունք բազումք /Եղ.,168/։ Վա՛յ մեզ, վա՛յ մեզ, վա՛յ մեզ.../Ազաթ.,780/։ Ձիա՛րդ զմիտս իմ և զլեզուս պնդեցից։ Ձիա՛րդ յարմարեցից գողերգութիւնս /ՄԽՊՀ,Գ,կը /: Ողբամ՝ զքեզ, Հայոց աշխարհ, ողբա՛մ զքեզ, հանուրց հիւսիսականաց վեհագոյն /ն.տ./: Կորեա՛ւ ժողովողն, քագեա՛ւ նաւահանգիստն, ելի՛ք օգնականն, լռեա՛ց ձայնն յորդրեցուցիչ /ն.տ./:

2.1 Ըղձականների նման՝ բուն բացականչական նախադասությունները ևս իրենց կառուցվածքով լինում են ինչպես երկկազմ (*Նա գորպիսի՛ գերանական զփառսն ժառանգէ /Եզն.,246/*), այնպես էլ միակազմ (*Աւա՛ղ զրկանացս, աւա՛ղ թշուառական պատմութեանս /ՄԽՊՀ,Գ,կը./*)։

Եական տարբերություններ չկան սրանց միջև նաև շարադասության տեսակետից։

2.2 Երկկազմ համառոտ նախադասություններում բացականչական հնչերանգն իր վրա կրող ստորոգյալը բացառապես սկզբնային դիրքում է (ՔԻՏ շարադասական մասնակադապար)։ *Կորեա՛ւ ժողովողն, քագեա՛ւ նաւահանգիստն, ելի՛ք օգնականն, լռեա՛ց ձայնն յորդրեցուցիչ /ՄԽՊՀ,Գ,կը/*։ Ընդարձակ նախադասություններում ամենահաճախադեպը գլխավոր անդամների՝ խնդրով կամ պարագայով ընդմիջարկված ՔԻՕ/ԱԻՏ շարադասական մասնակադապարն է (*Ահա շրջեցան զինն շունք բազումք /Եղ.,168/*։ *Ահա ծնցի ի քո գաւակացդ այլ գաւակ /Բուգ.,11/*), որում կառույցը եզրափակող ենթակայի փոխարեն շատ դեպքերում հանդես է գալիս այն անվանող կոչական. *ինչպես՝ Ողբամ՝ զքեզ, Հայոց աշխարհ, ողբա՛մ զքեզ, հանուրց հիւսիսականաց վեհագոյն /ՄԽՊՀ,Գ,կը/*։ *Ողորմի՛մ քեզ, եկեղեցի հայաստանեայց /ն.տ./*։ *Միրեցից զքեզ՝ Տէր՝ գորութիւն իմ /Սաղմ.,ԺԷ,2/*։ և այլն։ Ստորոգյալի հետադաս լրացումների փոխդասավորության կարգն այստեղ ևս միանգամայն ազատ է։

2.3 Գլխավոր անդամների վերոհիշյալ «ստորոգյալներթակա» հաջորդականությունը սովորաբար շրջվում է, եթե բացականչում արտահայտող հարցահարաբերական դերանունների (ո, ով, որպէս, որպիսի) կամ ցուցական վերաբերականների (ահա, ահաւասիկ և այլն) առկայությամբ պայմանավորված՝ ստորոգյալը դադարում է բացականչական հնչերանգի կրողը լինելուց։ Օրինակներ՝ *Ո՛վ այսուհետև զներս յարգեսցէ զուսումն, ո՛վ ուրախասցի ընդ առաջադիմութիւն աշակերտիս, ո՛վ զհայրական բարբառեսցի զուարճութիւն, մասամբ ինչ յարթահարեալ յորդոյս /ՄԽՊՀ,Գ,կը /: Ո՛վ տայր քեզ, երբօրորդի իմ, դիտել զատինս մոր իմոյ /Երգ.,Ը,1/*։ Գործ նորա *որպէ՛ս պարկեշտութեամբ է /Առակք,2,8/*։ *Նա գորպիսի՛ գերանական զփառսն ժառանգէ /Եզն., 246/*։ Ո՛ տայր ինձ զծովս ծխանի և զառաւօտն Նաւասարդի / /: *Ահա դու, Տէ՛ր, ողորմութեամբ քով պասկեցեր զսիրելիս քո /Եղ.,151/*։ *Ահա գառն կայր ի վերա լերինն Սիռնի /Յայտ.,ԺԳ,1/*։ Ես *աւասիկ ծառայ քո ի ձեռս քո կամ /Բուգ.,142/*։ *Ահաւասիկ* բանք արդարութեամբ կատարեցան /ն.տ.,140/։

Նմանատիպ նախադասություններում գլխավոր անդամների ՔԻՏ հաջորդականությունը սովորաբար ենթակա չէ շրջման թերևս միայն այն դեպքում, երբ հնչերանգակիր դերանունը անվանական ստորոգյալի ստորոգելին է. *ինչպես՝ Ո՛ւր է քաղցր աչացն հանդարտութիւն առ ուղիդս /ՄԽՊՀ, Գ,կը /: Ո՛ւր /է/ երկայն ճանապարհաց յոյս հեշտացուցիչ, աշխատութեանցն հանգուցող /ն.տ./*։ *Այս են կամք Հօր իմոյ /Եզն.,138/*։ *Ո՛ւր են ողորմութիւնք քո առաջինք, Տէ՛ր /Սաղմ.,2Ը,50/*։ *Դո՛ւ ես Որդին Աստուծոյ /Եզն.,150/* և այլն։

2.4 Միակազմ բացականչական նախադասությունները դասական գրաբարում դրսևորվում են նույն շարադասական մասնակադապարով, ինչ ըղձականները. այդպիսի կառույցի գերադաս անդամը, որպէս բացականչական հնչերանգի կրող, միշտ սկզբում է. *ինչպես՝ Յնծութի՛ւն է ինձ /Դուկ.,Ա,47/*։ Ըա՛տ է արդ, Տէ՛ր /Գ Թագ.,ԺԹ,4/։ Մա՛հ է ի սանի աստ, այ՛րդ Աստուծոյ /Գ Թագ.,Գ,40/։ Հաճախ սրանցում առկա է նաև որևէ ցուցական վերաբերական, որ նախորդելով գերադաս անդամին՝ ներկայացնում է նրա ցույց տված առարկան. Ես *ահա վարագոյրք պատուականք /Յուդ.,ԺԳ19/*։ Ես *ահա ժողովորդ բազում /Յայտ.,Է,9/*։ Ես *ահաւասիկ* կուսութիւնք դատեր իմոյ /Բ Օրին.,ԻԲ,17/։ *Աւանիկ* կին քո առաջի քո /Ծննդ.,ԺԲ,12/ և այլն։ Երբեմն գերադաս անդամին նախորդում է որևէ ձայնարկություն՝ իր վրա վերցնելով բացականչական հնչերանգի



ուժը. Ո՛ւնոր և անպատում սքանչելեաց գործ /ՂՓՊՀ, 179/: Ո՛վ անմտութիւն և անհամ մորոտութիւն /Եզն., 112/: Ո՛ւ հրաման տկար և անգօր սահման /ն.տ., 161/:

2.5 Երբեմն հենց ձայնարկությունն է (վա՛յ, վա՛շ, աւա՛ղ, ո՛հ, երանի՛) բացականչական միակազմ նախադասության գերասանդ, որի հետ հանդես է գալիս տրական հոլովով (հազվադեպ նաև ուղղակյանով) կամ նախդրավոր կապակցությամբ խնդիր լրացում:<sup>9</sup> Այսպիսի նախադասությունները առանց բացառության հանդես են գալիս «Ձայն.Ունոր» շարադասական մասնակադապարով. ինչպես՝ Վա՛յ արտից վատքարաց և ձեռաց լքեյոց /Միր., Բ, 14/: Վա՛յ ինձ՝ Արշակայ /Բուզ., 175/: Երանի՛ ամենեցուն /Սաղմ., ճԻԷ, 1/: Վա՛շ ինձ /Եսայի, ԽԳ, 16/: Աւա՛ղ քշուտական պատմութեանս /ՄեՒՊՀ, Գ, կր/: Վա՛յ ի վերայ բեկման քո /Երեմ., Ժ, 19/: Ո՛ւ հովիւք /Երեմ., ԻԳ, 1/:

Այսպիսի նախադասությունների ընդարձակման դեպքում շարադասության վերոհիշյալ կարգը չի խախտվում: Նոր բաղադրիչներ (կոչական, պարագա) կարող են հավելվել միայն խնդրից հետո. օրինակներ՝ Զա՛ւ ձեզ, որդիք /ՂՓՊՀ, 22/: Վա՛յ քեզ, Բեքսայիդա /Մատթ., ԺԱ, 21/: Ո՛ւ հ ինձ, Տէ՛ր /ԳԹագ., Ժ, 20/: Վա՛յ քաղաքիդ մեծի Բաբելովմի, քաղաք հզոր /Յայտ., ԺԸ, 10/: Երանի՛ քեզ, երկի՛ր /Եսայի, ԾԶ, 1/: Երանի՛ սմա վասն սուրբ տեսլանս /Եղ., 196/:

Համառոտագրություններ

Ազաթ. - Ազաթանգեղայ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914:  
 Բուզ. - Փաստոսի Բիզանդացոյ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:  
 Եզն. - Եզնկայ վարդապետի Կողբացոյ «Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914:  
 Եղ. - Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:  
 Կոր. - Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:  
 ՂՓՊՀ - Ղազարայ Փարպեցոյ պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, Տիֆլիս, 1904:  
 ՄեՒՊՀ - Մովսիսի Խորենացոյ պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1913:  
 Մ. Գրքի (Աստուածաշունչ մատեան Հնոց և Նորոց Կտակարանաց, Կ. Պոլիս, 1895) համառոտագրություններից՝ Ա Կորնթ. - Առ Կորնթացիսն առաջներորդ, Ա Մակ. - Գիրք առաջին Մակաբայեցոց, Առակք - Առակք Սողոմոնի, Բ. Թագ. - Գիրք երկրորդ Թագաւորաց, Բ Օրին. - Գիրք երկրորդ Օրինաց, Գ Թագ. - Գիրք երրորդ Թագաւորաց, Դ Թագ. - Գիրք չորրորդ Թագաւորաց, Դատ. - Գիրք Դատաւորաց, Եսայի - Մարգարէութիւն Եսայիայի, Ծճճճ. - Գիրք Ծճճճոց, Դով. - Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի ըստ Դուկասու, Մատթ. - Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի ըստ Մատթէոսի, Յուզ. - Գիրք Յովիթայ, Յօր. - Գիրք Յօրայ, Սաղմ. - Գիրք Մաղմնաց, Միր. - Գիրք Միրաբայ:

ВОСКЛИЦАТЕЛЬНОЕ ПРЕДЛОЖЕНИЕ ГРАБАРА И ЕГО СЛОВОПОРЯДКОВЫЕ МОДЕЛИ

\_\_\_\_\_ Резюме \_\_\_\_\_ С. Айрапетян \_\_\_\_\_

В статье выявляются грамматические особенности формирования восклицательных предложений классического грабара (специфическая интонация, использование междометий, местоимений, структура предложения, выражение сказуемого и т.д.), представляются смысловые и функциональные разновидности этих предложений в грабаре.

Рассматриваются все словопорядковые модели, присущие восклицательным предложениям, раскрываются факторы, обуславливающие эти модели. Подчеркивается, что для большинства двусоставных восклицательных предложений грабара характерна препозитивность сказуемого, а некоторые подвиды (в частности - односоставные) отличаются абсолютно устойчивым порядком слов.

<sup>9</sup> Տե՛ս Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 193-194:

## Հրանուշ ՉԱԲՅԱՆ

### ԲԱՅԵՐԻ ՍԵՌԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՉ

Լեզվի քերականական կարգերի փոփոխությունները պատմական զարգացման ընթացքում տեղի ունեցող երևույթներ են: Այսպես, մեր լեզվի զարգացման տարբեր շրջաններում զգալի թվով բայեր ունեցել են սեռային տեղաշարժեր: Դրանք կատարվել են զանազան պատճառներով, տեղի են ունեցել իմաստային փոփոխություններ, որոնց հիման վրա էլ առաջ են եկել խնդրառական համապատասխան փոփոխություններ, կամ տեղի են ունեցել քերականական երանգային փոփոխություններ, որոնք ազդել են բայի սեռի վրա:

Բայերի խնդրառությանը, մասնավորապես խնդրառական տեղաշարժերին, ինչպես նաև բայի սեռին, մասնավորապես սեռային զուգահեռներին և կրկնասեռությանը վերաբերող հարցերին անդրադարձել են մի շարք հայ լեզվաբաններ, որոնք որպես կանոն կանգ են առել լեզվի պատմական զարգացման որևէ մեկ շրջանի վրա միայն:<sup>1</sup> Մասնակի դեպքերում հեղինակները անդրադարձել են գրաբարին՝ խնդրառական տեղաշարժերի հետ կապված այս կամ այն հարցը հիմնավորելու համար: Մեր նպատակն է վերոհիշյալ քերականական իրողությունների ուսումնասիրությունը կատարել հայերենի պատմական զարգացման ֆոնի վրա՝ հավասարապես կարևորելով գրական հայոց լեզվի պատմական զարգացման բոլոր երեք շրջանները:

Բայի սեռային պատկանելության մեջ կատարված տեղաշարժերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրաբարը հարուստ է կրկնասեռ բայերով, երբ ըստ իրենց արտահայտած գործողության բնույթի՝ բայերը պահանջում են երբեմն ուղիղ, երբեմն էլ անուղղակի խնդիր լրացումներ (ընդ որում, դա ոչ միշտ է կապված զուգահեռ լծորդությունների հետ): Միջին հայերենում զգալիորեն պակասում են կրկնասեռ բայերը, իսկ ժամանակակից հայերենում դրանց թիվը խիստ սահմանափակ է բայական հարուստ բառապաշարի մեծ թիվ կազմող միասեռ բայերի համեմատ:

Ուսումնասիրել ենք գրաբարում կրկնասեռ (այդ թվում նաև սեռային զուգահեռություն ունեցող) մոտ 50 բայերի մինչև արդի հայերեն անցած ուղին: Այս բայերից միայն 10-ն է արդի հայերենում պահպանել իր կրկնասեռությունը, այսինքն՝ գրաբարում կրկնասեռ կամ սեռային զուգահեռություն ունեցող 40 բայ այսօր միասեռ է:

Սեռային փոխանցումները հիմնականում կատարվել են երկու ուղղությամբ. կրկնասեռությունից՝ չեզոք սեռի և կրկնասեռությունից՝ ներգործական սեռի: Իհարկե, զերակշռում են կրկնասեռությունից չեզոք սեռի անցման դեպքերը (50-ից 22-ը, իսկ 50-ից 13-ը՝ կրկնասեռությունից՝ ներգործական սեռի): Դիտարկված 50 բայերից 2-ը (գրաբարում միասեռ) արդի հայերենում դարձել են կրկնասեռ՝ գրաբարյան իմաստների լրիվ փոփոխության հետևանքով: Եթե ի մի բերենք ամբողջ պատկերը, դժվար չի լինի նկատել, որ բայի սեռային անցումները ամբողջացնում են հայերենի քերականական համակարգի զարգացման ընդհանուր պատկերը և, կարծում ենք, ուղղված են քերականական համակարգի հստակեցմանն ու միօրինականացմանը: Սեռային տեղաշարժերի ժամանակ գրաբարից արդի հայերեն ընկած երկարատև ուղին անցնելիս շատ բայեր կամ կորցրել են գրաբարում առանձին սեռային պատկանելությամբ արտահայտվող նշանակությունը, կամ նշված նշանակությունն արտահայտել են մոտ բայաձևով: Ինչպես խոսքիմասային իմաստափոխության դեպքերը քննելիս, այնպես

<sup>1</sup> Հ. Ա ճ ա ռ յ ա ն, *Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների, հ. 1, Եր., 1952, էջ 24-25*: Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն, հ. 2, Եր., 1953*: Ա. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962, էջ 402-403*: Վ. Քոչյան, *Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Եր., 1963*: Ն. Պատմասյան, *Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1968*: Հ. Օհանյան, *Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1968*: Գ. Գարեգինյան, *Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Եր., էջ 306-318*: Մ. Ասատրյան, *Բայի սեռը ժամանակակից հայերենում, Եր., 1978, էջ 195-199*: Հ. Հարությունյան, *Կառավարումը ժամանակակից հայերենում, Եր., 1988*:

էլ այս պարագայում պետք է կարևորել լեզվի պատմական զարգացման երկրորդ՝ միջինհայերենյան շրջանը, քանի որ շատ բայեր հենց միջին հայերենում են կորցրել կրկնաստեռությունը և արդեն որպես միաստե բայ՝ անցել են լեզվի զարգացման հաջորդ փուլ (սաստակել, հաճել, վախճանել և այլն): Այդ են վկայում գրաբարի, միջին հայերենի և արդի հայերենի բացատրական բառարանների ուսումնասիրությունները<sup>2</sup>:

**Շողոպրել** բայը արդի հայերենում կորցրել է գրաբարյան ներգործական սեռի նշանակությունները՝ *կորզել, պոկել, խլել, ազատել* և արդի հայերենի բառապաշար է մուտք գործել որպես չեզոք սեռի բայ՝ հենց գրաբարյան չեզոք սեռի իմաստներով՝ *պոկ գալ, վտանգից ազատվել, փախչել*:

**Վարանել** բայը այսօր արդեն չունի գրաբարյան, *1. չորս կողմից պաշարել, նեղը զցել, 2. հոգ տանելով ճար անել* իմաստները: Այսօր չեզոք սեռի բայ է՝ *երկնտանքի մեջ ընկնել, անվստահություն ունենալ* բայիմաստներով: Պետք է նշել, որ արդի հայերենում չեն օգտագործվում «վարանել» բայի գրաբարյան չեզոք սեռի որոշ նշանակություններ, ինչպիսիք են՝ *1. այս ու այն կողմ քափառել, 2. հալածվել, 3. դարանակալ լինել, 4. բռնվել, պաշարվել* իմաստները:

**Աշակերտել** բայը գրաբարում զուգահեռաբար հանդես էր գալիս ներգործական և չեզոք սեռերով: Գրաբարում բայն ունեցել է *կրթել, աշակերտ դարձնել, ուսուցանել* նշանակությունները՝ այժմյան մեր գրական հայերենում գործածվող հայտնի նշանակություններին զուգահեռ: Հենց թվարկված իմաստներն էլ արտահայտել են համապատասխան անցողիկության զարգացման, և բայն օգտագործվել է նաև ներգործական սեռով: Այսօր բայն հանդես է գալիս միմիայն չեզոք սեռով, քանի որ այդ իմաստները նոր գրական լեզվում այլևս չկան: Փաստորեն, այս և բազմաթիվ այլ բայեր (հոսել, ճակատել, հապաղել, հառել, բարգավաճել, ապավինել, ծագել և այլն) լծորդի փոփոխությամբ (ե-ի) գործածվել են թե՛ ներգործական, թե՛ չեզոք սեռի իմաստներով: Մեռային զուգահեռությունից զատ սեռային անցումը հատուկ է նաև կրկնաստե բայերին, այսինքն՝ բայերի այն խմբին, որոնք բառարանային միավոր հանդիսացող բայական մի ընդհանուր բառույթի մեջ այս կամ այն չափով պարունակում են երկու սեռի՝ ներգործականի և չեզոքի հատկանիշներ:

**Ժամանել** բայը գրաբարում՝ նր\* է՝ *1. ստանալ, 2. ձեռք բերել, չք է՝ 1. հասնել, 2. կանխել, փութալ, առաջ տեղ հասնել, 3. կարողանալ, ձեռնահաս լինել, 4. հավասարվել*: Եւ վաղու լուեալ զբօթն՝ ոչ ինչ *ժամանեաց* հասանել յամբով կործոյն պատերազմի իրացն պատրաստութեան (Ագ.): Յարգեցեր զհողեղէն բնութիւնս մեր ուրախ եմ, զի *ժամանեցից* զկնի դատերն իմոյ (Ագ, 110): Եւ զունդն որ էր ի կողմանս Ատրպատականի՝ ոչ *ժամանեաց* ձեռն տալ ի միջոց աշխարհին (Եղ., 97): Չի երթալն իսկ ոչ *ժամանէ* ի տեղի պատուհասին իւրոյ (Եղ. 206): Ելցէ ի խորոց սրտի զգայութեանց սենեկիս՝ Վաղվաղակի *ժամանել* առ քեզ՝ Կամաւորական նուէր բանական զոհիս (ԳՆՄՈ. Ս. ա., 246):

Արդի հայերենում չեզոք սեռի բայ է՝ *1 հասնել, գալ մի տեղ, 2 (հնց) վրա հասնել, 3. (հնց) հասնել* մի բանի նշանակություններով: Բայը կորցրել է ոչ միայն ներգործական սեռի նշանակությունը, այլև չեզոք սեռի բազմաթիվ իմաստներ: Միջին հայերենում բայն արդեն կորցրել է գրաբարյան կրկնաստեռությունը և ունի հենց արդիհայերենյան սեռն ու նշանակությունը: «Ժամանել»<sup>3</sup>-չ. *ժամանել, վրա հասնել*: Ուշադրություն դարձնենք այն հանգամանքի վրա, որ *վրա հասնել* նշանակությունն արդիհայերենի համար արդեն հնացած է: Բայց չէ մենակ *ժամանէ* մահն, հանց որ դեռ կինն չլինի զիտեցել: Այլ թէ կանխեալ *ժամանէին*, յԱնգերծ տեղիսն փախչէին (ՆԸ, 60):

**Կարաւել** բայը գրաբարում՝ չք է նր է՝ *1 պարել. ուստոտել, թռչկոտել, 2 ծաղրի առարկա դարձնել, 3 վրա հարձակվել, 4 խոցել, լլկել* նշանակություններն ունի, իսկ արդի հայերենում չեզոք սեռի բայ է՝ *ուստոտել, պարել* նշանակությամբ: Նույնն է նաև

<sup>2</sup> Նոր հայկազյան բառարան (այսուհետև՝ ՆՀԲ): Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, Եր., 2000: Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 1987, 1992 (այսուհետև՝ ՄՀԲ): Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:

\* Ծանոթագրություն. նր - ներգործական սեռի բայ, չք - չեզոք սեռի բայ:

<sup>3</sup> Ռ. Ղ ա զ ա բ յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, ՄՀԲ, հ. Ա, Եր., 1987:

միջին հայերենում: Ծովածփեիին իր մահաբեր աչօքն, Կայթեր կաքաւէր թմրկահարիկ աղջիկն (ՀՂԲ, 206): Ուտիք վագեալ կաքաւէին (ՆՇ, 80):

Բարբառել բայը գրաբարում կրկնաստե է՝ 1. արտաբերել, խոսել, 2. ձայն տալ, կանչել իմաստներով: ...յաճախեին այսուհետև զառաւելագոյնս բարբառելով (Ագաթ., 355): Արդի հայերենում չեզոք սեռի բայ է խոսել, մի բան ասել նշանակությամբ: Միջին հայերենում էլ բայը գերազանցապես հանդես է գալիս հենց արդիհայերենյան սեռով և նշանակությամբ:

Ճամարտակել բայը գրաբարում նշանակել է (նր, չր) 1. մեծաբանել, ճոռոմաբանել, մեծ-մեծ խոսել, 2. առաջ նետվել, հայարտությամբ քայլել, իսկ արդի հայերենում չեզոք սեռի բայ է: Ինչպես վերևում նշել ենք, որոշ բայեր էլ գրաբարյան այս կամ այն սեռի նշանակությունը կորցրել են ոչ թե կրկնաստեության հետ, այլ այդ իմաստի համար արդի հայերենում ձեռք են բերել նոր բառաձև:

Յաջողել կրկնաստե բայը գրաբարում նր է՝ 1. ընդատաջել, հաջողեցնել, 2. ներգործել, ազդել: Եւ տեր յաջողեր նոցա նշանօք (Եղ., 19): Եւ եթէ միստվս յաջողեսցէ մեջ Աստուած, գնալ և լնուլ զկարօտութիւն մնացելոցն (Եղ., 242) և չր է՝ յաջողիմ- հաջողութիւն գտնել, առաջ գնալ իմաստներով ...սպա և յաթոնն Գաւթի մսոցի և զարքայութիւն նորա յաջողեսցէ (Ագաթ., 200): Պետք է նշել, որ միջին հայերենում բայն արդեն միաստե է, «աջողիլ»-չ. հաջողվել, իրագործվել, գլուխ գալ: Մէկի հալալն կորուսի, Մէկին հարամն յաջողի (Ֆր., 21):

Կանգնել բայը գրաբարում՝ նր է՝ կանգնեցնել, շտկել, չր է՝ կանգնել, կանգ առնել իմաստներով: ...հաւանեցուցին մեհեանս շինել և պատկերս կանգնել և երկիր պագանել (Ագաթ., 34): Եւ կանգնէր սեղանս կործանեալս (Բուգ., 116), Եւ կանգնեցան կացին ի վերայ ոտից իւրոց (Եղ., 408), Այսօր չեզոք սեռի բայ է, իսկ նր իմաստի համար ունի նոր բառաձև՝ «կանգնեցնել»:

Հետաքրքիր է բայի պատկերը միջին հայերենում, ուր խիստ ակնառու է սեռային անցումը. «կանկնել» չր (կանգնել)<sup>4</sup> «Նա տանուտէրն ի վեր ելնէ, շիշանի ձեռն ու կանկնէ (ՄԽՏ, 342), նր «կանգնեցնել», «Եւ հանեալ կանկնեաց գնայ և սկսաւ ջուր արկանել ի մտա (ՎԱԱ, 95), Առանձին գործածությամբ հանդիպում է «կանկնիլ»<sup>5</sup> չեզոք սեռի բայը՝ կանգնել, կանգ առնել նշանակությամբ: Երբ հեծնի մա պահ մի կանկնի (Բուգ., 271): Գործածության մեջ է մտել մաս «կանկնեցնել» կամ «կանկնեցուցանել» բայը՝ կանգնեցնել նշանակությամբ:

Սեռային փոխանցումների երկրորդ ուղղության (կրկնաստեությունից՝ ներգործական սեռի) դեպքում էլ չեզոք սեռի կորստի հետ կորցրել են իրենց արտահայտած այս կամ այն նշանակությունը (օրինակ կրթել բայի 1. ձգտել դեպի մի բանի, 2. ջանալ, մի բանի հետամտել: Թէպէտ և ժողովեցան կազմեցան գունդ եղեն, պատրաստութեամբ զիտ կրթիմ Վարազայ, ոչ ինչ կարացին հասանել (Բուգ., 84), 3. նեղ տեղից բռնությամբ անցնել. Ձի դիմ է մա ընդ տեղի ինչ նեղածերպ վայրագ, և ընդ կրթելն կեղևէ զապականեալ մորթն ծերացեալ մարմնոյն (Ագաթ., 303) նշանակությունները: Պետք է նշել, որ արդի հայերենը չի պահպանել մաս «կրթել» բայի ներգործական սեռի նշանակությունների մեծ մասը՝ պահպանելով միայն սովորեցնել, ուսուցանել իմաստները: Այս փոփոխությունն առկա է արդեն միջին հայերենում. Կրթէր ի պահս և ի յաղոթս Վարուք մաքրէր զգնացս երկրի. (ՀՂԲ, 205): Նույն ճանապարհով գործածությունից դուրս է եկել «կողոպտել» բայի չեզոք սեռի նշանակությունը՝ քայքայվել (դիակը), մերկանալ մսից. ...ոք հուպ չիշխէր երթալ, մինչև նեխեցան մարմինք նոցա և կողոպտեցան (Բուգ., 70): Նույն կերպ՝ «բանալ» բայի ծղել, «յառել» բայի՝ ձգվել, մեկնվել, «փարատել» բայի՝ հեռանալ, վերանալ նշանակությունները և այլն: Որոշ բայեր չեզոք սեռի արտահայտած նշանակության համար արդի հայերենում ձեռք են բերել նոր բանաձև. օրինակ «նեղել» բայը գրաբարում նր.՝ 1. չարչարել, տանջել, նեղել, 2. սեղմել, նեղ դարձնել 3. շարժել, հորդորել: Բազում անգամ ի բանդս և ի կապս տանջանօք նեղէր գնա (Ագաթ., 30), չր. 1. նեղություն կրել, նեղվել, 2. խոթվել, 3. նեղ դառնալ, փոքրանալ. Որպէս տարապարտուց նեղեցան ի հայրենի օրինացն յետս կալ

<sup>4</sup> Ռ.Ղ ա գ ա բ յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, ՄՀԲ, հ. Ա, էջ 382:

<sup>5</sup> Նույնը:

(Եղ., 100): Եւ մինչ դեռ յայսմ մտաց խորհրդի էր յանձն իւր և *նեղէր* ի միտս իւր (ն.տ., 153): նք Մի՛ արժանս և աւելի տարապայմանս հարկօք *նեղել*, քան զչափն (Բուզ., 120): Արդի հայերենում «նեղելը» նք է, իսկ չեզոք սեռի նշանակության համար ունի առանձին բառաձև՝ «նեղվել»: Քերականական իմաստափոխության ենթարկված ուրոշ բայեր ունեն մի առանձնահատկություն, արդի հայերենում միասեռ լինելով հանդերձ՝ միավորել են գրաբարում օգտագործելի երկու սեռերի իմաստներն էլ: Օրինակ՝ «պնդել» կրկնասեռ բայը գրաբարում նշանակել է նք է՝ *ամրացնել, քաջալերել, հաստատել, կապկպել*. *Պնդեա՛* իբրև այր զմէջս քո, և մի՛ համարիր այլազգ ինչ երևեալ քեզ (Ազաթ., 169): Խրատ եղին, *պնդեցին* և արարին զամենեսեսան զինուոր (Եղ., 69): չք է՝ *համատել, օգնել, վազել*. Նա ևս *պնդէր* և ասէր ... (Ազաթ., 100): Երևեալ տեսիլ հրեշտակի, զի մի իշխեսցեն ինչ *պնդել* յամատել վասն այնր (ն.տ., 403): Արդի հայերենում «պնդելը» նք է՝ բայց միևնույն ժամանակ նշանակում է թե՛ *հաստատել*, թե՛ *քաջալերել*, թե՛ *համատել*: Ակներև է, որ արդի հայերենը չի պահպանել գրաբարյան չեզոք սեռի *օգնել, վազել* իմաստները (վերջինս պահպանվել է «հետապնդել» բայի կազմության մեջ): Արդի հայերենում օգտագործվում է չք «պնդել» բայը՝ *պնդանալ* նշանակությամբ, բայց բացառապես՝ խոսակցական ոճում: Հետաքրքիր է բայի գործածությունը միջին հայերենում. «պնտել»<sup>6</sup> նք է՝ *պնդացնել, ամրացնել* Բեկմամբ բարձիցն և յօրածին զինս *պնտեա* յողո-յողո մարմին (ՆԸ, 197), չք է՝ *պնդանալ, ամրանալ* իմաստով: Ինչպես տեսնում ենք, միջին հայերենն արդեն կորցրել է գրաբարյան չեզոք սեռի իմաստները և, ինչպես արդի հայերենը, որպես առանձին չեզոք սեռի բայաձև, ունի «պնդանալ» ձևը. *պնդնալ*<sup>7</sup> - չ պնդանալ: Պետք է ենթադրել, որ հենց այդ բայաձևի գուգահեռ գործածությունը աստիճանաբար դուրս է մղել «պնդել» բայի միջինհայերենյան չեզոք սեռի գործածությունները, և արդի հայերենն ընդունել է «պընդել» նք և «պնդանալ» չեզոք սեռի բայերը: Նույնը պետք է ասել, «փարել» բայի մասին, որն այսօր նք լինելով հանդերձ՝ միավորել է գրաբարյան երկու սեռերի իմաստներն էլ (նք՝ *պատել, ամփոփել, չորս կողմը պատել, չք՝ փարվել, փաթաթվել, շրջվել*):

*Տազմապել* բայը միավորել է գրաբարյան երկու սեռերի իմաստները՝ այսօր դառնալով միասեռ (նք՝ *նեղը զցել, խուճասյի մատնել, չք՝ նեղվել, խուճասյի մատնրվել*): Պետք է կարևորել այն փաստը, որ կրկնասեռության հարցը գրաբարում միշտ չէ, որ կապված է եղել Ե-Ի գուգահեռ լծորդությունների գոյության, իսկ սեռային տեղաշարժերն էլ՝ այդ լծորդությունների միավորման հետ: Այս երևույթն ավելի լայն ընդգրկում ունի և, կարծում ենք, կապված է մի կարևոր ու ակնառու իրողության հետ: Լեզվի պատմական զարգացման նախորդ շրջանների հետ համեմատած՝ արդի հայերենը բառերի խոսքիմասային իմաստների և քերականական հատկանիշների տարբերումն հարցում ձգտում է միօրինակության և հստակության: Քերականական իմաստափոխությունների բնույթն էլ այդ է վկայում: Ինչպես նշել ենք, այսօր հայերենի բառապաշարում քիչ են թե՛ խոսքիմասային բազմիմաստություն ունեցող բառերը, թե՛ կրկնասեռ բայերը, իսկ սա պատահականություն կամ զուգահիշություն լինել չի կարող: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կրկնասեռությունը որպես քերականական իրողություն դրսևորվել է նաև այլ լծորդություններում, և այդ բայերն էլ անցել են սեռային անցումների միանգամայն նույն ուղին (օր. «յաւելում» բայը գրաբարում կրկնասեռ է. նք է՝ *ավելացնել, աճեցնել, առատացնել, հավաքել, ամփոփել, կրկնել* և չք է՝ *ավելանալ* իմաստներով, արդի հայերենում նք է՝ «հավելել»- *ավելացնել* նշանակությամբ: Բայը կրկնասեռ չէ արդեն միջին հայերենում: Առանձին գործածություն ունեն «յաւելանիլ», «յաւելնալ», «աւելնալ» և «յաւելցնել» կամ «յաւելցուցանել» բայաձևերը): Սեռային անցում են ապրել նաև Ա լծորդության ենթարկվող շատ բայեր:

*Մերկանալ* բայը գրաբարում հասարակ սեռի բայ է՝ 1. *վրայից հանել, մերկացնել, 2 բաց անել, հայտնել 3. հանվել, մերկ դառնալ, 4. գրկվել մի բանից, 5. բացվել, հայտնի դառնալ* իմաստներով: Իսկ նոքա վասն նորին պատճառանաց խաբեալք՝ ճաշակեցին, և անցեալ զպատուիրանան յաստուածակերպ փառացն *մերկացան* (Ազաթ., 146): Նորոգել հրամայէ, և *մերկանալ* զհին մարդկութիւնս ի ձեռն մկրտութեան

<sup>6</sup> Ռ. Ղ ա զ ա բ յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, ՄՀԲ, հ. Բ, Եր., 1992, էջ 283:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 282:

աւագանին (ն.տ., 223): Արդի հայերենում չք է՝ *1. շորերը հանել, 2. վրայի զենքերը հանել, 3. մի բանից զրկվել, պատյանից հանվել* հիմնական և մի քանի փոխաբերական նշանակություններով: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բայը միասեռ (չեզոք) բայ է արդեն միջին հայերենում՝ *մերկանալ, պատյանից հանվել* իմաստներով<sup>8</sup>: Սուր հրեշտակին անդ *մերկենաց* (ՆՄ, 114): Թե՛ միջին, թե՛ արդի հայերենում կա նաև «մերկացնել» բայը:

Բանալ բայը գրաբարում կրկնասեռ է՝ *1 բացել, 2 ուղարկել, 3 ծղել*: Փրկել զամենեսեան ըմբռնեալս ի սատանայէ... և զխուլն *բանալ*, և համերց տալ, խոսել (Ազաթ., 227): Բացեալ են աւանիկ դրունք երկնից, *բացան* և ջուրք (ն.տ., 378): Արդի հայերենում նր է՝ 28 նշանակություններով (կա նաև «բացվել» ձևը): Նույնն է միջին հայերենում, ուր «բանալ» *Բանամ* զշրթունս, բարբառիմ լեզուսու (ՀԳԲ, 22) նր-ի հետ գործածվում է նաև՝ Չարթնել է ու վեր ելել, Ու իջել դրոնակն է *բացել* (ՀՄՊՏ, 119) «բացուել»։ Վարդն աշխօշ ատեթ ունի, երբ արև տեսնու՝ *կու բացուի* (ն.տ., 223), ինչպես նաև «բացել» կրավորական ածանցի մախատիպն ունեցող ձևը. (Վարդն *բացաւ* մի՛ սիրեր... (ՀԳԲ, 50): Ակներև է, որ արդի հայերենում բայն ընդամենը ներկայանում է այստեղ արդեն մեծ տարածում ունեցող «վ» ածանցով՝ չեզոք սեռի իմաստով գործածվելիս: Նույնը պետք է ասել նաև Ա լծորդության պատկանող «հոգալ», «սգալ», «ողբալ» բայերի մասին, որոնք, սակայն, ի տարբերություն մախորդ բայերի, այսօր էլ են պահպանել գրաբարից եկող կրկնասեռությունը: Կրկնասեռությունից միասեռության անցած շատ բայեր դարերի ընթացքում կորցրել են ոչ միայն քերականական այդ հատկանիշը, այլև գրաբարյան բազմիմաստությունը: Պետք է նկատել, որ համակարգվել են նաև բառիմաստները. գրաբարում բազմիմաստ բառերը ունեն այնպիսի նշանակություններ, որոնք այսօրվա մեր լեզվամտածողությամբ համարյա կապ չունեն բառի բուն, հիմնական իմաստի հետ:

Թերևս, հայերենի պատմական զարգացման ընթացքում վերոհիշյալ իմաստները հենց հիմնական նշանակության հետ ունեցած չափազանց թույլ կապի պատճառով են աստիճանաբար մթազնել՝ ժամանակի ընթացքում լրիվ դուրս գալով գործածությունից: Երբեմն գրաբարյան բազմաթիվ նշանակություններից արդի հայերենը պահպանում է միայն մեկը, այն էլ՝ մասնակի իմաստափոխված: Օրինակ՝ «վճարել» կրկնասեռ բայը գրաբարում նշանակել է՝ *1. ավարտել, 2. վերջ տալ, վճռել, սահմանել 3. զլուխ բերել, իրագործել, կատարել, 4. բավարարել, հոգալ, 5. վախճանվել, 6. հատուցել, հատուցում ընդունել, 7. ազատել, 8. հեռանալ, բաժանվել*: Ուխտեմ և ոչ *վճարեմ* (ԳՆՄՈ, 196) երկիւղի տարեալ նոցա զդարմանսն և զպիտոյս նոցա *վճարեսցեսն* (Բուգ., 120): Եւ լուծեալ զարեանն *վճարեցաւ* (ն.տ., 156): Արդի հայերենում բայը կորցրել է գրաբարյան բազմիմաստությունը և ունի մեկ իմաստ՝ *դրամով հատուցել, վարձատրել, փոխհատուցել*: Պետք է նշել, որ միջին հայերենում բայի գրաբարյան նշանակությունները դեռևս շարունակում են գործածվել. օր.՝ Չոր աստանօր եմ յանգելոց, զԳիրս բանից *վրճարեղոց*, Ի փառս հօր արարելոց (ՆՇ, 104): Չի գործ ծածուկ մեքենային փոյթ և արագ *վրճարեցին* (ն.տ., 67): Բայց արդի հայերենյան նշանակությունը միջին հայերենում արդեն հանդիպում է և, թերևս, աստիճանաբար ավելի ու ավելի գործածական դառնալով՝ դուրս է մղում գրաբարյան իմաստները: Եւ երբ *վճառէ*, յայնժամ ազատե զիր տունն ի Յակոբէն (ԿԱ, 227): Նույնը պետք է ասել «հաստատել», «վառել» բայերի մասին: Ինչպես վերևում նշել ենք, շատ քիչ բայեր արդի հայերենում պահպանել են գրաբարից եկող կրկնասեռությունը: Դրանցից մի քանիսը կրկնասեռության հետ պահպանել են նաև գրաբարյան նշանակությունները (հոգալ, սգալ, ողբալ, վաստակել, սպասավորել, զերծանել (այսօր՝ զերծել) խոկալ, խոտորել և այլն): Կրկնեմք, որ նշված Ա լծորդության բայերը գրաբարում, ինչպես և այսօր, կրկնասեռ են, իսկ մյուսները չեզոք նշանակության իմաստն արտահայտել են լծորդի փոփոխությամբ: Այնուհանդերձ, այսօր կանգնած են քերականական մույն սանդղակի վրա, ինչն էլ մեկ անգամ ևս հաստատում է այն փաստը, որ լեզվական կանոնը, որին ենթարկվել են այս բայերը, ավելին է, քան լծորդությունների պատմական միավորումը: Կրկնասեռությունը արդի հայերենում պահպանած որոշ բայեր էլ

<sup>8</sup> Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, ՄՀԲ, հ. Բ, էջ 127:

գրաբարյան իմաստները ենթարկել են մասնակի փոփոխության. օրինակ «հաճախել» բայը գրաբարում ունի սեռային զուգահեռություն, ընդ որում, չեզոք սեռի նշանակությունն արտահայտվել է ինչպես լծորդի փոփոխությամբ, այնպես էլ՝ առանց դրա: Այսօր էլ, ինչպես նշեցինք, բայը կրկնասեռ է, բայց ունի հետևյալ իմաստները. նր՝ *հաճախակի դարձնել, շատացնել, չր՝ հաճախակի գնալ, շարունակակար այցելել*: Վերջին նշանակության գործածությունը արդեն միջին հայերենում նկատվում է: Որ միշտ առ իս *յաճախէին*, զԱյն, որ բարեաց մասունք էին (ՆԸ 68):

Գրաբարում կրկնասեռ է նաև «կարդալ» բայը.՝ *1. ծայնել, աղաղակել, կանչել, կոչել, օգնություն կանչել*. Եւ մեք զանուն Տեառն *կարդասցուք...* (Ազաթ., 101), ...յարգանդէ *կարդաց* զիս Տէր, և յորովայնէ մօր իմոյ կոչեաց զանուն իմ (ն.տ., 202), Եղիցի ամենայն որ *կարդացէ* զանուն Տեառն՝ կեցցէ (Ազաթ., 337), *2. մեծարել, 3. անվանել, անուն դնել* (Արդ ի ժամանակին յայնմիկ մի ոմն արդար գտեալ յարդարացեալ տոհմէն, որում Նոյ անուն *կարդացեալ*, (Ազաթ., 154)) *4. բարձրաձայն կարդալ, 5. կարդալ* (Զայս ասելով կարոզ *կարդայր* ի մեծի կարաւանին (Եղ., 22)): «Կարդալ» բայը արդի հայերենում էլ է կրկնասեռ, ուղղակի ապրել է իմաստների տեղաշարժ. այն այսօր չունի գրաբարյան առաջնային իմաստները. նշանակում է *ընթերցել, արտասանել, վերծանել, դասախոսել, գրուցել*: Ինչպես տեսնում ենք, իմաստների տեղաշարժն ակնհայտ է: Գրաբարում ավելի շատ գործածություն ունեցող իմաստները ժամանակի ընթացքում բայը կորցրել է, իսկ մյուս նշանակությունները անցել են արդի հայերենին՝ որպես «կարդալ» բայի հիմնական իմաստներ: Իհարկե, դրանց ավելացել են նոր, բայց բուն նշանակությանը մոտ իմաստներ, այդ թվում նաև՝ փոխարեբական (*արտաքին նշաններից իմանալ, երգել, սովորել* և այլն): Վերոհիշյալ իրողության սկզբնավորումը ավելի քան ակնհայտ է միջին հայերենում:

*Կարդել* նր է՝ *կարդալ, ընթերցել* (Ով *կարդացէք*, յադօթս յիշեցէք (ԳՂՎԳ, 37) Գոշավանքի վիմագիր արձանագրություններից մեկում կարդում ենք, «Ով *կարդայք*, Ասագին երկար կենդանութիւն *խնդրեցէք*, (Դիվան, էջ 70): Նա երբ կարէ հանց բան սանել, Ով որ *կարդայ*, օրինէ զնա: Իհարկե, գրաբարյան նշանակությունները միջին հայերենում շարունակում են հանդիպել. Եւ վայ *կարդան* իւրեան անձին յատկական, (ՀՄՊՏ, 22): Այս իրողությունը միանգամայն բնական և օրինաչափ է, քանզի բայի իմաստի փոփոխությունը, ինչպես նաև իմաստափոխության ցանկացած տեսակ դարերի արդյունք է՝ կապված բառօգտագործման հատկապես խոսքային միջավայրի հետ: Հարցի պատմական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս նշտելու այդ գործընթացի ուղին: Ի դեպ, արդի հայերենյան ժողովրդական խոսքում կիրառելի *սովորել, ուսանել* նշանակությունները դարձյալ գալիս են միջին հայերենից. Զամենն ի *կարդալ* կուտան՝ թէ աղջիկ է և թէ տղայ:

Սեռային փոխանցումների մեջ նկատվում է մի հետաքրքիր իրողություն ևս. փոքրը թվով բայեր, որոնք գրաբարում միասեռ են, արդի հայերենում դարձել են կրկնասեռ: Մինչ այժմ քննարկված բայերում կատարված իմաստափոխությունից նշվածը տարբերվում է նրանով, որ այս բայերն այսօր արտահայտում են միանգամայն այլ իմաստ: Ի տարբերություն գրաբարում ունեցած նշանակության՝ այսօր ցույց են տալիս բոլորովին այլ բնույթի գործողություն, որը կարող է պահանջել թե՛ ուղիղ, թե՛ անուղղակի խնդիր լրացումներ. («խաղալ», «սպրել» և այլ բայեր):

Սեռային անցումների մասին խոսելիս պետք է նշել մի փաստ ևս. շատ բայեր ենթարկվել են այս իրողությանը՝ չլինելով կրկնասեռ: Օրինակ «հաւանել» բայը գրաբարում չր է՝ *1. հնազանդվել, 2. համախոհ լինել, 3. ընդունել, 4. իր ճաշակին համապատասխան գտնել*: Արդի հայերենում բայը ներգործական սեռի բայ է. կորցրել է գրաբարյան առաջնային նշանակությունները՝ պահպանելով *իր ճաշակին համապատասխան համարել, ընդունել, համաձայնել* իմաստները (ընդ որում, առաջին նշանակության գործածությունը անահամեմատ բարձր է): Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես սեռի, այնպես էլ իմաստի փոփոխությունը կատարվել է արդեն միջին հայերենում հավնե՞նալ<sup>9</sup>. նր է՝ *հավանել, համաձայնել, ընդունել* իմաստներով:

<sup>9</sup> Ռ.Ղ ա գ ա բ յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, ՄՀԲ, հ. Բ, էջ 22:

Նահանջել բայը գրաբարում՝ նր է, իսկ արդի հայերենում՝ չր (չունի գրաբարյան առաջ քաշել նշանակությունը), «դաւել» բայը գրաբարում՝ նր, արդի հայերենում՝ չր և այլն): Ինչպես նշել ենք, լեզվի պատմական զարգացման տարբեր շրջաններում կատարված բառիմաստի փոփոխությունների բնույթը վկայում է, որ արդի հայերենը կորցրել է բառերի գրաբարյան շատ անգամ առաջնային նշանակությունները. օրինակ. «գոռալ» բայը գրաբարում նշանակում է *կռվել, կռվի տենչով բռնվել, բարձրաձայն գոչել, գոռալ*: Դժվար չէ նկատել, որ արդի հայերենում կատարվել է իմաստների տեղաշարժ. գրաբարի առաջնային նշանակությունը վերացել է, երկրորդը դարձել է հիմնական և միակ: Այդպես էլ արդի հայերենը չի պահպանել «վատնել» բայի գրաբարյան *մեռնել*, «խոստանալ» բայի *խոստովանել*, «խիզախել» բայի *պարծենալ, մեծ-մեծ խոսել*, «մաշել» բայի *ուտել*, «կարծել» բայի *կասկածել*, «արբել» բայի *լավ թըրջվել* նշանակությունները և այլն:

#### Համառոտագրություններ

1. Ազաթ. - Ազաթանգեղայ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914:
2. Եղ. - Եղիշէի Պատմութիւն Վարդանանց, 1912, Թիֆլիս :
3. Բուգ.- Փաստասի Բիզանդացոյ Պատմութիւն հայոց, Եր., 1989:
4. ԳՆՍՈ - Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Եր., 1985:
5. Ֆր. - Ֆրիկ, բանաստեղծություններ, Եր., 1941:
6. ՆՇ - Ներսես Շնորհալի, Յարագս երկնի ու զարդոց նորա, Հանելուկներ, Ողբ Եղեսիայ, Եր., 1968:
7. ՀԳԶ - Հայ դասական քնարերգություն, Եր., 1968 (2 հատոր):
8. ՀՄՊՏ - Հայ միջնադարյան պանդխտության տաղեր (XV - XVIII դար) Եր., 1979:
9. ԴՂՎ - Դիվան հայ վիմագրության, Պրակ 4, Եր., 1973:
10. ԿԱ-Կամենեց-Պողոսի քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.), Եր., 1963:

## ЗАЛОГОВЫЕ ПЕРЕХОДЫ ГЛАГОЛОВ В ИСТОРИИ АРМЯНСКОГО ЯЗЫКА

\_\_\_\_ Резюме \_\_\_\_

\_\_\_\_ Г. Закян \_\_\_\_

В статье говорится о залоговых переходах глаголов в историческом развитии армянского языка. Были изучены все три стадии литературного языка. Как показывают факты, армянский язык в своем развитии стремится к упрощению, стараясь избавиться от грамматических изменений, присущих древнеармянскому (грабару). В категории глагола это показано на примере перехода двухзалоговой системы в одну.



ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ՀԱՄԱՐԱԿ ԱՆՈՒՆՆԵՐԻՑ  
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻՆ

Հայերենի պատմական զարգացման ընթացքում բազմաթիվ հասարակ անուններ փոխանցվել են հատուկ տեսակին՝ գոյական անվան մեջ տարբերակելով անձնանունների և տեղանունների շերտեր: Անձնանուններին են փոխանցվել մի շարք բուսանուններ, կենդանիների և թռչունների անուններ, բնության երևույթների, թանկարժեք քարերի, երկնային մարմինների անվանումներ և այլն: Իհարկե, այսօր սրանց միջև իմաստային կապ չկա, ուստի հատուկ անունները զուտ պայմանական անվանումներ են, և *Վրեժ, Խաչատուր, Խնկիկ, Շողեր, Մայիս* և այլ հատուկ անուններ միայն ծագումով են առնչվում հասարակ անուններին, ուստի և իմաստային եզրեր չունեն:

Ինչպես ասացինք, հատուկ անուններին են փոխանցվել մի շարք հասարակ անուններ, որոնք փորձել ենք խմբավորել ըստ իմաստային առնչակցության: Այնուհետև յուրաքանչյուր խմբում անձնանունները դասակարգել ենք ըստ անվանական սեռի (արական և իգական) և ըստ կազմության (պարզ, ածանցավոր և բաղադրյալ): Կազմությամբ պարզ անձնանուններում առանձնացրել ենք այնպիսիք, որոնք փոխանցվել են հասարակ գոյականի հոգնակի թվից՝ *-եր, -ք* հոգնակիակերտներով:

Այստեղ չենք խոսում բուսանուններից փոխանցված անձնանունների մասին, քանի որ դրանց անդրադարձել ենք առանձին հոդվածով<sup>1</sup>: Միևնույն ժամանակ յուրաքանչյուր խմբում համապատասխանաբար ներկայացրել ենք անձնանուններ, որոնք հայերենը փոխառել է այլ լեզուներից (պարսկերեն, արաբերեն, հունարեն, լատիներեն, եբրայերեն, ռուսերեն և այլն): Անձնանունը հասկացություն է, որը չի սահմանափակվում միայն տվյալ լեզվի հասարակ անուններից կատարվող փոխանցումներով: Ի տարբերություն այլ լեզուներից կատարվող փոխառությունների, հասարակ անուն > հատուկ անուն փոխանցումը տեղի է ունենում միայն տվյալ լեզվի սահմաններում: Այսինքն, հայերենը որևէ այլ լեզվից փոխառել է ոչ թե հասարակ անունը, ապա փոխանցել է հատուկին, այլ փոխառել է միանգամից հատուկ անունը՝ հաճախ չանդրադառնալով անգամ նրա նշանակությանը: Օրինակ՝ ոչ մի ծնող, հավանաբար, իր զավակին չէր անվանակոչի *Հակոբ*, եթե գիտենար, որ այն եբրայերեն նշանակում է «խաբեբա» (Jaqob), կամ դատերը չէր անվանի *Շաքե*, քանի որ այն թուրքերեն նշանակում է «դժբախտ» (şaki): Ուրեմն հայերենն այլ լեզուներից փոխառել է անձնանուններ արդեն իսկ մթազնաձև նշանակությամբ, և ամեն անգամ, պարզելու համար տվյալ անձնանվան իմաստը, լեզուն դիմում է դրա ստուգաբանությանը:

Այժմ անդրադառնանք անձնանուններին փոխանցված հասարակ անունների իմաստային խմբերին.

**1. Կենդանիների և թռչունների անուններից հատուկ անուններին փոխանցված բառեր:** Այս խմբում ունենք անձնանուններ, որոնք հայերենին են փոխանցվել ազգակից և ոչ ազգակից մի շարք լեզուներից: Ինչպես՝ *Վարսագրատ* – իրանական varaz՝ «վարազ» և պահլավերեն dat «պարզ» բառերից, նշանակում է «վարազի պարզ», *Շահեն* – պահլավերեն šahēn «բազե» բառն է, *Վշնասպ* – պահլավերեն višnasp՝ «հովատակ» բառն է, *Գուրգեն* – պահլավերեն gurgēn՝ «գայլ» բառն է, *Արշակ* – կազմված է պարսկերեն arsa՝ «արջ» և aka փաղաքշական-փոքրացուցիչ բաղադրիչներից և նշանակում է «արջուկ», *Վազգեն* – կազմված է զենդերեն vazg բառից, որ նշանակում է «գորտ» և իրանական en փաղաքշական վերջնաբաղադրիչից, նշանակում է «գորտիկ», *Համաս* – արաբերեն hamam նշանակում է «վայրի աղավնի», *Հովնան* – (Հունան) – եբրայերեն Jana «աղավնի» բառն է, *Լևոն* – հունարեն lewy՝ «առյուծ» բառն է, *Ալան* – թուրքերեն aslan է՝ «առյուծ» նշանակությամբ և այլն:

<sup>1</sup> Ռ. Ջ ու լ Ֆ ա յ ա ն, Փոխանցումներ բուսանուններից անձնանուններին, «Հայոց լեզու և գրականություն», 1, Եր., 2003:

Բուն հայերեն կենդանիների և թռչունների անուններից փոխանցված անձնանունները բաժանել ենք երկու խմբի՝ *ա)* կենդանիների անուններից անձնանուններին փոխանցված հասարակ անուններ և *բ)* թռչունների անուններից անձնանուններին փոխանցված հասարակ անուններ: Իրենց հերթին այս երկու խմբերում առանձնացրել ենք արական անունների և իգական անունների ենթախմբեր:

Կենդանիների անուններից արական անձնանուններին են փոխանցվել հետևյալ հասարակ անունները. *Եզնիկ, Յիկ, Կորյուն, Գառնիկ, Ընձակ* («վագրիկ»): Այս խմբերում ենք դասել նաև *Երան, Չագիկ և Վարուժան* («արու թռչուն») անձնանունները, որոնք թեև որևէ կոնկրետ կենդանի չեն նշում, բայց կենդանական աշխարհին վերաբերող ավելի ընդհանուր անվանումներ են: Կենդանիների անուններից իգական անձնանուններին են փոխանցվել *Եղնիկ և Այծեննիկ* հասարակ գոյականները, ընդ որում, *Այծեննիկը* հայերեն *այծյամ* գոյականի հնչյունափոխված տարբերակն է և նշանակում է «եղնիկ»: Ինչպես տեսնում ենք՝ կենդանիների անուններից ավելի շատ բառեր են փոխանցվել արական անձնանուններին, քան իգական (արական 7 անվան դիմաց ունենք իգական 2-ը): Պատկերը փոխվում է, երբ անդրադառնում ենք թռչուններից կատարված փոխանցումներին: Թռչնանուններից արական անձնանուններին են փոխանցվել *բազե և արծիվ* հասարակ գոյականները: Թռչնանուններից իգական անձնանուններին են փոխանցվել *Սիրամարգ, Կաքավ, Լորիկ, Աղավնի, Արծվիկ, Արտույտ, Դոխիկ, Թռչնակ* գոյականները: Այս ենթախմբում գերակշռում են իգական անձնանունները (9 իգական անվան դիմաց՝ երկու արական): Նշենք, որ *Կաքավը և Լորիկը* հայերենում և՛ իգական և՛ արական անձնանուն են:

Ըստ կազմության այս խմբի անձնանունները լինում են պարզ և ածանցավոր:

Բաղադրյալ կազմություններ չեն հանդիպում: Կազմությամբ պարզ են *Կաքավ, Կորյուն, Բազե, Աղավնի, Արտույտ, Երան, Վարուժան* անձնանունները: Ածանցավոր անձնանունները կազմվում են *կենդանու կամ թռչնի անվանում + -իկ, -ակ փաղաքշական ածանց կաղապարով*: Ընդ որում, վերջածանցն ավելանում է ինչպես անհնչյունափոխ, այնպես էլ հնչյունափոխված հիմքերին: Անհնչյունափոխ հիմքերով են կազմված *Լորիկ, Չագիկ, Դոխիկ, Եզնիկ, Գառնիկ* անձնանունները: Սրանցից *Եզնիկը և Գառնիկը* կազմվել են գրաբարյան -ն վերջնաբաղաձայնի վերականգնումով: *Դոխիկ* իգական անձնանվան արմատը *դոխ-*ն է, որը հայերեն բարբառներում նշանակում է «աղավնի»: Հնչյունափոխված հիմքերով են կազմված *Ընձակ* - ինձ+ ակ (ի- ը հնչյունափոխություն), *Թռչնակ* - թռչուն + ակ (ու-ի սղում), *Արծվիկ* - արծիվ -իկ (ի-ի սղում), *Այծեննիկ* - Այծյամ + իկ (յա - ե հնչյունափոխություն) անձնանունները:

**2. Բնության և նրա երևույթների անվանումներից հատուկ անուններին փոխանցված բառերն** ինչպես արական, այնպես էլ իգական անուններ են: Արական են *Յուրակ, Հովիկ, Սարիկ, Գետիկ, Լեռնիկ, Ծովակ, Ծանթ, Փայլակ* անձնանունները: Իգական են *Յուրիկ, Ծողեր, Ծողիկ, Ծաղոսիկ, Արշալույս, Վերջնալույս, Լեռնուհի, Ծիածան, Հովանուշ, Յուրինե, Ծաղիկ, Չյունիկ* անձնանունները: Փոխառյալ անուններն այս խմբում մեծ թիվ չեն կազմում, դրանք են՝ *Էթերի*, որ վրացերեն *etheri* «եթեր» բառն է, *Մարինե*, որ լատիներեն *marina* «ծովի դուստր» իմաստն ունի, *Մարիցա*, որ լատիներեն նշանակում է «ծով»:

Բնության և նրա երևույթների անվանումներից հատուկ անուններին փոխանցված հայերեն բառերն ըստ կազմության լինում են (պարզ), ածանցավոր, և բաղադրյալ: Կազմությամբ պարզ են *Ծանթ, Ծիածան, Ծողեր* անունները: Սրանցից *Ծողեր* իգական անձնանունը ձևավորվել է «շող» հասարակ գոյականի հոգնակի թվից՝ (-եր հոգնակիակերտով): *Կազմությամբ* ածանցավոր անձնանունները կազմված են *բնության երևույթ /առարկա + -իկ, -ակ, -ուհի փոքրացուցիչ-փաղաքշական վերջածանց* կաղապարով, ինչպես՝ *-իկ -Մարիկ, Գետիկ, Լեռնիկ, Հովիկ, Յուրիկ, Ծողիկ, Ծաղիկ, Չյունիկ, -ակ -Փայլակ, Յուրակ, Ծովակ, -ուհի* վերջածանցով է կազմված *Լեռնուհի* իգական անունը: *Յուրինե* անձնանունը կազմված է «ցու(ք)» հասարակ գոյականով և -ինե իգական վերջնաբաղադրիչով:

Բաղադրյալ անձնանունները կազմված են *գոյական + ա հոդակապ + գոյական կամ կամ բայ* կաղապարով, ինչպես՝ *Արշալույս, Վերջնալույս, Ծողակաթ, Հովանուշ*:

*Ծովինար* իգական անձնանունը կազմված է հայերեն *ծով* և պարսկերեն *nar* «հուր, կրակ» բառերով և նշանակում է «կրակի ծով»:

3. *Երկնային մարմինների անուններից անձնանուններին փոխանցված հասարակ անուններ*. Երկնային մարմինների անվանումներից հայկական անձնանուններին են փոխանցվել երբայերեն, պարսկերեն, հունարեն, լատիներեն անուններ, օր.՝ *Մամսոն* - երբայերեն *šimšon* «արեգակ» բառն է, *Միհրան*- պահլավերեն *mihr*՝ «արեգակ» բառն է, *Խորեն* - կազմված է պարսկերեն *xōr* «արև» և *en* փաղաքշական վերջածանցով և նշանակում է «արեգակ», *Ստելլա* - լատիներեն *Stella* «աստղ» բառից, *Մինաս* - հունարեն *menas* «զուսին» բառից և այլն:

*Բուն հայերեն հասարակ անուն > հատուկ անուն* փոխանցման հետևանքով են առաջացել *Արև, Արեգ, Արևիկ, Արևհատ, Արեգնազ, Արփենիկ, Արփինե, Միրարփի, Հրարփի, Հայարփի, Աստղիկ, Լուսին, Լուսինե* անձնանունները: Մրանցից կազմությամբ պարզ են *Արեգ և Արև* անունները, ընդ որում, այս խմբի միակ արական անունն *Արեգն* է, իսկ մնացյալն իգական անձնանուններ են: Ածանցավոր անձնանունները կազմված են *երկնային մարմնի անվանում +* -իկ փաղաքշական վերջածանցով կամ -ինե, -ենիկ, -ե իգական վերջնաբաղադրիչներով: Այսպես՝ -իկ վերջածանցով են կազմված *Արևիկ, Աստղիկ* անձնանունները, իսկ -ինե, -ենիկ, -ե վերջնաբաղադրիչով՝ *Արփենիկ, Արփինե, Լուսինե* անձնանունները:

Բաղադրյալ կազմություններում առկա է *երկնային մարմնի նշող գոյ. + հասարակ գոյ.* կաղապարը: Այս դեպքում երկնային մարմին նշող գոյականը կարող է դրվել ինչպես բարդության սկզբում (առաջնաբաղադրիչ), այնպես էլ վերջում (վերջնաբաղադրիչ): Առաջնաբաղադրիչ կազմություններ են՝ *Արևհատ* – կազմված «արև» և «հատիկ», *Արեգնազ* - կազմված «արեգ(ակ)» և «նազ(անք)» գոյականներով: Վերջնաբաղադրիչ կազմություններ են՝ *Հրարփի* - կազմված «հուր» և «արփի» գոյականներով և նշանակում է «հրե արև», *Միրարփի* - կազմված «սեր» (ի< ե հնչյունափոխությամբ) և «արփի» գոյականներով և նշանակում է «սիրո արև», *Հայարփի* – կազմված «հայ» և «արփի» գոյականներով և նշանակում է «հայի արև»:

4. *Թանկարժեք քարերի, մետաղների անուններից անձնանուններին փոխանցված բառեր*. Հայերենն այլ լեզուներից փոխառել է մի խումբ անձնանուններ, որոնք առաջացել են ակնանունների անվանումներից: Օրինակ՝ *Փիրուզ*, պարսկերեն *piruz*՝ «երկնագույն անզին քար», *Ալմաստ*, թուրքերեն *almazt*՝ «ադամանդ», *Յադուք*, թուրքերեն *yakhut*՝ «հակինթ», «անզին քար», *Չավահիր*, արաբերեն *jāvahir*՝ «զոհար», «թանկագին քար», *Չարուհի, Չարինե* անձնանունները կազմված են պարսկերեն *zar*՝ «ոսկի» և հայերեն -ուհի, -ինե իգական վերջածանցներով: Ինչպես փոխառյալ, այնպես էլ հայկական ծագում ունեցող բոլոր այն անձնանունները, որոնք փոխանցվել են թանկարժեք քարերի և մետաղների անուններից, միայն իգական են՝ *Մարգարիտ, Գոհար, Մաթենիկ, Մաթինե, Ալներ, Ոսկի, Ոսկեհատ, Ոսկեծամ, Շաղոսկի*:

Ինչպես տեսնում ենք, իգական անձնանվանն են փոխանցվել ոչ միայն թանկարժեք քարի կոնկրետ անվանումներ (*Մարգարիտ, Մաթենիկ*), այլև՝ հասարակ գոյականներ, որոնք անվանում են թանկարժեք քարը ընդհանուր կերպով (*Գոհար, Ալներ*): Կազմությամբ պարզ են *Մարգարիտ, Գոհար և Ոսկի* անձնանունները: *Ալներ* անունը կազմված է «ակ(ն)» հասարակ գոյականով և -եր հոգնակիակերտով: Կազմությամբ ածանցավոր են *Մաթիկ, Մաթենիկ և Մաթինե* ձևերը, ուր առկա է «Մաթ» արմատը և -իկ փոքրացուցիչ-փաղաքշական վերջածանցը, կամ -ինե, -ենիկ իգական վերջնաբաղադրիչները: Բաղադրյալ անձնանունները կազմված են «ոսկի» և որևէ այլ հասարակ գոյականով, որն ավելանում է «ոսկի»- բառին սկզբից կամ վերջից: Երբ «ոսկի» գոյականն առաջաբաղադրիչ է, առկա է ի + ա>ե հնչյունափոխությունը, ինչպես՝ *Ոսկեհատ, Ոսկեծամ*: Վերջնաբաղադրիչ կազմության դեպքում հնչյունափոխություն չի դիտվում, ինչպես *Շաղոսկի* անվան մեջ:

5. *Վերացական գոյականներից փոխանցված անձնանուններ*. Այս խմբում ևս առկա են փոխառություններ պարսկերենից, հունարենից, արաբերենից, լատիներենից, ռուսերենից: Ինչպես *Արզուման* - պարսկերեն *arzamaand* «կարոտ», *Մահակ* կամ *Իսահակ* - երբայերեն *isxaq* «ուրախություն», *Սոֆիա* - հունարեն *Sofia* «իմաստություն», *Եպրաքսիա* - հունարեն *Euproxia* «հաջողություն», *Ազասյի* - հունարեն *agari* «սեր», *Թե-*

*րեզա* - հունարեն *teresis* «պաշտպանություն», *Հովհաննես* - հունարեն *Ioannes* «հնազանդություն», *Մուրադ* - արաբերեն *murad* «փափագ, ցանկություն», *Դովլաթ* - արաբերեն *dovlat* «հարստություն», *Վերա* - ռուսերեն *вѣра* «հավատ», *Նադեժդա* - ռուսերեն *надежда* «հույս», *Լյուրա*, *Լյուրով* - ռուսերեն *люба* «սեր»:

Հայկական ծագում ունեցող այն անձնանունները, որ ներկայացնում ենք ստորև, խմբավորել ենք ըստ արական և իգական անունների: Արական են *Ավետիս* (*Ավետիք*), *Գուժ*, *Վրեժ*, *Սերո*, *Մխիթար*, *Հուսիկ*, *Չոնիկ*, *Միրակ* անձնանունները: Իգական են *Օվսաննա*, *Շնորհիկ*, *Երագիկ*, *Բերկրուհի*, *Վշտուհի*, *Միրանուշ* անձնանունները:

Կազմությամբ պարզ են *Գուժ*, *Վրեժ*, *Սերո*, *Մխիթար*, *Օվսաննա* անձնանունները: *Ավետիս* արական անձնանունն ունի երկձևություն՝ գործածվում է նաև *Ավետիք* ձևով: *Մխիթար* արական անունը առաջացել է «մխիթարություն» վերացական գոյականի -ություն վերջածանցի կրճատմամբ: *Օվսաննա* (*Օսաննա*), *Օսան* իգական անձնանունը ծագել է եբրայերեն «ովսաննա» «օրհներգություն» գոյականից: *Սերո* անվան հիմքում «սեր» հասարակ գոյականն է՝ ը վերջնաձայնավորի հավելումով: Ածանցավոր կազմություններն ունեն *վերացական գոյական + -իկ, -ուհի վերջածանց* կաղապարը: Ինչպես՝ *Երագիկ*, *Հուսիկ*, *Չոնիկ*, *Շնորհիկ*, *Շնորուհի*, *Բերկրուհի*, *Վշտուհի*: *Բերկրուհի* իգական անձնանունը կազմված է «բերկրանք» գոյականի -անք վերջածանցի անկումով և -ուհի իգական վերջածանցի հավելումով: *Վշտուհի* անձնանվան մեջ առկա է ի<ը հնչյունափոխությունը: *Միրանուշ* իգական անձնանունը կազմված է «սեր» գոյականով (ե>ի հնչյունափոխությամբ) և -անու(յ)շ իգական վերջածանցով: Հասարակ անուններից անձնանուններին փոխանցված բառերի այս խմբում բաղադրյալ կազմություններ չկան:

6. *Պատվանուններից, պաշտոնանուններից, զինվորական կոչումների անվանումներից անձնանուններին* կատարված փոխանցումներում քիչ չեն փոխառյալ անունները: Օրինակ՝ *Ռեգինա* - լատիներեն *Regina* «թագուհի», *Վասիլ* - հունարեն *Vasil* «թագավոր», *Բասիլեո* - հունարեն *Basileus* «թագավոր», *Զայանթար* - պարսկերեն *kalantar* «տանուտեր», *Շամիր* - կազմված է պարսկերեն *šah* «թագավոր» և արաբերեն *amir* «իշխան» բառերից, *Միրաթ* - կազմված է պարսկերեն *mir* «իշխան» և *a'k* փոքրացուցիչ փաղաքշական ածանցով և նշանակում է «իշխանիկ», *Մարգարան* - պահլավերեն *marzpan* «մարգարան, կուսակալ», *Շապուհ* - պահլավերեն *šahpuhr* «արքայորդի», *Սելիք* - արաբերեն *melik* «արքա», *Խաթուն* - թուրքերեն *khatun* «թագուհի»:

Այս խմբին պատկանող հայերեն հասարակ անուններից անձնանուններին են փոխանցվել ոչ մեծ թվով բառեր: Դրանցից արական սեռի են՝ *Իշխան*, *Ոստանիկ*, *Սեպուհ*, *Հայրապետ*, *Չորապետ*, *Տոնապետ*, *Չորավար* անձնանունները: Իգական են՝ *Թագուհի* և *Դշխ* կամ *Դշխուհի* անձնանունները: Կազմությամբ պարզ են *Դշխ*, *Իշխան*, *Սեպուհ* անունները: Ածանցավոր անձնանունները կազմված են *հասարակ անուն + -իկ փոքրացուցիչ-փաղաքշական* և *-ուհի իգական վերջածանց* կաղապարով: Ինչպես՝ *Թագուհի*, *Դշխուհի*, *Ոստանիկ*: Բաղադրյալ անձնանուններում առկա է *հասարակ գոյական + ա հոդակապ + պետ, վար բաղադրիչ* կազմությունը: Ինչպես՝ *Հայրապետ*, *Տոնապետ*, *Չորապետ*, *Չորավար*:

7. *Անձնանուններ, որոնք փոխանցվել են ազգակցական կապեր նշող գոյականից*. Այս խմբում փոխառյալ են *Բարիկ* և *Բարկեն* արական անունները, որ կազմված են պարսկերեն *bab* «հայր» բառով և *en* փաղաքշական վերջածանցով: Ազգակցական կապեր նշող հայերեն բառերից անձնանուններին փոխանցված գոյականները կազմությամբ ածանցավոր են և կազմվում են -իկ, -ուհի վերջածանցներով: Արական են *Հայրիկ*, *Թոռնիկ*, *Պապիկ*, *Չարնիկ* անունները: Իգական են *Դստրիկ*, *Չարնուհի*, *Մամիկ* անունները: Վերջինս կազմված է հայերեն «մայր» արմատով և -իկ վերջածանցով:

8. *Անձնանուններ, որոնք հատուկ անվան են փոխանցվել կրոնական տոնանուններից, ծեսերից, հավատալիքներից*, ինչպես՝ *Գալուստ*, *Խոստիկ*, *Չատիկ*, *Համբարձում*, *Հարություն*: Այս խմբի բոլոր անուններն արական են: Սրանցից *Գալուստը* «հոգեզալուստ» գոյականի կրճատ ձևն է, որ կազմված է «գալ» բայով և -ուստ գոյականակերտ վերջածանցով: *Խոստիկը* կազմվել է խոստում գոյականից -իկ վերջածանցի միջոցով և նշանակում է «խոստման, ուխտի զավակ»: *Չատիկը* կրոնական զատիկ տոնանունից է: *Համբարձումը* կազմված է -ում, իսկ *Հարությունը* -ություն գոյա-

կանակետով վերջածանցներով: Ինչպես տեսնում ենք, բացառությամբ *Չատիկ* անվան, որ կազմությամբ պարզ է, այս խմբի մնացած անձնանուններն անհնչավոր են:

**9. Անձ նշող այլ կարգի հասարակ գոյականներից փոխանցված անուններ:** Նախ անդրադառնանք այլ լեզուներից փոխառված այն անձնանուններին, որոնք անձ են նշում. *Կիրա* իզական անունը հայերենը փոխառել է հունարենից (*kupia*), նշանակում է «տիրուհի», *Արսեն* - փոխառություն է հունարենից (*arsen*), նշանակում է «այր, տղամարդ», *Նոննա* - լատիներեն *nonna*՝ «միանձնուհի», *Մարթա* - ասորերեն *marta* «տիրուհի», *Սեդա* - արաբերեն *seyda*՝ «տիրուհի», *Գխտրիկ* - իրանական *dux*՝ «աղջիկ», *Լորենտա* - ֆրանսերեն *lorette*՝ «երիտասարդ կին», *Աղասի* - բուրբերեն *agasi*՝ «իր տղան», *Էդար* - քաթարերեն *el* «ժողովուրդ» և *dar* «պահող»՝ «ժողովրդին պահող», *Նահապետ* - պարթևական *nata* «ցեղ, ազգ» և *pat* «պետ»՝ «ցեղապետ»:

Բուն հայերեն անձ նշող հասարակ գոյականները, փոխանցվելով հատուկներին, կազմել են հիմնականում արական անձնանուններ, ինչպես՝ *Ծերուն*, *Տերուն*, *Պարետ*, *Մարգար*, *Սկրտիչ*, *Ռազմիկ*, *Մարտիկ*, *Ազնավոր*, *Ժիրայր*, *Տիրայր*, *Նորայր*, *Չարմայր*, *Հրայր*, *Տիրատուր*: Իզական է միայն *Տիրուհի* անձնանունը: Այս անձնանուններից կազմությամբ պարզ են *Պարետ*, *Ծերուն*, *Մարգար* անունները: *Ծերուն* անունը կազմվել է հայերեն «ծերուհի» հասարակ գոյականից ի վերջնահնչյունի անկումով: *Մարգար* անունը հայերեն «մարգարե» հասարակ գոյականն է -ե վերջնահնչյունի անկումով և նշանակում է «հեռատես»: Ածանցավոր են *Տիրուհի*, *Սկրտիչ*, *Ռազմիկ*, *Մարտիկ* կազմությունները՝ -ուհի, -իչ և -իկ վերջածանցների առկայությամբ:

Բաղադրյալ անձնանունները կազմվում են *գոյական + գոյական* կամ *ածական + գոյական բաղադրիչներով*: *Գոյական + գոյական* բաղադրիչներով են կազմված. *Տիրայր* անձնանունը, որի առաջին՝ «տեր» բաղադրիչը հնչյունափոխված է տեր > տիր (ե>ի), *Հրայր* անունը, որի առաջին՝ «հուր» արմատը հնչյունափոխվել է հուր>իր (ու>ը) և նշանակում է «հրե տղամարդ»: *Ածական + գոյական* բաղադրիչներով են կազմված. *Չարմայր* անունը, ուր «զարմ»-ը հայերեն «զարմանալի» բառն է և նշանակում է «զարմանալի այր», *Նորայր* անունը, որ կազմված է «նոր» ածականից և «այր» գոյականից: *Ժիրայր* անունը, որ կազմված է «ժիր» ածականից և «այր» գոյականից: *Գոյական + բայ* բաղադրիչներով է կազմված *Տիրատուր* անունը, որ կազմված է «տեր» և «տուր» բառերից և նշանակում է «տիրոջ տված», *Ազնավոր* արական անունն ըստ Աճառյանի կազմված է «ազն» արմատից, որ նշանակում է «ազգ, ցեղ» և վրացերեն «ավոր» վերջնաբաղադրիչից և ունի «դյուցազն» իմաստը:

**10. Իրանիչ գոյականներից փոխանցված անձնանուններ.** Նման փոխանցումները հատուկ են նաև այլ լեզուներին: Հայերենը հունարենից, պարսկերենից, եբրայերենից և այլ լեզուներից փոխառել է մի շարք անուններ, որոնք տվյալ լեզուներում *հասարակ անուն* > *հատուկ անուն* փոխանցման արդյունք են: Այսպես՝ *Պետրոս* - հունարեն *petros*՝ «քար», *Ստեփան* - հունարեն *Stepanos*՝ «պսակ», *Վահրամ* - պահլավերեն *vahram*՝ «զարմն», *Եվա* - եբրայերեն *xavā*՝ «կյանք», *Մագդա* - եբրայերեն *magdala*՝ «աշտարակ», *Բախշի* - պարսկերեն *bakhšiš*՝ «նվեր, ընծա», *Սեյրան* - արաբերեն *seyrān* «զբոսանք», *Մինա* - արաբերեն «զենք, երես», *Թինաթին* - վրացերեն «դուխի ցուր»:

Այս խմբի մեջ մտնող բուն հայերեն հասարակ անուններն իրենց քանակով գերազանցում են մյուս խմբերի բառերին: Նախ ներկայացնենք իրանիչ հասարակ գոյականներից անձնանուններին փոխանցվածներն ըստ տեսակների: Արական են *Տիրադեղ*, *Պարույր*, *Թաթիկ*, *Թաթույ*, *Խաչիկ*, *Խաչեր*, *Խաչատուր*, *Խաչերես*, *Շաքար*, *Ընծա*, *Պարզև*, *Նվեր*, *Հուսիկ*, *Նշան*, *Գյուտ*, *Գիսակ*, *Շանթ*, *Վահան*, *Հրահատ*, *Հրաչյա*, *Յոլակ անունները*: Իզական են *Քնարիկ*, *Շնորհիկ*, *Հուրիկ*, *Նազիկ*, *Երազիկ*, *Խաչանուշ*, *Օղեր*, *Մանան*, *Մանիկ*, *Լուսիկ*, *Լուսածին*, *Լուսաբեր*, *Լուսերես*, *Լուսվարդ*, *Լուսեր*, *Լուսնթագ*, *Յուղաբեր*, *Նշանուհի*, *Վարսենիկ*, *Վարսինե*, *Բյուրեղ*, *Հովանուշ*, *Հրաչուհի*, *Նազենիկ*, *Միրվարդ* անունները:

Անդրադառնանք վերոհիշյալ անձնանունների կազմությանը: Պարզ են *Շաքար*, *Ընծա*, *Նվեր*, *Պարզև*, *Նշան*, *Պարույր*, *Շանթ*, *Վահան*, *Գյուտ*, *Բյուրեղ*, *Մանան* անձնանունները: *Մանան* իզական անձնանունը ծագել է «մանանա, զազպեն» հասարակ գոյականից և վերջնահնչյունի անկումով:

Երբեմն հատուկ անվան են փոխանցվում նաև հասարակ գոյականի հոգնակի թվով դրված ձևերը: Ընդ որում, անձնանուններ կարող են դառնալ ինչպես հոգնակի թվով գործածվող հասարակ գոյականները, օրինակ՝ *Խաչեր, Օղեր, Յողեր*, այնպես էլ հոգնակիի այնպիսի կազմություններ, որոնք գործածական են միայն հատուկ անվան սահմաններում, ինչպես, օրինակ՝ *Լուսեր* իգական անունը, որ կազմված է «լույս» (ույ>ու) հնչյունափոխված ձևով և -եր հոգնակիակերտով:

Ածանցավոր անձնանունները կազմվում են իր ցույց տվող հասարակ գոյականով և -իկ, -ակ փոքրացուցիչ-փաղաքշական կամ -ուհի, -ինե, -ենիկ, -անու(յ) իգական վերջածանցներով: -Իկ ածանցով են կազմված *Քնարիկ, Շնորհիկ, Հուրիկ, Նազիկ, Երազիկ, Լուսիկ, Վարսիկ, Մանիկ* իգական և *Թաթիկ, Հուսիկ, Չոնիկ* արական անունները: -Ակ վերջածանցով են կազմված *Յուակ, Գիսակ, Սիրակ*, արական անձնանունները: *Գիսակ և Սիրակ* անուններում առկա է ե>-ի հնչյունափոխությունը: -Անու(յ) վերջածանցով են կազմված *Հրանուշ, Խաչանուշ, Հովանուշ* անունները: -Ենիկ վերջածանցով՝ *Վարսենիկ, Նազենիկ*, -ինե վերջածանցով՝ *Վարսինե*, -ու փաղաքշականով՝ *Թաթուկ* արական անունը: Կազմությամբ բաղադրյալ հատուկ անունները կարող ենք խմբավորել ըստ առկա բաղադրիչ հասարակ գոյականի: Այսպես՝ *Լույս* հասարակ գոյականով կազմված իգական անձնանուններ, որոնցում կատարվել է ույ>ու հնչյունափոխություն (լույս>լուս): *Գոյական + բայ* կաղապարով են կազմված *Լուսածին, Լուսաբեր* անունները: *Գոյական + գոյական* կաղապարով են կազմված *Լուսավարդ, Լուսերես, Լուսնթագ* անունները:

«Ոսկի» հասարակ գոյականով կազմված անուններում «ոսկի» բառը կարող է լինել բարդության թե՛ առաջին, և թե՛ վերջին բաղադրիչը: Երբ այն բարդության սկզբում է, առկա է ի > ե հնչյունափոխությունը: Օրինակ՝ *Ոսկեհատ, Ոսկեծամ*: Բարդության վերջում «ոսկի» բառը մնում է անփոփոխ, ինչպես՝ *Շաղոսկի, Ծամոսկի*: «Հուր» հասարակ գոյականով կազմված հատուկ անուններում դիտվում է ու > ը (հուր > հըր) հնչյունափոխությունը, ինչպես՝ *Հրաչ, Հրահատ, Հրածին*: «Մեր» բաղադրիչով և որևէ այլ հասարակ գոյականով են կազմված *Միրարիկ, Միրադեղ, Միրվարդ* անձնանունները, որ «սեր» գոյականի է ձայնավորը հնչյունափոխվել է ի – ի: *Յողաբեր* բաղադրյալ անունը կազմված է «յուղ» գոյականով և «բեր» բայով և նշանակում է «յուղ բերող»:

11. *Տեղանուններից անձնանուններին կատարված փոխանցումներ*. Անձնանունների առաջացման հիմնական աղբյուրը, ինչպես տեսանք, հասարակ անունն է: Սակայն կան մի շարք տեղանուններ՝ քաղաքների, գյուղերի, գետերի անվանումներ, որոնք, փոխանցվելով հատուկ անվան մի խմբից (տեղանուններից) մյուսին (անձնանուններին), դարձել են արական կամ իգական անուններ: Այս դեպքում գործ ունենք ոչ միայն ներխոսքիմասային, այլև բառիմաստային միևնույն խմբի՝ հատուկ անվան ներսում կատարվող փոխանցման հետ: Նման փոխանցումները ներկայացնենք ըստ արական և իգական անունների.

Տեղանուններից արական անձնանուններին են փոխանցվել *Շիրազ* - Պարսկաստանի ճիրազ քաղաքի անունից, *Շիրակ* - Շիրակի դաշտավայրի անվանումից, *Միս, Վան* - քաղաքների անուններից, *Եղվարդ* - գյուղանունից, *Արարատ, Արագած* - լեռների անուններից, *Սևան* - լճի անվանումից, *Վարազ* - լեռան և Վարագա վանքի անվանումներից, *Վիրապ* - Խոր Վիրապ վանքի անունից, *Տարոն* - գավառի անունից և այլն:

Իգական անձնանուններին փոխանցվել են *Արաքսի* / Արաքսյա / Արաքս - կազմվել է գետի անունից -ի, -յա իգական վերջածանցների հավելումով, *Վանուհի* - կազմվել է Վան քաղաքի անունով և -ուհի վերջածանցով, *Տաթևիկ* - Տաթև վանքի անունով և -իկ փաղաքշական վերջածանցով, *Կարինե* - Կարին քաղաքի անունով և -ե իգական վերջանաբաղադրիչով:

Այսպիսով, քննելով հասարակ անուն > անձնանուն փոխանցումները, կարելի է եզրակացնել. ա) Հասարակ անուններից անձնանուններին փոխանցված գոյականները կարող ենք խմբավորել ըստ իմաստային առանձնահատկությունների: բ) Հասարակ անուններից փոխանցված անձնանունները թե՛ արական, և թե՛ իգական անուններ են: գ) Անձնանուններ են դարձել ինչպես բուն հայկական, այնպես էլ շատ փոխառյալ հասարակ անուններ: դ) Ըստ կազմության հայերենի անձնանունները լինում են պարզ,

բարդ և անցանկալի: ե) Շան անձնանուններ, որոնք ծագել են հատուկ անվան մեկ այլ տեսակից՝ տեղանունից:

## ПЕРЕХОДЫ ИЗ НАРИЦАТЕЛЬНЫХ К СОБСТВЕННЫМ ИМЕНАМ

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *Р. Джулфаян* \_\_\_

В статье рассматриваются переходы нарицательных имен к собственным в армянском языке. Констатируется, что: а) существительные, переходящие из нарицательных к собственным именам можно сгруппировать по смысловым признакам; б) имена, переходящие из нарицательных к собственным, являются как женскими, так и мужскими; в) собственными стали как исконно армянские, так и многие заимствованные нарицательные имена; г) по составу собственные имена в армянском языке бывают простыми, сложными и производными; д) многие собственные имена возникли от топонимов.

## Համիկ ՄՏԵՓԱՆՅԱՆ

### ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ միջնադարյան պատմագրության մեջ հայտնաբերում ենք արժեքավոր փաստեր հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտության՝ որպես գիտության և գիտական դասընթացի տեղի ու նշանակության, մասնագիտացված երգեցողության մտնչվող հասկացությունների ու եզրերի, ձայնեղանակների համակարգի, ինչպես նաև երաժշտական խազագրության արվեստի, խազավոր մատյանների և խազագրության նշանավոր կենտրոնների մասին: Անդրադառնալով դրանց հանգամանորեն:

Միջնադարյան մատենագրության մեջ մշտապես կարևորվել է քառյակ գիտությունների շարքում երաժշտության գրաված ուրույն տեղը: XV դ. Հովհաննես գրիչը ուղղակի հիշատակում է. «զերաժշտական գիտություն»:<sup>1</sup> Գրիգոր Մագիստրոսն իր Թղթերում մշտապես հիշեցրել է դեռևս Արիստոտելի ժամանակաշրջանում համակարգված քառյակ գիտությունների շարքը, որտեղ մշտապես ընդգրկված է եղել նաև երաժշտությունը՝ թվաբանության, երկրաչափության և աստղաբաշխության կողքին:<sup>2</sup>

Հայ միջնադարյան երաժշտության տեսության կնճռոտ հարցերից մեկը V-VII դդ.-ում ձայնագրության որևէ համակարգի գոյությունն ու կիրառության հնարավորությունն է: Խնդրի լուսաբանման հիմնական խոչընդոտը երաժշտական ձեռագիր աղբյուրների բացակայությունն է, որի պատճառով այլ գրավոր աղբյուրներում ընդգրկված տեղեկություններն առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերում: Դրանց մեջ իր բացառիկ տեղն ունի Ղազար Փարպեցու Պատմության այն հատվածը, որտեղ պատմիչը նկարագրում է, թե ինչպես V դարում՝ գրերի գյուտից հետո, քարգմանչական աշխատանքների ժամանակ մեծածավալ աշխատանք է կատարել Սահակ Պարթևը, «որ յոյժ առյցեալ զբազում գիտովքն Յունաց, եղեալ կատարելապէս հմուտ երգողական տառիցն»:<sup>3</sup>

Նշենք, որ Ղազար Փարպեցու Պատմության ձեռագրերից մեկում երգողական տառիցն արտահայտության փոխարեն նշված է՝ քերթողական տառիցն:<sup>4</sup> Այս ձեռագիրը թույլ է տվել վերջնահաստատելու երգողական տառերի՝ ձայնավոր տառեր մեկնությունը:<sup>5</sup> Հիմնվելով համատեքստի մանրակրկիտ վերլուծության վրա, ըստ որի Ղազար Փարպեցու վկայության մեջ նկարագրված են Սահակ Պարթևի ծավալած քարգմանչական աշխատանքի մանրամասները և հատկապես «հայերենի վանկերը հունականին համապատասխանեցնելու» խնդրի մատնանշումը, Ն.Թահմիզյանը եզրակացրել է, որ երգողական կամ քերթողական տառերը հունական ձայնավոր տառերն են, այսինքն Սահակ Պարթևը քաջատեղյակ է եղել հունական ձայնավորների քերականական ուսմունքին:<sup>6</sup>

Այսպիսով, բացահայտվում է երգողական տառերի քերականական նշանակությունը: Միևնույն ժամանակ նշված ուսումնասիրության մեջ երգողական տառերի մեկնաբանության շրջանակներում ներկայացված է հունական ձայնավոր տառերի թե՛ տեսական, և թե՛ գործնական մեկնություններում կրած երաժշտական իմաստը՝ հիմնված յոթ հնչյունների խորհրդապաշտական ըմբռնումների վրա, որով էլ պայմանավորված է ընդհանրապես հունական ձայնավորների երաժշտա-քերականական ուսմունքի

<sup>1</sup> ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն II (1451-1480), Եր., 1958, էջ 17-18:

<sup>2</sup> Գ. Մ ա գ ի ս տ ր ո ս, Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 72, 105:

<sup>3</sup> Ղազար Փարպեցույ Պատմութիւն Հայոց և թուրք առ Վահան Մամիկոնեան, Տիփսիս, 1904, էջ 15-16: Այստեղևս բնագրային բոլոր ընդգծումները մերն են:

<sup>4</sup> Ս. Հակոբյանց վանքի մատենադարանի 1419թ. Ճառընտիր:

<sup>5</sup> Բնագիրն այդպես է թարգմանել Մինաս քահ. Տեր-Պետրոսյանցը, տե՛ս Ղազար Փարպեցու Հայոց Պատմութիւնը, Ալեքսանդրապոլ, 1895, էջ 28-29:

<sup>6</sup> Ն. Թ ա հ մ ի գ յ ա ն, Դիտողություններ Փարպեցու պատմության մեջ Սահակ Պարթևին վերաբերող մի արտահայտության մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, N 3, էջ 178-179:



էությունը: Այստեղից, բնականաբար ենթադրելի է այն տեսակետը, որ քաջատեղյակ լինելով հիշյալ ուսմունքին՝ Սահակ Պարթևը տիրապետել է *երգողական տառերի* երաժշտատեսական և գործնական կիրառությանը:

Ղազար Փարպեցու հիշյալ վկայությունը, միևնույն ժամանակ մղում է այնպիսի հարցադրման անհրաժեշտությանը, ինչպիսին հունական ձայնավոր տառերի երաժշտական գործառնության համաբնույթ կիրառումն է հայկական ձայնավորների օգտագործման սկզբունքներում: Այսպիսով, հնարավոր է ենթադրել հայոց գրերի գյուտից հետո հայոց մեջ Այբբենական նոտագրության համակարգի գոյության մասին: Նշենք, որ երաժշտագիտության մեջ այս մասին արժեքավոր ենթադրություններ են արվել: Ռոբոշ երաժշտագետներ պարզապես ընդունել են, որ համաձայն Ղազար Փարպեցու հիշատակության, հայկական առաջին նոտագրության համակարգը եղել է այբուբենը (Վազներ, Ռ.Իզ):<sup>7</sup>

*Երգողական տառերը* այլ կերպ է մեկնաբանել Հակոբ Հովհաննիսյանը: Ենթադրելով, որ դրանք կարող էին առոգանության նշաններ լինել, նա հավանական է համարել, որ Ղազար Փարպեցու հիշատակությունը կարող էր վերաբերել «հին հունական նոտագրության (վոկալ և գործիքային) սխտեմին»:<sup>8</sup> Հայտնի է, որ հունական վաղ ձայնագրության երկու համակարգերը, ինչպես նաև ձայնագրության համապատասխան եղանակները հիմնականում ենթարկվել են նվազարանային երաժշտության օրինաչափություններին:<sup>9</sup> Ղազար Փարպեցու հիշատակության համատեքստում *երգողական տառերը* ավելի շուտ ենթադրում են հոգևոր երգեցողության ոլորտ: Այդուհանդերձ, հիշյալ տեսակետը այսօր էլ կարելի է դիտել իբրև արժեքավոր ենթադրություն և պնդել, որ խազային նոտագրությունից առաջ մի նախնական համակարգ այնուամենայնիվ գոյություն է ունեցել, և անցումը մի համակարգից մյուսը տեղի է ունեցել օրինաչափ ընթացքով: Հիշատակության համատեքստը, տվյալ դեպքում, երբ մեկնաբանվում է իր կերպի մեջ եզակի մի արտահայտություն, բավական ծանրակշիռ դեր ունի:

*Երգողական տառերի* ավելի հետում տանող մեկնաբանություն է տվել Սպ.Սեվրյանը՝ դրանք համարելով հունական առոգանության խազեր, որոնք կիրառվել են հայկական թվերգության մեջ և հիմք են ծառայել երաժշտական խազերի ստեղծման համար:<sup>10</sup> Այս տեսակետը հերքվում է Ռ.Աթայանի հետազոտության մեջ, որտեղ ձեռագրահամեմատական վերլուծության միջոցով ապացուցվում է, որ հայկական առոգանության խազերի համակարգը ձևավորվել է VIII դարում:<sup>11</sup>

Այսպիսով, Ղազար Փարպեցու արժեքավոր հիշատակությունը վերաբերելով հունական ձայնավոր տառերի երաժշտա-քերականական ուսմունքին, միևնույն ժամանակ, ինչպես նշել է Ռ.Աթայանը, թույլ է տալիս ենթադրելու, որ «երգողական տառերը» լինեին դրանք զուտ երաժշտական, թե առոգանական նշաններ, ժամանակին որոշ դեր են խաղացել հայկական երաժշտական կուլտուրայի զարգացման գործում: Բայց այդ վաղագույն նոտագրությունը ... հետագայում չի պահպանվել և իր տեղը զիջել է խազերի նոր առաջ եկած սխտեմին»:<sup>12</sup>

Եթե Ղազար Փարպեցու հիշատակության մեջ նոտագրության համակարգի գոյությունը լուր ենթադրելի է, ապա Կիրակոս Գանձակեցու գրչին պատկանող այս առումով բացառիկ արժեքավոր մի հիշատակության մեջ ստույգ խոսվում է XII դարում հայկական խազագրության վիճակի մասին:<sup>13</sup> XII դարում թուրքսելջուկյան բռնակալության լուծը թոթափելուց հետո, հայ մշակույթի բարենորոգչական շարժումների մի

<sup>7</sup> Տե՛ս Ռ.Աթայան, *Հայկական խազային նոտագրությունը*, Երևան, 1959, էջ 116: Ն.Թահմիզյան, *Գիտություններ Փարպեցու պատմության մեջ Սահակ Պարթևին վերաբերող մի արտահայտության մասին*: «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, N 3, էջ 137:

<sup>8</sup> Հ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, *Հայոց երաժշտության պատմություն*, 1939, ձեռագիր, Եր., Գրականության և արվեստի թանգարան, էջ 64:

<sup>9</sup> *Музыкальная культура древнего мира, под редакцией Р.Грубера, Ленинград, 1937, стр. 169.*

<sup>10</sup> Սպ. Մ ե լ ի թ յ ա ն, *Հունական աղեցությունը հայ երաժշտության տեսականի վրա*, Թիֆլիս, 1914, էջ 17:

<sup>11</sup> Ռ.Ա թ ա յ ա ն, *Հայկական խազային նոտագրություն*, Եր., 1959, էջ 19-38:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 70-79:

<sup>13</sup> Կ ի Ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ճ ի, *Պատմություն հայոց*, Եր., 1961, էջ 211-212:



Խազագրության արվեստի հարցերին մվիրված իր հետազոտության մեջ Ն.Թահմիզյանն անդրադառնալով այս բանաձևին նշել է, որ այն վերաբերել է Մանրուսումն մատյանին, որի մեջ ամփոփվել է խազգրքերում պարունակվող երգերի ամբողջությունը:<sup>26</sup>

Մակայն, ձեռագրերի հիշատակարաններում հանդիպող վերոհիշյալ բանաձևի համեմատական բնութայան մեջ նկատեցինք, որ այդ բանաձևը նույնությամբ հիշատակվում է նաև խազավոր այլ մատյաններում: Անդրադառնանք դրանց:

Մանրուսումն խազգրքերի հիշատակարաններում մեծ մասամբ հանդիպում է «Գրեցաւ եղանակատր տառս, որ կոչի Մանրուսումն» բանաձևը<sup>27</sup> և հազվադեպ բացակայում է *որ կոչի* ձևակերպումը՝ ուղղակի նշելով եղանակավոր տառերի մասին:<sup>28</sup>

Նույն բանաձևը, երբեմն աննշան խմբագրմամբ, հանդիպում է Շարակնոցների հիշատակարաններում. «Գրեցաւ եղանակատր տառս թուականիս»<sup>29</sup> կամ. «Գրեցաւ եղանակատր տառս շարականաց»<sup>30</sup> մակ՝ «... որ կոչի Շարակնոց»:<sup>31</sup> Վերոնշյալ բանաձևը ամփոփոխ հիշատակվում է նաև Գանձարանների հիշատակարաններում. «Արդ, գրեցաւ եղանակատր տառս, որ կոչի Գանձատետրն ...»:<sup>32</sup>

Չարագացած ավատատիրության ժամանակաշրջանին վերաբերող խազավոր ձեռագրերը խազագրության արվեստի բարձրագույն փուլում համապատասխան համակարգերի ձևավորման և ըստ մատյանների՝ եղանակավոր տառերի համապատասխան գրառման համակարգերի (Շարակնոցի և Մանրուսումն խազեր) զարգացման խոսում վկայություններ են: Անդրադառնանք նաև խազավոր մատյանների բնութագրերին առնչվող որոշ հարցերի:

Ծիսամատյանների բնութագրերում իբրև արժեքավոր տվյալներ պետք է դիտել դրանց խմբագրման անունների նշումը և ըստ այդմ հիշատակագրի կողմից մատյանի արժեքավորումը: Դրանք ճշգրիտ վկայություններ են, որոնք խոսում են ծիսամատյանի պատմական զարգացման, խազագրության արվեստի ծաղկման և ծիսամատյանի առավել կայուն ոճական գծերի մասին: Այդ վկայությունները հնարավորություն են տալիս առանձնակի արժեքավորելու այս կամ այն խմբագրին վերագրվող մատյանի առանձնահատկությունները, քանի որ ծիսամատյանների նոր խմբագրությունները հետևանք էին մի կողմից խազային արվեստի ծաղկման շնորհիվ նորանոր եղանակների ընդգրկման, մյուս կողմից էլ այդ եղանակների և դրանց խազագրման բարդություններով պայմանավորված զուտ գործնական-կիրառական բնույթի դժվարությունների հաղթահարման: Այսպես. Շարակնոցների հիշատակարաններում առանձնահատուկ տեղ են գրավում Գրիգոր Խլաթեցու խմբագրած մատյանների հատուկ կարևորումը: Գրեթե յուրաքանչյուր ձեռագրում խմբագրի անունը յուրահատուկ հիշատակում ունի. «յընտիր արինակէ Գրիգորի դարի, որ մականունն Խուլ կոչիր»,<sup>33</sup> «ի գիր, ըստ իմում կարի Խղկեցի արինակաւ՝ բանի և եղանակաւ ստուգեալ»,<sup>34</sup> «ի լաւ և ընտիր արինակաւ Խղոյ»<sup>35</sup> և այլն:

Անդրադառնանք Շարակնոցին առնչվող մեկ մասնավոր հարցի ևս: Խոսքը Չայնթաղ կոչվող Շարակնոցի մասին է, որտեղ գետեղված էին գիշերային ժամերգության ընթացքում երգվող օրհնության տաս պատկեր շարականները:<sup>36</sup> Ըստ Մ.Օրմանյանի՝ այս Շարակնոցն ստեղծվել է XVII դարում՝ Մովսես Գ Տաթևացի կաթողիկոսի

<sup>26</sup> Ն. Թ ա հ մ ի զ յ ա ն, Կոմիտասը և հայոց հոգևոր երգարվեստի ուսումնասիրության հարցերը, Կոմիտասական, հ. 1, Եր., 1969, էջ 195:

<sup>27</sup> Ժ-Դ դարի հիշատակարաններ, Եր., 1950, էջ 126, 228, 314 և այլն:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 197-198; ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն I (1401-1450), Եր., 1955, էջ 316, և այլն:

<sup>29</sup> Ժ-Դ դարի հիշատակարաններ, Եր., 1950, էջ 74:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 126:

<sup>31</sup> ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն II (1451-1480), Եր., 1958, էջ 433:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 251:

<sup>33</sup> Ժ-Դ դարի հիշատակարաններ, Եր., 1950, էջ 290:

<sup>34</sup> ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն II (1451-1480), Եր., 1958, էջ 15-16:

<sup>35</sup> ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն II (1481-1500), Եր., 1967, էջ 233:

<sup>36</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս Հ. Ստեփանյան, Կանոնի ընդլայնման սկզբունքները հայոց ուշմիջնադարյան պաշտոնեղբայրության մեջ, ԳԱԱ ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 5, Գյումրի, 2002, էջ 173:

օրոք<sup>37</sup>: Մինչդեռ մեր դիտարկումները պարզեցին, որ արդեն XV դարում գրված ձեռագրերի հիշատակարաններում հանդիպում է Չայնքաղ անվանումը:<sup>38</sup> Կարծում ենք՝ հիշատակարանների հաղորդած տվյալները կարող են Չայնքաղ Շարակնոցներին վերաբերող հատուկ ուսումնասիրության նյութ հանդիսանալ:

Վերադառնալով Շարակնոցի խմբագրության հարցերին՝ նկատենք, որ այս գործընթացը մեծապես կապված էր նաև Մանրուման խագերի որոշակի ազդեցության և արդեն XII դարում զարգացման բարձրագույն փուլ թևակոխած տաղերի և գանձերի որոշակի ներգործության հետ: Պահպանվել է Գրիգոր Խլաթեցու գրչին պատկանող Գանձարանի 1408թ. հիշատակարանը,<sup>39</sup> որտեղ նա հանգամանորեն հիմնավորում է իր խմբագրական աշխատանքի նպատակը և, որ անչափ կարևոր է, ընդգծում է իր հավաքած գանձերի ոճական հարստության, կանոնակարգված եղանակների բազմազանության մասին: Նշենք, որ Գրիգոր Խլաթեցու խմբագրած Գանձարանը հետագայում նույնպես չափանմուշի դեր է կատարել և ընդօրինակվել է որպես ընտիր ժողովածու. «... ի լաւ և յընդիր արիւնակէ Տերենց մատամբ գրչէ»:<sup>40</sup>

Նշենք նաև Մանրուման խմբագիրների մասին, որոնց անունները միջնադարյան գրիչներն ընդգծել են. *Մաքեղցի*,<sup>41</sup> *Կարապետցի*,<sup>42</sup> *Կոստանդէ*:<sup>43</sup> Անտարակույս, հիշատակված են խագագրության հմուտ գիտակների անուններ, որոնց խմբագրած խագագրքերը ճանաչվել են որպես չափանմուշ:<sup>44</sup>

XIII-XVդդ. ձեռագրերի հիշատակարաններում հանդիպող դիտարկումները ցույց են տալիս, որ գրիչները որոշակի բարդությունների և խոչընդոտների են հանդիպել խագագրության արվեստին տիրապետելու գործում և նույնիսկ ընդօրինակվող լավագույն օրինակը ձեռք բերելուց հետո էլ հմուտ խագագետի խորհրդատվության անհրաժեշտությունն են զգացել:

Հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտության տեսության հիմնախնդիրներից մեկը ձայնեղանակների համակարգի զարգացման փուլերի ու կարևոր հանգրվանների ժամանակաշրջանների ճշգրտումն է:

Աղբյուրագիտական նյութերի ընտրանքի մեջ կարևորագույն տեղ է զբաղեցնում Ստեփանոս Օրբելյանի հաղորդումն այն մասին, որ VIII դարի նշանավոր գիտնական, երաժիշտ-տեսաբան և երգահան Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսը *«բաժանեաց և գոթ ձայնս»*:<sup>45</sup> Նկատի ունենալով այն իրողությունը, որ մինչ այժմ հայտնի աղբյուրներում դա հայ մասնագիտացված երաժշտության մեջ Ութձայնի կիրառման առաջին հիշատակությունն է, ինքնին պարզ կդառնա վերջինիս նկատմամբ երաժշտագիտական մտքի ցուցաբերած մեծ հետաքրքրությունը: Օրինաչափորեն դրվել է այն հարցը, թե արդյո՞ք Ստեփանոս Սյունեցին է հայ մասնագիտացված երաժշտության մեջ առաջինը համակարգել ութ ձայնեղանակները:

Մատենագրական մի շարք աղբյուրների տվյալների համաձայն, Ութձայնի կարգավորումը վերաբերում է V դարին, իբրև Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի գործունեության արգասիք: Այս մասին բազմիցս նշվում է հատկապես զարգացած ավատատիրության ժամանակաշրջանին վերաբերող ձեռագիր հիշատակարաններում և ընկալվում է որպես բոլորին հայտնի փաստ: Խոսքն այստեղ, անշուշտ, Շարակնոցի ձևավորման և ըստ ձայնեղանակների կանոնակարգման մասին է, որը բնութագրվում է

<sup>37</sup> Մ. Օրմանյան, *Ծիսական բառարան*, Եր., 1992, էջ 97:

<sup>38</sup> *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, Մասն II (1451-1480), Եր., 1958, էջ 26-27:

<sup>39</sup> *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, Մասն I (1401-1450), Եր., 1955, էջ 90-91:

<sup>40</sup> *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, Մասն II (1481-1500), Եր., 1967, էջ 514:

<sup>41</sup> *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, Մասն I (1401-1450), Եր., 1955, էջ 390:

<sup>42</sup> *Նույն տեղում*, էջ 130:

<sup>43</sup> *ԺԴ դարի հիշատակարաններ*, Եր., 1950, էջ 88:

<sup>44</sup> *Խմբագիրների այս շարքը լրացրել է Ն. Թահմիզյանը՝ անտիպ ձեռագիր հիշատակարաններից մեկում հանդիպող Վառձրնցի անունով: Տե՛ս Ն. Թահմիզյան, Արդի խագագրամութիւն, Փասադենա, 2003, էջ 49:*

<sup>45</sup> *Պատմութիւն նահանգին Միսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 139:*

երբեմն նաև՝ «քաջողորակ բաժանմանը ձայնից»:<sup>46</sup> Քաջողորակ բնորոշումը, ինչպես հայտնի է, վերաբերել է տեքստի եղանակավորման կամ կատարման սկզբունքին: Երգվող տաղերին (աշխարհիկ և հոգևոր) վերաբերող այս բնորոշիչի հատկորոշումը Ութ-ձայն համակարգին, կարծում ենք, դարձյալ լավագույն ապացույցն է այն երևույթի, որն աշխարհիկ երաժշտական մշակույթի կենսունակ ավանդույթների և միջնադարյան նոր արժեքների փոխներգործության արդյունքն է: Չայնեղանակը որպես որոշակի ձայնակարգում կամ ձայնակարգերում ծավալվող թեմատիկ մոդել, եղանակավորման ուրույն սկզբունքներով էր առաջնորդվում: Վերոհիշյալ հիշատակությունը հնարավորություն է տալիս վերծանության արվեստի կատարողական առանձնահատկությունները փնտրել նաև ձայնեղանակային համակարգի բնորոշիչների մեջ:

Անդրադառնա՞նք երևույթի քննության հարցերին: Մասնավորապես հին Հաստատանի երաժշտության տեսությանը նվիրված ուսումնասիրության մեջ Ն. Թահմիզյանը հնագույն ձեռագիր Ժամագիրք-Մաղմուսարանների համեմատական վերլուծության արդյունքում եկել է այն եզրակացության, որ V դ. ստեղծված այդ ծիսամատյանում առաջին անգամ համակարգվել են ութ ձայնեղանակները:<sup>47</sup> Հեղինակի կարծիքով, Ութձայնի բարեկարգումով կարող էր զբաղվել նաև Բարսեղ Ճոնը՝ ելնելով հոգևոր երգերի զարգացման, ինչպես նաև դրանց խմբավորման առանձնահատկություններից: Այստեղից հետևում է, որ Սյունեցին VIII դ. տեսական նոր մտտեցում է դրսևորել արդեն գոյություն ունեցող համակարգում:

Ընդունված է Ստեփանոս Սյունեցու բարենորոգչական գործունեությունը դիտել որպես այդ ժամանակաշրջանի համաքրիստոնեական մշակութային զգալի տեղաշարժերի համապատասխան դրսևորումը հայկական մշակույթում: Իբրև կարևոր փաստ նշվում է Ստեփանոս Օրբելյանի այն տեղեկությունը, որ Սյունեցին որպես գիտնական կատարելագործվել է Կոստանդնուպոլսում, Աթենքում և Հռոմում:<sup>48</sup> Այս հիշատակությունը թույլ է տվել Ռ.Աթայանին անելու այն ենթադրությունը, որ «Սյունեցին, իրագործելով հայկական հոգևոր երաժշտության տեսական հիմունքների մշակումը, հենց ինքն էլ հայկական երաժշտության մեջ մտցրել է խազային նոտագրության մեզ ծանոթ նախնական սխեմանը, որն IX դ. արդեն տարածվել էր տարբեր վայրերում»:<sup>49</sup>

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ թեև հայ միջնադարյան երաժշտության տեսությունը ժամանակի գիտական հայեցակարգի կարևորագույն բաղադրիչն է, սակայն որոշ տվյալներ հետաքրքրել են նաև հայ պատմիչներին, որոնք պատեհ առիթներով անդրադարձել են դրանց՝ երևան բերելով գիտական մեծ հետաքրքրություն ներկայացնող փաստեր: Դրանք այսօր էլ համարվում են նորահայտ նյութերով և ունեն գիտական կարևոր արժեք:

## СВИДЕТЕЛЬСТВА ОТНОСЯЩИЕСЯ К ЗАДАЧАМ ТЕОРИИ МУЗЫКИ В АРМЯНСКОЙ СРЕДНЕВЕКОВОЙ ИСТОРИОГРАФИИ

\_\_\_\_ Резюме \_\_\_\_

\_\_\_\_ А. Степанян \_\_\_\_

Среди прочих интересных историко-культурных фактов, в армянских исторических хрониках V-XV вв. нашли место и некоторые, относящиеся в основном к практической теории музыки. Это свидетельства о названиях жанров профессиональной музыки, о формировании Восьмигласия, о важных центрах Манрусума и хазового письма, о некоторых интересных специфических исполнительских выразительных признаках армянской духовной монодии. Многие из этих свидетельств играли важную роль в армянской музыкальной медиавистике. Некоторые представлены здесь впервые и носят важную познавательную ценность.

<sup>46</sup> ԺԵ Պարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն II (1451-1480), Եր., 1958, էջ 15-16:

<sup>47</sup> Н. Тагмизян, Теория музыки в древней Армении, Ер., 1977, стр. 163-164.

<sup>48</sup> Ս. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 139:

<sup>49</sup> Ռ. Աթայան, նշվ. աշխ., էջ 76-77:

Գավառահայ կնոջ խնդիրն արդեն XIX դարի վերջին և XX դարի առաջին տասնամյակներին ամենահասունացած, հրատապ լուծումներ պահանջող խնդիրներից էր արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքում, որին անդրադարձան այդ շրջանի տասնյակ գործիչներ (Հրանդ, Վահան Մանվելյան, Հայկանուշ Մառք, Արփինե Նահապետյան, Արաքս Թոթովենց, Արտեմիս Մելքոնյան և ուրիշներ):

1900թ. Ֆիլիպեի Ազգային վարժարանում կարդացած դասախոսության մեջ (հրատարակվել է «Ռազմիկ» շաբաթաթերթում, № 92-94) Վահան Մանվելյանն իր խոսքն սկսում է Մանթեկացայի հետևյալ մտքի մեջբերումով. «Ազգի մը բարոյական և քաղաքակրթական զարգացման աստիճանը որոշելու ճիշտ և ամենից ուղիղ չափը կարող է լինել այն տեղը, որ այդ ազգը հատկացրել է կնոջը»:<sup>1</sup>

Գավառահայ իրականության մեջ հայ կնոջ կյանքը շոթայված էր ավանդույթներով ու սովորություններով, նահապետականության կապանքներով: Հայկական գավառները թաղված էին խավարի ու տգիտության մեջ: Այնտեղ կյանքը տնօրինում էին հարստահարությունները, կամայականություններն ու բիրտ ուժը: Անմխիթար էր կնոջ վիճակը գավառում:

Գավառում կինը խարխափում էր տգիտության, հետամնացության, խավարի ծանր մղձավանջում: Անսպառ ընդունակություններով օժտված հայուհին հնարավորություն չուներ ուսանելու: Նրա կյանքը հաճախ տնօրինում էին բիրտ ուժն ու անսանձ կամքը՝ պատճառ դառնալով գավառում հաճախակի պատահող երջանիկ միությունների փլուզման, երիտասարդ ճակատագրերի կործանման: Գավառացի այրերը կնոջը նայում էին սոսկ որպես սեփականության, նյութական ստացվածքի, որն իրավունք չունեին ընդդիմանալու տան գլխավորի կամքին ու ցանկություններին, դատապարտված էր ապրելու որպես կիսաստրուկ, որի զգացմունքները կարող էին ճզմել ու բռնադատել: Ջերմեռանդ հավատացյալ էր գավառահայ մամիկը՝ մեծ հավատով փարված եկեղեցուն, ազգային ավանդույթներին ու սովորույթներին: Հաճախ նրա սնունդիսպաշտությունը, կույր հավատն ամ սրբերն ու Աստված պատճառ էին դառնում ողբերգական իրադրությունների:

Միս Ռ. Ջարդարյանն իր «Պուտ մը ջուր» ցնցող պատկերում<sup>2</sup> մտայլ գույներով բացահայտում է Մուրբ Սարգսի՝ հրեղեն ձիով քաջ գորականի գալստյանն սպասող, հրաշք երազներ տեսնելու ակնկալիքով ու երկյուղածությամբ համակված տատի ու թռան կյանքի ողբերգական էջերից մեկը, որը խորհրդանշում է ժողովրդի կյանքը սևացնող անթափանց ու երկարատև խավարը, և որը պատճառ էր դառնում անմեղ հոգիների խեղձան: Հայ մամիկը գավառում արմատացած ավանդույթների ու սովորությունների կենդանի շտեմարան է, որն իր ամբողջ մայրական գորովը՝ քաղցրությամբ ու բարությամբ շաղախված, կենտրոնացրել է գերդաստանի վրա:

Գավառում կինն ընտանիքի սյունն է, անխոնջ աշխատող է ու առաքինի: Նա անհողորդող կամքով կարող է կյանքում բազմաթիվ փորձություններ հաղթահարել, չկորցնել ոգու արիությունը բազում խութերի ու խոչընդոտների հանդիպելիս:

«Հոգեդարձ» զգայացունց պատկերում նկարագրվում է մի այդպիսի հայուհու՝ Գյուլվարդի հոգեդարձի տխուր պահը: Ամուսնու բացակայության ընթացքում անվեհեր հայուհին տասնչորս տարի անընդմեջ կռիվ է տվել չքավորության դեմ, կարողացել անասելի գրկանքներով ու տքնանքով մեծացնել փոքրիկներին, չկորցնել բարոյական վեհությունը: Իսկական հայուհու կերպար... Տասնչորս տարի անբեկանելի հավատով ու անմար հույսով սպասել է ամուսնուն: Մահից հետո էլ կարծես «այդ անկենդան ու բաց աչքերուն լույսը տարաշխարհներ թռած է՝ հոն գտնելու համար այն, զոր այս աշխարհին մեջ փնտռեց երկար տարիներ»:<sup>3</sup>

<sup>1</sup> Կ. Տ ռ դ ր ա մ ա ճ յ ա ն, Նշխարներ, Ֆիլիպե, 1907, էջ 177:

<sup>2</sup> Ռ. Ջ ա ր դ ա ր յ ա ն, Ցայգալույս, Կ. Պոլիս, 1910, էջ 42-48:

<sup>3</sup> «Արևելյան մամուլ», Չմյոռնիս, 1905, N 17, էջ 46-60:

Ռ. Չարդարյանը գավառի գաղտնածածուկ խոցերից մեկը պարփակող թանձր վարագույրն է հետ քաշում «Վա՛խ, ես մեռնեի» վիպակում<sup>4</sup> հոգեբանական խորությամբ կերտելով ընտանիքին ու ամուսնուն անձնավիրաբար փարված պարկեշտ հայուհու կերպար: Հայկուհի խաթունը օրերի դժնդակ հոլովություն մաշակել է կյանքի ու արհամարհված վիճակի դառնությունները, համբերությամբ դիմակայել ամուսնու անհավատարմության դառը իրողությունը, իրարահաջորդ թշվառության ու կարիքի տարիներ է անցկացրել: Սակայն նահապետական բարքերով սնված գեղջկուհու հավատն անխախտ է ամուսնու վերադարձի հանդեպ, նա անվերապահորեն հավատարիմ է ամուսնուն, հյու՝ ճակատագրի քմահաճույքին: Հոգեկան տվյալանքները, անյուր տառապանքները հայուհու հոգում չեն ծնել վրիժառության զգացում, բողոքելու, ընդվզելու ցանկություն: Վիպակի գործողություններն ավարտվում են անսովոր ու անսպասելի հանգուցալուծմամբ: Հավատարմության մեջ անասան, բարոյական սկզբունքների մեջ անշեղ կնոջ արարքն իր ախտավարակ, մարդկանց ու եկեղեցու պարսավանքին արժանացած ամուսնու դիակի վրա տարօրինակ է թվում: Չայրալից ամբոխի առջև, որ պատրաստ էր քարկոծելու հարստությունն ու պատիվը կորցրած մարդու դին, Հայկուհին փարվում է դիակին՝ դառնակսկիծ ողբալով: Բարոյապես ու ֆիզիկապես աղարտված ամուսնու հանդեպ հայ կնոջ մորմոքը վերաճում է սրտակեղեք հեծեծանքի: Այդպիսին է հայուհին: Նրա զգացմունքների խորությունը, անկապտելի հավատն ամուսնու հանդեպ, առաքինությունը կարող են դիմակայել պանդխտություն կոչվող զարհուրելի երևույթին:

Գավառում պանդխտությունը խաթարում է ընտանեկան ներդաշնակ համակեցությունը, ընտանիքների փլուզման պատճառ դառնում: Նույնիկը պանդխտության գիրկը մետված ամուսնուն դավաճանում է նրա եղբոր՝ մի ժանտատեսիլ ու դժխեմ մարդու հետ, որը զուրկ է ամեն տեսակի սրբություններից: Ընտանիք վերադարձած ամուսինն անկարող է տանել եղբոր ու կնոջ դավաճանության անգութ հարվածը: Մի՞թե կինն այդպես պիտի վարձահատույց լիներ իր կրած տառապանքների դիմաց: Հուսալքված Միմոնը հեռանում է տանից, իսկ անբարոյականության ճահիճն ընկղմված Նույնիկը դառնում է «սրիկաներուն ստացվածքը»: Սյուժեի հովվերգական ընթացքի շարադրմամբ Թլկատիկցին «Կնամա՞րտ թե՞ ցլամարտ» ստեղծագործության<sup>5</sup> մեջ արտացոլում է բարքերի հեղաբեկման սարսափը, կնոջ բարոյական կեցվածքի խաթարման պատկերը: Գավառի կանանց հոգեբանության ներսուզումներով մեծ գրագետն արժարժում է բնաշխարհի մարդկանց վարքուբարքի հարցեր:

Գեղամ Տեր-Կարապետյանի (Մշո Գեղամ) նորավեպերը, գրված «դիմանկար նորավեպի» ներժանրային կառույցով («Եղսիկին պարագան»,<sup>6</sup> «Սարգիս աղբարը»<sup>7</sup> և այլն), զուգահեռում են Տարոն աշխարհի զգլխիչ բնապատկերները պանդխտության սոցիալ-բարոյական ավերների պատկերագրմանը: «Եղսիկին պարագան» պատկեր քրոնիկում հեղինակը ստեղծում է զրկանքի ու անհուսության տասնվեց տարի իր ամուսնուն անխախտ սիրով սպասող կնոջ կերպար:

ՌԷշագրավ են Ռ. Չարդարյանի «Ձղջում»,<sup>8</sup> «Սև հավը կանչեց»<sup>9</sup> գործերը, որոնցում վրձնելով բնաշխարհի կյանքի տիպական պատառիկներ՝ հեղինակը բացահայտում է գավառահայ կնոջ պանդխտության անմիջական հետևանք հանդիսացող բարոյական անկումը:

«Անզգամության ու մեղքի տղմոտ լիճը» ընկղմված կնոջ բարոյական անկման պատմությունն է ներկայացնում «Ձղջում» նորավեպը: Դեպքերի զարգացման կիզակետում հայտնվում է կյանքի սովորական շավղից մի կողմ մետված կինը՝ Աննան: Պանդխտության ամենակործան ալիքն է սասանել նորատի կնոջ ընտանիքի հիմքերը, ամուսնուն խլել սիրակարոտ ձեռքերից ու դարձրել օտար ավերում դեզերող անապաստան խլակ:

<sup>4</sup> Ռ. Չարդարյան, *Անվ. աշխ.*, էջ 5-7:

<sup>5</sup> Թլկատիկցի, *Գյուղին կյանքը*, Եր., 1966, էջ 171-191:

<sup>6</sup> Գ. Տեր-Կարապետյան, *Տարոնի աշխարհը*, Փարիզ, 1931, էջ 88-90:

<sup>7</sup> «Արևելք», Կ. Պոլիս, 1890, N 1943:

<sup>8</sup> Ռ. Չարդարյան, *Ցայգալույս*, Եր., 1959, էջ 460-462:

<sup>9</sup> Ռ. Չարդարյան, *Ցայգալույս*, Կ. Պոլիս, 1910, էջ 184-220:

Հայ կնոջ բարոյական անկումն է բացահայտված նաև Ռ. Չարդարյանի «Մև հավը կանչեց» պատմվածքում: «Ժամանակը ծանրությամբ, դանդաղությամբ ու սուգով կանցնի դարիքին տանը վրայեն: Պատիկները անհայր կը մեծնան, մայրերը կարոտով կ'մեռնին, ու հարսները, եթե շուտով չեն ծերանար՝ կամ այն է, որ իրենց շնորքեն ու գեղեցկութենեն բան չեն պահեր ետքի օրերուն կամ թույլ ու վատասիրտ գտնվելով՝ օտարին կ'ծախեն իրենց ճահիլությունն ու սիրտը», - գրում է Ռ. Չարդարյանը:<sup>10</sup>

«Մև հավը կանչեց» պատմվածքում անառակ հարսին հակադրված է մարմարիոնի պես մաքուր ու անբիծ հայ մոր կերպարը, որն անամոք վշտով հեծեծում է՝ օր ծերության ականատես լինելով անպատկառ հարսի և ամբարիշտ ու բղջախտ որդու հանցավոր կապին: Նա սքափության կոչ է հնչեցնում նահապետական կնոջ բարոյական վեհությունը կորցրած հարսին, փորձում փրկել երբեմնի շեն գերդաստանը «բրշակ» դառնալու վտանգից: Այդպիսին է հայ մայրը, որի անունը դարեր շարունակ սերունդների շուրթերին սրբությամբ է թրթռացել:

Երուխանի «Արյան ուժը»<sup>11</sup> պատկերը վեհաշուք, հայրենասիրական պաթոսով լի գեղեցիկ ու նվիրական ձոն է՝ գավառի հայ կնոջը, մորը, մամիկին ուղղված՝ լեցուն անթաքույց խանդաղատանքով, անսահման գորովանքով և այն աներեր հավատով, թե բոլոր դարերում և արհավիրքների ժամանակ հայոց տունը, ազգը չեն մեռել հենց հայ կնոջ շնորհիվ: Ստեղծագործության պատումն ամբողջապես կառուցված է հայ կնոջ կերպարի խորհրդանշով:

Գաղթականության խորշակն օտար ավեր է նետել երեք փոքրահասակ «լաճեր» իր շուրջը հավաքած մի պառավի, որը կարծես Հայաստանի խորհրդանշն է: Նրա հայացքում բյուրեղացած է կործանված հայրենիքի կսկիծը, ավերակված օջախի մրմուռը: Մուրացիկ կինը «անմռունչ հերոս մըն է», քանի որ կյանքում նա ստացել է անագորույն հարվածներ, սակայն չի վհատվել, որովհետև կյանքում տեղ չկա հուսահատներին ու թերահավատներին: Կյանքը պայքար է: Իր վիշտը շալակած՝ մայրն համատ փարվել է երեք որբուկներին, պատրաստ է դիմագրավելու այլ փորձությունների: Գերդաստանի ապագա սյուներին ու վերջին ընձյուղներին անքակտելիորեն կապված մամիկից օտար մարդիկ ուզում են խլել երեխաներին: Բայց անպարտելի է մայրական սիրով զինավառված հայ կինը. «- Ոչ, - կմոռնե, - չեմ ի տար թոռներս»: Հետևում է հեղինակային գեղումը, որը մի սքանչելի գեղուն է հայ կնոջն առհասարակ. «Գավառացի այս խեղճ կնոջ բերանով ամբողջ ցեղի մը արյան ուժն է, որ երևան կուգա, ազգության գաղափարին կույր, անպատրվակ փարումը, վայրենորեն սուրբ այն խանդը, որ հայ կնոջ նկարագիրն իսկ է, և որ անհիշատակ դարերու, անցյալի թոհուրոհի մեջեն ցեղը բերած հասուցած է մինչև հիմակ: Հայուհին իր արյան, միսին ու ոսկորին ջերմորեն հայրենասիրական շողվածքովը հավատարիմ, անխոնջ և անշուկ սատարն է եղած մեր ցեղային շենքին անխաբխար պահպանմանը՝ հսկա ցնցումներու, կործանող կարողություններու դեմ: ... Կնոջ այս վսեմ տիպարին առջև պաշտամունքով խոնարհի՛նք, վասնզի ան իր ծոցին մեջ անշեջ պիտի պահե հուրը, որ ազգերու կյանքը կապրեցնե»: <sup>12</sup> Ի դեպ, այսպիսի մոր կերպար ունի նաև Ռ. Չարդարյանը «Շուն մըն ալ պակաս» զգայացունց պատմվածքում:<sup>13</sup>

Գավառացի աղջիկը գեղուն է զգացմունքներով, սակայն շիկնոտ է ու վարանոտ: Նա չի կարող արտահայտել իր զգացմունքներն ու ցանկությունները, շղթայված է նահապետականության կապանքներով, զրկված է կրթություն ստանալու հաճույքից և դպրոցն ավարտելուց հետո ստիպված է աշխատել ու օգնել ծնողներին:

Հրանդի (Մելքոն Կյուրճյան) «դիմանկար» նորավեպերում գեղարվեստական ուրվագիծը մանրամասնում է ստանում առարկայական դիմանկարներով, ինչպես, օրինակ, «Շպիտ կերպարանքը» նորավեպում է:<sup>14</sup>

<sup>10</sup> Ռ. Չարդարյան, *Նշվ. աշխ.*, Կ. Պոլիս, 1910, էջ 184-220:

<sup>11</sup> Երուխան, *Նովելներ*, Եր., 1965, էջ 283-286:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 284:

<sup>13</sup> Ռ. Չարդարյան, *Նշվ. աշխ.*, Կ. Պոլիս, 1910, էջ 111-121:

<sup>14</sup> Հրանդի, *Ամբողջական երկեր*, հ. Ա, Պանդոխի կյանքեն, Փարիզ, 1931, էջ 167-169:



Կեսարացի գործավորի ուշադրությունը միշտ գրավում է ժպտերես, բարեհամբույր Ակոբ ապերը՝ ժրագան, բարեխիղճ ու անտրտունջ աշխատող, միևնույն ժամանակ՝ նուրբ ու զգայուն: Իրականում Ակոբը կին է, անունը՝ Շուշան, որ ծպտված պանդղխտելով՝ հանապազօրյա հաց է վաստակում՝ որք քույրերին ու եղբայրներին կերակրելու համար: «Մշեցի Շուշան մըն է, բնութենեն ու բաղդեն ընկեցիկ աղջիկ մը»: «Ի՞նչ ընեն, տե՛ր հայր,- խոստովանում է նա քահանային,- մեր տան մեջ էլ կարիպության մարդ չի մնաց, քույֆաք ունիմ, քուրեր, աղբրտանք՝ զրմեն էլ հացի կարոտ: Ո՞վ պիտի կերակրե անոնց»: Ճշմարտացի է հեղինակը՝ «Այո՛, բան մը պիտի ընե Շուշան: Պիտի փախչի աղ տեղերեն, այս անգամ ուրիշ դիմակ մը պիտի դնե և ուրիշ անվան տակ ծրարե Շուշանին թերթերը»:<sup>15</sup>

Գավառական ողբերգության հետաքրքիր էջ է Փ.Խ.Բ. ստորագրությամբ «Ծաղիկ» շաբաթաթերթում 1899թ. տպագրված «Հարսնետու՞ն, թե՞ սգատուն» պատմվածքը,<sup>16</sup> որի սյուժեն հյուսված է նույն գյուղի երկու մանուկների՝ Մամասիկի ու Անթառամի՝ դեռ օրորոցում նշանելու փաստի պատմության հիմքի վրա:

Հանգամանքներն անակնկալ դիպվածներով խճճում են արդեն հասուն երիտասարդների սպասվող ամուսնության պատմությունը՝ ներկայացնելով սիրո անհիմնալի առեղծվածի մի ցնցող պատկեր: Նորավեպում սիրող անհատի զգացմունքները, հանգուցալուծման բնականոն էլք չգտնելով, նրան տանում են դեպի անխուսափելի կործանում: Աղջիկն անգոր է գրկել իրեն բռնությամբ պարտադրված ամուսնուն և միաժամանակ չի համարձակվում քանդել նշանը, քանզի աղջկա կամքը գավառահայ իրականության մեջ ոչ ոք չի հարցնում: Նորավեպը վերջակետվում է ողբերգությամբ: Հուսահատ անձկության մեջ ժայռից նետվելով՝ աղջիկն իր անարատ մարմինն հանձնում է Եփրատի ահեղագոչ ալիքներին:

## ЖЕНЩИНА В ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ ЗАПАДНОАРМЯНСКОЙ ПРОВИНЦИИ

\_\_\_\_ Резюме \_\_\_\_\_

\_\_\_\_ О. Оганесян \_\_\_\_\_

В провинциальной действительности Западной Армении жизнь армянки была в патриархальных цепях. Армянские провинции утопали во тьме и безграмотности. Там господствовали грубая сила и власть денег, власть имущих.

В статье выявляются грустные, порой трагические, иногда героические страницы жизни провинциалки, которой посвящены многие новеллы западноармянских писателей конца XIX и начала XX веков: Р. Зардаряна, Г. Тер-Карапетяна, Ерухана, М. Кюрджяна и т.д..

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 169:

<sup>16</sup> «Ծաղիկ», N 37, Կ. Պոլիս, 1899:

ԷԹՆՈԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ ՍՈՂԵԼ ԱՂԵՏԻՑ ՏԱՐԻՆԵՐ ԱՆՑ  
(Կորուստներ և ձեռքբերումներ)

Ի՞նչն է ստիպում մեզ տարիներ անց կրկին անդրադառնալ 1988-ի երկրաշարժի սոցիալ-հոգեբանական հետևանքների քննությանը, ազգաբնակչության հոգեկան առողջության պահպանման ու հոգեկան հիպոնոզիայի ապահովման հիմնախնդիրներին:

Երկրաշարժը և անցման փուլի դժվարությունները անկառավարելի էին, վերջին մաս՝ անօրինաչափ: Ստրեսից հետո մարդկային հարաբերությունները խաթարվել էին, և սովորական մարդը անկարող էր հոգեբանորեն դիմակայելու աղետի հետևանքներին, քանի որ ազգաբնակչության հետ տարվող հոգեբանական աշխատանքը մախաղեպը չուներ: Էքստրեմալ վիճակների հոգեբանական դաշտն ուսումնասիրված չէր:

Ինչպե՞ս աշխատել ստրես տարած մարդկանց հետ: Թեև 1926թ.-ին Գյումրին արդեն երկրաշարժ տեսել էր, սակայն այդ ուղղությամբ հոգեբանական որևէ աշխատանք չէր տարվել: Հայտնի չեն մահ Տաշքենդի, Մեքսիկայի, Չինաստանի երկրաշարժերի մասին տեսական հետազոտություններ: Իհարկե, 1988թ. երկրաշարժից հետո եղել են հրապարակումներ, գիտաժողովներ, քննարկումներ, ինչպես մահ տրամադրվել են դրամաշնորհներ աղետի հոգեբանական հետևանքների ուսումնասիրման համար: Սակայն այս ամենը կատարվել է մասնակի, նեղ հարցերի ուսումնասիրման դիտակետից: Այսպես, օրինակ՝ աղետի պատճառով հաշմանդամ դարձածներին, ծնողազուրկ երեխաներին վերաբերող ծրագրեր, որոնք, ցավոք, ընդհանրացված ուսումնասիրություններ չդարձան: Ժամանակն է ընդհանրացնել այդ փորձը կորուստների և ձեռքբերումների առումով: Գյումրիի երկրաշարժն իր ընդգրկման չափերով, գոհերի քանակով որպես բաց դաս է անհրաժեշտ ներկայացնել աշխարհին, քանի որ աշխարհն անընդհատ ենթակա է աղետների և ահաբեկչությունների: Մասնակի հետազոտությունները խոսում փաստեր կարող են լինել, եթե ընդհանրացվում են, վերածվում են մոդել-կադապարների: Միայն կորուստներով չի կարելի ձևակերպել սոցիալ-հոգեբանական կարիք:

Երկրաշարժն իր սոցիալ-տնտեսական, բարոյական, մշակութային, կրթական հետևանքներով ամբողջովին Եւսումնասիրված, համակարգված չէ, այսինքն՝ քիչ ուսանելի է միջազգային փորձի համար: Բնական աղետի մեջ հայտնված մարդիկ նման են միլյանց, ունեն մամնատիպ սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրներ, այս դեպքում ավելի է կարևորվում աղետի սոցիալ-հոգեբանական վերլուծությունն առհասարակ: Հետադիտյալ կարճատև շրջանում սոցիալ- հոգեբանական դժգոհությունների մեծ չափը և անհուսալի ապագան ոչինչ չէին խոստանում: Ամբողջ քաղաքական մեքենան անձնային հոգեբանական խնդիրներ լուծելու փոխարեն՝ առաջնահերթորեն միտված էր դեպի քաղաքականություն: Հաղորդումները խառը տեղեկատվություն էին պայտանակում, որոնք տարրոշված և դիֆերենցված չէին: Մարդը սպասումներ չուներ, աղետյալ ազգաբնակչության անձնային հիմնախնդիրները լուծված չէին բազմազործոն հոգեբանական դաշտում:

Ըստ էության, հետադիտյան ժամանակաշրջանում մարդկային հոգեկան ապրումների վերարտադրությունը բացառիկ տեղեկատվություն էր ազգի գեներֆոնդի և նրա ինքնապաշտպանական մեխանիզմների մասին, որն անհրաժեշտ էր պահել տեղեկատվական բանկերում: Մինչդեռ այս մասին առաջօր սերնդին առանձնակի ոչինչ չի քողմվել: Ընդհանուր հայտարարի չեն բերվել աղետի մասին ամփոփիչ վերլուծություններն ու գնահատականները:

Տակավին չի տարվել հոգեբանական աշխատանք ինչպես վերակազմավորված, այնպես էլ օրևանը կորցրած, եզակի ծնողով կամ ծնողազուրկ, խնամակալով կամ երեխայի կորցրած, հաշմանդամ ունեցող, մեկ անձով, միայնակ ձերերի, օտարված անձով ընտանիքների հետ, չեն պարզվել այս ընտանիքների տիպաբանական առանձնահատկությունները՝ իբրև վերակազմավորվող հարաբերությունների տեսակ, կայուն և մշտապես փափոխվող կողմերով, միասնական արժեքային կողմնորոշումներով:

Արտերկրի մասնագետները հավաքեցին մեծաքանակ տեղեկատվություն նյութեր, նկարներ աղետի հոգեբանական հետևանքների մասին, որը հարստացրեց էքստրենալ վիճակների վերաբերյալ իրենց իմացության դաշտը: Ավելին, մեր խորին համոզմամբ անբույատրելի էր մանուկների հետ կատարված հոգեբանական աշխատանքի պրոյեկտները, մանկական ստեղծագործությունները դուրս բերել հանրապետության սահմաններից, որովհետև այն ազգային նկարագիր է և ցույց է տալիս մատաղ սերնդի դիրքորոշումները, ցանկություններն ու նպատակը, զգացմունքները, իսկ սա ընդգրկում նյութ է գիտատեսական վերլուծությունների համար: Ազգային հոգեբանության տվյալներն այս կտրվածքով ուսումնասիրելը փաստորեն դառնում է տվյալ ազգի նկատմամբ հետագա դիվանագիտական հարաբերությունների դրսևորման ձև: Հետևաբար կարևորում ենք միջազգային մակարդակով մասնագիտական քննարկումների անհրաժեշտությունը հետևյալ ուղղություններով.

- ա) աղետյալների հոգեբանական փոխհատուցման ուղիների որոնում,
- բ) ազգային սովորույթների, ծեսերի, ավանդույթների՝ իբրև ինքնապաշտպանական մեխանիզմի ուսումնասիրում և վերափմաստավորում, որը գենետիկորեն ազգաբնակչությանը դուրս կբերի խորը ճգնաժամից,
- գ) ստրեսից հետո հաշմվածություն և կոլեկտիվ շփումներ, միջանձնային փոխհարաբերությունների ջերմացում,
- դ) մարդկանց հարողակցումն իբրև ֆենոմեն, հարողակցման մոդելների հոգեբանական առանձնահատկությունները,
- ե) ազգային սիմվոլների յուրացումը հոգեկարգավորման գործընթացում,
- զ) այլ ժողովուրդների էքստրենալ վիճակների դրսևորման ձևերն ու հոգեկարգավորումն ապահովող գործոնները,
- է) ժամանակի գիծը ստրեսի պահին:

Անցումային շրջանը, երկրի սոցիալ-տնտեսական ծանր կացությունը, հետադետյան շրջանի հիմնախնդիրներն իրենց խոշոր ազդեցությունն են քողել Շիրակի մարզի ազգաբնակչության սոցիալ-հոգեբանական վիճակի վրա: Բազմաթիվ աշխատատեղերի, տասնյակ հազարավոր օբևանների կորուստը մեծ չափով խոցելի դարձրեց սոցիալապես անապահով ընտանիքները: Դրսևորվող առաջին հոգեբանական ստրեսը եղավ մարդկանց հոգեկան անպաշտպանվածությունը, սոցիալական վախը ու օտարումը:

Աղետը, անկախ տարածածավալային ընդգրկման չափերից, շատ ավելի մեծ ու ընդգրկում է, եթե անցնում է անձի ներաշխարհավ՝ խաթարելով նրա հոգեվիճակը:

Քննելով աղետ տեսած մարդկանց հուզական առանձնահատկությունները՝ նշենք, որ ամենաակնառուն վախի զգայությունն է: Վախի հույզի դեպքում անձի ընդհանուր վիճակին ավելանում է նաև ֆիզիկական և հոգեկան աններդաշնակությունը: Հուզական հոգեվիճակի արտահայտություններ են նաև տխրության, քախժի ու տառապանքի ապրումները, որոնք դրսևորվում են մեծավորներին կորցրած մարդկանց յուսաբանական վերապատմունքում: Այսօրինակ վերապատմումները կայտղ են նպաստել ստրեսային իրավիճակի ինտեգրացմանը:

Կոլեկտիվ ելքը գտնված չէր, բարոյական մթնոլորտը ճնշող էր: Երբ սկսեց գործել կոլեկտիվ մտածողությունը (շինարարություն, աշխատատեղերի ստեղծում, առևտուր և այլն), հոգեբանական դրսշտի լարվածությունը սկսեց աստիճանաբար նվազել: Կոնկրետ Գյումրիում հոգեկարգավորման միջոցների որոնումը եղավ ներսից՝ շնորհիվ ազգաբնակչության ներքին ռեսուրսների, որոշակիորեն շեշտադրվեցին հանրային շփումները:

Հայ ժողովուրդը մշտապես կըք է որոնել՝ ապավինելով իր հոգեբանական ներքին հնարավորություններին ու պատմական հիշողությանը, քանի որ կան ազգային հատկանիշներ, որոնք էքստրենալ իրավիճակներում յուրօրի դրսևորում են ստանում: Հարաբերությունների առանձնահատկությունները բացառիկ դեր կատարեցին: Կոլեկտիվ վշտի ու տառապանքի և կոլեկտիվ ձեռքբերումների գաղափարը մարդուն դուրս բերեց սահմանային իրավիճակից: Սկսեցին գործել ընդօրինակման հաղթահարման, ինչպես նաև աղետի շարունակական վերապատմումների ընդհանրական վերաբերմունքի մեթոդները: Երկար պատմեցին միմյանց, պատմելու ընթացքում ուղիներ որոնեցին, աղետը միասին էին կրել և լուծումն էլ միասին գտան՝ ներքին սպասարկման շնորհիվ:

Ի՞նչ ենք առաջարկում. ա) սոցիալ-հոգեբանական վերլուծություններ և մեկնաբանություններ աղետի հետևանքների մասին, բ) ընդհանրացնել առ այսօր հրատարակված բոլոր նյութերը ստրեսային իրավիճակների ինտեգրացման մասին՝ շեշտը դնելով հիմնական կորուստների և ձեռքբերումների իրողության վրա:

Նպատակն է մասնագետների ուշադրությունը բևեռել աղետի հոգեբանական հետևանքների ուսումնաքննությանը, ցույց տալ հետադեպյան շրջանում սոցիալ-հոգեբանական աշխատանքների անհրաժեշտությունը՝ այն դիտելով որպես ազգաբնակչության հետ տարվող աշխատանքների վճռական պայման:

Ծրագրի խնդիրներն են՝ ա) հզորացնել տեղեկատվական դաշտը, որն ամբողջական կույրձնի մարդկանց պատկերացումները էքստրեմալ իրավիճակների մասին, բ) ապահովել գոյատևման հնարավորություն ստրեսից անմիջապես հետո, գ) ազգաբնակչությանը հոգեբանորեն նախապատրաստել մոր պայմաններին, հաշտեցնել մարդուն կյանքի հետ, դ) ակտիվացնել միջանձնային կապերը, ջերմացնել մարդկային հարաբերությունները, ե) աղետի մասին խոսքային վերապատմումների հնարավորություն ստեղծել, հագեցնել միջանձնային հոգեբանական շփումների դաշտը, զ) ապահովել մարդկանց շարունակական զբաղվածությունը:

## ЭТНОДИНАМИЧЕСКАЯ МОДЕЛЬ – СПУСТЯ НЕСКОЛЬКО ЛЕТ ПОСЛЕ БЕДСТВИЯ (ПОТЕРИ И ПРИОБРЕТЕНИЯ)

*Резюме*

*К. Саакян*

В статье ретроспективно рассмотрены проблемы сохранения психического здоровья и психической гигиены населения и обсуждаются социально-психологические последствия землетрясения 1988г. в Армении. Предлагается в рамках конкретной этно-психологической программы исследовать социально-психологические последствия бедствия и обобщить весь материал об интеграции стрессовых обстановок, подчеркивая в основном потери и обобщения.

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ՓՈԽԳՈՐԾՈՒՆ (ԻՆՏԵՐԱԿՏԻՎ)  
ՄԵԹՈԴՆԵՐԸ**

Այսօր դպրոցական կրթության «որակը» սահմանվում է այն տեսանկյունից, թե «ի՞նչ ենք սովորեցնում», «ինչպե՞ս ենք սովորեցնում», «ու՞մ ենք սովորեցնում», «ի՞նչ է մնում մեր սովորեցրածից»: Դպրոցի արդյունավետության այս հայեցակարգը ենթադրում է նաև գիտելիքներ դպրոցի գործունեության ողջ շրջանակի մասին, փոփոխվող հանգամանքներին արձագանքելու կարողություն, ուսումնական գործընթացի մասնակիցների բավարարվածություն և պարտավորություններ:

Դպրոցի արդյունավետությանը նպաստող գործոններից մասնագիտական գրականության մեջ ամենից հաճախ նշվում են հետևյալները. դպրոցի միասնական հայեցակարգը, մասնակցություն դպրոցում որոշումների կայացմանը, դպրոցում ստեղծված դրական միջավայրը, դպրոցի տնօրենի՝ որպես աջակցի դերը, ուսուցչի՝ որպես ներդրողի դերը, աշակերտի՝ որպես մասնակցի դերը, ինտերակտիվ (փոխգործուն, փոխազդող) փոխհարաբերություններ:

Փորձը ցույց է տալիս, որ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներն «աշխատում են» միայն ճիշտ մտածված ու կազմակերպված համագործակցության դեպքում: Մասնագիտական մանկավարժական հաղորդակցումը ուսուցչի և աշակերտի փոխգործուն մի համակարգ է, որի նպատակն է տեղեկատվության փոխանակումը, ամհատի ճանաչումը և դաստիարակչական ազդեցության կազմակերպումը: Ըստ այդմ էլ տարբերակվում են հաղորդակցման երեք հիմնական գործառույթներ՝ *հաղորդակցական* (կոմունիկատիվ), որը ենթադրում է տեղեկությունների փոխանակում, *ընկալման* (պերցեպտիվ), որը ենթադրում է փոխադարձ ճանաչում, *փոխգործուն* (ինտերակտիվ), որը ենթադրում է համատեղ գործունեության կազմակերպում և իրականացում:

Հաղորդակցումը ուսուցման ընթացքում ենթադրում է ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ փոխգործունություն, որի նպատակն է ստեղծել բարենպաստ հոգեբանական մթնոլորտ, ինչը խթանում է անձի լիարժեք զարգացումը:<sup>1</sup>

Ընկերների հետ փոխադարձորեն շփվելը, նրանց հետ ինչ-որ միտք կիսելը կարգապահական վարքագիծ է: Մեփական պատկերացումները, մտքերն ու կարծիքներն ուրիշներին հաղորդելը բավական համարձակ քայլ է: Աշակերտը ստիպված է բացեիքաց ցուցադրել ուրիշներին, թե ինքն ինչպիսի մտածողության և ինչ պատկերացումների տեր է: Դասարանում ընկերների հետ մտքեր կիսելը ենթադրում է, որ աշակերտը պետք է կարողանա լսել, կասեցնել իր դատողությունները կամ խոսակցությունը սեփական ձևով տանելու ներքին պահանջը: Որպես փոխհատուցում նրանք ստանում են ուրիշների կարծիքը, ընդլայնված համատեքստը, ուր նրանք կարող են տեղադրել սեփական մտքերը և դրանք հարմարեցնել պատկերացումների այն կտավի մեջ, որ հետըզհետե ստեղծվում է ուսման և կենսափորձի միջոցով: Մյուս կողմից էլ աշակերտները, սեփական արժեքի ու արժանապատվության վստահություն չունենալու դեպքում, չեն համարձակվի իրենց մտքերն արտահայտել: Իսկ եթե նրանք տեսնում են, որ իրենց մտքերը կարևորվում են, ուսուցիչն իսկապես հարգում ու գնահատում է իրենց մտքերն ու պատկերացումները, նրանք շատ ավելի մեծ պատասխանատվությամբ և զգուշությամբ են մոտենում սեփական մտքի արդյունքին:

Տարրական դասարանների մայրենի լեզվի ուսումնական նյութի<sup>2</sup> կայուն յուրացումը մեծապես պայմանավորված է ուսուցման նոր մեթոդների ներդրման արդյունավետությամբ: Վերջին տարիներին ուսուցման գործընթաց են քափանցում ուսուցման ինտերակտիվ մեթոդներ: Դրանք մեծապես նպաստում են աշակերտների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացի հետաքրքիր և աշխույժ դարձնելու պայմանների ստեղծմանը:

<sup>1</sup> Մեմինար պարապմունքների ուղեցույց, ԱՅՐԵԶՍ, Եր., 2002:

<sup>2</sup> Ջ. Գ. յ ու լ ա մ մ ի ղ յ ա ն ,Կ. Թ ո ղ ո ս յ ա ն , Ա. Մ ա ն ո լ կ յ ա ն , Երկրորդ դասարան, Մայրենի, Եր., 1997:

